ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ

տարեգիրք

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
Գրականության ինստիտուտ

ՀՀ Սփյուռքի նախարարություն

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

A 97567

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ.
Գրականության ինստիտուտ
2010

ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ

Խմբագրական խորհուրդ՝

Ավիկ Իսահակյան - Խորհրդի նախագահ
Հրաչյա Սարիբեկյան - գլխավոր խմբագիր
Արքմենիկ Նիկողոսյան - պատասխանատու քարտուղար
Արմեն Ավանեսյան
Վահրամ Դանիելյան
Վարդան Դևրիկյան

ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ

Սփյուռքահայ գրականության տարեգիրք

Հրատարակվում է ՀՀ Սփյուռքի նախարարության պատվերով

ՀՏԴ 891.981:891.981.0:01
ԳԴՄ 84Հ+83.3Հ+91
Գ870

Խմբագրական խորհուրդ՝

Ավիկ Իսահակյան - Խորհրդի նախագահ
Հրաչյա Սարիբեկյան - գլխավոր խմբագիր
Արքմենիկ Նիկողոսյան - պատասխանատու քարտուղար
Արմեն Ավանեսյան
Վահրամ Դանիելյան
Վարդան Դևրիկյան

Գրական Սփյուռք: Սփյուռքահայ գրականության տարեգիրք/ Խմբ. խորհուրդ՝ Ա. Իսահակյան և ուրիշ. - Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինստ., 2010. - 304 էջ:

ՀՏԴ 891.981:891.981.0:01

ԳԴՄ 84Հ+83.3Հ+91

ISBN 978-99941-2-500-9

© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ, 2010

Կազմողների կողմից

Հայաստանի անկախացումից հետո Սփյուռքում ստեղծվող հայ գրականության ճանաչողությունը դարձավ մատչելի, նախկինում հայաստանյան ընթերցողի համար անծանոթ շատ ու շատ տաղանդավոր անուններ հասանելի դարձան՝ թե՛ առանձին գրքերով տպագրվելու և թե՛ նրանց մասին առանձին ուսումնասիրությունների ու անգամ մենագրությունների երևան գալու իմաստով: Անելիքներն այդ ասպարեզում, սակայն, այնքան շատ են, որ բազմաթիվ բացեր դեռ մնում են:

«Գրական Սփյուռք» տարեգիրքն ահա, որ իրականացվում է ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի համագործակցությամբ, միտված է լրացնելու այդ մեծ բացերից մեկը. այն է՝ հայաստանյան ընթերցողին ներկայացնել ժամանակակից սփյուռքահայ գրականությունն իր գրեթե բոլոր ժանրերով: Իհարկե, սփյուռքյան բազմաթիվ հեղինակներ պարբերաբար տպագրվում են հայաստանյան գրական մամուլում, շատերը հենց Հայաստանում են տպագրում իրենց գրքերը, շնորհանդեսներ, քննարկումներ կազմակերպում, վերջերս լույս տեսավ նաև «Արդի հայ քնարերգություն. Սփյուռք» անթոլոգիան, Գրողների համահայկական՝ արդեն պարբերական դարձած համաժողովները ձևավորում են շփման նոր մակարդակ, սակայն ամբողջական ընկալման միտվող ձեռնարկներ՝ բոլոր ժանրերը ներառող անթոլոգիաների, տարեգրքերի տեսքով, մինչ այժմ չկային, որը կօգներ Սփյուռքահայ ժամանակակից գրականությունը դիտարկել հնարավոր ամբողջական համապատկերի մեջ: Ի վերջո, դա լավագույն տարբերակն է հստակ պատկերացում կազմել ու հասկանալ, թե իրականում իրենից ի՞նչ է ներկայացնում ժամանակակից Սփյուռքահայ գրականությունը, ի՞նչ մտահոգություններ ու խնդիրներ ունի, գաղափարական հարցադրումների ի՞նչ ուղղություն ու մակարդակ: Տարտղնված պատկերացումը միշտ էլ համահարթեցման վտանգ է պարունակում՝ կամ բացարձակ

անտեսում ու քամահրանք, կամ հիացում ու անհարկի արժևորում: Կարծում ենք՝ ժամանակն է հասկանալ, որ Սփյուռքում հայերեն ստեղծվող ամեն տեքստ չէ, որ գրականություն է և արժանի է հիացումի ու գնահատման: Ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի յուրաքանչյուր գրող, երկը տպագրելուց առաջ պետք է պատասխանատվության զգացողություն ունենա իր ընթերցողի առաջ:

«Գրական Սփյուռք» տարեգրքի խմբագրակազմը համագործակցել է Սփյուռքի այն գրողների հետ, որոնց հետ կարողացել ենք կապ հաստատել, կամ որոնք արձագանքել են մեր նամակներին ու համագործակցության առաջարկին: Ավելորդ չենք համարում նշել, որ Սփյուռքի բազմաթիվ հեղինակներ մեր նամակները թողել են անպատասխան: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ կարողացել ենք ստանալ Սփյուռքահայ արդի գրականությունը, եթե ոչ ամբողջապես, ապա գոնե հիմնական միտումներով ներկայացնող տարեգիրք:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ ստեղծագործությունները տարեգրքում ներկայացրել ենք այն ուղղագրությամբ, որը նախընտրել են հեղինակները:

ՊՈԵԶԻԱ

Սագօ ԱՐԵԱՆ

Ծնվել է 1972 թվականին՝ Լիբանանում: Սովորել է Լիբանանի «Քառասուն մանուկ» եւ Խանամիրյան Ազգային վարժարաններում, այնուհետեւ հետեւել է հայագիտության դասընթացների: 1997-ին տպագրել է բանաստեղծությունների առաջին գրքույկը՝ «Տարտամ տողեր» խորագրով, իսկ 2000-ին երկրորդ գիրքը՝ «Կանայի հարսանիքը»: Աշխատել է Կիպրոսի Մելքոնյան վարժարանում, իբրեւ հայ գրականության ուսուցիչ:

Տպագրվել է «Գարուն», «Նոր դար», «Նարցիս», «Գրական թերթ», «Բագին», «Հորիզոն», «Ազդակ», «Արծիւ», «Զարթօնք» եւ այլ հայրենի եւ սփյուռքյան տասնյակ թերթերում եւ ամսագրերում:

Սագո Արյանի բանաստեղծական հիմնական նյութերը հայրենիքը կորցրած բանաստեղծի որոնումներն են օտար ափերի մեջ, Սփյուռքի նահանջը, միաժամանակ արաբական, մանավանդ պաղեստինյան պայքարը, որ նա իր բանաստեղծություններում ցույց է տվել իբրեւ համամարդկային ցավ: Պատրաստում է բանաստեղծությունների երրորդ գիրքը, որում երեւում է աշխարհի վերջին տարիների զարգացմանը դեմ հանդիման կանգնած ստեղծագործ մարդը՝ իր մերկ ներաշխարհով:

Կատարում է թարգմանություններ՝ անգլերենից եւ արաբերենից: Ամուսնացած է, ունի երկու որդի՝ Վահագ և Ակսել:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Վ. Օ.Շ.Ա.Կ.Ա.Ն.

Կիպրոսի մենութեան ահաւոր անձրեւը
Կը կաթկթի ականջներուս բլթակին վրայ,
Ու անձրեւեն ետք սոսկալի,
Կը կախուին հագուստներս արեւու խոնաւ հէքիաթներուն վրայ,
Միշտ յուշելով
Որ ես հին–նոր բնակարանիս պատուհանէն պիտի նայիմ
Դիմացի ճեղքուած պատերուն ու առջեւս պատերու սահմանն է
միայն...
Ու երազեմ որ գարնան, սար պիտի բարձրանամ նորէն սիրելու:
Նորէն ապրելու համար կանուխ պատանեկութեանս
հանդիպումները
Եւ կարդալու վարպետին ապսուրտ բանաստեղծութիւնները:
Կեղծամ չունիմ ես,
Սուրճի բաժակներս չեն լուացուած...
Ու խոնաւ այս տան մէջ
Կիրակի մը կապոյտ, նստած եմ կարդալու վարպետին գործերը:
Ես կամչնամ ըսելու,
Որ բանաստեղծութիւններս չեն մերժուիր,
Չեմ հալածուիր գիշերով
Թաղէ թաղ թոլորը կը ժպտան երեսիս...
Ու ես շփացած բանաստեղծներուն պէս կանուխ անկողին կը
մտնեմ,
Կանաչ թէյի տերեւները կը պատրաստուին իմ համար:
Զիս կը գրկեն ու կը պարեն իմ հետ մուսաներս...
Միայն թէ լաւ գրէ,
Գիրս չապրի հին օտարութիւնը եւ անէծքը:
Եւ ես շփացած երեխայի պէս ժպտամ, շոքոլաները կեղուելու
պէս Ուալթ
Ուիթմէնի հատորի դեղին էջերը բանամ...
Ու փառք տամ որ անօթի չեն զաւակներս,
Ու փառք տամ որ քաղաքի հին խոնաւ ակումբի պատերուն
տակ, Պետիկ
Հերկելեանին հետ նստած, հայերէն չեմ սրբգրեր

Ու փառք տամ, աղաչական աչուկներով,
Ու բացագանչեմ,
Հէյ դուք անօթի ձգեցիք բանաստեղծը:

Հին երգ մը,
Կը հուշէ Մելգոնեանի սենեակը
Ուր համակարգիչ մը կար հսկայ ու ծերունի,
Ուր կէսօրէ ետքերը Վահան Թէքէանի աչքերուն դիմաց,
Կը խմէի Պէյրութէն բերուած կարօտի սուրճերը,
Կ'աղօթէի մուսային, մատներս ամբողջ կը սեղմէի
ստեղնաշարին,
Ուժգին կը զարնէի բառերուն...
Ու յանկարծ դուռը կը բանար դպրոցի շէֆը,
Ու զարմացած կը նայէր աչքերուս...
Կը պահէի բանաստեղծութեան դեղին տետրակներս,
Կը փակէի լիբանանեան լուրերուն կայանը,
Կը պատմէի որ Պէյրութի մէջ խառն է նորէն,
Կէս կատակով կը հարցնէի իր կատուին մասին որուն անունը
Պուպրիկ էր կարծեմ...
Կը ժպտար ինծի,
Ու էրօթիք հայացք մը ետին կը փակէր դուռը...
Ուրախ էր ընտանիքը Մելգոնեան վարժարանի,
Պուպրիկը կուշտ էր ինչպէս եւ միշտ,
Ուսուցչական ժողովներուն ներկայ էր,
Յղփացած անգլերէնով կը խօսէր ազգի ճակատագրէն,
Ու ատամներս պրստելով կը յիշէի քաղցած քանի մը ընկերներ...
Քանի մը մտաւորական ճակատագիր:
Գուրգէնս Խանճեան, Հայաստանի արձակի վարպետները
մէկ–մէկ
Երազիս կուզային ածառական խաչապուրիի սեղաններուն շուրջ,
Զօրայրս Խալափեան ու հիւանդ էր պառկած,
Եւ Վահանս Թամարեան որ կէս անօթի փորով կը թաղուէր
Ծալկայի գրկին...
Անիծեմ բախտիդ, Վահան Թամարեան,
Յիշատակդ մնաց աչքերուս մէջ

Գրական Սփյուռք

Ու բախտդ սառեցաւ պատգշամբէդ կախուած սակառին մէջ
Ուր դրած էիր հող մը նախնիներէդ,
Անիծեմ բախտիդ, բնակարանդ դատարկած էին ու որդիներդ
հեռացած,
Անիծեմ Շիրակուհիիդ որ քեզի անտէր ու որբ թողեց գնաց...
Մեռնում են ըսաւ, երբ կանայք թողնում գնում են... պօէտները
մեռնում են ըսաւ,
Անիծեմ ազգային թաղումիդ,
Անիծեմ որ Մահմուտ Տէրվիշի անունը լսած էիր միայն...
Լռութեամբ սնուած, լռութեամբ ծնուած
Լռութեամբ առանձինն տան լռութեան մէջ նահատակուած
Վահան Թամարեան...

Բայց ո՞վ ըսաւ որ ընտրեմ անէծքի սա վերջին ժամբան
Ու խօսիմ գրաբարեայ ծանօթութիւններուս մասին կամ ժամեր
սառիմ
Գրասեղանիս առջեւ որ պարոն մուսան հանդիպի ու
բարբառենք Հայերէն:
Մատներս կը բարբառեն հայերէն,
Ու հէյ վարպետ ես նորէն սփիւռքի հին պորտին վրայ կեցած
հայերէն կը պարեմ,
Աչքերուս թախիծը կը մաքրեմ երեխաներու ժպիտով ու կ'երգեմ
բարձրաձայն...
Հէյ վարպետ ես եմ, ես,
Չե՞ս տեսներ գժութիւններս սառնարին մէջ պահեցի
Կլոր իջլի քէօֆթէներու դարակին մէջ
Ու սառած միսին տեղ ամէն երկուշաբթի ձաւարով փիլաւ
կերանք ես ու ընտանիքս:

Մարդիկ հեռաձայնեցին ու ականջիս փսփսացին
Որ բանաստեղծութիւններուս մէջ հոտդ կար վարպետ, զգոյշ
ըլլամ, ե՞ս թէ՛ դուն վարպետ,
Կարծես այսօր այս ջերմ արեւին տակ,
Կիսաքանդ պատերուն դիմաց ու լռութեամբ ծծուած,
Ու լռութեամբ աղօթուած,

Ու մաքրուած
Սա տիրոջ ընթրիքին առջեւ վարպետ նորէն անունդ կը
հեգեմ...
վ.ա.հ.է. օ.շ.ա.կ.ա.ն.
Ու կաղօթեմ որ դրախտի պատուհանէդ ժպտաս մէյ մը,
Ու աղօթես որ խենթութիւնս զսպեմ երբ ծունկի գամ աղօթելու,
Երբ ծունկի գամ գրելու,
Երբ ծունկի գամ դժգոհելու,
Երբ ծունկի գամ անունովդ Երդում ընելու...
Որ չհեռանամ գիրի այն մացառուտներէն
Ուրկէ քալելով պիտի արիւնին ներքաններս...
Հա՜ վարպետ
Հէլա, հոյ վարպետ
Հոգեհանգիստ քու աներեր դէմքիդ
Քու հոգիիդ
Ու գիրիդ...

ՆՈՍԹԱԼԺԻԱ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՊԱՏՃԳԱՄԲԷՆ

Քաղաքի աղի առաւօտները կը բացուին կարմիր պատումներով
Բերանս նորէն լեղի է եւ երկինքը կը դադրի իր կապոյտ
կարպետի
Հէքիաթները պատմել...
Ոտքերս թոյլ չեն բայց չեն հասնիր,
Հոն ուր քաղաքը կը պատմէ իր վէրքերուն մասին:
Հոն ուր կը մեռնի հին երազ մը,
Հոն ուր մահը կը պտըտի սրիկայօրէն ու լկտի:

Կարծես երէկ էր ու այսօր ալ Քամալ Ժոպլաթի թաղման օրն է,
Սինէ Մանդրալի մեծ պարիսպները փակուած են արդէն,
Ամբոխը կ'անցնի աչքերուս առջեւէն...
Ու քաղաքը ինչպէս ամէն անգամ, այսօր ալ պիտի լայ...
Արեւելքի Հարսը այսօր ալ պիտի լայ,
Տղաքը մինչեւ ակռաներ զինուած,
Կը սպասեն առաջին կապարի ազդանշանին.
Ու Երեւան հոտող կանաչ երկար բաժկոնները հագած կը նային
խմբապետի ջղային աչքերուն:

Կարմիր աչքեր եւ կարմիր ճակատագիր:

Կը սահին քայլերս ամայի ճամբաներէն,
Թերեւս գտնելու մխիթարական ձայն մը,
Մամռնած վերէն վար չի թափիր գլխուս ոչ ալ հին ընկերներ
կուգան
Գրականութիւն բացատրելու...

Համատարած այս լռութեան մէջ որուն երկինքն ու երկիրը կը
լեցուին ահաւոր
Պայթիւններու որոտումներով,
Կը պատմեն ինծի Պէյրութի վերջին կռիւներուն մասին.
Որ կարծես կիսատ մնացին յիշողութեանս մէջ:
Կը հանուին Արեան աւետարանները մէկ առ մէկ

Կը հանուին կրակէ շապիկները մէկ առ մէկ.
Մէկը կը մորթէ հարսին արգանդը
Մէկը կը բզքտէ քաղաքին Հէրոշիմա դարձած էգութիւնը.
Աւերներ կան ամէնուրէք ու մարդիկ համոզուած, անօթի տան
կը դառնան պատառ մը աղի հաց ծամելու:
Երաժշտութիւնը կը դադրի:
Շէյխերը կը վերադառնան իրենց լկտի կղզիները
Ու այս ահաւոր լուսերուն տակ հեռաձայնները նորէն կ'արթնան:
Քոյրս է Ամերիկայէն,
- Ո՞ւր էր վերջին Ռումբը, մի վախնաք, ասանկ բաներ պիտ ըլլան:
Ամերիկացի քոյրս մտահոգ է...
Ու չէ լսած որ Արաֆաթը մեռեր է արդէն,
Ու չէ լսած որ Անուշը Պէյթ Ալ Տինի մէջ, ոտքի վրայ, երկար
ժամեր ծափահարեր է Մարսէլ Խալիֆէին:
Պիտի պատահին այսպիսի բաներ, մի վախնաք կ'ըսէ:
Կը զառնուի թելը մտածումներուն, հեռախօսը կը փակուի
նորէն, ծուխ է ամէնուրէք ու սիկարէթի վերջին գլանիկը կը
վառեմ պատշգամին վրայ յիշելու եւ ապրելու մեծ
թաղումներու յուշերով...
Գիշեր է ու մութ,
Թաղի միակ գինով Ալեքսանը խմած-փքած տուն կըդառնայ
Կինը ծեծելու...
Մեծ վիշտերու ապրումը գինիի պէս կը քացխի մէջս ու կը
խառնուի լռութեանս աղմուկին...
Ներսը Ռուսերէն կը հեգնեն,
Կը հեգնեն վիշտը այս քաղաքին,
Կազմեցին կաշիս ու կազմեցին յիմար լռութիւնս...
Հ1-Ը նորէն վատ բուիի պէս կը խօսի Ռուսերէն-
Ուրիշ մը կը զանգէ Երեւանէն. -
Կը պատահի կ'ըսեմ, պատահական բաներ են ճանըմ:
Տխրութիւնը կը բանայ յիշողութեան հին դարակները, ու
կորսուած
Քերթուածները մէկ - մէկ կը կարդացուին:
Նոյն յիշողութիւնները, նոյն արհաւիրքը
Եւ նոյն սրիկայ Փողոցը մեր:

Լուսերուն տակ երազելէն կը քալեմ,
Ձեռքիս մէջ անոր ափերը փոքրիկ
Ու համբուրելով
Կ'առեւանգեմ անոր կապոյտ երազները,
Ինչքան ալ հիւանդ ըլլայ սա քաղաքը
Ու ինչքան ալ խոշոր ու խորունկ վէրքեր բացուին անոր մէջ կը
մնամ իր հետ...
Ու լոյսերուն տակ կ'անցնինք առաջ...
Իր առաջին կաղանդը պիտի տօնէ
Ոչ թէ արգանդին մէջ,
Ոչ ալ հոգիի եւ թեւերուն վրայ
Այլ իրաւ տօնը, ուր պիտի ճանչնայ մեծ մամային
Կէս եփ կլորակ քէօֆթէները համով...
Անուշին արգիլած ուտելիքները կը քնանան հիմա
սառնարանին ցուրտին մէջ:
Ու տղուն խաղեր սա կաղանդին
Պիտի բացուին տուփիկները միջակ ու լեցուն–
Եւ խնամքով հոն քնացող Պէօրէկները կեանք եւ գոյն պիտի
առնեն...

Լոյսերուն տակէն պիտի քալենք ես ու տղաս
Ինչքան յիմար դառնան սա քաղաքի հրապարակները,
Ինչքան աղմուկը բարձրանայ մեր խէթ աչքերէն ու փակուի
կապոյտը երազին,
Որ սեւ պատած կը փակէ աչքերը այս քնացող Որոնումներուն,
Այս միականի հրէշներով գրաւուած քաղաքներուն
Ուր բողոքը ապակիի պէս կը պաշարէ մեր իմացումը...
Հոտած կին մը,
Որբ մը եւ ստրուկ մը
Օդոններուն մէջ անհամ ու տխուր դէմքեր,
Տխուր աչքեր ամէն տեղ,
Այս քաղաքը կաղանդի հագուստներ չունի այլեւս,
Ու հին շապիկները որ արդուկիչներու խանութներուն մէջ
չորցուած էին 1975ի օրերուն նորէն դուրս կը բերուին...

Անակնկալ բառեր պիտի գան ու ամէն պայթումի հետ պիտի
խանգարուին վերելակները,
Ստեղնաշարի տառերը պիտի ելլեն իրար վրայ,
Կրնայ ըլլալ տակաւին, հաւանական է որ անիւներ շարուին ու
այրուին
Որպէսզի Գրիգոր Պըլտեանի փորձը նորէն ապրիմ, ապրինք
անոր
Տեղագրութիւնը առանց ըսսր ը կարդալու...
Առանց Արաֆաթին ու անոր ճառերուն:

Ո՞ւր կը տանին քաղաքը այսօր,
Մարդիկ սրահներէն դուրս կուգան քիչ մը կատղած,
Ամէն ոք իր ոգին կը ծախէ ու ամէն ոք կը հաւկնի փրկութեան
Ասպետի Խսանձարուրը նետելով քալելու, քալելու, քալելու...
Քալել ամայացած թաղերէն ու մահուան ուրուական մը...
Աննկուն ու խենթացած ուրուական մը.
Հակառակ որ գրական թերթերը կը տպուին տակաւին,
Հակառակ անոր որ ցուցահանդէսներ կը բացուին...
Ու մենք կը քալենք աղտ լոյսերուն տակ
Պատմելով հին երգի մը մասին,
Որուն պատճառով մանկունակ ժպիտ մը կը բացուի մեր
աչքերուն...

Մանկութեան մայթերէն կը քալենք
Վերապրելու համար
Լուսաւոր երազներուն ապագան...
Որ կը թուի թէ կը հեռանայ անխօս ու համրացած...
Նորէն գոնդաիներ ոներ կ'երեւին ծովու ափին ու
Կը պատմեն անոնք չանցնող անցեալին մասին.
Ու վէրքեր կը բացուին մեր մարմիններուն վրայ.
Տխուր են աչքերը...

Տխուր են մարդիկ.
Ոչ իսկ զղջում մը կայ արձակազէնին հրէշ դէմքին վրայ,
Որ ծաղիկ մարմիններ բռնեց ու տակաւին կը բռնէ...

Կը բռնէ մարմիններ յոյսերուն տակ
Ու հիւանդ բանաստեղծներուն պէս արիւն կը փսխէ
արձակազէնը...

Մինչ լուսերը կը մարին,
Աչքեր ունի երազը
Կը փակուին անոր աչքերը կարմիր
Ու սպասկոտ քունին մէջ կը պատմէ հեռացող թիթեռնիկներու
երթերուն մասին...:

Լոյսերուն տակ երազելէն կը քալեմ,
Ձեռքիս մէջ անոր ափերը փոքրիկ
Ու համբուրելով պիտի ըսեմ,
Որ օր մը պիտի բարի հրեշտակները
Պիտի երգեն իրեն համար
Գիշեր բարի պիտի երգեն:
Պիտի փլի պատերազմի հին արձանը
Պիտի մեռնին յիշողութիւններս տխուր...

Ու լոյս պիտի ըլլայ ամէն ուր:

Ա 97557

Էլենա ՄԱՍԵՀԵԱՆ

Էլենա Մասեհյանը ծնվել է Իրանի Իսլամական հանրապետությունում։

Երկար տարիներ աշխատել է Թեհրանի հայկական դպրոցներից մեկում, որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի։

Նրա բանաստեղծությունները տպագրվել են սփյուռքի և հայաստանյան գրական մամուլում, տարեգրքերում և ալմանախներում։

ՏՂԱՆ

1.

Փոքրիկ տղան կանգնած չորրորդ յարկի պատուհանին
թքում էր անցորդների վրայ
ու անմիջապէս թաքնւում
վարագոյրի յետեւում:
Փոքրիկ տղան կանգնած փողոցում
քար էր նետում
կոտրում հարեւանի լուսամուտը
ու թաքնւում պատի յետեւում:

2.
Փոքրիկ տղան, որ այլեւս փոքրիկ չէր՝
կանգնած էր ջարդուած լուսամուտի առջեւ
ու թքում էր այն փողոցի վրայ
ուր թաքցրել էր իր մանկութիւնը
բայց չէր թաքնւում:
Տղան որ այլեւս փոքրիկ չէր
նորոգում էր լուսամուտը
որ ջարդել էր հարեւանի փոքրիկ տղան
ու թաքնել իր մանկութեան օրերում:

ԺԱՌԱՆԳ

Հեռւում՝
շատ հեռւում
մի զոյգ խաժ աչքեր
կարօտած հայեացքն են ուղղել տունդարձի ճամբին:
Նոյն հեռուներում
մի այր՝ հայր
ժպտում է
ինչ-որ մի թախիծ
մեղմելով իր մէջ:

Այստեղ՝
ձանձրոյթի կոկորդում կալանուած պահերս
տնքում են անցեալից յայտնուած ցիրուցան յուշերից:
Ափսէի միջից վերցնում եմ մի կանաչ խնձոր,
շտապ կրծում,
որ գեղեցկանաս:
Գիտեմ
որ նաեւ դու
կժառանգես մի ժպիտ
Ու մի խաժ հայեացք
այս հարազատ տարածութեան մէջ:

ՄԻԱՎԱՆԿ ԱՆՈՒՆ

Կապտած երկնքի խելառ օդի
եւ քո համանուն մոլեգնոտ կրքի պէս
ընտելացել եմ ինձ միաձուլող
քրոմոսոմների վայրի ներխուժմանը:
Պիրկ ազդրերս եսամոլ բաւարարութեամբ
ժխտում են ինքնուրացման կաղապարները
ափերիդ միջում:
Ինձ քո շունչն է հարկաւոր
միահեծան անյայտութիւնից
փրկւելու համար:
Ինձ քո միավանկ անունն է պէտք
սեւ-սպիտակ ձայները զատելու համար:
Ինձ քո մերկացնող
ձեռքերն են պէտք
որ տեղաւորեմ հազար տարին
մի գիշերում:

ՏԻԱՅՏԱՆՔ

Գիշերում այս խոնաւ
ինձ միայն հետաքրքրում է
խխունջների անմիտ սողքը
անձրեւի տակ
ու մոռանում եմ,
որ շտապ պիտի ստեղծագործել
մինչ բացւելը ծիածանի...

Թաց է երեկոն,
թրջւել է Աստւած
ու թաքնւել կարմիր գրքի էջերում.
ես փորձում եմ գտնել նրան
խխունջների հետքերով...

Երեկոն թաց է,
իսկ ես խենթս
բուժում եմ
նեխած ուղեղս
բորբոսնած սիգարետներով,
Մինչ անձրեւը
կոյս տողերս է բռնաբարում,
Երգս դարձնելով մի լկտի գովազդ:



Թորոս ԹՈՐԱՆԵԱՆ

Ծնած Հալէպ 1928 թ. Փետր. 29-ին: Նախնական կրթութիւնը ստացել է Հալէպի Պ.Կիւլպէնկեան վարժարանում: Երկրորդական կրթութիւն Հալէպի Ամերիկեան Գոլէժ եւ Մելգոնեան կրթ. հաստատութիւն: Բարձրագոյն ուսում՝ նախ Սոֆիայի քաղաքատնտեսութեան համալսարան մինչեւ 3-րդ կուրս, ապա Երեւանի Պետ. համալսարան մէկ տարի, իսկ Երեւանի Մխիթար Հերացի Բժ. համալսարանէն շրջանաւարտ 1970 թուականին:

Ամուսնացած բժշկուհի Արմէնուհի Մարտիրոսեանի հետ: Ունին երկու զաւակ եւ չորս թոռնիկ:

Հրատարակուած ունի 110 անուն գիրք.- բանաստեղծութիւններ, պատմուածքներ, ուղեւորութիւններու նուիրուած գիրքեր.- Եւրոպա, Արաբական Երկիրներ, Վան, Հիւսային եւ հարաւային Ամերիկա, մենագրութիւններ եւ նոյնքան թիւով այլ գրողներու հրատարակուելուն նեցուկ:

Ծնողները Հռոմկլայի շրջանի Ճիպին, այժմ Սայլաք քյոյեա գիւղէն՝ Խաչեր եւ Վարդուհի Թորանեաններ: Հայրը շրջանաւարտ Ճիպինի Կիլիկեան վեցամեայ վարժարանէն: Իսկ մօրը իր մայրենի լեզուն Թորանեանը սորվեցուցած է:

ԵՍ

Արմատէն փրցուած
Ծառ մըն եմ այսօր
Ծառ մըն եմ տարատունկ,
Աhա թէ ինչո՛ւ
Ուր ալ գտնուիմ՝
Հողերու վրայ
Բերրի, աւազուտ,
Անտառի մէջ իսկ
Կամ շէնքերու մէջ
Երկնաքեռ ու լուրթ
Կը ձգտիմ հողիս
Արմատիս ջերմուկ:

ԾՆԱՅ

Հրատէն ծնայ
Ինչպէս Միհրն հզօր.
Աhա թէ ինչո՛ւ
Ջիս հուր հեր Վահագ
Կոչեցին այսօր,
Ու շիկամօրուս
Պատանեակ մը որ
Աստղափայլ դարձաւ
Երկինքին մէջ մով:

ԴԱՐՁԵԱԼ ԵՍ

Ես մարմինէս
Դուրս ապրելով
Հոգիովս յաւերժացայ:

ՀՈԳԻՍ

Հոգիս մերժեց
Յաւէտ մամռնան առյաւէտ,
Հոգիիս հետ
Հաշտ ապրեցայ առյաւէտ,
Հոգիս ծարաւ
Սիրոյ լոյսին արեւկայ,
Ես փարեցայ
Սիրոյ լոյսին յարակայ:

ՈՉԻՆՉԷՆ

Ոչինչէն ծնած
Ոչինչին գացող
մարդ մըն էի ես,
Ոչինչ պարզապէս,
Բայց օր ու աւուր
իյնալ ելլելով,
մոլորակին հետ
ընդմիշտ շփուելով
Կրակ դարձայ ես
Ու այդ կրակէն
Հայ մարդը ծնաւ:

Սարգիս Ք. ԽԱՉԵՐԵԱՆ

Ծնած է Հալէպ 1974-ին։

Շրջանաւարտ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանէն։

Աշխատակցած «Գանձասար», «Շիրակ», «Կամար» հանդեսներուն ու «Երթ» տարեգիրքին։

Մաս կը կազմէ Սուրիահայ Գրողներու Համախմբումին։

Հեղինակ «ԼՈՅՍՆ Ի ՎԵՐ» բանաստեղծութեան հատորեակին։

ԴԱՇԻՆՔ

հաւերն ինչ գիտեն
թէ ամէն օր
դեռ արեւը չծագած
աքլորն իր կանչով
պարզապէս կը յիշեցնէ Աստուծոյ
իրենց կնգած դաշինքը գաղտնի
ըստ որուն
պիտի խլուէր հաւերէն
շնորքը թռչելու

ԲԱՌԸ

սահմաններ կանցնի
փշաթելերուն չի կախուիր

ծովեր կը կտրէ
խորերը չի ընկղմիր

երկինքներ կը նուաճէ
պահ մը չի թառիր

ախ այս բառը

ՈՎ ԳԻՏԷ

այս օրերու
որն է պատահելիք ամենավատ արկածը
հիւլէական ռումբի մը պայթումը
արեւային յաւիտենական խաւարումը
թէ կէս գիշերին
բանաստեղծի մը միտքէն
բառին փախ տալը

կնոջս հարցուցէք

ՄՈՒՏՔ

ինչպէս սանձել
բառը յանդուգն
երբ մուտք գործէ
էջին խաթարուած տրամադրութենէն ներս

այստեղ բանաստեղծ ըլլալը
ոչ մէկ նշանակութիւն ունի

20:00

տեղեկատուները հաղորդեցին
թէ այլմոլորակայիններ
բռնագրաւած են
մաս մը լուսինին բոլորակէն
մինչ լուսինը օր մը առաջ
այդ կորսուած պատառիկը
ղրկեց մեր տուն
երբ տեսայ թէ մութէն վախցող
մեծեր ալ կան

Լոլա ԳՈՒՆՏԱՔՃԵԱՆ

Լոլա Գունտաքճեանի ստեղծագործությունները հայտնվել են online alpialdelapalabra (Արգենտինայում), Armenian Poetry Project (Նյու Յորք), GROONG (Հարավային Կալիֆորնիայի համալսարան), Mediterranean.nu և UniVerse (Չիկագո), ինչպես նաև տպագրվել են Anthology Memoria del XX Festival Internacional de Poesվa de Medellin (Կոլոմբիա), Հայկական շաբաթաթերթում (Բոստոն) և Pakin հանդեսում (Բեյրութ, Լիբանան):

Լոլա Գունտաքճեանն իր ստեղծագործությունների ընթերցումներով ելույթ է ունեցել Նյու Յորքի և Լոս Անջելոսի մի շարք բեմերից, երբ համագործակցում էր LA Zephyrs, GARTAL և հունա-հայկական գրական ամսագրերի հետ:

Վերջին 20 տարիների ընթացքում Նյու Յորքում նա կազմակերպել է երեկոներ՝ նվիրված մահացած հայ գրողներին և 2006 թ.-ից թողարկել ու խմբագրել է տեքստեր բազմալեզու Հայկական պոեզիայի նախագծի համար:

Լոլա Գունտաքճեանի գործերը թարգմանվել են իսպաներեն Մեդելինի 20-րդ միջազգային պոեզիայի փառատոնի համար, Կոլոմբիայում, որտեղ 2010թ.-ի հուլիսին նա ընթերցել է դրանք:

1.

Ահա հասանք ամառուան սկիզբը
եւ դուն կ'անհետանաս
ինծի թողնելով յիշատակներ—
բեկորներ միայն...

Ալ չեմ սիրեր ամառները
դուն հոս չես
դուն հոս չե՛ս:

2.
Երկու Անիներ

Արա Նիւճիւգեանի յիշատակին

Սեղանիս վրայ են
Անի քաղաքէն կաւէ կտորներ:

Դարերէ ի վեր կը սպասէին
Որ հայ ձեռքեր հաւաքեն ու
Բերեն այս ափերուն սա իրերը:

Առաջին անգամ բռնեցի զանոնք ու ահա՛
Հեռուէն լուրեր.
Ուրիշ Անի մը եւս կը կանգնի որբ ու քաջ:

3.
Պոստոն՝ Ապրիլ 30, 2006

Մօրս պէժ քաշմիր բուրդը
Կեանքս ազատեց երբ հասայ
Ծանր հարբուխով մը:

Երանի՜ իմ կարգիս կարենայի
Կեանքը ազատել այն ընտանիքին
Որ հիւսեց այդ բուրդը:

Ուր է արդարութի՞նը,
Մարդոց խի՞ղճը:

Հնդկաստան – Բազիստան – Քաշմիր – Պանկլատէշ:

4.
Անձրեւ

Կը քալեմ ծովափին
Ու դուն բացակայ ես.
Տուն մնացիր,
Չիս թողնելով բոպիկ
Աւազին հետ խաղալու:

Անձրեւին կաթիլները
Ուսերուս ու դէմքիս
Կը թմբկահարեն:

Երէկ երազիս մէջ

Արեւածագին երկա՜ր
Պտոյտէ մը կը վերադառնայի,
Անտառին մէջէն անցնելով:
Մշուշն ու ցօղը իրարու հետ կը խաղային:

Երբ պարտէզի դռնէն մտայ
Քու ժպիտդ ճառագայթեց սրտիս
Ու զիս ընդունեցիր
Գաւաթ մը սուրճ ձեռքիդ:

5.
Գիշերը՝ ցուցադրութենէն ետք

Ի՞նչ կը կարդաս.
Ինչու՞ կը կարդաս.
Ըսէ՛
Բացատրէ՛ այդ ծարաւը:

Գիշերը կը քնանա՜ս:
Պատմէ երազներդ, երաժշտութեամբ.
Նայիր – դէմքս կը ժպտի – քեզի համար:

6.
Տասը օր է կ'անձրեւէ

Երբեմն թուք մը, երբեմն տեղատարափ
Հասանք շաբաթ օր եւ նորէն
Հողը ցեխի վերածեց այս լոգանքը.

Մութ ամպեր
Թաց ոտքեր
Դէմքերը անժպիտ
Գարունը անվերջ:

7.
Գալով անցեալին

Կը քալեմ յիշատակներուս հետ
Քայլ առ քայլ
Կանանչ լոյս յառա՛ջ
Կարմիր լոյս կա՛նգ:
Ա՛ջ, ձա՛խ, ա՛ջ. ձա՛խ
Շնչելով. աշխոյժ ապա՛ յոգնած:

Անցեալը պղտոր է.
Որու՞ մասին էր վերջին մտածումս.
Կլիման կարծես օգնեց:

Անձրեւ, անձրեւոտ է այսօր,
Կ'անձրեւէ՞ր այդ օրը, մի՞թէ:
Այո՛ անձրեւանոց մը կար ձեռքիդ
Ես *անորակ* հագած էի եւ
Կզակս թաց էր – կը յիշեմ:

Կանանչ լոյս յառա՛ջ
Կարմիր լոյս կա՛նգ
Եւ արդէն մայթը կտրեցի հանդիպման համար

Անձրեւանոցը մեծ էր եւ երկուքիս պաշտպան...
բայց շուտով տեղատարափը դադրեցաւ:
Դէմքիդ ժպիտ մը կար:

Աջ, ձախ, աջ, ձախ
Ձեռք ձեռքի.
Դուն անձրեւանոցդ բռնած ու ես *անորագով*.
քանի մը փողոց եւս
քանի մը վայրկեան եւս:

Կանանչ լոյս յառաջ
Կարմիր լոյս կանգ:

8.

Անոնք մեռան

Անոնք մեռան, հայր մայր ու դուստր
Ու թերթերը գրեցին
Բայց քանի քանի՜ ուրիշներ մեռան
Առանձին

Զանոնք սպաննեցին, հայր մայր որդիներ
ու դրացիները տեսան
Բայց քանի քանի՜ ուրիշներ սպաննուեցան
Առանձին

Զանոնք այրեցին, քոյր եւ եղբայր
Ու ծնողները տեսան
Բայց քանի քանի՜ քոյրեր ու եղբայրներ
Այրուեցան առանձին...

Զանոնք թաղեցին, հայեր, քիւրտեր,
Արաբներ, ուրիշ ազգեր
Բայց քանի քանի՜ ուրիշներ թաղուեցան
Առանց վկայի:



Գրիշ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1935 թ Նոր Ջուղայում, Իրան: Տարրական և միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: Բարձրագույն կրթությունը ստացել է Անգլիայում. վկայվել է տնտեսագիտության դիպլոմով, ապա Լոնդոնի Համալսարանի Արվեստից Մագիստրոսի կրթական որակումով՝ միջարևելյան պատմության մասնագիտությամբ 1969 թ: Ավարտել է Թեհրանի Համալսարանի Ճարտարարվեստական և Գործարարական Վարչարարության դասընթացը 1972-74 թթ:

1964-65 թթ եղել է «Արեգակ» ամսագրի հիմնադիր խմբագիրը Լոնդոնում:

1978 թ. ընտրվել է Թեհրանի Հայոց Թեմական Խորհրդի անդամ, առաջին քարտուղար: Տարիներ անդամակցել է պատգամավորական ժողովին: 1980-85 թթ վարել է Թեհրանի «Ալիք» օրաթերթի շաբաթական գրական էջը: Անդամակցել է Իրանահայ Գրողների Միությանը 1970-1986 թթ.՝ 1970-1980 փոխնախագահ, 1980-1986 նախագահ: Այժմ անդամակցում է Կալիֆորնիայի Հայ Գրողների Միությանը. ընտրվել է միության նախագահ 2005 թ:

1987 թ. հաստատվել է Գլենդել քաղաքում, Կալիֆորնիա, ԱՄՆ: 1997-2001 թթ վարել է «Ասպարեզ» օրաթերթի գրական էջը: 1998-2003 թթ

նախաձեռնել և վարել է Գրական Ասպարեզ ամսական հանդիպումները Գլենդելի Հանրային Գրադարանում, որ միացվել է նոր հիմնադրված Կալիֆորնիայի Հայ Գրողների Միությանը։ 1999-2005 թթ ընդհատումներով վարել է «Գրական Եթեր» Հեռուստաժամը՝ Հորիզոն Հայկական Հեռուստածրագրով։ 2001-2008 թթ նախաձեռնել ու վարել է համացանցային Կռունկ Հայկական Լրատվացանցի անգլերեն բանաստեղծության կայքէջը http://www.groong.org/tlg/index.html, http://www.groong.org

Հրատարակել է «ԾԼՎԼՈՑ» խորագրով մանկական բանաստեղծությունների գիրքը 1964 թ., և «ԿԱԹԻԼ ԾՈՎ» բանաստեղծությունների հատորը 1982 թ Թեհրանում։ Երևանում հրատարակել է «ԱՓՈՒՆՔԻՑ ԱՓՈՒՆՔ» բանաստեղծությունների հատորը 2003 թ։ Publish America LLLP, Baltimor, USA հրատարակչությունը լույս է ընծայել նրա "THE AMERICAN PULSE" անգլերեն բանաստեղծությունների ժողովածուն։

ԳՈՒՆԱՏՈՒԹՅԱՄԲ

Գունատվել են այտերդ,
Շուրթերդ թաց են,
Գրկիդ փափուկ լանջերը
Կիսով չափ բաց են...

Սիրո տենչով ես եկել,
Կպել ես կրծքիս,
Գրկիս տրոփն ես կտրել
Տիրում ես սիրտիս...

Դժգունել է ճակատդ
Սիրո գաղտնիքով,
Քունքերդ տաք են իղձով,
Ի՛մն էլ տաք բաղձով:

Ես ո՞ր հեքիաթը պատմեմ,
Որ դուր գա սրտիդ,
Ու իմ սիրով փարատեմ
Դժգույնը դեմքիդ...

ՄՇՈՒՇՎԱԾ

Այգվա մշուշը
Թացում է գունատ, թավշյա տաք թուշը,
Ու նրա մտքում թշթշում է մի
Սիրո վերհուշը...

Նա շշնջում է,
Ինքն իրեն հուշում
Ծալծալ մարմաշում
Թե հիմա ուշ է...

Այն ինչ պատահեց
Ուշ գիշերում էր.
Շուրթի համբույրը
Անուշ, մեղուշ էր.
Բումբերը շոյող
Ափը քնքուշ էր.
Խոնավությունը
Գուցե մշուշ էր...

... Այգվա մշուշը...
Անցած, գնացած
Իմ անուշ հուշը:

ՀԱՄՈՎ-ՀՈՏՈՎ

Ձեռքս գցեմ,
Մեջքդ ճկեմ,
Դեմ առնեմ կրծքիդ,
Ու շուրթերիդ բալը քամեմ,
Համով շուրթերիդ.
Սիրո գրկիս փափուկ ջերմում
Հեքդ օրորեմ,
Աչքերիդ մեջ աստղունք վառեմ,
Գույներ ողողեմ...

Սրտիս ծովում հեռուն մոտ է,
Հորիզոնը մով,
Օրս քեզնով արևոտ է,
Բուրավետ մի հով,
Որ փախել է վարդաստանից,
Ու ինձ պարուրել,
Ու բերել է հեռուներից
Այս բույրերը թով:

Մոտիկներս, որ հեռացել,
Դարձել են հեռու,
Թողել են խոր կարոտ ու սեր
Քո ջերմ աչքերում,
Որոնց սիրո լճակերում
Ես ինձ եմ փնտրում
Քեզ եմ գտնում,
Ու՞մ եմ գտնում,
Հենց ինձ եմ գտնում:

Վարդաստանում առավոտ է,
Անցյալ ու գալիք,
Կյանքի ներկան շողշաղոտ է,

Բուրավետ հովիտ.
Տարածվել է իմ սրտի մեջ,
Դու ես տարածվել,
Հեռվից մոտիկ մի անընդմեջ
Լուրթ հորիզոնվել...

Երամներն են աշնանային
Ջուով հեռանում,
Հորիզոնի այն կողմերին
Հիմա մոտենում...
Լիներ սրտիս ջինջ փափագը
Նրանց թևերին
Ու շաղ տային հորիզոնում,
Սրտիս շաղ տային...

Եվ հագենար իմ ծարավը,
Քեզնով հագենար,
Թափառումի ձիգ արշավը
Այնպես վերջանար,
Որ ճկեր բարակ մեջքդ
Սիրով ճկեր
Ու շուրթերիդ հասուն բալը
Համով քամեր...

ՍԵՐ

Ես գիտեի,
Որ կրակի պես ես,
Որ չպիտի դիպչել,
Որ կայրես...

Բայց ցանկությունս շատ էր,
Եվ սերս մեծ էր...

Ու դիպա...

Տեսնո՞ւմ ես
Ինչ գեղեցի՜կ եմ այրվում...

ՎԱՐԱԿՎԱԾ

Դու այնքան անփույթ ես,
Որ չես հիշում գեղեցկությունդ,
Եվ այդպիսով իսկ
Մնում ես ինքնավստահ
Ու ցանկալի...

Քո շուրթերին
Թովչության մի ժպիտ կա,
Որ անկարելի է համբույրով իսկ
Խանգարել...

Չի լինում,
Չի լինում հիշեցնել քեզ,
Կամ խանգարել ժպիտդ:

Քո աչքերում
Երազանքի մի գաղտնիք կա,
Որ երբ մոռացությամբ կկոցում ես,
Հասնում է հորիզոնին:

Գարնանային անծանոթ մի ծաղկի
Բուրմունք է թափվել վրադ,
Չեմ կարողանում ազատվել
Բույրիդ հրապույրից:

Ցանկության տատրակները
Թառել են լանջիդ տաքուկում...
Վախենում եմ նայվածքով իսկ դիպչել,
Որ խուճապի չմատնվեն,
Որ մեղավոր չզգամ:

Անհուսալիորեն վարակված եմ
Գեղեցկությամբդ,
Ժպիտովդ.
Գաղտնիքովդ,
Բույրովդ
Ու ցանկությամբս...
Ցանկությամբս...

Ավիկ ԴԵՅՐՄԵՆՋՅԱՆ

Ծնվել է 1957 թվականին, Երևանում, Արաբկիր թաղամասում։

Ավարտել է թիվ 51 միջնակարգ դպրոցը։

1975-ին ընտանիքով տեղափոխվել են Լիբանան (Բեյրութ), որտեղ հաճախել է «Պոլիգլոտ» և «Սիմոնյան» վարժարանները։ 1976 թվականից ապրում և ստեղծագործում է Միացյալ Նահանգներում՝ Բոստոն քաղաքում։ Ավիկ Դեյրմենջյանի բանաստեղծությունները բազմիցս տպագրվել են Բոստոնի «Հայրենիք», «The Armenian Mirror-Speqtator» անգլերեն թարգմանությամբ, Լոս Անջելեսի «Նոր կյանք», «Նոր օր», «Նոր Հայաստան», «Համայնապատկեր», Մոնթրեալի «Հորիզոն», Կաhիրեի «Արև», Աթենքի «Ազատ օր», Իստանբուլի «Մարմարա» պարբերաթերթերում և օրաթերթերում։

Բոստոնի հայկական Անկախ Ձայնասփյուռի, Կալիֆոռնիայի հայ գրողների միության անդամ է։

ՍԻՐՈՒՄ ԵՄ...

Սիրում եմ կյանքը,
Արևը անհուն,
Սիրում եմ գարնան բույրը անաղարտ,
Այն հողն եմ սիրում
Անսահման ձգտման,
Որը կոչվում է ազատ Հայաստան:

Սիրում եմ ծաղկունքը
Նոր բացվող գարնան,
Սիրում եմ դաշտը ես Արարատյան,
Կապույտն եմ սիրում
Խայտանքով եռման.
Սիրում եմ ես իմ՝ լեռների հսկան:

Սիրում եմ խոսքը
Իմ լույս պապերի,
Քաղցր կարկաչը Մայրենի լեզվի,
Հորդող այն երգն եմ
Սիրում Նաիրյան,
Որ պիտի հնչի դարեր հավիտյան:

Սիրում եմ երկնում
Ճերմակ աղավնի,
Ջահի պես միշտ վառ՝ կամքը զինվորի,
Սիրում եմ ճիչը
Ծնվող մանուկի,
Ծփանքն եմ սիրում Հայոց դրոշի:

ՀԻՆ ԱՆՈՒՐՋՆԵՐ...

Արթնացումներում
Հուշ ու կարոտի,
Մայր մտնող լույսը իմ աշնանային,
Կանչում է լուսնի
Շողերից մարված,
Հետո հանձնվում՝ անտես զիշերին...

Ծով երազներիս
խայտող ալիքը,
Զարկվում է իմ հին հուշի պատերին,
Փշրված սիրուս
Լույսի հատիկը,
Կրկին ծլում է թեկուզ այս պահին...

Իմ անուրջներն են
Երկնքով թռչում,
Նրքահյուս ցոլքով անթեւ երազի,
Անամպ է դառնում
Երկինքը հոգուս,
Անմար շողերով քո նուրբ աչքերի...

Հողմերի առաջ
Ժամանակների,
Խաբկանքի դիմաց՝ ակնթարթների,
Մնում եմ ես քեզ՝
Շղթայված այսպես,
Դու ես տիրուհին՝ իմ կյանք կոչվածի...

ԻՄ ԵՐԳԵՐՆ ՈՒ ԲԵՐՔԵՐԸ...

Իմ երգերը
Հին երգերը,
Թափառեցին որբ մենակ,
Երազներն իմ՝
Անէացան,
Սեւ քարի եւ մոխրի տակ:

Իմ վերքերը,
Խոր վերքերը,
Անսահման են անհատակ,
Կյանքից խլված
Երազներն իմ՝
Դեռ ննջում են հողի տակ:

Իմ վերքերն ու
Իմ երգերը,
Փնտրում են տունն
Իրենց տաք,
Տաճարներն ու
Խաչքարերն իմ՝
Լուռ տնքում են լճի տակ:

Սոնա ՎԱՆ

Ծնվել է Երևանում, մասնագիտությամբ բժիշկ է և հոգեբան: Ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում:

Առաջին գիրքը՝ «Փշրանքներ», լույս է տեսել Լոս Անջելեսում, 1996 թվականին:

Երկրորդ գիրքը՝ «Ես անուն չունեմ», 2003-ին:

Երրորդ գիրքը՝ «Ես ձայն եմ լսում»՝ 2006-ին, Երևանում:

Արժանացել է ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե մեդալին:

«Նարցիս» գրական-գեղարվեստական, մշակութային հանդեսի հիմնադիրն է (2006 թ.):

Առանձին գրքերով և բանաստեղծական շարքերով թարգմանվել է վրացերեն, ուկրաիներեն, ռուսերեն, բելոռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և ղազախերեն:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԷՏՅՈՒԴ

Գարուն է արդեն

նախ...
սպասվածի պես
սիրաքաղց թռչնի
դայլայլն է հնչում
ծանոթ քալետի մեղեդու նման
ապա...
ռումբերի
անճաշակ ու *ֆալշ*
մի կամերային շառաչ է հնչում
ու շվարում է անզորությունից
... լը-ռո-ղու-թյունս

գարուն է իբր
ու իբր սա է գարնան մեղեդին

ես
իմ զզվանքը
ցույց տալու համար
ինչպես բալետում
ծալված ձախ ոտքով
չորս ու կես անգամ
պտտվում եմ լուռ
աջ թաթիս վրա
ու մեջքով շրջվում
դեպի... աշխարհը

սիրտս խառնում է...
թեպետ գարուն է իբր թե
դրսում
ու
պտուկներ են հանել
...ծառերը

***

Երազումս կրկին դեմ-դիմաց էինք
ես ու չար դևը պատերազմի
քաղաքն իր պտուկը խցկեց
բերանիս մեջ
ընդհատելով բողոքս
ժամանակին

այստեղ՝ տատմորս
պարարտ կրծքի վրա
ես վախենում եմ ամեն ինչից –
- ասեկոսեից
Աստծո մահվան մասին
- թռչող ափսեների վայրէջքներից
- օզոնային շերտի բարակումից
- վտանգավոր բամբասանքից իշխանների
ռետինե դատարկ հոգիներով
որ պիտի համբարձվեն երկինք մի օր

բայց ամենից շատ՝ պատերազմից

ես անկյուն կկանգնեցնեմ քեզ
հավերժորեն
ժամանակ պատերազմի
(այլանդակ երեխայի ուսուցչի պես)
քիչ անց
երբ քնի տատմերս
սիլիկոնե կրծքերով
գլխիցս մեծ

1.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՏԻՍ ՄԵԾ ՊԼԱԶՄԱ TV-Ի ԷԿՐԱՆԻՑ

Սեղմում եմ կոճակը կառավարման
ու մատուցվում է ինձ պատերազմը
սուրճիս հետ
անկողնուս մեջ
կրակոցը ընդհատվում է
գովազդով նոր տեսակի
շրթնաներկի
ապա քիչ անց
օրորվում է կրկին մեխից կախված
հակագազը փղի կնճիթի պես

գարուն է... ու սակայն
արնագույնը ագրեսորի նման
հետզհետե ընդլայնվում է էկրանին իմ

ծառի տակ ընկածը զինվոր է
կարկտահարված
ոչ թե չհասած միրգ
մի տերևներին տես
քրտնած ճյուղի վրա
ասես իրենք են մաքառել ամբողջ գիշեր

կեսգիշեր է... TV-ն անջատվում է
ընդհատելով մետաղական ճիչը
զինվորի մոր

ես կամովի հավատում եմ
որ վերջացավ
պատերազմն
ու
եռանաքեմում

արդեն փոխվում է մարտիկը
հայելու մոտ
այտովս շոյում եմ մետաքսը
նոր բարձիս
մազերս նախ կողքի հավաքելով

գարուն է...
մանուշակի օրինական սեզոնը
երկրի վրա
բայց էկրանիս վրա
մանկապարտեզ ասես
ճաշից հետո
մանկադեմ զինվորներ են
թեք պառկած կողք-կողքի
ճերմա՛կ սավանի տակ
մաքո՛ւր ու հերմետիկ
ինչպես ձյուն

2.

TV ՌԵՊՈՐՏԱԺ

՝Նիցշեն ճիշտ էր
Աստված մահացել է

այդ ե՛ս եմ սոսկ
որ էլեկտրայի նման
չեմ կարողանում ընդունել
հորս մահը
ու
միտքս բրբրվում է
գիշեր-ցերեկ
վրեժի նոր վարկածներ
որոնելով

աթոռին՝ մի աչքը բաց
խըմ-փըսսս քնել է մայրս
ես դնում եմ TV-ին
MUTE-ի վրա (պատկեր առանց ձայնի)
օրոր նանի մայր իմ
օրոր նանի

օդային շքերթ է դեռ
էկրանին MUTE
(զինվորներ են ընկնում
առանց ձայնի)
տասնյակ թռչուններ
մետաղական
ռումբեր կտուցների վրա
ու
թևերի տակ

տեսնես սա՞ է դժոխքը
որի մասին
տատիկս պատմում էր
այդքա՜ն վախով

հանց տանկի հետ
սիրաբանող զիվորի ստվեր
մերթ տանկի վրա է ստվերը
մերթ տանկի տակ
հաղորդողը ժպտում է
առօրեական

առաջին անգամ չէ
որ պայթյունը
փոխում է տեղերը ստվերների

ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԱԶԸ

(քանզի շատ եմ սիրում տղաներին իմ սովորական)

Հետաքրքի՜ր է... մտածում եմ (օրորելով փեշս սորուն)
անապատը հանձարներ է ծնում
իսկ ես՝
տղաներ սովորական

ամեն անգամ
երբ վավաշոտ քամին
բարձրացնում է փեշը անապատի
մի նոր մարգարե է
գալիս աշխարհ
(Մի Քրիստոս... Մովսես... կամ Մուհամմեդ)

հետաքրքի՜ր է... երազումս այնտեղ էին բոլորը
նույն սեղանի շուրջ
և
մատուցվում էր ընթրիքը խորհրդավոր
եզրափակիչ վերջին պատերազմից հետո

իսկ ես ուսուցչի պես
բռունցքիս մեծ կավճով
շրջված գրում էի՝
հստակ ընթեռնելի

Վ Ե Ր Ջ
ինչպես ֆիլմից հետո սովորաբար

հ.գ
իսկ Հուդան... մոռացա... այնտեղ չէր
նա զոհվել էր արդեն հերոսաբար

***

Հայր մեր որ համր ես
ու հետևաքար
ավելի սո՛ւր է հոտառությունդ
ո՞նց ես դիմանում այս գարշահոտին
արյան
որ հավաքվել է այսքա՛ն հազար տարի

երանի ես ապրեի Հունաստանում
նախկին
Զևսի հարեմում աստվածների
ու խաղայի ե՛ս էլ խաղերը այն
որ կին աստվածներին էր ներվում միայն

ինձ կարապ դարձրու Տե՛ր... գոնե
երկարավիզ
որ նոր իշխաններին գայթակղեմ ես
կամ փոխի՛ր պատվիրանդ անձնապանի
ու թող նետվեմ ծովը Իոնի պես

Աստված հաշմանդամի որ երկնում ես
կրծքավանդակ առանց ոտքի... կավոտ ձեռքեր

մի՞շտ ես դու լռակյաց եղել այսքան
թե վերջերս ես միայն համրացել

ՅԱՐՎԱՐԴ

Յարութ ՎԱՐԴԱՆԵԱՆ (Յարվարդ) ծնած է Հալէպ, Սուրիա, 1973ին: Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն (AUB) վկայուած է որպէս Մեքենագիտական Ճարտարապետ: Հրատարակած է բանաստեղծութեան երկու հատորներ՝ «Եռանկիւն Արեւ», 2001, եւ «Լի», 2010: Անդամ է Սուրիահայ Գրողներու Համախմբումին:

ԼՈՒՍԱՁԵՐ

***

Չես կրնար անջատել ջերմութիւնը լոյսէն: Չկայ լո՛յս առանց ջերմութեան, թէեւ կայ ջերմութիւն անլոյս: Հեռու աստղը պաղած չէ. արեւ էր, յետոյ կրակն է հիմա իրիկնային խարոյկին որ կը ճարճատի աչքերուդ առջեւ: Լոյսի խաղ կայ աչքերուդ եղջերիկին վրայ, հիմա որ հեռու ես իբրեւ աստղ: Բայց չես կրնար տարանջատել զիս քեզմէ այդպէս դիւրաւ. ճարճատուն խարոյկ է պէտք ատոր համար:

***

Բայց կայ ջերմութիւն անջատ լոյսէն, քանզի ջերմութիւնը յուշն է գնայուն լոյսին: Ջերմութիւնդ թարմօրէն կը բուրէ անկողնի սաւանէն, կամ հետք կը թողու աթոռի բազմոցիդ վրայ: (Բոյր, որ զիս քանիինգ տարի ետ կը տանի): Ջերմութիւնն ափերուդ որ դեռ քիչ առաջ պարփակած էին մատներս պաղած: Կրակի խաղ կայ աչքերուդ մէջ, հիմա որ իրապէս հոս ցատկեցիր յանկարծ, իբրեւ խամրած ածուխ, որուն տաքութիւնը փակ աչքերովս կը կարդամ:

***

Եթէ լոյսն ես գիսաւոր աստղին, այս գիշեր. այս գիշեր երկնակամարին վրայ տարածուող յուշդ եմ բուրեր: Չկա՛ս, կը կրկնեմ, չկա՛ս առանց ջերմութեանս իմ անլոյս:

ՋԵՐՄՈՒԿ

Աւազաժամը գլխիվայր կը դարձնեմ
Բայց սաունայի աւազաժամը աւազ չունի

Ժամանակը անպէտ է սաունայէն ներս
Քանի որ իսկական ժամանակը ջերմութիւնն է

Մարմինս կը թարգմանէ վտանգը տօթին
Տաք տրամաբանութիւն կայ ուղեղէս ներս

Դուռը կը փորձեմ բանալ – չի բացուիր
Կը հրմշտկեմ ամբողջ էութեամբս դողդոջ...

***

Հոգիս բողբոջ՝ ձգողական ոյժ է հետապինդ
Իր հետ աւազը միշտ վար կը քաշէ իբրեւ արիւն

Աւազաժամի ապակեայ մարմնին բացար-
ձակապէս դատարկ թափանցկութիւնն է ան

Հոգի՛ս՝ «թագաւոր»-ը ճատրակի քարերուն
Այն որ չի բանտարկուիր սաունաներէն ներս

Ճատրակի մրցաշարք կար Ջերմուկի մէջ այդօր
Ու տօթէն պրծող բուն ախոյեանն էի... ես

ԱՆՁՆԱՍԻՐԵՆԻ

Անձնասիրութեան
ծառէս
երկուորեակ
երկուորեակ
տանձեր
կ'իյնան
Մին
- Առանձնութեան
պէս անուշ -
քաղցրութեան
ճիւղէն
կ'իյնայ -
ծառին
տուրքն է
ինքզինքին

Միւսը
- Իրայատկութեան
համով -
աշխատասէր
ճիւղէն
կ'իյնայ
կ'իյնայ
բեռնի մը մէջ
նախանձող

Տանձենիէս
Տանձենիէս
ոչ հեռու
Առանձնա-
յատկութիւնս
կը բուսնի

ԱՆա ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Անա Արզումանյանը ծնվել է Բուենոս Այրեսում, 1962թ.-ին: Իրավաբան է: Իրավաբանությամբ զբաղվում է տեսականորեն՝ մասնավորապես անդրադառնալով վերջինիս՝ Հայոց ցեղասպանության և Հոլոքոսթի հետ ունեցած առնչություններին: 1986-1999 թթ. օրենքի փիլիսոփայություն է դասախոսել Սալվադորի Համալսարանում (Բուենոս Այրես): 2008թ.-ին ուսումնասիրություն է կատարել Հոլոքոսթի և Երուսաղեմում վերջինիս հետագա ազդեցությունների վերաբերյալ: Դոկտորական ատենախոսությունը(մասնագիտացումը՝ հոգեվերլուծաբան) պաշտպանել է Escuda de Orientactio'n Lacaniana ինստիտուտում: Ներկայումս որպես հոգեվերլուծաբան՝ աշխատում է Բուենոս Այրեսի մի շարք հոգեբուժական հաստատություններում:

Գրում է իսպաներեն: Տպագրվել են պոեզիայի հետևյալ ժողովածուները՝ Labios (1993), Debajo de la piedra (1998), El ahogadero (2002), Cuando toda acabe toda acabara' նովել, La mujer de ellos (2001), գրառումներ, La granada (2003), Mia(2004), Juana I(2006), Արգենտինայում հայկական սփյուռքի մասին էսսե: Թարգմանել է Սյուզան Գուբարի «Հոլոքոսթի երկար ու կարճ պատմությունը», Լուսիեն Ֆլափիեր Մազուրի Sade et l'ecriture de l'orgie (2006) ստեղծագործությունը:

2009 թ.-ին իր պոեզիայի մասին ընթերցումներով հրավիրվել է հանդես գալ Նյու Յորքի համալսարանում: Նույն համալսարանում լատինամերիկյան գրականություն է կարդացել՝ որպես հրավիրված դասախոս: Էլֆրիդա Ելինեկի, Քլարիս Լիսփեքթորի և Դիամելա Էլթիթի աշխատություններին նվիրված նրա La mujer de ellos գիրքը Անդրեա Ջեփթանովիչի կողմից դասավանդվել է իսպաներենով (Casa de las Ame'ricas): Նրա El depo'sito humano: una geografia de la desaparicion էսսեն Լեոնարդո Սենկմանի կողմից ներկայացվել է Սան Փաբլոյի համալսարանում (Բրազիլիա) Linguagens do Oriente. Territorios e Fronteras սեմինարին (2010):

***

Գուհաբանական աղօթք մը
աղօթք մը որ կը հանդարտեցնէ
դանդաղ կորովներ, որոնք կը հեշտացնեն:
Միամտութիւնս անհուն պիտի ըլլայ
երբ մարմինդ անոր հպի,
եւ այդ գոյութենէն ոչինչ պիտի մնայ:
Անփոյթ գեղեցկութիւնը
փշաթելերը հաճելի կ՛ընէ
ցամքեցնելով յորդարատ ջուրերը:
Աքքահայրերը, բանադրուած
աքքահայրերը հեշտանքին ի տես կը ճչան
իրենց զլացուած սիրոյ եզրին:
Մեր անսպաշտպան ըլլալը առանձնութիւնը
կը քաւէ:

***

Տունը պարպել:
Մարմնին սպասումը խանքարել
օտար ձեռքերու մէջ:
Եւ արկղը բանալ կիսով,
Տրոփող եզրերը թաքցնելով:
Ու տարուբերիլ,
ժայռէն, հախճապակիէն դուրս ելլել,
հիւանդութեան մէջ իյնալ, որ մեզ կը վերածէ
այն ցնցոտիին որ պահարաններուն մէջ կը կծկուի:
Ուրեմն ի զուր պիտի խայթէ
սահմանագիծը ուր կը պարեմ:
Տկար քաջութիւն ժառանգած պիտի ըլլամ,
մեռեալի անզօր ընդդիմութիւն մը
նկատողութեան չառնուած սենեակներու մէջ:

***

Տունը վայր մըն է
ուր մարդիկ կը քնանան,
ուր աղտոտ պնակները կը կուտակուին:
Բան մը որ գտնուեցաւ
սեղանի սփռոցներու բիծերուն մէջ:
Մնացորդներ խաշած միսի
սաւաններուն կարկտաններուն նման:
Աղտոտ լաթը կը դիզուի սակառներուն մէջ:
Կը գումարուին, կը հաւաքուին, կը սեղմուին
երազած տանս մէջ
ձեռքդ բառեր կը գրեն
իմ վիրաւոր զառիթափին վրայ:

***

Ծեր ձեռքի մը
տձեւ մատներուն նման,
գալարուած երկաթացօղերը
ցոյց կու տան տիրապետութիւնը
անշքացող Երեւոյթներուն:
Այնքան բարձր և այնքան առանձինն,
այնքան անպէտօրէն մերկ,
փլատակի վերածուած սենեակներուս
անշարժ գերաններուն նման
առաստաղի երկաթները ոչ մէկ բանի կը ծառայեն
փլչած սենեակներուս:

***

Այն ինչ որ կը քամուի ժանգն է,
ապակիներով ոռոգուած անդունդ:
Վերջնական փոսն է
որ կը հմայէ,
այն ինչ որ մեզի շքերթով կը հրէ:
Մի՛ կարծեր որ ցողն է
որ կը մեղմացնէ անթեղները:
Անկեղծ ենթարկումը,
հաւատարիմ սնունդն է ողջախոհներուն,
մեկնումի դաժանութեան մէջ տառապանքներ:

ՍԵՒ ԾՈՎ

Եթէ աչքերդ բարձրացնես, վանքերու մէջ պիտի տեսնես կամարներուն ներքինը: Ապակեպատ աղիւսներու շարաններ, կեդրոնական շրջանակ մը. Լոյսերու եւ խաւարի տարօրինակ խաղ մը լուսամուտներէն իջնող լուսաւորութեամբ կազմուած. Մոգերը, լարախաղացները, ցոյց կու տան ինչպէս լեռ մը, խորհրդային զինուորական կառքերու ժանգոտած աւելցուկով, կրնայ սրբազան խորան մը ըլլալ: Կամարաձեւ խուցեր դռներու երեւէն, կամարներով նոյնպէս:

Կրկէսին մէջ օրհներքին չափով, լարախաղացը իր կեանքին վերջ կը դնէ որպէսզի միսերուն կեանքին վերջ տայ: Լարախաղացը ցոյց կու տայ լարէն նետուելու իր ձեւը. Պատերազմական կառքեր, ամոնիօ, ծծմբական թթու:

Դիտողներուն վրայ:

Կը փլուիմ:

Մինչեւ ոչնչացում:

Քեզ կը վախցնէ՞: Քեզ նոյնպէս սիրեցի այսպէս: Եւ այս սիրելու իմ ձեւը, կենդանիներու լափելու ձեւն է, երբ յաջորդ օրը չեն յիշեր, որովհետեւ չեն կրնար հաշիւը ընել իրենց կերածէն, եւ կը վերադառնան, վայրենի, զոհին: Իմ սիրելու այս կերպը, այս ոչնչացումն է որ կը

խնդրէ որ աչքերդ բարձրացնես եւ վանքի լուսամուտէն իջնող լոյսը տեսնես, կրկէսին մէջ, Ստեփանակերտի այս կորսուած սենեակի մէջ:

Կործանումը կը մերժէ ցաւին օգտակարութիւնը, սիրելիս: Ոտքերուս եղունգները կը ներկեմ գրեթէ սեւ խիտ կարմիր գոյնով: Կը դնեմ երկար օղակներ, արծաթեայ կոչականներով: Քեզ կը պարեմ տօնելով մեր աւերակը: Ամէն լաւի զոհատօն:

Կը զարնես. Գլանաձեւ տուփ մը, ձիգ թաղանդով փակած: Կը պարեմ թմբկաթաղանթներուն մէջ մատերուդ տկտկոցով:

Թեւերս կողերուն, ինչպէս խեղդուած, ձեռքերս՝ գլուխս վրայ հրելով: Ես՝ թիկունքս վեր, քեզ անյաղթ կը դարձնեմ իմ պարտութեամբս: Մինչեւ քաշքշուիմ հայելիի մը առջեւ, ցոյց տալու համար աչքերուս կրկէսին ինչպէ՜ս քեզ կը սիրեմ:

Որոշ արեւ մը մեր դանդաղ ժամանակները կը թափանցէր: Այս ալ Արարատն էր: Զիս կը դիտէիր անկողինէն, ես դեռ մերկ եւ կանգնած: Կը կեցնէիր նայուածքդ եւ ես կը տեսնէի գագաթը, բարձրացող իր փայլուն ձիւնի շերտը: Վայրենի կատուներ եւ օձեր, քիրտ հովիվներ իրենց ոչխարներով, լուսաններ եւ առիւծներ, եւ այնքան պաղ ձիւնէ որդերը, որ կրնային սառեցնել կերակուրի աման մը: Այս ալ Արարատն էր: Քու նայուածքդ օձերուն վիշապի կը վերածէր: Քու աչքերդ աւազոտ լեռնալանջին վրայ ուր իշխեր էին ձարեր, շահեր, սուլթաններ: Բոլոր ցեղերը այս բարձունքներէն կու գային: Դժուար է երեւակայել աւելի ազդեցիկ տեղ մը որպէս աշխարհի կեդրոն:

***

Երբ կը քնանայի, անութներս կը քնանային, եւ ոտքերս՝ ոչ: Բերանը կը քնանար, բայց ոչ ականջները: Թեւերը կը քնանային, ոչ՝ մատները: Ամիսներով, տարիներով մարմնի լման մասեր մարելու ունակութիւնը վարժեցնել, այնպէս որ կարենայինք այնտեղ ռազմաթերքը պահել... Մեր մարմնով մառան մը ընել: Տղամարդիկ սեռական օրկանը չուանով կը կապէին, չմեզել վարժուելու համար: Եթէ բոլորս պատերազմ խաղանք, ես կը մտածեմ որ պատերազմ պիտի ըլլայ: Եթէ ծածկենք հնդեղէգի մը ծայրերը, հնդեղէգը ռումբ կը դառնայ: Եթէ մէկ ծայրը բաց թողենք, նոյն եղէգը պայթումով կ՚արձակուէր:

Սրբազան վայրերը, Շուշիի լեռան լանջին գտնուող փոքր բնակ-

չութիւններ: ռումբ մը ճենապակի բեկորներով լցուած, արձակուած կ'-ելլէին: Մորթը կը վիրաւորէին: Ոսկորները կը ջարդէին: ճախճապակիի նրբաթէլներ, կամ ջարդոնի կտորներ:

Նախ կը սորվեցնէին վախ ունենալու, անասունները կը գողնային, պահեստները կը քանդէին: Շուշի: Պատեր կը փլուին: Հին թաղ մը, շարք մը շէնքերով ոմբանետներով զինուած հայ դրօշակով ուղղաթիռներու ծակերով: Ղազանչեցոց մայր տաճարը, ճերմակ կրաքարէ, ներկայիս՝ պալատ մըն է աւերակներու մէջ:

Պատեր կը փլուին: Պտուտակ մը մարդոց հիւսկէններու մէջ որ կը ջերմանան փոքրագոյն խարոյկներու շուրջ: Եթէ պատերազմ խաղանք, պատերազմ պիտի ըլլայ, կը մտածէի: ճակատամարտը երեխաներուն մարդ կը դարձնէ: Բաց թեւերուն առջեւ եւ մեռած ես-ը, երեխաները այո՛ այո՛ մեռած եմ, կը պատասխանէին: Այս ձեւով մարդ կ'ըլլային: Առանց լոյսի փողոցներէն կ'անցնէին, մայթերէն կախուած հագուստներու միջեւ: Հագուստներ, որպէս վանականի թիկնոց, կը շրջէին երկինքը Ստեփանակերտի մը փոքրիկ տուներով, որոնց տուները, դռները բերուած էին Աղտամի ուրուական քաղաքէն: Մոխիրներու վերածուած քաղաք, առանց մարդոց, առանց կառքերու, առանց աղմուկի: Ստեփանակերտէն քանի մը քիլոմեդր անդին, պատերազմ խաղած էինք, եւ պատերազմը պատահած էր: Մեզի, որոնց սպաննած էին. ա՛ռ քեզ, սպաննեցի քեզ, ըսելով: Մեզի, որ պատասխանեցինք. այո՛, մեռած ենք, ենք այլեւս երեխայ ըլլալու դադրեցանք եւ իրական պատերազմը ըրինք:

Հողի այրող եւ կպչուն գոյնդերը, որ մարդոց եւ շէնքերուն կը փակչուէին, ձեռքերու սարսափը կ'ամօքէին: Յատկելէն առաջ կուլ տուող լորձունքին յատակին մէջ քայլերգ մը լուռ էր. Անհամբերութիւն մը. Հանդէսի գնա՛. հաստութիւն մը. եւ ես, որ կ'երերամ: Ես, մատերուս եղունգին տակ հրացոլք մը. Եւ հետապնդող Ուրախութեան Օրհներգը, մենակութեան մը մէջ, որ բոլոր մենակութիւնները կը գերազանցէ: Դէմքերու վխտալ մը:

Լորձունք կուլ կու տամ: Կը վազեմ դէպի եռացող հրաբուխներու բնաչնչում մը: Առանց ծովափի ովկեանոս մը. շշմած ալիքի մը կատարի նման, անսահման ջուրի մը մէջ, ուր վերջապէս ջուրը կը լուծուի: Ես առանց ընտելացուելիք Ասիոյ ձիերու: Խիտ: Ամբողջովին: Ոչ ատամնաւոր: Ոչ բլիթաւոր: Լրիւ ձի մը, երկար ոտքերով արագ վազե-

լու համար: Բաշեր որոնցմէ չեմ բռնուիր: Այս շրթունքները եւ կը վերցնէ եւ օդը կը յափշտակէ, ձին, սերմանիչ մը: Տախտակէ դեկ մը կը դնեն, առանցք մը, կամ շառավիղ մը: Ես միւս կողմէն,՝ չեմ կրնար բաշերէն բռնուիլ:

Դո՛ւն հետեւողական, դո՛ւն կայուն, դո՛ւն անսասան: Ամբողջութեամբ այնքան մեծ տախտակի վրայ, որ քու գրոհին կը դիմադրէ, որպէսզի, իւրաքանչիւր շարժումին, քու թաթերդ զիս չձգմեն: Եւ ես, հոն, դեկին ետեւէն, շուարած, զօրով կը շնչեմ: Ասիկա նոյնպէս Արարատն է: Այս շնչարգելքը: Այս բարձրութեան ցաւը, որ կը ստիպէ որ լանջերուն յենուիմ: Արարատի լանջերը, ձիուն քամակը: Աչքերդ կը կապեմ եւ քարտէզ մը կը գծեմ մինչեւ գիւղ իջնելու համար, Շուշիի սուրբ քաղաքը, Ղարաբաղի Երուսաղեմը: Բացիկը կը շօյեմ, սիրելիս, Արարատի լանջերին իջման քարտէզին քու գծագրութիւնը, Ասիոյ վայրենի ձիերու թաթերը:

Ֆոսֆորը օդին հետ շփելով, կ'այրի: Այրող ֆոսֆորի կաթիլները դիւրութեամբ կը ցրուին:

Մինչ լանջերուն տեղաւորուած տախտակէ տուները կ'այրէին, մենք անտառին կը պահպըտէինք, ձիւնի մէջ կը թաղուէինք, կամ կը պատսպարուէինք ժայռի մէջ ուղիղ փորած ննջուղներու մէջ: Մեզ հետ կը տանէինք թրջուած սաւաններ, չըլլայ որ տան ապաստարանը հրդեհուէր: Յետոյ փողոցային շուները սովորութիւն ունէին իրենց գործը կատարելու, դիակները լափելով: Ես ննջուղներէն կ'ելլէի խլամական հագուստով, որպէսզի չկասկածէին: Ոսկէօծ թելերով կապոյտ հիձապով մը կը ծածկուէի, որմէ կախուած էին պղինձէ մետաղադրամներ ճակատին վրայ, իւրաքանչիւր մատի վրայ մատանիներ կը դնէի շղարշներ մինչեւ արեխներու հասնող, ուր ունէի նաեւ ծովակնով մաշուած ալփաքէ մատանիներ: Ոչ միայն իրենցմէ մէկը կը նմանէի, այլ՝ հագուստը թոյլ կու տար թաքցնել պայթուցիկները:

Ասիկա նամակ մըն է, սիրելիս:

Այնպէս ինչպէս կտակարանները օրինաւոր կարգով մը հնարած նամակներ են, այս բառերը, որեւէ կապի դուրս, փոշիացող բանի մը նկարներ: Հոս կը ցրեմ, մակարդուած ձեւեր կ'արձակեմ: Կը վերահնարեմ մինչեւ յաւիտեան շոյանքի պէս, պայթիւնի պէս բառեր: Շարժումեւ մը որ երկխօսութիւնը ծակէ: Պինդ զանգուած մը, առանց խոռոչներու: Բան մը քեզմէ, սեղմ, միսդ որ առանց ընմիջումններու կ'ամ-

փուփի եւ կը տարածուի, պինդ: Կտորներ որ ուրիշ կտորներու մէջ կը մտնեն: Մէկը միսին կը յարմարուին: Ուժգին: Պինդ: Պատմութեան իմաստը կը խանգարեն:

Կը լսես:

Երջանկութեան Օրներգը կ'երգեն: Չեն խօսիր:

Ասիկա նամակ մըն է, փխրուն ձեւերու հնաբանութիւն, խաչաձեւուած, միաժամանակ, բառերու, մետաղէ մանր բեկորներու պէս, մեծ արագութեամբ մարմին մէջ կը մտնեն: Մարմնի հիւսուածքներու փոխանցուած եռանդ: Եթէ բառերու կշիռքը կը կրկնապատկեմ, եռանդը կը կրկնապատկուի: Եթէ արագութիւնը կրկնապատկեմ, եռանդը չորս անգամ մեծ կը դառնայ: Բեկորը մարմնէն կ'անցնի, եւ միւս կողմէն կ'ելլէ: Բայց կրնայ նաեւ մարմինը չանցնել:

Կրնայ պատահիլ:

Այս է, ինչ որ պատահեցաւ:

Եթէ բեկորը մարմինը չանցնի, այնտեղ կը տեղաւորուի իր ամբողջ եռանդը փոխանցելով մորթէն աւելի ներս, ոսկորներէն աւելի դուրս: Աւերում մը: Ջղաձգութիւն մը: Երկու. Երեք. Չորս անգամ: Ասիկա Արարատն է նոյնպէս:

Թարգմանութիւն՝ Կարապետ ՀԱՍԱՍԵԱՆ

ԱՐՁԱԿ

Պերճուհի ԱՎԵՏԵԱՆ

Իզմիրի ջարդէն ընտանիքին հետ խոյս տուած ու Յունաստան-Հայաստան-Իրանէն քարշ գալով Հալէպ հաստատուած հօր ու Աղեքսանդրէտի տեղահանումով Հալէպ հասած մօր անդրանիկ զաւակն եմ: Ծնած ու հասակ նետած Սուրիոյ Հալէպ քաղաքին մէջ:

Յաճախած եմ Հալէպի Հայկազեան նախակրթարանը, ապա Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանը: Գրելու առաջին քայլերս քաջալերուեցան ճեմարանի աշակերտական «Ծիլեր» պարբերաթերթին մէջ: Թէեւ հայ գրականութեան հանդէպ խորունկ սէր տածած եմ, բայց այս երկրագունդի վրայ ապրելու համար նիւթի անհրաժեշտութիւնը ու մանաւանդ փայլուն արդիւնքով պագալորիան՝ ինքնաբերաբար մղեցին զիս հետեւիլ Հալէպի երկրաչափական համալսարանի շինարարական ճիւղին:

Ի դէպ, ունիմ այն համոզումը, որ ուսողութիւնը կ՛օժանդակէ մարդ արարածի ուղեղի աւելի աշխոյժ բանեցման.. Գրած եմ ճանապարհային երկրաչափ, պետական պաշտօնեայի չոր առօրեայէն անջատուելով: Հանդէս եկած եմ յատկապէս պատմուածքներով Շիրակի, Գանձասարի (շաբաթաթերթ ու բացառիկ), Կամքի, Շաւիղի, Երթի (տարեգիրք), Կամարի մէջ: Ունիմ երկու գիրքեր, «Կտակը» 1994-ին, «Միս Նիփիէ մայրիկը» 2006-ին լոյս տեսած... ու տասնեակներով ցրուած պատմուածքներ, նաեւ անտիպ գործեր որոնք շուտով պիտի ամփոփուին հատորի մը մէջ:

Մարաշի հայրենակցական Միութեան «Նոր Մարաշ» պարբերաթերթի խմբագիրն եմ: 2009-ին «Այր եւ կին» պատմուածքս Հայաստանի գրողներու միութեան կողմէ կազմակերպուած կարճ պատմուածքի մրցոյթին յաղթող ճանչուեցաւ:

ԱՆՑՆՈՂ ՕՐ ՄԸ ԵՒ ԽՈՀԵՐ

- Առտուայ ժամը հինգին նախաճաշըըրաւ, դեղերը խմեց, չի ձգեր որ աղօթքներս կարդամ, շուրջը պիտի դառնաս,- մայրս կը բողոքէ...

«Ատ ալ աղօթել է» կը մրմնջեմ..

- Հը՞.. բան մը ըսիր..

- Չէ, չէ, միս սենեակ անցիր հանգիստ կարդա՛ աղօթքներդ, ես հոս եմ:

Մայրս ամէն օր առաւօտեան նոյն աղօթքները կը կարդայ, կը նեղանայ երբ ընդհատուի, իսկ ես կը հաւատամ որ հիւանդ հօրս հոգ տանիլն ալ աղօթել է, կը նախընտրեմ մտածումս չբացայայտել, ոեւէ մէկը չնեղացնել.. գիտեմ որ մայրս իր պարտականութիւններուն մէջ չի թերանար, իսկ հայրս՝ ինչպէս բոլոր հիւանդները, միշտ դժգոհ է..

Մօրս շրթունքները կը շարժին, աչքերը անթարթ յառած է գրքոյկին, կը զարմանամ թէ ան ամէն օր կարդալով այս աղօթքները տակաւին անգիր չէ ըրած.

- Կարդալդ չի վերջացաւ.- կը դժկամի հայրս:

- Ըսէ՛ ինծի, ի՞նչ կ'ուզես ես կը բերեմ.- կը ջանամ լուծել հարցը:

- Ինքը.. ինքը .- մատնացոյց կ'ընէ մօրս:

- Կը տեսնե՞ս, մեղք կը գործեմ.- նեղացած աղօթագիրքը կը փակէ մայրս:

- Դեղը կոկորդիս փակեր է.- հայրս իր ամենօրեայ բողոքներէն առաջինը կը ներկայացնէ:

- Քիչ մը ջուր խմէ.- մայրս իր ամենօրեայ լուծումը կ'առաջարկէ:

- Նոր գիտ ըրիր,- հայրս երգիծական ոճով կը պատասխանէ:

- Շոքոլայ բերե՞մ.- մօրս ամենօրեայ երկրորդ լուծումն է:

.....

- Բեր նայինք.- հինգ վայրկեան դադարէ ետք հայրս կը յօժարի:

- Ջուրը պուտ-պուտ կը խմէ, հիմա ալ պզտիկ կտոր մը շոքոլայ առաւ, կոկորդն ալ նեղ... դեղը ինչպէ՞ս վար պիտի իջնէ.- մայրս

կը տրտնջայ:

- Ի՞նչ քիթիդ տակէն կը խօսիս նորէն, ըսելիքդ մարդու պէս խօսէ:

Եկեղեցիի զանգին ղօղանջը կը միջամտէ աղօթքի կը հրաւիրելով հաւատացեալները.. մայրս ու դրացուհի Տիկ. Սիրվարդը Քառասնից Մանկանց մայր եկեղեցոյ առաւօտեան արարողութեան հազուագիւտ ներկաներէն են:

- Եթէ այս հաւատացեալ մամիկները օր մը ալ չըլլան...

Հեղցուցիչ տաք է, Հնդկաստանէն խուժող անկոչ, անքաղձալի հոսանքը ճնշած է երկրին վրայ, կարծես յոյժ գաղտնի պայմանագիր կնքած կը մրցակցի միապետական երկրին հետ, տնտեսական ճգնաժամն ալ առաջ քաշելով...

Իսկ ճգնաժամը դարձած է մամուլի, համացանցի, հեռատեսիլի գլխաւոր լուրերուն վերնագիրը, վերնախաւը... Ճգնաժամը հնարող՝ գերիշխան երկրէն բարեկամներ արձակուրդի կու գան երրորդ աշխարհ համարուող մեր երկիրը, քաղաքի անտանելի տաքէն, աղտոտութենէն կը գանգատին, բայց կ'ուտեն, կը խմեն, լաւ քէֆ կ'ընեն, կը հանգստանան, «Նօն ու Յան» կը խառնեն մեր «Ահլան ու սահլան... միթ սալամէ»-ին, յետոյ ալ «ցը... պայ-պայ..», քիչ մը արցունք, յուզմունք, կը վերադառնան տուն: Հեռաւոր ափեր հասնելով շնորհիւ արագ հաղորդակցման օրհնեալ կապին՝ ել. նամակով կը գրեն.

«Ֆէյսպուքի վրայ բոլորը մեր նկարները կը դիտեն, դուն ինչո՞ւ Ֆէյսպուք չունիս».

Այս Ֆէյսպուքն ալ դարուս նորաձեւութիւնն է, մեր երկրին մէջ դժուարութեամբ իրագործուող, բայց մեր պատանիները, երիտասարդները ինչպիսի հնարքներով Ֆէյսպուք «կը շինեն» ու երկար ժամեր քամուելով համակարգիչներուն առջեւ կը թերթատեն համացանցային էջերը (սխալ էր արտայայտութիւնը) մկնիկին գլխուն չըթթացնելով համացանցի կայքերուն մէկ էջէն միւսը կ'անցնին, բազմաթիւ նկարներ կը դիտեն, ծանօթութիւններ կը հաստատեն, երկար տարիներ կորսնցուցած բարեկամներ կը յայտնագործեն, (չաթ կ'ընեն) կը շատախօսեն:

«Ապրէք երեխէք, բայց մեզ պէս չ'ապրէք»

- Մամդ ուշացաւ.- խոշորացոյցով ժամացոյցին կը նայի ու ժամը կ'որոշէ հայրս:

- Կ'երեւի արարողութիւնը երկարեցաւ.- կը փորձեմ հանգստացնել:

- Ինչ երկարիլ… հիմա ամէն ինչ կարճ կապելու կը նային.- կ'եզրակացնէ ան:

- Էհ, արագութեան դար է.- կը համաձայնիմ ես:

- Բոլորն ալ խարդախ, ստախօս մարդիկ են… միայն իրենց շահը, կը տեսնե՞ս ինչ ծրագիրներ կան… շօ պիզնես է եղեր,- ան կը մատնանշէ հեռատեսիլը:

Պիզնես, պիզնեսմէն, ամէն կարեւոր հարց պիզնեսով պէտք է լուծել, այս բառը ինչպէս շատ մը նշանաւոր ու կարեւոր բառեր (գոնկրէտ, դրանսբորդ, կուլտուրայ, ինֆորմացիայ) անցած են գրական մեր լեզուին, այս բառերուն հայերէնները չունի՞նք, չենք փորձեր ունենալ, ստեղծել… կ'երեւի ռուսերէն-անգլերէն հնչիւնները աւելի տպաւորիչ են:

- Արաբերէն կը դիտե՞ս.- հայրս կը նկատէ հեռաղեկով աւանդական մեր կայանը փոխելս:

- Լուրերը լսեմ, տեսնենք այս տաքը ինչ պիտի ըլլայ..

- Դուն ալ արաբ եղար…

Մեր տան մէջ միապետական հրովարտակով տարիներէ (այն օրէն երբ արբանեակային հեռարձակումով կրցանք դիտել հայկականը) միայն հայկական կայանները կը դիտուին.. բացթողում կատարողը հօրս տոմարին մէջ արդէն կը գրկուի հայկական պատկանելիութենէն: Մեր հայրենիքի դիտանկիւնէն որպէս քաղաքացի մենք ծագումով հայեր ենք, հայկական քաղաքացիութեան իրաւունք ստանալու համար պէտք է պաշտօնապէս դիմում ներկայացնենք: Հօրս ընտանիքի արմատները ծագումով կը հասնին մինչեւ Արցախ, ես արդէն լրջօրէն կը մտածեմ Արցախեան քաղաքացիութեան մասին, որը տակաւին պաշտօնապէս չէ ընդունուած, իսկ աշխարհ կոչուած մոլորակին վրայ ապրողները միջազգայնօրէն քաղաքացի կը համարուին միմիայն որպէս պետութիւն ընդունուած երկիրներու բնակիչները, ուրեմն Արցախցիները… կը փորձեմ որոշել անոնց պատկանելիութիւնը, քաջ գիտնալով թէ անոնք ալ

հայեր են... Կ'ըսեն կիներուն պզտիկ խելքը չի հասնիր քաղաքական դարձուածքները ըմբռնելու, ինչպէս նշանաւոր Ֆութպոլային դիւանագիտութեան, առանց փոխզիջումներու համաձայնութիւն կայացնելու ցանկութեան... կնկայ խելքի հարցով Ստալինեան շրջանի Սովետական Հայաստանէն խոյս տուած մեծ հայրս ալ նոյն կարծիքի էր, կ'ըսէր «կնիկներուն մազը երկար կ'ըլլայ խելքը կարճ»... Ես մազերս միշտ կարճ պահած եմ, որպէսզի լուսահոգի մեծ հօրս խօսքը գետին չմնայ:

- Ինչ հաւատացեալ ժողովուրդ են.- մայրս հաւատքի իր ուղեգծով կը դատէ այլազգի ծոմ պահողները:

«Ռամատանի» սուրբ ամիսն է, քաղաքը մինչեւ կէսօր ամայի է, յետմիջօրէին կը սկսի վազքը ուտելիք ապահովելու, ինքնաշարժներու շչակները, մարդոց պոռչտուքը, քրտինք, հեւք, խառնիճաղանճ: Երբ արեւը կը հաւաքէ հեղցուցիչ շոգը սփռող իր ճառագայթները ու արդէն կատարած իրեն վստահուած պարտականութիւնը կ'ուղղուի արեւմուտք, փողոցները ամբողջութեամբ կ'ամայանան, կը լսուի թնդանօթի զարկը, «Իֆթարի» ժամն է..

Եւ համատարած հանդարտութիւն:

Գիշերը կը վերսկսի եռուզեռը, փողոցներու մէջ մարդոց, մանուկներու կանչը, ինքնաշարժներու հոսքը կ'աշխուժանան մինչեւ արեւածագ: Այս օրերուն կեանքը շրջուած է, գիշերը-ցերեկի, ինչպէս մեզմէ շատերուն մտածելակերպը:

- Մենք արդէն հինգ տարի է Անթալիա կ'երթանք հանգստանալու, հիանալի տեղ է, իրենք ալ շատ հիւրընկալ, ազնիւ...

Զարմացած հայեացքիս որպէս պատասխան ոտքը ոտքին նետած, ազնուական խաւի պատկանող այս տիկինը, որ ունի այն ինչ ուրիշները չունին.. Ֆիլիփինցի ծառայ, շքեղ հագուստներ, գոհարեղէններ եւ... վաճառական ամուսին, կը շարունակէ.-

- Այդ ջարդողները ալ չկան.. ասոնք ինչ յանցանք ունի՞ն:

Մնաց խորին շնորհակալութիւն յայտնենք Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին վերանորոգելու եւ մեր (թէ՞ իրենց) մշակոյթի կեդրոնները պահպանելու համար:

Մնաց արդարացնենք ջարդարարներուն անմեղ յաջորդները, որոնք պատուարժանօրէն կը մերժեն ընդունիլ ոճիրը ու փաստեր

կը ներկայացնեն, թէ ոճրագործներն ու յանցագործները դաւաճան հայերը եղած են..

«Թո՛ւ..» սրտխառնուք ունիմ..

- Ասոնք մարդ չպիտի ըլլան.- հայրս կը մտմտայ:

Մենք ալ կը պնդենք որ խելացի ժողովուրդ ենք եւ իբր քաղաքականութիւն խաղալով կ'իյնանք ծուղակ: Խուռներամ կը վազենք «հարեւան երկիր» ուխտագնացութեան թէ գնումագնացութեան ու վերադառնալով այնպէս կը գովազդենք, որ երկրի «տէրերը» կը զարմացնենք:

- Երբ պիտի ուտես.- մայրս կը փութայ կէսօրուայ ճաշը մատուցել:

- Անօթի չեմ,- ամենօրեայ պատկերն է... - է, ի՞նչ ունիս ուտելիք,- հայրս արդէն փոխած է միտքը:

- Բժիշկը ըսաւ որ շորպա պէտք է ուտես...

- Այդ շորպան ինքը թող ուտէ... բժիշկ են, ի՞նչ կը հասկնան որ, գիտցաւ թէ մէջքիս ցաւը ինչէն է.. պարապ բան, բոլորն ալ վկայական կ'առնեն պատէն կախելու համար,- կը հակաճառէ հայրս:

- Ի՞նչ պիտի ընեմ այս մարդուն հետ... դուն ալ այդ գոմբիւթըրին առջեւ հոգի կը մաշեցնես:

- Այդ գրել- մրելը պարապ բան է.- կը յիշեմ գրող-մտաւորական ուսուցիչիս խրատը:

Անճրկած են բոլորը, դպրոցները կը կծկուին, գրական հանդէսները կը դադրին լոյս տեսնելէ, մայրենին կ'աղաւաղուի, օտար բառերը կը վխտան մեր երիտասարդներու բառապաշարին մէջ, արեւմտահայերէնը կորուստի վտանգին սահմանագիծը հասած աշխարհի քանիերորդ լեզուներէն կը համարուի:

- Պիտի գրեմ նոյնիսկ միակ կարդացողին համար,- ես վճռական եմ:

Թաղարներուն մէջ կանաչութիւնները կը խամրին, հնդկական տաք հոսանքն է... Հնդկաստանի մէջ մարդահամարը կը վկայէ թէ բնակչութեան թիւը անհամեմատելի աճ կ'արձանագրէ, մինչ մենք կը սեղմուինք, կը նոսրանանք, կը սահմանափակուինք, կարծես բաւարար չէին փակուած սահմանները:

Հայրս ապուրը անուշ ըրաւ, հիմա խաղողի անհամութեան, խնձորի տհասութեան, ձմեռուկի անպակութեան մասին կը դասախօսէ:

- Առաջ ուտելիքները համ ունէին, ամէն ինչ կը խարդախեն, ստախօս, յոխորտացող մարդիկ...

«Հարեւան-թշնամի երկրի» նախագահը պաշտօնական արարողութեամբ կը քաշէ պարանը բարձրացնելով աշխարհի ամենաբարձր՝ Կինէսի գրքին մէջ արձանագրուելու թեկնածու դրօշը: Տակաւին կը յոխորտայ, թէ մօտ օրէն այդ դրօշը պիտի ծածանի Արցախի վրայ....

«Մեռնեմ զօրութեանդ Աստուած» կ՛ըսէր մեծ-մայրս... Ամենակալը դրօշակը սեփական մայրաքաղաքի երկնակամարին վրայ անգամ ծածանելու արժանի չտեսաւ:

Կինէսի գրքի փոխարէն պատմութիւնը պիտի արձանագրէ գերանակնկալը, ծակոտած ու պատռտուած դրօշի մասին... «Մեռնեմ քամուդ զօրութեանը»:

- Ընթրիքդ դնեմ.- մայրս կրկին սնունդ ապահովելու իր տարերքին մէջ է:

- Էհ... ինչ ունիս:

- Տունը փառք Աստուծոյ ամէն ինչ կայ, դուն որոշէ... մարթատել կ՛ուզես... ժամպոն...

- Գիշերը միս կ՛ուտեն:

- Կաթ, պանիր հաց.- հայրս ձեռքը կը թօթափէ դժկամութեամբ:

- Ծուարեցայ այս մարդուն հետ:

Ծուարելու բան չկայ, Հայաստանի մէջ որոշած են բանալ օտարալեզու վարժարաններ, մտաւորականները կը բողոքեն, պատանները բռնած կոկորդ կը պատռեն, շունչ կը վատնեն.. Այս ժողովուրդը յառաջդիմելը կը մերժէ... օտար լեզու, թուրիզմ, սթրիպթիզ... տակաւին Սամուէլ Կարապետեանը քարերու, կորսուած քաղաքներու ետեւ ինկած է... տեսէք ինչպէս կը ծաղկեցնեն քաղաքը նորանոր շէնքերով, հիւսիսային պողոտայով, հինը քանդելով, նորը ծաղկեցնելով:

- Համ, հոտ չունի այս դրածդ,- հայրս կը հրէ ափսէն:

- Այս մարդուն հետ ես ինչ պիտի ընեմ,- մայրս լացակումած կը վերցնէ ափսէն:
- Զգէ, արիւն քեզ, գլուխ քեզ:
- Վերջը:
Վերջը կը տօնենք Արցախի անկախութիւնը, կը յիշենք զոհուածները յանուն հայրենիքի ազատագրման... Կը տօնենք Հայաստանի անկախացումը... Ազատութեան հրապարակի վրայ համերգ, շօ պիզնեսի լաւագոյն ներկայացուցիչներ, երջանիկ հանդիսատեսներ, քաջալերանք, հրավառութիւն...
- Երիտասարդների խելքը, միտքը արտասահման դուրս գալն է, տղէս էլ... - երիտասարդ կինը տխուր աչքեր ունէր:
- Ասանկ անօթի-ծարաւ,- մօրս ձայնն է խոհանոցէն:
Ինչ ձգողական ոյժ կայ դուրսը այս երիտասարդները կլանող:
- Ինչ լաւ ապրում էինք սովէտի օրով,- համարձակ ու անվախ կը յայտարարէ փողոցի անկիւնի սեղանիկին վրայ ջուր վաճառող մարդուկը:
Այդ օրերուն երկաթէ դռներ կային.
- Առիթներ մինչեւ հիմա էլ կան... բայց երբեւէ հայրենիքս չեմ լքեր, մենք այս համեստ տան մէջ կ՚ապրենք,- կենսաբան, փրոֆեսորի Եուրիի խօսքերը կը հնչեն:
Հիմա դռները դիւրաբեկ են:
- Սա դուռը գոցէք եա՜.. պէտք չունիմ այդ հովին:
Հայրս զովացուցիչ սարքի անբնական զովութիւնը կը մերժէ վայելել:
Գիշերը կը յառաջանայ, տաք հոսանքի ալիքները ներթափանցած են պատերուն, սիմենթէ տանիքներուն, իրերուն մէջ յամառօրէն անշարժանալով... Ելեկտրականութիւնը անսպասելիօրէն կ՚անջատուի... մթութեան մէջ խարխափելով կը փնտռեմ մարտկոցով լուսարձակը:
- Սիդամոլ տուր,- հօրս ձայնն է:
- Հիմա, հիմա սա լոյսը բերէ որ տեսնենք..
Ես կը հաւատամ որ համբերութիւնն ալ աղօթել է.
- Աղօթելու համար բաւարար եկեղեցիներ վերանորոգուեցան, ալ գործատեղեր թող շինեն,- կ՚ըսէ գրող-մտաւորականը:
Ես կը հաւատամ որ ամէն լաւ նախաձեռնութիւն աղօթել:

Սեդա ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սեդա Գրիգորեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Լոյսի եւ Կենաց Վարժարանին մէջ: 1989-ին Պէյրութի մէջ աւարտած է Համազգայինի Հայագիտական Հիմնարկի գրական բաժնի քառամեայ դասընթացքը, ապա, 1993ին, շրջանաւարտ եղած է Երեւանի Պետական Համալսարանի հայկական բանասիրական բաժանմունքէն:

1983-էն ի վեր ընդհատումներով զբաղած է ուսուցչութեամբ, Պէյրութի եւ ապա Մոնթրէալի հայկական վարժարաններու մէջ դասաւանդելով Հայոց Լեզու եւ Գրականութիւն: 1989էն սկսեալ ընդգրկուած է սփիւռքահայ մամուլի խմբագրական աշխատանքներուն մէջ, իբրեւ աշխատակից եւ խմբագրական կազմի անդամ, նախ՝ Պէյրութի «Ազդակ» օրաթերթի (1989-2000), ապա Լոս Անճելըսի «Ասպարէզ» օրաթերթի (2001-2002) եւ Մոնթրէալի «Հորիզոն» շաբաթաթերթի (2004-2008), միաժամանակ հանդէս գալով գրական, հրապարակագրական եւ ստեղծագործական գրութիւններով: Անոր արձակ եւ չափածոյ գրութիւնները լոյս տեսած են նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի հայկական մամուլի եւ գրական տարբեր պարբերականներու մէջ:

Սեդա Գրիգորեան ներկայիս կ'ապրի Պէյրութ եւ կը վարէ «Բագին» գրական հանդէսի փոխ խմբագրի պաշտօն, միաժամանակ հայոց լեզու աւանդելով Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանի օտարալեզու չափահասներու համար նախատեսուած ծրագրի ծիրէն ներս: Ան ցարդ հրատարակած է իր բանաստեղծական երախայրիքը՝ «Եզերք» խորագրով (Երեւան, 2006), իսկ ներկայիս հրատարակութեան կը պատրաստէ պատմուածքներու եւ արձակ գործերու իր առաջին հաւաքածոն:

ԱՄԱԼԻԱ ԾՈԾԱՆ

5 Հոկտեմբեր, 1991: Պէյրութ - Դամասկոս - Երեւան: Ոդիսական ժամբորդութիւն: Առաջին անգամ ըլլալով ոտք կը կոխեմ հայրենի հող՝ իբրեւ Երեւանի Պետական Համալսարանի ուսանող: Դասերը թէեւ ամիսէ մը ի վեր սկսած են, բայց իմ կեցութեանս վայրը չէ ճշդուած տակաւին: Սկզբունքով պէտք է հաստատուիմ Համալսարանին պատկանող Բ. Նորքի (2րդ Մասիւ) հանրակացարաններէն թիւ 4 մասնաշէնքի երկրորդ կամ երրորդ յարկի սենեակներէն մէկուն մէջ:

Սկզբունքո՛վ...

Իրողական գետնի վրայ սակայն, ամբողջ տասը օրէ ի վեր կը թափառիմ ապարդիւն: Երեւանի մէջ ո՛չ ազգական, ոչ ալ յարմարութիւններ ունեցող բարեկամներ ունիմ: Կը գիշերեմ հոս-հոն, նոր դասընկերներու կարգադրութեամբ, եւ ուրեմն ամէն օր պէտք է հասնիմ Համալսարան՝ ինծի անծանօթ ժամբաներէ, որովհետեւ հանրակացարանին պարէտը (ռուսերէն՝ վարիչ) Հայաստան հասնելուս երրորդ օրն իսկ «բղաւած» էր երեսիս.

- Աղջի՛, հլա մի կերպ եռլա գնա՛, հիմի դատարկ սենեակ չկա՛յ...

Սփիւռքահայ ուսանողներուն եթէ մտիկ ընես, երկրորդ յարկն իսկ չորս ազատ սենեակներ կան, բայց պարէտը չի լսեր քեզ. այլ կը գոռայ նոյն թոնով.-

- Զունեմ ասի չէ՛... դատարկ սենեակ չունեմ, չես հասկանում ինչ ա՛...

***

Քանի մը օրուան ծանօթութիւնս տեղացի բարեկամուհիիս՝ Լիայի հետ, լուծում բերաւ թափառական վիճակիս.-

- Արի մի սենեակ վարձի, մինչեւ Հանրակացարանում տեղ դատարկուի...

Այդպէս ալ եղաւ: Փրոսփէքթի գլխաւոր շուկային կոնակի բարձրայարկ շէնքերէն մէկուն մէջ բնակող Լիան կեցութիւնս ապահովեց իրենց տան մօտ գտնուող սեփական բնակարանի մը մէջ, ուր կ՚ապրէր 70 տարեկան Ամալիա ծոծան (ռուսերէն՝ մօր-

քուր), Լիային դրացուհիին մայրը.

- Ամալիա ծոծան թոշակի ելած կուլտուրական (ռուսերէն՝ քաղաքակրթուած, մշակոյթի տէր) կին է: Գիշերները մենակ չքնելու համար հաւանեց որ մօտը մնաս: Անկողնում պառկած է, ամառը ընկաւ, եւ կոնքի ոսկորը վնասուեց: Առանց էդ էլ նա արդէն հիւանդ կին է: Հիմի էլ չի կարողանում քայլել: Հարեւանուհուս մայրն է, նա է խնամում մօրը: Ամբողջ օրը աղջիկը կը մնայ մօր մօտ, բայց գիշերները գալիս է տուն: Հօ նա էլ ընտանիքի տէր է, ամուսին-երեխայ ունի: Էսպէս յարմար կ'ըլլի: Ամալիա ծոծան գիշերները մենակ չի մնայ, դու էլ մի առժամանակ քնելու տեղ կ'ունենաս: Հենց Քաղաքի կեդրոնում էլ կը լինես, հեշտութեամբ կարաս թրելըպիւսով (ռուսերէն՝ ելեկտրական փոխադրակառք) Համալսարան գնալ, շուկան էլ մօտիկ ա, ինչ ուզում ես կարաս եփել-ուտել: Մի բանի էլ որ կարիք ունենաս՝ մեզ դիմելու չքաշուես,- կարգադրեց Լիան:

Նոյն գիշերն իսկ քանի մը պայուսակ շալկած, տեղատարափ անձրեւին հետ յայտնուեցանք Ամալիա ծոծային դրան սեմին: Մետաղեայ ձայն մը լսուեցաւ ներսէն.

- Մտէք, մտէք, դուռը բաց ա:

Լիան ու ես հրեցինք դուռը եւ կոխեցինք տախտակամածը: Տան խոհանոցն էր՝ ջերմ ու լուսաւոր: Անդին՝ սենեակին ձախին պառկած էր սպիտակ մորթով, նիհարակազմ, կլոր դէմքով կին մը, որուն դիմագծերը թէեւ տարիներու բեռան տակ կնճռոտած էին, բայց չէին կորսնցուցած իրենց նրբութիւնը: Կնոջ աչքերը սառած էին, գրեթէ անկենդան, որովհետեւ ան իր ուշադրութիւնը աւելի մեր ձայնին կեդրոնացուց, քան մեր դէմքերուն:

Ամալիա ծոծան թեթեւ մը բարձրացաւ, «ախ» մը քաշեց, ապա բարձին տակէն դուրս բերաւ հնամաշ ակնոց մը, զետեղեց աչքերուն, «էսպէս աւելի լաւ ա» մրթմրթաց եւ ձեռքով նշան ըրաւ, որ նստինք անկողինին մօտ դրուած սեղանին զոյգ աթոռներուն, «համեցէք, համեցէք» ըսելով:

Բարեւելէ եւ որպիսութիւն հարցնելէ ետք Լիան զիս ներկայացուց կնոջ.

- Ծոծա, էս էն աղջիկն ա, որի մասին խօսել էի քեզ, Պէյրութից ա, եկել ա Համալսարանում սովորելու:

Ծոծան թեթեւ մը ժպտաց, ապա իմ կողմս դառնալով հարցուց.

- Դա անո՞նդ ոնց ա, ազիզ ջան:

- Սեդա. Գրիգորեան Սեդա.- պատասխանեցի վախվխելով:

- Սեդա՛, պա դու Լեւոն Շանթի Սեդայի թոռն ես, ինչ.- ծիծաղեցաւ պառաւը՝ թեթեւ մը կարմրելով, ապա հարցուց.

- Աղջի ջան, դու կարդացե՞լ ես էդ գործը: Ես շատ եմ հաւանում Շանթին: Շատ եմ սիրում արեւմտահայ գրողներին: Բա դու ինչ ես սովորելու Համալսարանում:

Ներքուստ զարմացած, բայց նաեւ ուրախացած՝ պատասխանեցի, որ ծանօթ եմ «Հին Աստուածներ»-ուն, եւ իբրեւ Գրականութեան ուսանող եկած եմ մասնագիտանալու Համալսարանի հայկական բանասիրական բաժանմունքին մէջ:

Պատասխանս կ'երեւի թէ լաւ տպաւորութիւն թողեց կնոջ վրայ, որ ծիգ թափեց մօտենալու ինծի, ապա ձախ ձեռքը սեղանին վրայ պտտցնելով՝ խիստ բայց գուրգուրոտ ձայնով ըսաւ.

- Սեդա ջան, բարով ես եկել իմ տանը: Սկզբից ասեմ իմ պայմանները, որ յետոյ նեղութիւն չլինի: Լսիր, ազիզ ջան, ես ոչ մի անգամ վարձով ուսանող չեմ պահել: Փողի համար չէ, որ հաւանեցի մնաս մօտս, կարող ես մի կոպէկ էլ չտալ, կարեւորը գիշերները մենակ չքնեմ, տեսնում ես՝ չեմ կարող քայլել: Լիան որ պատմեց ինձ քո դրութիւնը՝ սիրտս չտարաւ: Եթէ խելօք ու կարգին լինես, կը մնաս մօտս էնքան ուզում ես:

Ապա ձեռքի շարժումներուն հետեւելով ծանօթացայ տան բաժանմունքներուն եւ հասկցայ թէ իմ «անկիւնս» ո՛ւր պիտի ըլլայ:

- Մենակ թէ չեմ ուզում որ իմ տան հեռախօսի համարը ոեւէ մէկին տաս: Հեռախօսից պիտի օգտուես քիչ՝ խիստ անհրաժեշտութեան դէպքում: Ես հիւանդ կին եմ, պիտի քնեմ, պիտի հանգստանամ, չեմ ուզում հանգիստս կորցնել քո հեռախօսների համար: Մի բան էլ կայ. դու ամբողջ օրը տնից դուրս ինչ ուզում ես արա, իմ գործը չի. որտեղ ուզում ես գնա՛, բայց էստեղ ոչ ոքի հետ չես գայ, ոչ մէկին էլ չես հրաւիրի: Մենակ դու պիտի գնաս-գաս, էդ էլ շատ զգոյշ, որ ես անհանգիստ չլինեմ: Մէկ էլ ասեմ, որ գիշերը ժամը տասից ուշ չես կարայ մնալ դրսում: Վատ են ժամանակները, դու էլ օտար՝ մեր քաղաքին: Ես ինչ իմանամ, ասում են որ

վատ բաներ են պատահում գիշերները... Դու աղջիկ երեխայ ես, մէկ էլ՝ սփիւռքահայ. չի կարելի գիշերները երկար մնալ դրսում, դա լաւ բան չի: Եթէ ուզում ես մօտս ապրել, պէտք է յարմարուես էս պայմաններին...

Լռեց եւ սպասեց պատասխանիս:

Առանց երկար-բարակ մտածելու՝ ըսի.

- Մօրաք, ինչպէս կ'ուզես այդպէս ալ կ'ըլլայ, միայն գլուխս դնելու տեղ ունենամ...

***

Կուլտուրական մօրաքին հետ յարաբերութիւնս շատ արագ մտերմութեան վերածուեցաւ, առանց սակայն պայմաններէն բան մը փոխուելու: Ընդհակառա՛կն: Ոչ միայն պայմանները մնացին ի զօրու, այլեւ նոր պարտաւորութիւններ դրուեցան ուսերուս:

Պառաւը թէեւ ուրախ էր գիշերները առանձին չմնալուն համար, բայց նոյն ատեն մտահոգ էր իր տան մաքրութեամբ ու մա՛նաւանդ ինծի յատկացուած անկիւնին վիճակով: Անկողնին փակած ըլլալուն, չէր կրնար շրջագայիլ ներսերը, այլեւ ստուգել սենեակիս կարգն ու սարքը: Ատոր համար ալ հարցումներ կ'ուղղէր իր աղջկան, որ առաւօտ կանուխ կու գար իր մօր պէտքերը հոգալու: Թէեւ աղջիկը կը վստահեցնէր որ ամէն բան կարգին էր, բայց մայրը կը շարունակէր տագնապիլ՝ անձնապէս վճիռ չկարենալ արձակելուն համար:

Բնակարանը փոքր ըլլալով հանդերձ հանգստաւէտ էր: Թէեւ ոչ մէկ նոր առարկայ կար հոն, բայց ինչ որ կար՝ կոկիկ էր ու մաքուր: Ամէն բան իր տեղը գտած էր կնոջ նախաձեռնութեամբ: Վարագոյրները ազնիւ կտաւէ պատրաստուած, երկու մասի կը բաժնէին տան միակ ընդարձակ սենեակը: Փոքր բաժինը իմս էր՝ փողոցին վրայ բացուած միայնակ պատուհանով: Խոհանոցին եւ սենեակիս միջեւ գտնուող համեմատաբար լայն բաժինը տան հիւրանոցն էր, գորգերով ծածկուած, որուն մէկ անկիւնը դրուած կար ապակեայ սպասներով ծանրաբեռն պահարան մը: Կնոջ ամբողջ ունեցածը այս փոքրիկ տունն էր եւ մէկ հատիկ աղջիկը, որ իր կարգին ոչ միայն ընտանիքի մայր էր, այլեւ՝ մեծ մայր: Աղջիկը նկարչուհի էր, կ'աշխատէր տունը: Ամալիա ծոծային տան հիւրա-

նոցին պատերէն կախուած նկարչական պաստառները կը պատկանէին դստեր, որուն ամէնէն յաջող գործերէն մէկը իր մօր դիմանկարն էր, ուրկէ մօրաքը անհոգ ժպիտով կը բարեւէր մարդկութիւնը...

Պառաւին հետաքրքրութիւնը կ'աճէր մանաւանդ գիշերները, երբ երեկոյեան միասին ընթրելէ եւ պահ մը Հայաստանի առօրեային մասին զրուցելէ ետք «բարի գիշեր» կ'ըսէր եւ սենեակս կ'անցնէի: Գիտէր, որ շուտ քնացողը չեմ ու անպայման բանով մը զբաղած՝ իր աչքերէն հեռու, եւ ուրեմն՝ կը սկսէր արձակել հրահանգներ, պարզապէս հասկնալու համար՝ թէ ինչով եմ զբաղած.

- Սեդա ջան, շոգ ա, արի բաց արա ֆըրթուշքան (ռուսերէն՝ փոքրիկ պատուհան):

Քիչ ետք՝

- Սեդա ջան, մրսում եմ, արի՛ փակիր ֆըրթուշքան:

- Սեդա ջան, հանգցրու լոյսը, աչքս ա ցաւում...

- Սեդա ջան, արի միացուր թելեվիզըրը (ռուսերէն՝ պատկերասփիւռ), մի քիչ նայեմ էլի, քունս չի տանում...

Եւ այսպէս գրեթէ ամէն գիշեր պառաւը դուրս կը քաշէր զիս տաքուկ անկողինէս եւ գործադրել կու տար իր հրահանգները, վերջաւորութեան ալ կրկնելով նոյն հարցումը.

- Հլա դեռ չես քնե՞լ... պա ի՞նչ էիր անում ներսում... լուսամուտը լաւ փակե՞լ ես, զանավէսկէքը (ռուսերէն՝ վարագոյրները) գցե՞լ ես...

Առաջին օրերուն քիչ մը դժկամութեամբ, բայց հետզհետէ սկսայ հաճոյքով կատարել կնոջ հրահանգները, յաճախ նաեւ ինքնակամօրէն տրամադրուելով իրեն: Կ'ըմբռնէի կնոջ կացութիւնը. ամբողջ օրը անկողինին փակած ըլլալով՝ գիշերները կը տառապէր անքնութենէ: Ահա այդ պահերուն էր նաեւ, որ մեր միջեւ կը սկսէր ծաւալիլ զրոյց մը, որմէ նոյնքան հաճոյք կ'առնէի նաեւ ես:

Զրոյցի պահուն ան յանկարծ կ'աշխուժանար, կ'ոգեւորուէր տեսակ մը եւ ամէն դուռէ հարցում կը բերէր ու կը զետեղէր սեղանին...

Առաջին օրերուն զինք մեծապէս կը խանդավառէին Պէյրութն ու Միջին Արեւելեան երկիրները՝ իրենց կլիմայով, բազմակրօն մշակոյթով ու խայտաբղէտ կենցաղով. ան ամէն առիթով բաղդա-

տութիւն կ'ընէր Լիբանանի եւ Հայաստանի միջեւ: «Ձեր մօտ»ը եւ «մեր մօտ»ը միշտ ներկայ էին մեր զրոյցներուն: Յետոյ, երբ աւելի մտերմացանք եւ վստահութիւնը փոխադարձաբար հաստատուեցաւ, պառաւը ա՛լ պատրուակներ չէր փնտռեր զիշերային զրոյցներուն սկսելու, այլ ընթրիքին հետ իսկ կը սկսէր խօսիլ իր անձնական կեանքին մասին՝ վկայակոչելով անցեալի յուշեր, դէպքեր, իրադարձութիւններ, յաճախ նաեւ նիւթէ նիւթ ցատկելով եւ մէջընդմէջ ալ անձնական հարցումներ ուղղելով ինծի:

Գիշերային մեր զրոյցները կը բանային կնոջ հոգիին ծալքերը եւ կը յայտնաբերէին անոր ներքին աշխարհը: Ան կ'այլափոխուէր ամբողջութեամբ: Ա՛լ անկողնին ծառայող եօթանասունամեայ պառաւ մը չէր ան՝ ամբողջ օրը ուրիշին խնամքին կարօտ, ոչ ալ ես իր մօտ սենեակ վարձած ուսանողուհի մը, այլ մտերիմ մը, ցաւակից մը՝ առանց տարիքային անջրպետի, որովհետեւ Ամալիա ծոծան իր անցեալի վերյուշներուն հետ թեւանցուկ՝ կ'երիտասարդանար յանկարծ, տեսակ մը կը ծաղկէր ու անօրինակ խանդով կը լեցուէր: Մերթ կը մանկանար ու լիահագագ կը խնդար, մերթ ալ կը շիկնէր ու լոլիկի պէս կը կարմրէր, մանաւանդ երբ կը պատմէր իր սիրոյ պատմութիւնը:

Քանի՜-քանի՜ անգամ լսած էի այդ պատմութիւնը, բայց ամէն անգամ նո՛ր լսածի պէս հաճոյք առած անկէ, կնոջ կեանքին տրամայէն: Տեղեկութեան իմաստով՝ պատումը նոյնն էր, կը փոխուէր սակայն պառաւին հոգեվիճակը, որ նորացման հետ՝ ապրումի ու ներշնչման նոր երանգ կը յայտնաբերէր: Քնարական բանաստեղծութիւն էր կարծես այդ պատմութիւնը, որ մեզ կը յուզէր, կը վերացնէր առօրեայէն ու կը տանէր հո՛ն, գի՛ւղ, ուր ցանկապատով կը բաժնուէին 15 տարեկան սիրուն Ամալիան եւ «սեւաչեայ հրաշք» տղան՝ «պեխ ու մօրուքով կարգին տղամարդ»...

Տեսնելու բան էր կնոջ ոգեւորութիւնը, որ կ'արտացոլար անոր աչքերուն մէջ եւ զանոնք կը վերածէր սիրոյ աւազանի: Հիմա տղուն փայփայած «թռչնիկ»ն էր ան, որ այս պառաւ մարմնին մէջ կը թփրտար սէրէն, կը հեւար տղուն հպումէն, ապա կը նուաղէր շուրթերը լիզող առնական համբոյրէն: Գաղտնի տեսակցութիւնը կ'աւարտէր սրտերու ուժգին տրոփումով, ապա տղան իր «թռչնիկ»ին կը նուիրէր բացուած վայրի կակաչ կամ կարմիր

վարդ, զոր Ամալիա ծոծան երեւակայութեամբ կը սեղմէր ձախ ձեռքին ու դողալով զայն կը հանգչեցնէր ծեր սրտին, մինչ կափ-կափուող շուրթերուն վրայ կը սկսէր ծաղկիլ սիրած տղուն նուիրած երգը.

Թռչնիկս, մի՛ լար, մի՛ վախիր
Մեր սէրը ամուր է, դիմացի՛ր...

Եղած-չեղածը քառեակ մըն էր երգը, որ սակայն մարդկային կեանքի ամբողջ տրամ մը կը խտացնէր իր մէջ: Յետոյ երգը կամաց-կամաց կը սկսէր թուլնալ, նուաղիլ, արցունքի լիճեր բանալով պառաւին դէմքին: Ապա թախիծը կը նստէր կնոջ հոգիին ու զայն լռութեան կը մատնէր: Այս բոլորը կը տեւէին քանի մը վայրկեան միայն. պառաւը՝ ներքին տարօրինակ կենսունակութեամբ մը յանկարծ կը յաջողէր փոխել պատումին ռիթմը եւ նախկին ոգեւորութեամբ շարունակել սիրած տղուն հետ իր պատմութիւնը՝ մինչեւ ամուսնութիւնն ու իրենց սիրոյ առաջին ու միակ պտուղին՝ դստեր ծնունդը: Վարդագոյն այս կեանքը սակայն ակամայ կը սեւնար «Հայրենական Մեծ Պատերազմ»ի հռչակումով, երբ սիրած տղան կը մտնէր բանակ ու ա՛լ չէր վերադառնար...

Ընդամէնը երեք տարի միասին ապրուած եւ երկու տարի ալ նամակագրութեամբ իրարու հաղորդուած սիրոյ պատմութիւն մըն էր եղածը, որ զարմանալի տինամիզմով տեւած էր աւելի քան կէս դար եւ վերածուած մարդկային ճակատագիրի: Մի՛շտ երիտասարդ, երբեք չծերացող սիրած տղուն յիշատակը անթառամ պահելու համար մօրաքը մերժեր էր վերամուսնանալ: Տեղափոխուած էր Երեւան եւ հետեւած տնտեսագիտութեան ճիւղին: Աշխատեր էր ամբողջ կեանքը եւ միաժամանակ հայր ու մայր եղած՝ իր մինուճարին: Նամակագրութեամբ հայրը արդէն տնօրիներ էր դստեր ճակատագիրը. «Լսի՛, թռչնիկս, չեմ ուզում որ բալէս օտար մարդու ձեռք մնայ: Յետ որ չգամ, դու նաեւ հայրութիւն պիտի անես նրան: Խոստանո՞ւմ ես...»: Մօրաքը խոստացեր ու խոստումը պահեր էր, այդ ալ ինչպիսի՜ պայմաններու տակ...

Հոս կանգ կ'առնէր պատմութիւնը: Պառաւը խօսքը կ'աւարտէր նոյն մեղադրանքով, հայեացքը սեւեռած անորոշութեան.

«Պա՛, մարդուս ի՞նչ գործն էր կռուի գնալ Ուքրայնայի սահմաններում... էս ինչ ձիւն էր թափուեց մեր գլխին»...

***

Մօրաքին հետ մեր գիշերային զրոյցները յաճախ նաեւ կը համեմուէին բանաստեղծութեամբ. «Պոեզիա (ռուսերէն՝ բանաստեղծութիւն) շատ եմ սիրում. ձերոնցից մի բան կարդայ, լսեմ», կ՛ըսէր ու առանց սպասելու կը սկսէր օրօրուիլ «Գիշերն անոյշ է» մեծարենցեան մեղեդիով, ապա պտոյտ մը կը կատարէր Արեւմտահայ Գրականութեան անդաստանէն ներս՝ իր ոգեւորութեամբ վարակելով նաեւ զիս: Արեւմտահայերէնը կը գրաւէր զինք: Քնարաշունչ բանաստեղծները իր հիացումի առարկան էին: Ան նաեւ լաւատեղեակ էր օտար գրականութեան: Պուշկինն ու Տոլսթոյեւսկին կը պաշտէր, «Աննա Քարենինա»ն իր սիրած գիրքն էր, իսկ Հեմինկուէյի նկատմամբ խոր ակնածանք ունէր: Արուեստն ու գրականութիւնը շատ բան կը նշանակէին կնոջ: Կը պատմէր թէ ինչպէս հրճուած էր, երբ առաջին անգամ իր աղջիկը տուն մը գծած էր. «Բալիկիս նկարածը տարի աշխատանոց, ցոյց տուի էրէխէքին, բոլորն էլ զարմացան, թէ միայն չորս տարեկան իմ երեխաս ո՞նց կարողացել ա էսքան սիրուն տուն գծել: Մի օր էլ բալիկիս ասի. հենց աւարտես դպրոցը, քեզ ուղարկելու եմ մեր Գեղարուեստական ինստիտուտը (ռուսերէն՝ հիմնարկ), որ նկարել սովորես...»:

Ամալիա ծծային աղջիկը արդէն յայտնի նկարչուհի էր Երեւանի մէջ:

***

Թէեւ պառաւը անկողնին փակած էր, բայց ան շատ բան գիտէր դուրսը կատարուածներէն: Ինծի համար հեռաձայնը կը շարունակէր մնալ «արգիլեալ գօտի», իսկ ինք ամբողջ օրը հոս-հոն կը հեռաձայնէր եւ իրեն պէս քանի մը թոշակառու բարեկամներու հետ ժամերո՛վ կը զրուցէր: Անոնք առանց զիս տեսած ըլլալու արդէն շատ բան գիտէին իմ մասին: Յաճախ նաեւ բարեւ ու մաղթանք կ՛ուղարկէին ինծի՝ իրենց ընկերուհիին միջոցով: Հեռաձայնային այս զրոյցներուն առանցքային նիւթն էր պառաւին վերս-

տին քալելու կամքը: Մեծ հաւատքով ան բոլորին կը վստահեցնէր, որ շուտով պիտի սկսի քալել, առանց օգնականի պիտի ուղղուի բաղնիք, այլեւ հայաթը (բակը) պիտի մաքրէ եւ կամ տունը պիտի վերադասաւորէր՝ մօտալուտ ձմրան ի պատրաստութիւն. մէկ խօսքով՝ նորմալ կեանքի պիտի վերադառնայ. ահա թէ ինչո՛ւ ան իր խօսակցութիւնը կ'եզրակացնէր՝ «վաղը էգուց կը տեսնաս թէ ո՜նց կը սկսեմ քայլել» հաստատուն շեշտով:

***

Երեկոյ մը տուն դարձիս նկատեցի, որ պատին յենած էր անթացուպ մը: Առանց հարցումիս սպասելու, Ամալիա ծոծան ուրախ ձայնով ըսաւ. «Բժշկին զանգեցի, ասաց որ կարող եմ վեր կենալ ու քայլելու փորձեր անել. աղջիկս էլ հենց մի քանի րոպէ առաջ բերեց էս փէտը. քեզ եմ սպասում, որ օգնես ինձ՝ քայլեմ»: Բարձրացուցի զինք եւ դուրս բերի անկողինէն: Կռխեց գետին, ձախ անութին տակ ամրացուցի փայտը, աջին տակը մտայ ես եւ սպասեցի առաջին քայլին: Արիինը խուժեց գլուխը, հրճուանքէն սկսաւ «հա՛, հա՛, հա՛» խնդալ, ապա գեր-ճիգով մը առաջ նետեց ձախ ոտքը, յետոյ աջը եւ ըրաւ երկու քայլ: Կեցաւ: Նայեցաւ աչքերուս, նայեցաւ անկողնին ու յայտարարեց. «Վաղն էգուց կը սկսեմ քայլել, էլ անկողնուն փակած չեմ մնայ...»:

Առաւօտները սովորականէն կանուխ արթննալու նոր ստիպողութիւն մըն ալ աւելցաւ պարտաւորութիւններուս վրայ: Հազիւ լոյսը բացուած՝ մօրաքը ձայն կու տար.

- Սեդա՛ ջան, վե՛ր կաց, արի՛ օգնիր ինձ մի քիչ քայլեմ, ոտերս բացուեն...

Գիտէի, որ մօրաքին մտասեւեռումը ներս՝ սենեակս մտնել էր: Եւ որովհետեւ խոհանոցէն սենեակ առաջնորդող մուտքը նոյն հարթութիւնը չունէր, այլ մէկ աստիճանի չափ ցած էր, կինը կը վախնար այդ ռիսքը առնելէ եւ կը բաւարարուէր՝ դրան սեմէն գլուխը դէպի ներս երկարելով:

Գեր-մարդկային կամք ու հաւատք ունէր եօթանասունամեայ այս պառաւը: Կեանքին կրակը տակաւին վառ էր ներսը՝ հակառակ բազմաչարչար տարիքին: Գիշեր մը ակնարկեցի նաեւ այս մասին: Մօրաքը նախ մեղմօրէն ժպտաց, լրջութեան երանգ մը

տուաւ դէմքին ու բիբերուս խորը նայելով ըսաւ.

- Բալա ջան, էս գլխիցս շա՛տ տաք ու պաղ է անցել. շատ էլ վատ օրեր եմ տեսել, բայց կեանքում ոչ ոքի օգնութեան չեմ դիմել, ոչ մէկին էլ ձեռս չեմ բացել: Համարեա քառասուն տարուան իմ աշխատանքով մենակ կարողացել եմ էս տունը սարքել, մէկ էլ աղջիկս եմ պահել: Չեմ ուզացել որ մարդիկ խղճային ինձ, թէ՝ մեղք ա, հլա ջահել ա, ամուսին էլ չունի, մէկ երախայով ոնց ա ապրելու... Ուզում էի գործով, հենց աշխատանքով իմ նպատակին հասնեմ: Օրից մի օր էլ ձեռս անցաւ Հեմինկուէյի «Ծերունին եւ Ծովը» գիրքը. դու կարդացե՞լ ես էդ գործը. շա՛տ բարի, հիմի աւելի լաւ կը հասկանաս ինձ: Մի խօսքով՝ էդ օրուանից էդ գիրքը դարաւ իմ կեանքի փիլիսոփայութիւնը: Գրքում տեսնում էի ուժ, կամք, նպատակի հասնելու մի անկոտրում հաւատք, որի նմանը չկար: Գիրքը կարդում էի հենց որ մի դժուարութիւն էր կանգնում առաջս: էդ պուճուր գրքից մի մեծ ուժ էր գալիս մտնում մէջս ու քաջութեամբ էր լցնում հոգիս, որ առանց յետ նայելու էլ գնամ առաջ... էսպէս է որ պահել եմ ինձ, ապրել ու ամրացել, հօ էսքան հեշտութեամբ կեանքից չեմ հրաժարուելու: Մի հինգ տարի առաջ ինֆաքթը (ռուսերէն՝ սրտի կաթուած) խփեց ինձ, բայց տե՛ս, չեմ մեռել հլա: Իսկ էս եղածն ի՞նչ ա, որ էս անտէր թախտին մնամ ծառայ... պա ամօթ չի՞ ինձ...

***

«Շուկայական յարաբերութիւններ»ը, որոնք նոր-նոր էին սկսած հող շահիլ Հայաստանի մէջ, հայրենի ժողովուրդին պէս մորաքն ալ մատնած էին շփոթի: Ամբողջ կեանք մը համեմատաբար ինքնաբաւ ապրած կնոջ մը համար ա՛յս տարիքին դժուար էր ըմբռնել ապրանքներու գիներուն արագընթաց մագլցումը: Խեղճ կնոջ ամբողջ եկամուտը ամսական 300 եւ քանի մը ռուբլի էր, զոր անասելի գուրգուրանքով ան կը պահէր բարձին տակ, ամէն առիթով ալ զայն վերստուգելու պայմանով, որպէսզի յանկարծ «ուրիշից փող վերկալելու կարիք չունենամ»: Բայց եւ այնպէս ան սկսած էր տիրող իրավիճակին հետ չկարենալ հաշտուելու նշաններ ալ ցոյց տալ: Օրական ինքն իրեն եւ կամ զրուցակիցներուն հարց կու տար, թէ քիլոն մէկ կոպէկ արժող շաքարաւազը ինչպէս յան-

կարծ բարձրացաւ քանի մը ռուբլիի, կամ՝ հացն ու հաւկիթը, կարագն ու պտուղը ինչո՞ւ այսքան սղած են, ու պառաւը իր ներքին տագնապը կ'արտայայտէր անձկութիւն մատնող հարցումներով. «ախր ո՞նց եղա պիտի գնանք, ո՞նց պիտի կարանք սնուել էսքան թանկ գներով...»:

Մօրաքին դստեր թոռնուհին՝ Լիլիթիկը, օր մը իր մեծ մեծ մօր տուած 5 ռուբլին չէր վերցուցած ըսելով, որ՝ «Ամալիա՛ տատիկ, էս փողով ոչ մի բան էլ չեմ կարող գնել, ոչ կանֆէտ (ռուսերէն՝ տուրմ) կը տան, ոչ էլ մի ծամօն»: Երեխայի պատասխանին ի լուր յուզուեր էր պառաւը, թէ՝ «ի՞նչ անեմ, բալիկս, էսքան ա իմ ունեցած փողը...»: Այս միջադէպը ան յաճախակիօրէն կը կրկնէր եւ ամէն անգամ ալ նոյն յուզումը կ'ապրէր, որովհետեւ չէր տեսներ որեւէ յուսատու պատուհան՝ այս անելէն դուրս գալու: Այսուհանդերձ, ան կը մնար լաւատես՝ Հայաստանի ապագային նկատմամբ, եւ ով որ փորձէր հակաճառել իրեն, մեծ հաւատքով կը պատասխանէր. «Հերիք ա որ անկախ ենք, պետութիւն ունենք, պա՛, ուզում ես առյաւէտ կախեա՞լ մնանք ռուսներից...»:

***

Կը պատահէր յաճախ, որ մօրաքը բարձր տրամադրութեամբ լեցուէր ու գիշերային մեր զրոյցները համեմուէին կատակներով: Ան կը սիրէր «քաշքշել» զիս՝ յիշեցնելով հետս պատահած ծիծաղաշարժ դէպքերն ու միջադէպերը: Երկրին անծանօթ եւ Հայաստանի ժողովուրդին ռուսախառն հայերէնին անվարժ ըլլալով, յաճախ կը մատնուէի ծիծաղելի կացութիւններու: Քանի՛-քանի անգամ կրկնել տուած է ինծի՝ միլիցիայի (ռուսերէն՝ ոստիկան) ինքնաշարժով տուն դառնալու պատմութիւնս եւ քահ-քահ մը փրցուցած՝ ճաթելու աստիճան: Դէպքին յաջորդ օրն իսկ դրացիներն ու հեռաձայնի բարեկամները արդէն գիտէին, որ Ամալիա ծոծային «աղջիկ»ը գիշերը երբ տուն դառնալու թրելըպիւս կամ թաքսի չէր գտած, ճամբէն անցնող միլիցիայի ինքնաշարժ մը կեցուցած էր եւ խնդրած ոստիկանէն, որ զինք տուն հասցնէ: Երբ ոստիկանը ըսած էր, որ՝ «աղջիկ ջան, էս միլիցիայի աֆթօ (ռուսերէն՝ ինքնաշարժ) ա, թաքսի չի», աղջիկը ճարահատ, թէ՝ «ի՞նչ ընեմ, թաքսի չկայ, ի՞նչպէս տուն պիտի երթամ, եթէ դուն չտանիս, որո՞ւն կր-

նամ վստահիլ...»:

- Սեդա ջան, էդպէս էլ ասեցիր հա՞, «եթէ դու չտանես, ո՞վ պիտի տանէ»,- իր կարգին կը կրկնէր պառաւը եւ կը մարէր խնդալէն:

Գիշեր մը պառաւը ընդհատեց սովորական խօսակցութիւնը եւ շեշտակի նայելով աչքերուս՝ հարցուց.

- Սեդա ջան, պա որ մի լաւ տղայ լինի չես ամուսնանայ: Կը մնաս էստեղ, էլ Պէյրութ չես գնայ, քեզ համար էլ ընտանիք կ'ունենաս, քո հայրենիքում էլ կ'ապրես:

Պատասխանիս վրայ՝ թէ ներկայիս այդ մասին չեմ մտածեր, նախ կ'ուզեմ ուսումս աւարտել, կինը քանի մը վայրկեան լուռ մնաց, ապա մտերմիկ թոնով մը աւելցուց.

- Ինձ լսիր, ազիզ ջան. էն որ ասում եմ լաւ միտդ պահիր (եւ աջ ցուցամատը տարաւ աջ քունքին). թէ որ գնաս Պէյրութ, պէտք ա մտածես ամուսնանալու մասին: Կեանքում մենակ ապրել չի կարելի, դա լաւ բան չի: Պա որ ծերանաս, ո՞վ ա պահելու քեզ: Թէ որ ամուսնանաս, շատ բարի, ասելիք չունեմ. սամալիոթի (ռուսերէն՝ օդանաւ) տոմսս էլ որ ուղարկես, պսակիդ էլ կը գամ,- սրամտեց ան ու շարունակեց.- պա հենց որ տեսար բան-ման չկայ, տարիքդ էլ անցնում ա, մի համակրելի տղայի հետ ընկերութիւն արա եւ նրանից էլ մի երեխայ բեր, որ քո ծերութեան մի թաս ջուր տուող ունենաս:

Կնոջ այս անակնկալ արտայայտութիւնը ե՛ւ զարմացուց, ե՛ւ հիացուց զիս: Խնդալու կարգը իմս էր հիմա:

Ծիծաղս ապշեցուց պառաւը, բայց չկրցաւ կտրել անոր մտածումին թելը: Ընդհակառակն: Բան մըն ալ աւելցնելով նախկին ոգեւորութեանը, շարունակեց.

- Ա՛յ աղջի, հանաք (կատակ) չեմ անում, կարգին մի բան եմ ասում: Որ իմ աղջիկը չլինէր, հիմի ինչ էի անելու ես: Տեսնում ես, մենակ եմ մնացել, ծեր եմ, անկողնուն էլ փակած: Պա որ աղջիկս էլ չունենայի, ո՞վ պիտի խնամէր ինձ. է՛դ եմ ասում, որ քեզ մի հատ երեխայ ա պէտք, մանաւանդ քո ծերութեան համար...

Ձեռքի թեթեւակի շարժումով մը ընդհատեցի կնոջ խօսքը բացատրելով, որ նման քայլ մը ընդունուած չէ մեր ընկերութեան մէջ եւ թէ՝ առանց ամուսնութեան ու իրաւական հօր մը կարելի չէ ծնիլ

զաւակ, տակաւին անկախ անկէ, որ այդ մէկը ոճրագործութիւն կ'ըլլայ աշխարհ եկող մանուկին հաշուոյն, իսկ աւանդապահ մեր ընկերութեան համար այդ արարքը գայթակղութեան դուռ կը բանայ ու վատ համբաւի կ'արժանացնէ զիս:

Պառաւը չբաժնեց մտահոգութիւնս, այլ քիչ մըն ալ բարձրացնելով ձայնը՝ ըսաւ.

- Պա՛, սա քո կեանքն ա, ո՞վ կարայ խառնուել, Սեդա ջա՛ն. ուզում ես մայրանալ, դրա մէջ ինչ ամօթ բան կայ: Եթէ քո երկրում դա հնարաւոր չի, արի՛ էստեղ. Հայաստանում միայնակ մայրեր շատ կան եւ կառավարութիւնից էլ թոշակ են ստանում երեխայ պահելու համար: Պա՛, չեմ ասում գիշեր-ցերեկ տղաների հետ ման արի, ասում եմ քո համար մի երեխայ ծնիր...

Կնոջ առաջարկը պահ մը գրաւիչ գտնելով հանդերձ մնացի անդրդուելի՝ իմ համոզումներս առաջ քշելով ու դիտել տալով, որ Հայաստանի մէջ օրինականացած այս երեւոյթը անյարիր է հայկական աւանդական դիմագիծին եւ թէ ընտանիք, սրբութիւն, բարոյականութիւն հասկացողութիւնները ազգային արժէքներ են, որոնք սակայն ոչ միայն սրբապղծուած են խորհրդային վարչակարգի «բարիք»ներուն ի հետեւանք, այլեւ հայ մարդը հեռացուցած իր ազգային ակունքներէն:

Ամալիա ծոծան մտածումի մէջ ինկաւ: Տրուած բացատրութիւնը յուզեց զինք: Լուռ մնաց պահ մը, ապա մեղմօրէն յարեց.

- Չգիտեմ, Սեդա ջան, մեր մօտ էս հասկացողութիւնը չկայ: Էստեղ մարդը ազատ ա, ինչ ուզում ա էն էլ կ'անի: Դու բաներ էս ասում, որ մեզ համար էդքան էլ կենսական չի՛: Գուցէ դրա մէջ դու իրաւունք ունես,- խօսքը վերջացուց ան ու այդ մասին ա՛լ ակնարկութիւն չըրաւ:

***

Շաբաթներ անցան: Մեր զրոյցները, գիշերային լռութեան մէջ, առօրեայ տագնապներէն ձերբազատելու մխիթարութիւնը կը պարգեւէին եւ անկողին ինկած պառաւին, եւ ինծի: Տաքուկ խոհանոցին մէկ գողտրիկ անկիւնը նստած՝ այլեւս առանց ժամերը հաշուելու կ'արծարծէինք մարդկային, ընկերային, մշակութային, հայրենասիրական եւ նոյնիսկ քաղաքական հարցեր, զորս Հայաս-

տանի մէջ օրական դրութեամբ կը բազմանային՝ քաղաքացիները մղելով բազմադիմի վերլուծումներու: Ամալիա ծոծան ու ես ալ հոգեհարազատներ էինք ու առանց նախաբանի սպասելու կրնայինք ամէն նիւթի մասին բացուիլ իրարու:

Ձիւնը նստած էր դուրսը եւ կ՚աւետէր 1992ի գալուստը: Երկրին մէջ յառաջացած վառելանիւթի տագնապը Համալսարանը դրած էր դռները փակելու հարկադրանքին տակ: Երկու շաբաթէն կը սկսէր ձմեռնային արձակուրդը, եւ ես կը պատրաստուէի վերադառնալ Պէյրութ:

***

Գիշեր մը ժամը տասնի մօտերը հասայ տուն: Ամալիա ծոծան գրեթէ անկենդան պառկած էր անկողնին, գլուխին վրայ ալ՝ բժշկուհի մը եւ հարազատ աղջիկը: Մօտեցայ հիւանդին ու ափերուս մէջ առի թուլցած ձեռքը: Պառաւը ի գործ դրաւ վերջին ճիգ մը, կէս մը բացաւ աչքերը եւ փորձեց ժպտիլ, ապա փորձ ըրաւ խօսելու, բայց չկրցաւ: Բժշկուհին բացատրեց, թէ շիճուկ սրսկած էր, պառաւին մարմնին մէջ ծաւալիլ սկսած բորբոքումին առաջքը առնելու համար: Կնոջ աղջիկը թաշկինակով մը սրբելէ ետք աչքերը ըսաւ, որ առաւօտեան իր գալ-երթալէն ետք ըստ երեւոյթին մայրը քալել փորձած էր, ապա գետին ինկած եւ ժամերով հոն մնացած՝ մինչեւ դստեր կէսօրուան այցելութեան ժամը: Աղջիկը պառաւը գտած էր զգայազիրկ վիճակի մէջ: Ամբողջ օրը չէր իջած հիւանդին ջերմութիւնը: Դրացի բժշկուհիին ժամանումը դարձած էր ստիպողական:

Միայն կէս գիշերէն ետք էր որ մօրաքին վիճակը համեմատաբար բարելաւուեցաւ: Վտանգը անցած համարելով, աղջիկը իմ խնամքիս յանձնեց մայրը, յանձնարարելով՝ որեւէ անակնկալ պարագայի հեռաձայնել իրեն: Քիչ ետք պառաւը ուզեց նստիլ: Թեթեւակի գրկեցի զինք եւ քանի մը բարձ զետեղեցի կռնակին: Լաւ զգաց: Նայեցաւ շուրջը, իւրաքանչիւր մանրամասնութիւն դիտեց հատիկ-հատիկ, մեծ դժուարութեամբ ակնոցը ամրացուց աչքին, ապա դալկօրէն շշնջաց.

- Սեդա ջան, մինչեւ գնալդ կարող ես հեռախօսից օգտուել ինչքան ուզում ես:

Հիւանդութեան լուրջ պահու մը արտասանուած սա խօսքերը տարօրինակ թուեցան ինծի: Հարցական նայեցայ պառաւին, բայց արդէն ուղեղիս մէջ գտայ պատասխանը. «կ'երեւի թէ առաւօտեան սենեակս մտած է, վերադարձին չէ կրցած ոտքը բարձրացնել սեմին վրայ ու հոն ալ ինկած է...»: Գուշակութիւնս ճիշդ ելաւ: Ամալիա ծոծան «մի քիչ քայլեմ»ի պատրուակով ներս մտած է ու վերադարձին ինկած, հիմա ալ «խղճահարութենէն» զիս ազատ կ'արձակէ իր վերջին «լուծ»էն...

Պառաւին առողջութիւնը հետզհետէ վատթարացաւ: Արեան ճնշումը խախտեցաւ եւ արգիլուեցաւ իրեն դուրս գալ անկողինէն: Ա՛լ աղջիկը չէր բաժնուեր մօրմէն: Ամալիա ծոծան դիտապաստ պառկած, ո՛չ կ'ուտէր, ո՛չ կը շարժէր, այլ միայն ծանրօրէն կը տնքար: Մեր բաժանումը եղաւ շատ յուզիչ: Ծոյանքներուս ի պատասխան մօրաքը բացաւ աչքերը, լացակումած նայեցաւ ինծի, դողալէն բռնեց ձեռքս, ուզեց բան մը ըսել, բայց կոկորդը խեղդուեցաւ: Գրկեցի զինք ամուր-ամուր, համբուրեցի, ապա սիրած արտայայտութիւններէն քանի մը հատ ականջին փսփսացի: Ժպիտի պէս բան մը ուրուագծուեցաւ կնոջ երեսին: Փորձեց գլուխը բարձրացնել, բայց ուժերը չբաւեցին: Սառած նայուածքով մը փնտռեց աչքերս, ապա գեր-ճիգով մը փսփսաց. «Բալա ջան, որ սաղ մնամ էլի՛ արի մօտս...»:

***

Պէյրութ վերադառնալէս կարճ ժամանակ մը ետք հեռաձայնեցի Ամալիա ծոծային տունը, բայց պատասխանող չեղաւ: Տխուր միտքեր պաշարեցին էութիւնս: Իրողութիւնը հասկնալու համար փորձեցի ընկերուհիիս՝ Լիային թիւը.

- Սեդա, էդ դո՞ւ ես, ո՞նց ես...

Քանի մը բառ ետք հարցուցի.

- Մօրաքը ի՞նչպէս է, ի՞նչպէս եղաւ...

Լիան հազաց, ապա թախծոտ՝ պատասխանեց.

- Մօրա՛քը... լոյս իջնի պապերուդ հոգուն...: Քո գնալուց յետոյ նա էլ մեկնեց էս աշխարհից...

Վրէժ-Արմէն ԱՐԹԻՆԵԱՆ

Ծնած է Գահիրէ, Եգիպտոս, 1940-ին: Նախակրթութիւնը ստացած է Գալուստեան ազգային վարժարանին, իսկ ապա Saint-Georges' College-ին մէջ: Ճարտարապետութեան Պսակաւոր է (B.Arch.)՝ Գահիրէի համալսարանէն, Մագիստրոս (M.Arch)՝ Մոնթրէալի McGill համալսարանէն: Իր աւարտաճառը նուիրուած է «Դասարանի ֆիզիքական միջավայրի ազդեցութիւնը աշակերտին վրա» նիւթին: Ամուսնացած է Նազան Գույաքեանի հետ, ունին երկու դուստրեր՝ Լորի եւ Արազ: Մոնթրէալ հաստատուած է 1966-ին:

Ճարտարապետական ասպարէզը սկսած է 1964-ին: Պաշտօնավարած է բազմաթիւ ճարտարապետական գրասենեակներու եւ Գանատայի կառավարութեան երկու նախարարութիւններու մէջ: Նախագծած է մեծ թիւով կրթական հաստատութիւններ, գիտական կեդրոններ, այլ հասարակական շէնքեր: 1992-էն ի վեր կ'աշխատի դեղի եւ ուտեստեղէնի գործարաններու, հիւանդանոցներու, գիտական աշխատանոցներու եւ նման շէնքերու մէջ մասնագիտացած՝ Մոնթրէալի ու Գանատայի մեծ գրասենեակներէն մէկուն մէջ (NFOE et associns architectes)՝ իբր բնութագրերու խմբագիր (specification writer), ճանչցուելով որպէս ամենէն հմուտ մասնագէտներէն մէկը այս մարզին մէջ:

Մասնագիտական յօդուածներ ստորագրած է մի քանի թերթերու ու հանդէսներու մէջ, անգլերէն, ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով, ու ներկա-

յիս կ'աշխատակցի Construction Canada պարբերաթերթին:

Անդամ է Քեպէգի ճարտարապետներու ընկերակցութեան, գանատական ու ամերիկեան մի քանի մասնագիտական միութիւններու, եւ մաս կազմած է Քեպէգի Մշակոյթի նախարարութեան Մշակութային իրերու («յուշարձաններու» պահպանութեան) յանձնաժողովին:

Հասարակական կեանքին իր մասնակցութիւնը բերած է Հ.Յ.Դ. երիտասարդական միութեան, Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ Համազգայինի շարքերուն ծամբով:Հիմնադիրներէն է Սուրբ Յակոբ ազգային երկրորդական վարժարանին: 1998-էն 2006 մաս կազմած է Համազգայինի Կեդրոնական վարչութեան:

2008-ի սեպտեմբերէն ի վեր լծուած է Շինարարական ասպարէզի Գանատայի հայ մասնագէտներու ԿԱՄԱՐ ընկերակցութեան կազմութեան:

Գրական եւ խմբագրական առաջին փորձերը սկսած է դպրոցական գրասեղաններէն: Աշխատակցած է Գահիրէի Յուսաբեր օրաթերթին 1956-1966, Փարիզի ՀՅԴ Նոր սերունդի Հայաստան շաբաթաթերթին 1964-1968, Պոսթընի Հայրենիք օրաթերթին 1966-1980, 1986-էն սկսեալ՝ ՀՅԴ պաշտօնաթերթ Դրօշակին: 1984-1992 եղած է Գանատայի Հայ Դատի տեղեկատուի՝ "La Cause Armnienne / The Armenian Cause"-ի խմբագրական կազմի պատասխանատուն:

Իր մասնակցութիւնը բերած է Հորիզոն շաբաթաթերթի հիմնադրութեան, 1979-ին, եւ անկէ ի վեր կապուած է անոր, 1981 մարտէն մինչեւ 1991-ի դեկտեմբերը վարելով շաբաթաթերթի խմբագրութիւնը, իսկ մինչեւ դեկտեմբեր 2009՝ խմբագրելով ամսական Գրական յաւելուածը:

Ան հեղինակն է Ոստայն 1, (1987), Ոստայն 2, (1988), եւ Ոստայն 3 - Հաղորդութիւն, (1999)՝ յուշագրական-ուղեւորական ժողովածուներուն, խմբագիրը՝ Հայաստանի պատմական ատլաս / Historical Atlas of Armenia-ին (1987), եւ խմբագրի օգնականներէն մէկն ու գեղարուեստական խմբագիրը ՀՅԴ Յուշամատեան / ալբոմ-ատլաս-ին (Ա. հատ. 1992 եւ Բ. հատ. 2001): Այժմ հրատարակութեան կը պատրաստէ իր յուշագրական հատորներէն առաջինը՝ «Ուղեւորութիւն դէպի իմ մոլորակը»:

2008 հոկտեմբեր 4-ին, արժանացած է Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ գիրի ու մշակոյթի սպասարկութեան յատկացուած Մեսրոպ Մաշտոց շքանշանին:

ԿՌՈՒՆԿՆԵՐԸ

Հայաստանը կեանքիս անբաժանելի մասը կը կազմէր։ Կը կազմէ։

«Հայաստան ամէն բանէ վեր» կը գոչէինք Պատանեկանի ու Երիտասարդացի շարքերուն մէջ մեր իւրաքանչիւր ժողովի աւարտին։ Ամէն շաբաթ։ Տարուէ տարի։

Ամառները, դպրոցական տարիներուս, սիրած զբաղումներէս մէկը պատմական Հայաստանի քարտէս գծելն էր։ Ռուբէնի յուշերը, որոնք մի քանի շաբթուան մէջ այնքան արագ լափեր էի առաջին ընթերցումիս, իսկ երկրորդին՝ ծայրէ ի ծայր ցանկագրեր այնտեղ երեւցող նիւթերը՝ իւրաքանչիւր դէմքի, դէպքի կամ վայրի վերաբերեալ յղումները ի մի բերելով. Արեւմտեան Հայաստանը այնքան սիրելի ու ծանօթ տեղ մըն էին դարձուցեր, որ կարծես աչքս գոց կրնայի շրջիլ Սասունի լեռներուն վրայ, Կարսի կամ Վանի փողոցներուն մէջ...

Հայաստանեան հրատարակութիւնները այնպէս առատութեամբ լեցուցեր էին մեր գրադարաններու յարկերը։ Ամենէն սկիզբը, պատերազմի տարիներուն, կրկնակի աղաւաղուած մեր ուղղագրութեամբ, ամենէն խղճալի թուղթերուն վրայ՝ այսպէս կոչուած մանկական գրականութիւն էր մտեր մեր տունը՝ «շնորհիւ» դեղարան Զարեհի, որ չեմ գիտեր իր ո՛ր բարեմասնութեան համար, իր դեղերուն հետ նաեւ այլ «դեղեր» կը վաճառէր իր հայ յաճախորդներուն - Երեւան տպուած գրքեր։ Համոզեա՞լ մըն էր, թէ ծախուած մը, Աստուած գիտէ, սակայն, այո, ունէր մենաշնորհը այդ գիրքերը ստանալու։ Անոնցմէ, աւա՜ղ, նմոյշ մը չենք պահեր ի վերջոյ, սակայն անկէ ետք տարբեր աղբիւրներէ պիտի կարենայինք որքա՜ն գիրք բերել տալ։

Անոնցմէ առաջինը 1947-ի կամ 1948-ի ներգաղթին Հայաստան գացած մանկութեանս ընկերոջ՝ Արմէնի հայրն էր, որ կարծեմ Հայպետհրատի տպարանը կ'աշխատէր, ու պատրաստակամութիւն յայտնած էր ուզած գրքերս ուղարկելու։ Յաճախ ամօթ կը զգայի, որ այնքան առատօրէն կը ղրկէր երկար ցանկերով իրմէ խնդրած գիրքերս, ու մենք քիչ անգամ կը յաջողէինք փոխադարձել, իրենց շատ պիտանի բաներ՝ բառարաններ, առտնին առար-

կաներ եւ այլ պիտոյքներ ուղարկելով երբ աւելի ուշ Հայաստան այցելողներ, կամ վաթսունական թուականներուն՝ նոր ներգաղթողներ կ'ըլլային։ Այդ ժամբով իմ ստացած ամենէն արժէքաւոր նուէրը կը հանդիսանայ «Հայկական ՍՍՌ ատլաս»-ը, որմէ այնքան տպաւորուած ըլլալու եմ, եւ որ այնքան հարուստ տեղեկութիւններով ու մանաւանդ թիւով սահմանափակ էջերու վրայ տրուած պատմական Հայաստանի իր քարտէսներով զիս այնքան խանդավառած ըլլալու է, որ ամենէն ետեւը, կողքի ներսի կողմը արձանագրած եմ հետեւեալը, վերյիշելով դպրոցը մատենագրութեան ուսուցիչէս սորվածս՝ «Հայը, իր պատմութեան մէջ, ուր որ գացած է, հետը տարած է Խորենացի մը, Եղիշէ մը, Նարեկ մը եւ Աստուածաշունչը։ Անոնց վրայ աւելցնել, յետ այսու, Հայաստանի ատլասը»։

Երկրորդ աղբիւրս պիտի հանդիսանար սովետական հրատարակութիւններ այլեւս պաշտօնապէս վաճառող գրատունը՝ «Տար էլ-շարք»-ը, որ բացուեցաւ իմ շատ յաճախած «Մոլիեռ» գրատան տեղը, ու պարբերաբար հայաստանեան գրքեր ալ սկսաւ բերել՝ յաճախ մեր դասականներու վերահրատարակութիւններ, նոր գրողներու գործեր, նաեւ հատ ու կէնտ պարբերականներ։ Պէտք էի ամեն շաբաթ անցնիլ այնտեղէն եւ ստուգել թէ ի՛նչ նոր գիրք ժամանած էր։ Ի՜նչ հրճուանք կը զգայի, երբ փնտռած հատորներէս մէկն ու մէկը յանկարծ առջեւս կ'ելլէր, կամ բոլորովին նոր հեղինակի մը մէկ գործը, որով նոր անուն մը պիտի բացայայտուէր ինծի համար։ Համալսարանէն ստացած տարեկան մրցանակիս գումարները կ'երթայի ամբողջութեամբ հո՛ն սպառել, այն աստիճան, որ օր մը գրավաճառը հարցուց ինծի, թէ ո՞ր գրադարանին համար կ'ընեմ այդ գնումները։

Երրորդ աղբիւրս, վերջին տարիներուն, պիտի հանդիսանար Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն, որ իր հիմնադրութեան օրէն՝ 1965-էն սկսեալ կ'երեւի անունս դրեր էր առանձնաշնորհեալներու ցանկի մը վրայ, ու չէր մերժեր, թէեւ ոչ այնքան հետեւողական կերպով՝ իմ որոնած, խնդրած հրատարակութիւնները ուղարկել հասցէիս։

Այս բոլորը, ճիշդ է, ուժեղ կապ մը կը ստեղծէին Հայրենիքին հետ, սակայն այդ կապը աւելի հոգեկան էր, թուղթի ժամբով էր։

Տակաւին կար օրացոյցը, որ ամեն տարի հօրս հնչակեան ընկերը անպայման կը բերէր մեզի, եւ ուր այնքան խղճալի տպագրութեամբ լոյս տեսած լուսանկարներն անգամ կ'ուրախացնէին մեզ՝ ծանօթացնելով մեր երկրի յուշարձանները կամ բնութիւնը:

Վերջապէս կար «Երեւանի ձայն»-ը, որ ամեն գիշեր, քնանալէ առաջ, անկողնին քովի փոքրիկ ձայնասփիւռէն կ'ունկնդրէր մայրս, յաջորդ առաւօտ մեզի ալ փոխանցելով իր լսած կարեւոր լուրերը:

Այս բոլորը սակայն որոշ հեռաւորութիւն մը ունէին, անմիջականութեան պակաս մը, որ մասամբ պիտի վերանար, երբոր գրքերէն, թերթերէն, պատկերներէն ու ձայներէն անդին, մէկ կողմէ Սփիւռքի մեղաւորներո՛ւս առջեւ մեծ վարանումներով, նեղ դուռ մը կը բացուէր, իսկ նոյնքան նեղ դռնէ մըն ալ հայրենի կռունկները կը սկսէին արտասահման ժամանել: Մասամբ կ'ըսեմ, որովհետեւ ամեն պարագայի կը մնային բազմաթիւ թումբեր, որ քանդուելու կը սպասէին...

Սակայն, առաջին անմիջական կապը նամա՛կ մըն էր – նոյնպէս թո՛ւղթ – որ նոր ժամանակներու աւետիսը պիտի հանդիսանար: «Գալուստեան»-ի վերջին տարիներու աշակերտ էի, ու առաւօտ մը, երբ բոլորս շարք առ շարք հաւաքուեր էինք տղոց կողմի բակը՝ «Հայր մեր»-ը ըսելու համար, մեր տնօրէնը յայտարարեց, որ անակնկալ մը ունէր մեզի փոխանցելիք: Վարժարանը նամակ մը ստացած էր հայրենի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանէն, որով ան իր ողջոյնները կը յղէր մեզի, ու իր պատգամը՝ բանաստեղծութեան մը ձեւով, «Խօսք իմ որդուն» վերնագրեալ: Եւ Սեդան, որ լաւ ասմունքելու ձիրք ունէր, կարդաց կամ արտասանեց այդ քերթուածը, որ ընդմիշտ դրոշմուեցաւ շատերուս, ի՛մ ալ ուղեղին մէջ:

Անդրանիկ «ուխտաւորներ»-ուն հետ Հայաստան այցելեց «Գալուստեան»-ի սիրելի ուսուցիչներէս պրն Քերովբէ Կոստանդեանը. 1958-ին էր: Անմիջապէս որ վերադարձաւ, ընտանեօք գացինք իրենց այցելութեան: Տէր եւ տիկին լաւագոյն ընդունելութիւնը ցոյց տուին մեզի, ու հարազատ տան մէջ զգացինք մենք մեզ: Հարազատի պէս ալ խօսեցաւ ուսուցիչս, պատմեց տեսածները, որոնց մասին իր ունեցած հրապարակային ելոյթին չէր խօսած:

Գլխաւոր միտք բանին այն էր, որ մարդոց հոգիներուն վրայ ծանրութիւն կար, երեսներուն չկար ժպիտ:

Յետոյ, 1959-ին, Գահիրէ պիտի ժամանէր Հայաստանի երգի պարի «անսամբլ»-ը՝ Թաթուլ Ալթունեանի ղեկավարութեամբ: Մեծ հպարտութիւն էր մեզի համար տեսնել նման խումբի մը գովազդները քաղաքի պատերուն վրայ, թէեւ այդ օտարոտի «անսամբլ» բառը, համոյթի փոխարէն. Հայաստանէն գալով, որոշ վանողականութիւն մըն ալ կը ստեղծէր ինծի համար: Խումբի ելոյթը, սակայն, օփերայի մեծ դահլիճին մէջ, պիտի գլէր անցնէր ամեն ակնկալութիւն, ու լեցնէր մեր հոգիները ազգային զգացումներով: Պիտի ունկնդրէինք կոմիտասեան ծանօթ երգեր, այլեւ նոր երգեր, տեսնէինք հայկական պարեր որոնց միայն հեռաւոր ու անկատար պատկերացումը ունէինք մինչ այդ, պիտի խանդավառուէինք մանաւանդ երգի վերածուած՝ Չարենցի «Ես իմ անոյշ»-ով, որ յայտագրին վերջին կէտն էր, ու անպայման պիտի կրկնուէր:

Այդ երեկոյէն ուրիշ կարեւոր հանգամանք մըն ալ պիտի մնար յիշողութեանս մէջ: Հոն էին, այդ ներկայացման, ու բազմած առաջին կարգի աթոռներուն վրայ, Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարները, մեր մեծերը, ու անոնց մէջ՝ Հայաստանի հանրապետութեան չորրորդ վարչապետ Սիմոն Վրացեանը, որոնք այդ օրերուն Գահիրէ կը գտնուէին մասնակցելու համար Ընդհանուր ժողովին: Ասիկա շատ կարեւոր նշանակութիւն ունէր ինծի համար, եւ կը ջրէր-սրբէր մեզ «հակահայաստանեան» յորջորջող գրպարտութիւնները...

Շատ պիտի չուշանար Հայաստանի պարի պետական համոյթին (իրենց բառով՝ միշտ «անսամբլ»-ին) այցելութիւնը: Այն ատեն այս մէկուն հայկականութենէն շատ չեմ տպաւորուեր, սակայն մեր սրտերը մեծ հպարտութեամբ լեցուց այս խումբը ետքը, երբ իր օրինակին հետեւելով, համալսարանի մեր ուսուցիչներէն մէկուն դուստրը ու ամուսինը հիմնեցին Ռետա համոյթը, ու սկսան մեծ ճաշակով բեմ հանել եգիպտական ազգագրական արուեստը:

Անկէ ետք արդէն ուրիշ խումբեր, արուեստագէտներ, թէ՛ Հայաստանէն եւ թէ՛ Սփիւռքէն պիտի յաջորդէին իրարու, մեր բեմերը քիչ պիտի գային, անքաւարար՝ բոլորին ելոյթներուն համար, պիտի վայելէինք բոլորը, պիտի տեսնէինք, երկու խօսք փոխանա-

կէինք անոնց հետ, ձեռքը սեղմէինք անոնց. Արամ Խաչատուրեան ըլլային անոնք, Գոհար Գասպարեան, թէ պարզապէս համաշխարհային համբաւի հասած Յարութիւն Յակոբեան ձեռնածուն կամ աճպարարը. զգայինք անոնց ոգին, տառապանքը՝ բռնատիրութեան լուծին տակ. սուտ գաղափարաբանութեան մը խնկարկման կեղծիքը. ու հայկականութեան խորունկ արմատները. այնուամենայնիւ:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա.-ի առաջին այցելութիւնը խռովայոյզ պայմաններու մէջ էր եղած: Սակայն նոյնիսկ այն ատեն, 1956-ին, երբ Միջին արեւելք էր եկած Կիլիկիոյ աթոռի գահակալի ընտրութիւնը համայնավար իշխանութիւններու պահանջքին համաձայն ձեւաւորելու համար, ու ձախողած էր, ան կրցած էր իր պատգամը հասցնել, թէ մենք տեղի չտանք, իր ըսածներուն չանսանք... Պատմական պիտի ըլլար ու Հայոց հայրապետին վայել՝ Վազգէն վեհափառի երկրորդ այցելութիւնը. եւ պիտի չմոռցուի «Յուսաբեր»-ի թատերասրահի բեմին վրայ պահ մը լռու իր կանգնիլը. յետոյ «Ես ի՞նչ ըսեմ ձեզի» հարցումով բացումը իր ելոյթին, որուն ընթացքին Ռումանիոյ մէջ իր հոմեներմենական արմատներուն պիտի անդրադառնար:

Չեմ մոռնար նաեւ նոյն ատեն կամ նոյնիսկ Իր իսկ հետ ժամանած Միքայէլ Մազմանեան ճարտարապետին՝ աննման այդ հայուն ելոյթը. այս անգամ Հելիոպոլսոյ Յուսաբեր ակումբի Լեւոն եւ Սիրվարդ Գարագաշեան (յետոյ այդպէս կոչուած) սրահի բեմէն, ուր աթոռի մը վրայ նստած ու սուրճի սկահակ մը բռնած ձեռքերուն մէջ, ան այնքան յստակ կերպով Երեւանը պատկերացուց մեր աչքերուն առջեւ, փոքրիկ պնակին վրայ եւ շուրջը բացատրելով Հայաստանի մայրաքաղաքի կեդրոնական ու շրջակայ թաղամասերը:

Գրեթէ նոյն ատենները, քիչ մը առաջ կամ քիչ մը ետք, մեզի պիտի այցելէր նաեւ Սիլվա Կապուտիկեանը:

Այդ առթիւ «Յուսաբեր»-ի մէջ պիտի գրէի «Խօսք իմ մօր» վերնագրուած յօդուած մը, օգտուելով իր որդւոյն ուղղուած պատգամէն ու Արարատին նուիրուած քերթուածէն՝ դրսեւորելու համար սփիւռքահայ երիտասարդի հոգեվիճակը, հայրենիքի հանդէպ ունեցած ուժեղ առնչութիւնը եւ զգացումները, հաստատելով որ

մենք ալ կ'ապրինք Արարատի՝ այդ ««կապոյտ միրաժ»-ի խորհուրդով, երազներով եւ յոյսով», ապա աւելցնելով, որ «այն գիտակցութիւնը, որ մեր պայքարին մէջ դուք ալ մեր կողքին էք, կը գօտեպնդէ մեզ եւ առաջ կը մղէ»: Վերջապէս հարց կու տայի, որ «Ձեր այցելութեամբ ծիածան մը չէ՞ արդեօք որ կը ձգուի Հայրենիքին ու Արտերկրի միջեւ», բանաձեւելու համար մեր ակնկալութիւնը, որ «սովորական անձրեւներէն ետք երեւցող ու վայրկեաններու կեանք ունեցող ծիածան մը չըլլայ ան, այլ դառնայ հաստատ կամուրջ մը, որ միացնէ հայութեան երկու մասերը, անդ եւ աստ»:

Համագաղութային առումով, Կապուտիկեանի գլխաւոր ելոյթը ծրագրուած էր որ տեղի ունենար Հելիոպոլսոյ «Յուսաբեր»-ի նոյն այդ սրահին մէջ: Տեղեկացայ, որ նախորդ երեկոյ Կապուտիկեան հրաւիրուած էր անուանի երգիծանկարիչ ու ռամկավար գործիչ Սարուխանի տունը: Գրեթէ դրացի ու բարեկամ էինք, ուստի ան սիրով ընդառաջեց, որ մենք ալ ներկայ գտնուինք այդ հանդիպումին: Գացի մօրս հետ: Ինչ մեծ պատիւ էր սեղմել հայրենի բանաստեղծուհիին ձեռքը: Երբոր ծանօթացուեցանք, ու գիտցաւ որ կը գրեմ, ուզեց գրութիւններս տեսնել: Վազեցի տուն, ու բերի իրեն յանձնեցի վերջին յօդուածներս, անոնց մէջ նաեւ մեր տան Կաղանդին մասին գրածս, ուր կը գրէի, որ ամեն տարեվերջի կ'աղօթենք, որ յաջորդ ամանորը դիմաւորենք մեր հայրենիքին մէջ:

Կրնայի՞ երեւակայել, որ յաջորդ օրը, մեր բերնէ բերան յորդող այդ սրահին մէջ, ուր շատեր երեք-չորս ժամ ոտքի՛ հետեւեցան հանդիսութեան, Սիլվա Կապուտիկեան պիտի անդրադառնար իմ գրութեան, առանց անունս տալու, վեր առնէր հայրենիքի կարօտին մասին գրած տողերս, դրուատէր նոր սերունդը, որ այդպիսի ջե՛րմ զգացումներ կը տածէ հայրենիքին հանդէպ, ու յանկարծ անկապ կերպով հարուածէր ծնողքիս ու մեր ծնողներուն, որ այսպիսի լաւ սերունդ մը կը ջանան օտարել հայրենիքէն, ժխտակա՛ն զգացումներ սերմանել մեր մէջ: Ինծի համար լախտի հարուած մըն էր ատիկա, բայց բարեբախտաբար տակաւին խօսք պիտի առնէր Սարգիս Ջէյթլեան, ու արժանի պատասխանը տար օրուան հիւրին: Ի հարկէ կ'ենթադրէինք նաեւ, որ որոշ ազգային

կեցուածքներ դրսեւորելու համար բանաստեղծուհին ու ընդհանրապէս բոլոր հրապարակային ելոյթ ունեցողները տուրքի բաժին մըն ալ ունէին տալիք առ որ անկ է… Երկու տարի ետք, երբ լոյս տեսած էր նաեւ իր ուղեպատումը՝ «Քարաւանները դեռ քայլում են», նամակով մը, որ չեմ գիտեր հասա՞ւ բանաստեղծուհիին ձեռքը, դիտել կու տայի իրեն, որ «հայրենասիրութիւնը մեր մէջ վառեցին մեր ծնողները, մեր ուսուցիչները, մեր կուսակցական առաջնորդները, ծանօթ եւ անծանօթ: Մենք, արտասահմանի այս անբնականոն պայմաններուն մէջ հասակ նետածներս, եթէ չունենայինք անոնք որոնք որոշ չափով կը վերցնէին մեր «կռնակին հայրենիք չունենալու» գիտակցութեան պատճառած անապահովութիւնը եւ հոգեկան հայրենիքով մը կը փոխարինէին նիւթական հայրենիքը, այն ատեն դժուար թէ Դուք մեր գաղութներուն մէջ գտնէիք այն սրտբաց ընդունելութիւնը, որ Ձեզի ընծայեցին տասնեակ հազարաւոր հայեր, ծեր ու մանուկ, մանչ թէ աղջիկ»:

Իսկ ինչպէ՞ս մեկնաբանէինք այն իրողութիւնը, որ «Խօսք իմ որդույն» գրող հեղինակին զաւակը ռուսական դպրոց կը յաճախէր, բան մը որ ինք պիտի խոստովանէր, գուցէ խորհրդապահաբար, երբ այդ մասին իրեն հարց կու տար մայրս: Որո՞ւ համար կը գրէր ապա ան իր այնքան հայրենասիրական քերթուածները: Աչքի փոշի՞ էր, թէ մորմոքող սրտի մը արտայայտութիւնը:

Նոյն տարին, այսինքն Մեծ եղեռնի յիսնամեակէն երկու տարի առաջ, մեզի պիտի հասնէր Յովհաննէս Շիրազի Պատգամը համայն հայութեան՝ «Ամենայն սրտով»-ը, որ լոյս պիտի տեսնէր «Յուսաբեր»-ի առաջին էջին վրայ, իսկ շրջանակի անցած՝ պիտի կախուէր մեր տան պատերէն: Միեւնոյն ատեն սակայն կասկած մը, վերապահութիւն մը պիտի սողոսկէր ծնողքիս, գուցէ եւ ուրիշներու ալ մտքերէն ներս – սովետներու նոր, ո՛չ հի՛ն քաղաքականութիւնը չէ՞ր ասիկա՝ հրահրել հայերու ազգային զգացումները, խանդավառել ու ոտքի հանել, ինչպէս եղած էր 1939-1945 տարիներուն, որպէսզի ձայն բարձրացնենք, պահանջներ արտայայտենք, իսկ իրենք ալ մեզ լռեցնելու պատրուակով նոր զիջումներ կորզեն Արեւմուտքէն: Միւս կողմէ, եթէ մեր զէնքերը մեր ձեռքէն առնելու համար է, որ Շիրազին, Էմինին եւ ուրիշներու հայրենասիրական գործեր գրել կու տային, ի՞նչ կարեւորութիւն ունէր, կը

մտածէի: Մեր գաղափարները եթէ կ'իրացուին, կը նշանակէ որ յաղթանակը այդ գաղափարներո՛ւնն է, այսինքն մե՛րն է: Սակայն ի՞նչ պիտի ըլլար, եթէ խօսքէն գործի չանցնէին, ինչպէս միշտ եղած էր ասկէ առաջ: Կը նշանակէր, որ մենք դեռ անելիք ունէինք - պայքարը պիտի շարունակուէր...

Յատկապէս Յիսնամեակը, մեզի հասնող լուրերով, մամուլի մէջ ալ երեւցող յօդուածներով կը խանդավառէր մեզ: Հոն ինչե՛ր փոխուեցան վերջին տարիներուն, լեզուները ինչպէ՛ս բակուեցան, ազգային զգացումը թեւ առաւ ծախրեց, կը գրէի ընկերոջ մը: Իսկ հայրենաբնակ Արմէնէն կը խնդրէի որ այդ տարին ծառ մըն ալ իմ կողմէ տնկէ ի յիշատակ մեր մէկուկէս միլիոն նահատակներուն:

Յաջորդ տարի, արդէն ուրիշ այցելութիւն մը տարբեր մթնոլորտի մը, աւելի պայծառ օրերու նշոյլը պիտի հանդիսանար մեզի համար: Այդ՝ Հայաստանի սուսերամարտիկներու բարեկամական մրցումներն էին, եգիպտացի իրենց մարզակիցներուն դէմ: Պատերուն դրուած որմազդները եւ մարզասրահին մէջ կատարուող յայտարարութիւնները ռուսերէն էին, սակայն երբոր երկու խումբերը դաշտ եկան ու «Բարե՛ւ» հնչեց միաձայն հայ տղոց ու աղջկանց բերնէն, որուն «Մարհապան» պատասխանեցին տեղացիները, արդէն մեր տրամադրութիւնները բարձրանալ սկսան: «Մերիններ»-ուն յաջորդական յաղթանակները, երկու սեռի մարզիկներուն ալ կողմէ, անշուշտ հպարտութեամբ լեցուցին մեր սրտերը:

Տեղւոյն վրայ ինքակոչ թղթակից դարձայ, ինչպէս յաճախ կը պատահէր, ու սկսայ հարցումներ ուղղել խումբի պատասխանատուներուն, մարզիչներուն, մարզիկ-մարզիկուհիներուն անգամ, ստանալ անկեղծ ու համարձակ պատասխաններ, բայց հետզհետէ թղթակիցը տեղի տուաւ հրապարակագրին, ու գրուեցան իմ «Ողջո՛յն եւ կեցցէ՛» ու «Ի խորոց սրտի ...եւ խօսք ողջերթի» զոյգ յօդուածները: «Եկաք, տեսաք ու յաղթեցիք», գրեցի, «յաղթեցիք պարտուողականութեան ոգիին, եւ հպարտութիւն բերիք կքող հոգիներուն: Յաղթեցիք չար ուժին որ արգիլեր էր մինչեւ հիմա ձեր եւ մեր հանդիպումը, ձեր եւ մեր միաւորումը: Յաղթեցիք նաեւ թաթի ծանրութեան որ ցարդ ճնշած էր ձեր նախորդներու հոգինե-

րուն վրայ եւ չէր ձգած որ այսպէս բացուին, ու բանան մեզ, այսպէս սիրուին ու սիրեն մեզ»: Եւ ցանկութիւն պիտի յայտնէի, որ «Հայաստան պետութիւնը անաչառօրէն ու խղճամտօրէն հետաքրքրուի մեզմով, եւ առանց որեւէ խտրութեան մեզ բոլորս նկատէ իր զաւակները»... ու աւելցնէի՝ «Ըսէք, ըսէք մեր երկրի տէրերուն, որ մեր վրայ չնային որպէս դատապարտուածներ որոնք ուշ կամ կանուխ պիտի գնդակահարուին ճակատագրին կողմէ: Այսպէս չեն կրնար մտածել մեր երկրի շահը ցանկացող իշխանաւորները: Սփիւռքը անբաւ հարստութեան անսպառ շտեմարան կրնայ հանդիսանալ հայրենիքի համար, եթէ...»: Յետոյ կայացած մամլոյ ասուլիսին, որուն չհրաւիրուեցանք, խումբին ղեկավարը զի՞ս էր փնտռեր, ու ափսոսանք յայտներ, որ չկրցան գալ նաեւ մեր ակումբը, «որովհետեւ արգելքը վերէն էր»... թէեւ խումբ մը տղաք ամեն պարագայի մեր տղոց հետ կրցեր էին այցելել «Յուսաբեր»-ի շէնքը:

Իրենց ազդեցութիւնը կրնային ունենալ նաեւ հայկական ժապաւէնները՝ «Առաջին սիրոյ երգը» (առաջինը որ պիտի գար, ու հակառակ իր այնքան տկար պատրաստութեան, յուզէր բոլորս), «Թռիչք անդունդի վրայով» (անուանի դերասաններ Հ. Ներսիսեանի ու Գ. Ջանիբէկեանի խաղարկութեամբ), եւ ուրիշներ: Եւ ահա եգիպտական պետական հեռատեսիլէն ցոյց տրուող մէկ ֆիլմ, պիտի մղէր փոքրիկ Րաֆֆին, թախանձելու իր հօր, որ «եկուր վազ անցնինք, հայրիկ»: Վազ անցնինք Գանատա գաղթելէ, ու Հայաստան երթանք: Այդ առթիւ գրի առած մտորումներուս մէջ դարձեալ կ՚երազէի՝ «Երանի թէ հայրենիքը գիտնար որ սփիւռքահայերը այսպէս սիրաշահիլը շատ աւելի ազգօգուտ գործ կ՚ըլլար քան զանոնք արուեստական բաժանումներու վերածել ու իրարու դէմ հանելը: Երանի թէ անցնող չորս-հինգ տասնամեակներուն հայրենիքի իշխանութիւնները արուեստի ու գեղարուեստի խոփով ակօսներ բանային եւ Հայաստանը հոսեցնէին դէպի մեզ. այսօր Սփիւռքը աւելի առողջ, աւելի միակամ, աւելի հայ կ՚ըլլար»:

Բայց 1991-ը տակաւին հեռո՜ւ էր. հեռու էր, բայց արդէօք ես անոր ոտնաձայները կ՚առնէի: Ընկերոջս՝ Վարդին ուղղուած 1963 փետրուար 24 թուակիր նամակի մը մէջ գրեր եմ.– «Կը խորհիմ թէ խորհրդային լուծէն ազատագրութիւնը պիտի գայ համայնավար

վարչակարգին փլուզումով համայն կայսրութեան տարածքին։ Մինչ այդ պէտք է սրբագրել սահմանները Վրաստանի եւ Ադրբեջանի հետ, ապա թէ ոչ խորհրդային լուծէն ազատուելէ ետք խռով պիտի մնանք մեր դրացիներուն հետ»։ Սակայն ո՞վ պիտի լսէր զինք այդ օրերուն, եթէ լսէր իսկ, ո՞վ կարեւորութիւն պիտի տար Նորելուկ երիտասարդի մը խօսքերուն։ Երա՜զ կը տեսնէ, պիտի ըսէին։



Կոլիա ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում: Ավարտել է տեղի հայոց միջնակարգ վարժարանը, ապա տեղափոխվել Թեհրան, ուր մասնագիտացել է տնտեսագիտության մեջ: Գրել սկսել է վաղ տարիքում:

Նրա բանաստեղծությունների առաջին հատորը «Մայթեր, մայթեր» խորագրով արժանացել է ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկյան «Գրական մրցանակի 1973-ի բանաստեղծության բաժնի» հիշատակության ու լույս տեսել նույն հիմնադրամի կողմից Բեյրութում:

2008 թվին Երևանում հրատարակվել է «Ինեսսա» վիպակը («Աղբյուր» հրատարակչություն): Պատմվածքների «Պղպջակ» ժողովածուն լույս է տեսել 2009-ին Երևանում («Լուսակն» հրատարակչություն):

Նրա հոդվածներն ու էսսեները հրատարակվել են նաև «Ալիք» օրաթերթում (Թեհրան), «Հույս» երկշաբաթաթերթում (Թեհրան), «Բագին» (Բեյրութ) ու «Նարցիս» (Երևան) հանդեսներում: Հիմնադիր ու գլխավոր խմբագիրն է՝ «Գրական Կամուրջ» (www.lit-bridge.com) կայքէջի:

ԵՎԱ

Չորս տարվա բացակայությունից հետո տան շեմքից ներս անցնելիս Եվան չզգաց սովորական խանդավառությունը: Իր գալու առթիվ մայրն աշխատել էր կարգի բերել տունը, նույնիսկ ծաղիկներ էր դրել միջանցքի սեղանին, բայց տեղ-տեղ զգացվում էին մոր՝ կենցաղային մանրուքների հանդեպ անուշադրության ու անփութության հետքերը:

- Հանվի՛ր-,գրկից բաց թողնելով Եվային՝ ասաց մայրն ու մատի ծայրով մաքրեց շպարված աչքերի անկյունները:

Աղջիկը կռահում էր, որ մայրը հատուկ իր համար չի պատրաստվել ու սպասում է հյուրի. նրան վաղուց հայտնի էր, որ մայրը կապված է մի տղամարդու հետ: Այնուամենայնիվ չկարողանալով զսպել իրեն՝ հարցրեց սովորական տոնով, հենց այնպես.

- Մա՛րդ է գալու:

- Ինչի՞ց եզրակացրիր,-չսրածածի ժպտալով՝ հարցին հարցով պատասխանեց նա:

- Քո գեղեցիկ արտաքինից, հագնվածքից. ասես նույնիսկ ամուսնացած չես եղել:

Եվան անթաքույց հիացմունքով նայում էր մոր կանացի, անթերի կազմվածքին ու գեղեցիկ դեմքին:

- Դու էլ շատ ես փոխվել, հրաշալի տեսք ունես:

- Հա՛, շա՛տ, մանավանդ էս վիճակով, ճանապարհից հոգնած...

- Ես դա նկատի չունեմ, իսկապես գեղեցկացել ես, լցվել:

Եվան մոր օգնությամբ պայուսակները տարավ իր սենյակը և կարոտով նայեց չորս կողմը: Գրասեղանի վրայից վերցրեց զոհված հոր շրջանակված նկարն ու շուրթերը հպեց սառն ապակուն: Աչքերից ցած գլորվեցին արցունքի տաք կաթիլներ:

- Սոված չե՞ս,-հարցրեց մայրը գորովանքով,-համեղ բաներ եմ պատրաստել:

- Չէ, ընթրել եմ օդանավի մեջ: Գուցե մի քիչ պառկեմ:

- Դե լավ, պառկիր, հանգստացիր:

Եվան ուրախության երանգ որսաց մոր ձայնի մեջ: «Երևի չի ուզում երկու անգամ ընթրիք գցել ու հավաքել,- անցավ մտքով:-

Իսկ գուցե միջանցքի ծաղիկներն էլ նրա համար են...»:

- Լույսն անջատե՛մ,-հարցրեց մայրը դռան կիսաբացվածքից:

- Հա, անջատիր,-խնդրեց նա ու փռվեց մահճակալին: «Աշխարհի ամենաահանգիստ անկողինը»,- մտածեց նա մթության մեջ ու փակեց կոպերը: Մարմինը նվում էր հոգնածությունից, բայց նրան ավելի շատ տանջում էր տղամարդու ներկայությունը մոր և... ուզեր-չուզեր իր կյանքում: Երբ օտարության մեջ հայրենիքից նոր ժամանած ընկերուհուց առաջին անգամ լսեց այդ մասին, ճիշտ է, հանկարծակիի եկավ, բայց այնքան էլ չանհանգստացավ, սրտի խորքում միշտ սպասել էր մոր կյանքում նման մի իրադարձության: Ասենք, դա շատ սովորական երևույթ էր համարվում Ամերիկայում, հենց իր գործատեղիում կային երկուսը՝ մեկը ամերիկուհի, մյուսը հայ, որ իրենց ամուսիններից բաժանվելուց հետո սիրեկաններ էին պահում ու շատ էլ երջանիկ էին... Մայրը ջահել է, գեղեցիկ, կանացի ու բնավորությամբ... այդպիսին: «Ինչպիսին». Եվան մի պահ խղճի խայթ զգաց: Ո՛չ, ինքը, հարկավ, դա վատ մտքով չի ասում. ավելի շուտ մայրը սիրում էր միշտ լինել ուշադրության կենտրոնում, լսել իր հասցեին շռայլված հաճոյախոսություններ. հոր մահից հետո երբեմն նույնիսկ իր ներկայությամբ սեթևեթում էր օտար տղամարդկանց առջև: Այո, մայրն .այդպիսինե էր, բայց պետական բարձր պաշտոնի բերումով միշտ մնում էր իր կոչման ու հասարակական դիրքի բարձրության վրա: Հիմա ինքն էլ չգիտեր, թե ինչու այդքան մեծ կարևորություն է տալիս մոր և իրեն անծանոթ այդ տղամարդու հարաբերությանը: Իհարկե, ինքը հավատացել էր ընկերուհու պատմածին, սակայն, ասես, ոչ ամբողջությամբ. իրականությունը չէր տեղավորվել ուղեղում, չէր ընկալել խնդրի ողջ լրջությունը: Գուցե հեռվում դա այնքան էլ առարկայական ու շոշափելի չէր, ինչքան այստեղ՝ հարազատ տանը, ուր յուրաքանչյուր իր կամ անկյուն իր մեջ պահած ուներ անցյալի անմոռանալի մի հուշ: Նա ակամա բարձրացրեց գլուխն ու փորձեց նայել հոր նկարին, սակայն պատուհանից ներս թափանցած ու ապակու մեջ արտացոլված լույսի բեկորը խանգարում էր տեսնել հոր դիմագծերը. մթության միջից հայրն իրեն էր նայում ասես լուսե շղարշի ետևից... Վերջին տարիների միայնակ կյանքը, տիրող օտար բարքերը Եվային մասամբ դարձրել էին

անզգացմունքային. վաղուց չէր արտասվել: Իսկ հիմա տան մթնոլորտի ջերմությունը, կենարար ավիշի պես կաթիլ-կաթիլ լցվելով իր էության խորքը, հալեցնում էր քարացած զգացմունքները... Նա, դարձյալ հոր նկարի կողմը նայելով ու հիշելով նրան, զգաց, որ կոկորդը սեղմվում է:

Եվան արթնացավ դռան զանգի ձայնից ու լարվեց ողջ մարմնով: Լսեց դռան բացվելու և փակվելու ձայնը, ապա մոր շշուկը.

- Աղջիկս է եկել:

Եվան զսպանակի պես վեր թռավ անկողնուց ու ոտքերի թաթերի վրա մոտենալով դռանը՝ կիսաբաց փեղկի արանքից տեսավ մորը՝ երկու առնացի բազուկներ փաթաթված մեջքին... Մայրը շուռ եկավ ու նայեց իր սենյակի կողմը, բայց կասկածելի բան չնկատելով՝ շրջվեց ու համբուրվեց հաղթանդամ, բարձրահասակ տղամարդու հետ: Եվան ցնցվեց, այսպիսի տեսարան մեկ էլ տեսել էր կինոյում... Չէր ուզում հավատալ, որ համբուրվողը իր հարազատ մայրն է...

- Աչքդ լույս,-ասաց տղամարդը հաճելի բասով՝ գրկից բաց թողնելով նրան:

Մայրը ժպտաց:

- Գնամ, նայեմ, եթե Եվան քնած չէ, կանչեմ գա, ընթրենք:

Աղջիկն իրեն գցեց անկողնու վրա և աչքերը փակեց: Առայժմ իր մեջ ուժ և համարձակություն չէր գտնում անցանկալի հանդիպման ու ծանոթության համար: Նա սիրում էր մորը և վախենում էր իր ակամա աններբանկատությամբ, ինչին հաճախ ընդունակ էր, վշտացնել նրան: Մայրն անձայն բացեց դուռը, նայեց աղջկան ու հեռացավ: Ինչո՞ւ այրի կամ բաժանված կանայք միշտ ձգտում են նոր կողակից գտնել. ամուսնական կենակցումի կորսված հաճո՞ւյքն է նրանց մղում այդ քայլին, արու մեկին նեցուկ ունենալու սովորության ո՞ւժը: Ինչքա՜ն միայնակ աղջիկներ կան, որ ապրում են առանձին կյանքով ու չեն կարևորում տղամարդու ընկերակցությունը: Գուցեև կարևորում են, բայց չեն համարձակվում գնալ... այն քայլին ու հաճախ սպասում են հույսով, որ մի օր կհայտնվի իրենց երազների արքայազնը: Այս երկրում տաբուները սահմանված են միայն աղջիկների համար, հասարակությունն անտարբերությամբ կամ մատների արանքով է նայում ամուրի կանանց ինտիմ խն-

դիրներին: Միայն հուշակի հասած ստղերն ու նշանավոր դեմքերն են հայտվում լրագրողների թիրախում՝ զարդարելով որոշ հանդեսների էջերը: Մարդիկ կարդում են՝ դրդված քաղքենիական հետաքրքրությունից, երբեմն նույնիսկ հաճույքով, կարդում են, պատմում սրան, նրան ու մոռանում: Գուցե մոր մասին էլ գրեն... Ո՛չ, դա սխալ չէ... Չի դիմանա, թեև ինքը ո՛չ մեղադրում ու ո՛չ էլ արդարացնում է մորը: Սակայն ինչո՞ւ չի կարողանում ընդունել երրորդ անձի ներկայությունը իրենց տան մեջ:

Եվան նստեց անկողնում ու գրկեց ծնկները: Չկար հայրը, բայց կար հոր նկարը, որ նայում էր իրեն լուսե շղարշի ետևից: Հայրն ամենուրեք կար, անգամ տան օդի մեջ... Աշխատեց պատկերացնել հորը, բայց ինչպես միշտ, այս անգամ էլ մտապատկերում միայն հառնեցին նրա անկենդան, խաղաղ դեմքը, ծաղիկներով ու շքանշաններով զարդարված կուրծքը, սրճագույն, փայլուն դագաղը: Ի՞նչ շուքով թաղեցին հորը՝ հերոս հրամանատարին... Նա ձեռքի շարժումով ասես իրենից վանեց այդ տեսարանը: Հիմա կողքի սենյակում նստած է մի անծանոթ տղամարդ, որը... փոխարինում է հորը... Մայրն ինչպե՞ս է գնացել այդ քայլին... Եվան զգում էր, որ աստիճանաբար նսեմանում են մորն արդարացնող իր բոլոր վարկածները, թեև հոգու խորքում դարձյալ ճգնում էր արդարացուցիչ նոր տարբերակներ մոգոնել: Նա ցավով զգում էր, որ լարվում է մոր դեմ, և սրտի խորքում բռնկվում ու ահագնանում է չարության բոցը, որը նրան մղում էր ձեռնարկել դրությունը փրկող ինչ-որ բան...

Հանկարծ նա ցած իջավ անկողնուց ու ճամփորդական պայուսակի միջից մահճակալին թափեց հագուստները: Պայուսակի խորքում երևում էր կանացի ընտիր ձեռքի ժամացույցի մուգ կապույտ տուփը: Ժամացույցը մոր համար էր գնել, սակայն դեռ չէր հանձնել նրան: Եվան մի պահ կարկամեց. ի՛նչ սիրով ու ցանկությամբ էր գնել դա ու իր ձեռքով տուփը կապել խաչաձև՝ փայլուն ոսկեգույն ժապավենով ու կենտրոնում ամրացրել ոսկեգույն փոքրիկ վարդ: Չէ՞ որ այն ժամանակ էլ գիտեր մոր ու նրա կապի մասին... Ի՞նչն է փոխվել, այս ի՛նչ է պատրաստվում անել հիմա... Ինչո՞ւ...

Եվան վհատությամբ փլվեց մահճակալի եզրին ու գլուխն առ-

նելով ափերի մեջ՝ նորից խորասուզվեց մտքերի հորձանուտը: Ճաշասենյակից լսվում էին գինու բաժակների՝ իրար զարկվելու, սպասքի, մոր և տղամարդու ծիծաղի խուլ ձայները: Ավելի քան կես ժամ նա մնաց նույն դիրքով. հետո ընդոստ վեր կացավ տեղից, նայեց մահճակալի վրա թափված հագուստների կույտին ու դրանց միջից ընտրեց սև գույնի սատինե շրջազգեստը՝ լանջաբաց ու կարճ՝ ծնկներից շատ վեր: Մթության մեջ հագնվեց ալարկոտ շարժումներով ու հետո միացրեց լույսը. անհետացել էր հոր նկարը պարուրած լուսե շղարշը: Հայրը հիմա նայում էր նրան իր բարի, խրախուսիչ ժպիտով... Եվան հավաքեց ուսերին թափված երկար սև մազերն ու ամրացրեց սև ականակուռ հերակալով՝ ի ցույց դնելով երկար պարանոցը, թեթև շպարվեց ու թանկագին օծանելիքով ցողեց պարանոցն ու դաստակները: Հանդարտ դուրս եկավ իր սենյակից ու միջանցքի հայելու մեջ գոհունակությամբ նայելով իրեն՝ բացեց ճաշասենյակի դուռը:

Թե՛ մայրը և թե՛ տղամարդը, ընդհատելով իրենց զրույցը, արագ շուռ եկան: Եվան մոր դեմքին նշմարեց զարմանքի արտահայտություն, որը, պարզ չէր, վերաբերում էր իր հանկարծակի ներխուժմանը, թե՛ տեսքին:

- Բարև ձեզ,- սիրալիր ասաց նա ու ձեռքը նազանքով պարզեց հյուրին: Նա սիրալիր ու թեթև խոնարհումով սեղմեց աղջկա ձեռքը, որը Եվան տղամարդու ափի մեջ թողեց ընդունված պահից ավելի երկար...

- Նստի՛ր, նստի՛ր,-ասաց մայրը՝ դեռևս Եվայի շրջազգեստը տնտղելով,- ի՞նչ կկամենաս:

Եվան չհրաժարվեց քաղաքի լավագույն սրճարանից բերված ու մոր պատրաստած համեղ խորտիկներից: Տղամարդը բարձրացավ տեղից, սովոր շարժումով բացեց կոմոդի ապակեապատ դուռը և բերելով մի հախճապակե բաժակ՝ վարժ շարժումով կարմիր գինի լցրեց Եվայի գավաթը:

-Խմեք, հիանալի գինի է,- ասաց նա իր հաճելի բասով:

- Շնորհակալ եմ, սիրով,- ասաց Եվան ու նայելով տղամարդու աչքերի խորքը՝ ժպտաց կոկետորեն: Նա զգաց, որ իր ժպիտը չվրիպեց մոր հայացքից:

Խոսակցությունը պտտվում էր Եվայի կյանքի շուրջ: Եվան

խոսում էր իր ապրած երկրի ազատ ու անկաշկանդ կենցաղի, հատկապես կանանց տրված ազատության և այլ առավելությունների մասին: Մայրը դա համարում էր արևմտյան սանձարձակություն: Գինու երկրորդ բաժակից հետո նա սկսեց պատմել իր՝ տղաների հետ ունեցած որոշ ծիծաղելի արկածների մասին... Մայրը երբեմն խոժոռում էր դեմքը և աշխատում փոխել խոսակցության թեման, բայց Եվան շարունակում էր՝ ասես ոգևորված տղամարդու քահ-քահ ծիծաղից...

Ընթրիքից հետո նրանք անցան հյուրասենյակ ու ընկողմանեցին բազկաթոռներին. անփութորեն նստած աղջկա կարճ շրջազգեստի տակից երևան եկան նրա բարեձև ծնկներն ու ազդրերը: Եվան զարմանքով նայում էր շուրջը: Մայրը սենյակը կահավորել էր նորագույն ոճով: Ընդարձակ հյուրասենյակը լուսավորվում էր միայն անկյուններում դրված լուսամփոփների դեղին լույսով: Պատերից կախված աբստրակտ գեղեցիկ կտավները, հատակին փռված բաց գույնի գորգերն ու նորագույն բեժ, թեթև կահույքն առինքնող էին և ախորժելի մթնոլորտ էին ստեղծում: Եվան ցուցադրաբար շրջվեց բազկաթոռի մեջ ու երկար դիտում էր խորհրդավոր, կիսամերկ մի կնոջ պատկերող ընտիր կտավը, որ կախված էր իր ետևի պատից: Տղամարդու հայացքը երբեմն հպանցիկ կանգ էր առնում Եվայի՝ շրջվելու հետևանքով ավելի բացված դիրքի վրա: Եվան մի պահ արագ շրջվեց ու նայեց մորը. նա այդ պահին ակնկալում էր տեսնել մոր նյարդայնացած, հանդիմանական դեմքը: Սակայն բացի զարմանքից, որը չէր իջնում մոր դեմքից իր հայտնվելու պահից ի վեր, նրա ոչինչ չասող հայացքն ու պրոֆեսիոնալ ինքնավստահությունը հունից հանում էին աղջկան:

Մայրը գնաց խոհանոց՝ սուրճ պատրաստելու: Եվան գնահատող հայացքով վերից վար չափեց տղամարդուն ու նորից ժպտաց՝ ինքն էլ զարմանալով իր անպատկառության վրա: «Ինչ էլ բարետես է մեռածը, մայրս զուր տեղը չի ընտրել հենց սրան...»: Նա ամեն կերպ աշխատում էր տղամարդու ուշադրությունը հրավիրել իր մարմնական բարեմասնությունների վրա, և թվում էր, թե դա մասամբ իրեն հաջողվում է, բայց, այնուամենայնիվ, տեսնելով նրա բարակ շրթերի վրա գծագրված բարի ժպիտը՝ նյարդայնանում էր: Եվային հանգիստ չէր թողնում նաև այն միտքը, որ

տղամարդը հասկացել է իր թաքուն մտադրությունն ու խուսանավում է: «Չգիտես, կարգին, լա՜վ մարդ է, թե՞ փորձված արկածախնդիր...»:

- Դուք ի՞նչ մասնագիտություն ունեք,- հարցրեց Եվան:

- Ճարտարապետ եմ,- ալարկոտ պատասխանեց տղամարդը:

- Իսկ ինչպե՞ս հանդիպեցիք մորս:

Տղամարդը լուռ էր: Նա մի պահ ակնդետ նայեց Եվայի աչքերի մեջ, որից աղջիկը սարսուռ զգաց, և արտաբերեց.

- Դա ձեզ շա՞տ է հետաքրքրում:

Եվան գլխով արեց:

- Մենք ուսանողության տարիներից ճանաչել ենք իրար: Նա սովորում էր երկրորդ, իսկ ես՝ վերջին կուրսում, երբ առաջին անգամ հանդիպեցինք,-կարճ դադարից հետո պատասխանեց տղամարդը:

- Ուրեմն վաղուց սիրահարված եք եղել...

Տղամարդը քմծիծաղեց. նա ակնհայտորեն նեղվում էր խոսակցության նման ընթացքից, բայց չէր կորցնում ինքնատիրապետումը: Աղջկա հարցը մնաց օդում կախված...

- Չե՞ք ամուսնացել:

- Ամուսնացել եմ,- ասաց նա ու չսպասելով աղջկա հաջորդ հարցին՝ ավելացրեց,- ու բաժանվել: Դու՞ էիր ուզում իմանալ,-միանգամից «դու»-ի անցնելով՝ հարցրեց նույն քմծիծաղով:

- Հա: Իսկ ինչո՞ւ բաժանվեցիք...

Տղամարդը ծիծաղեց:

- Զստացվեց,- կարճ ասաց նա,- ես սիրում եմ ձեր մորը...

Մարտահրավեր հիշեցնող, հատ-հատ ասված բառերը շամփրեցին Եվային ու կնիքի շրխկոցով դաջվեցին նրա գիտակցության պաստառին: Նա բացուխուփ արեց բերանը, ուզեց մի բան ասել, բայց ոչինչ դուրս չեկավ... Եվան զգում էր իր անզորությունն ու պարտության դառը համը, բայց չէր ցանկանում տեղի տալ...

Մայրը, սկուտեղը ձեռքին, ներս մտավ: Սենյակում տարածվեց սուրճի ու կոնյակի հաճելի բուրմունք: Եվան բարձրացավ տեղից ու օգնեց մորը, ընդ որում սուրճի գավաթը տղամարդու առջև դնելիս կռացավ՝ ցուցադրելով կրծքի բացվածքն ու իր արածի արդյունքն իմանալու աշակերտական հետաքրքրությամբ նայեց

տղամարդու դեմքին. այնտեղ տեսավ միաժամանակ նախատինք ու ներողամտություն՝ թաքցված բարի կիսաժպիտի տակ: Մայրը լցնում էր կոնյակի բաժակները ու չնկատեց կամ չնկատելու տվեց աղջկա շարժումը:

Խոսակցությունը չէր ստացվում:

Հակառակ մոր ընդդիմությանը՝ Եվան իր համար լցրեց կոնյակի նաև երրորդ բաժակը:

- Չգիտես՝ ինչքան եմ կարոտել մեր գինիներին ու կոնյակին,- թեթև օրորվելով՝ ասաց նա.

- Կհարբես, գինի էլ շատ խմեցիր,- զգուշացրեց մայրը:

- Չեմ հարբի, չէ...,-ասաց, մի կում անելով կոնյակից՝ ծամածռելով երեսն ու զգաց, որ գլուխը սկսվեց պտտվել,- չոր.. չորս տարի ինձ չես ասել՝ էս արա, էն մի արա... Թող...

- Եվա՛...

Անուշադիր մոր սաստող կանչին՝ Եվան մի կերպ բարձրացավ տեղից ու միացրեց նոր ձայնարկիչը: Հնչեց «Կարապի լճից» մի հատված: Եվան, նախ դանդաղ, բայց հետո հազիվ ոտքերի վրա իրեն պահելով, սկսեց պարային շարժումներ անել: Հոգնածությունը, խմիչքի ազդեցությունն ու առաջին օրվա ապրումները իրենց դրոշմն էին դրել աղջկա շարժումների վրա: Մայրը մոտեցավ ու փորձեց նրան տանել իր սենյակը: Նա հրեց մոր ձեռքն ու շարունակեց պարել: Պարին համընթաց նա բացեց հերակալը. մազերի խիտ խուրձը թափվեց մերկ ուսերին: Ի զարմանս իրեն ու մոր՝ աստիճանաբար նրա շարժումները դառնում էին ավելի սահուն. Հետո սկսեց պտույտներ գործել ու այլևս չկարողանալով պահել հավասարակշռությունը՝ անսպասելիորեն իրեն գցեց տղամարդու գիրկը, ծնկները հավաքեց փորի մեջ, արմունկներով օղակեց տղամարդու առնական վիզը ու դեմքը հպեց նրա սափրված ողորկ այտին: Տղամարդուց գալիս էր օծանելիքի ու ծխախոտի հաճելի հոտ:

- Հայրի՜կ, իմ սիրելի՜, նո՛ր հայրիկ,- բացահայտ սարկազմով, հիստերիկ ձայնով կրկնում էր նա՝ ավելի ամուր սեղմվելով տղամարդուն:

Մայրը շշմած ու լուռ նայում էր. ասես չէր ճանաչում իր հարազատ դստերը...

Տղամարդը զգուշորեն հեռացրեց աղջկա ձեռքերն իր պարանոցից ու գրկից իջեցնելով՝ նստեցրեց բազկաթոռին:

- Հայրի՛կ..., իմ նո՛ր հայրիկ,- մրմնջում էր նա ջղագրգիռ...

- Ես գնամ, բարի գիշեր,-ասաց տղամարդը:

- Բարի գիշեր,-ասաց կինը և նրան ուղեկցեց մինչև դուռը:

Եվան մի պահ ցավով զգաց իր ներկայացման անհեթեթությունն ու ցինիզմը: Նա, այլևս չկարողանալով զսպել իրեն, սկսեց լացել: «Ես սիրում եմ քո մորը»,- սենյակում տարածված երաժշտության ռիթմի հետ անդադար կրկնում էր այս բառերը և շարունակում էր հեկեկալ...Արցունքի յուրաքանչյուր կաթիլի հետ մեղմանում էր լարվածությունը. Եվան սկսում էր հանդարտվել ու վերագտնել իրեն: Մայրը մոտեցավ ու նստելով բազկաթոռի թիկնակին՝ սկսեց գորովալից շոյել նրա երկար վարսերը:

- Եվա՛, սիրելի՛ս...

- Մա՛, ա՛խ, մա՛, ների՛ր ինձ...,- ասաց Եվան ու փաթաթվեց մորը:

Մորից առավ տղամարդու ծխախոտի ու օծանելիքի հաճելի բույրը...

Սարգիս ՎԱՀԱԳՆ

Ծնած է Պէյրութ քաղաքին մէջ, 1927, Հոկտ. 7-ին: Նախնական ուսումը ստացած է ազգային Աբգարեան եւ Սահակեան վարժարաններուն մէջ, ապա երկրորդականը շարունակած՝ Տեղւոյն Ֆրանսական Լիսէ-ին մէջ, եւ աւարտած առեւտրական եւ հաշուապահական ճիւղը 1945-ին:

Կանուխէն սիրած է գիրն ու գրականութիւնը: Նախ փորձած է բանաստեղծութիւններ գրել, բայց շուտով վերջնականապէս նուիրուած է արձակի սեռով, սկսելով պատմուածքի, թարգմանութեան, փորձագրութեան եւ վէպի մշակումով: Կատարած է նաեւ թարգմանութիւններ միջազգային համբաւաւոր գրողներէ, ընդհանրապէս բանաստեղծական հատորներէ:

Յիսունական թուականներէն, սկսած է մաս կազմել այլազան գրական եւ մշակութային խմբաւորումներու: Գործօն մասնակցութիւն բերած է Պէյրութի «Գրական Շրջանակ»-ի կազմաւորման եւ անոր յետագայ գործունէութեան:

Իր գրութիւնները, 1954-էն սկսեալ լոյս տեսած են «Մշակոյթ», «Լուսաբեր», «Նոր Գիր», «Անի», «Շիրակ», «Գարուն», «Նաւասարդ» եւ «Առագաստ» գրական ամսագիրներուն մէջ: Վաթսունական թուականներուն մնայուն կերպով աշխատակցած է «Շիրակ» ամսագրին, միանալով անոր խմբագրական կազմին, վարած է միջազգային գրականութեան բաժինը:

Գրականութեան առընթեր, ան լուրջ հետաքրքրութիւն ցոյց տուած է

շարժանկարի եւ թատրոնի արուեստներուն նկատմամբ: 1958-1959-ին հրատարակած է «Նոր Սինեմա» շարժանկարի արուեստի պարբերաթերթը:

Իր լոյս ընծայած գործերն են.-

Պատմուածքներու շարքէն՝ «Մատանիներ», 1969, Պէյրութ: «Արմատներ»՝ 1981, Երեւան: «Տագնապը»՝ 2000, Լոս Անճելըս:

Թատերգական՝ «Նայիրեան Մորմոք», Պէյրութ, 1982: «Աշոտ Ողորմած», 1991, Լոս Անճելըս:

«Արշիլ Կորքի» Վէպ, 2004, Լոս Անճելըս, (արժանացած Հայաստանի Թէքէեան Մշակութային Միութեան Գրական Մրցանակին եւ նաեւ «Հայկաշէն Ուզունեան» մրցանակին):

Փորձագրութիւն՝ «Գրական Համաստեղութիւն», 2008, Լոս Անճելըս, գրական դիմաստուերներ եւ գրախօսականներու հատընտիր:

«Շուրջը Ոչի՛նչ», 2007, Լոս Անճելըս, Շահան Շահնուր-Արմէն Լիւպէնի ֆրանսերէն գրուած բանաստեղծութիւններու ամբողջական թարգմանութիւնը:

Փետրուար 18, 2008 թուակիր սրբատառ կոնդակով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., առ ի գնահատանք Սարգիս Վահագնի յիսնամեայ գրական վաստակին, անոր շնորհեց Ս. Սահակ Ս.Մեսրոպի պատուոյ շքանշանը:

Սարգիս Վահագն

ՄԻԽԸ

- Ա -

Ո՞վ եմ ես:

Ես ես եմ, թէ ուրիշ մը: Գուցէ այն միւսը...

Ո՞վ պիտի որոշէ ու վճռէ: Անշուշտ՝ ո՛չ ես: Երբ ես ըլլամ որոշողը, վստահ եմ, բոլորդ զիս խենթի տեղ պիտի դնէք: Բայց, Աստուած վկայ, խելքս գլուխս է եւ պայծառ մտքով է որ կը կրկնեմ հարցումս.- Խնդրեմ, ըսէք՝ ո՛վ եմ: Ես ես եմ, թէ ուրիշ մը:

Անպայման այն միւսը...

- Բ -

Երկար ժամանակ որեւէ կասկած չունէի ինքնութեանս մասին: Հարկ կա՞յ պնդելու, թէ բոլորիդ ծանօթ Սամսոն Առաքելեանն եմ, երեսուն տարեկան, ամուրի, անգործ եւ ամէն մեղքիս վրայ՝ ինքզինքին նկարիչի ալ հովեր տուած: Կարճ խօսքով, վրիպած անձ մը՝ որ անքան, անհոգ նստած, հօրը ժառանգ թողուցած տոլարները կը վատնէ: Անշուշտ, այս՝ շատերուն կարծիքն է: Բայց հոգս չէ ուրիշներուն կարծիքը: Կը բաւէ որ ես գոհ եմ կեանքէս եւ որեւէ մէկուն համարատու չեմ: Ես ինծի համար կ՛ապրիմ սիրած քաղաքիս, Նիւ Եորքին մէջ, այո՛, ինչու չէ, ծախսելով, եւ ոչ թէ վատնելով, հօրմէս մնացած ժառանգը: Պարզ ու անշուք է կեանքս. մխում եւ շռայլանք չեմ սիրեր եւ նիւթական վայելքներուն ալ կարեւորութիւն չեմ ընծայեր: Կը հագուիմ ինչպէս որ պատահի եւ մազերս ալ ամիսներով սափրիչի մկրատ չեն տեսներ: Ամբողջ օրը կրնամ գոհանալ շերտ մը պանիր հացով: Միայն սուրճն ու ծխախոտը անպակաս ըլլան եւ գիշերն ալ գաւաթ մը *սքոչ* ունենամ: Ուրիշ բան չեմ ուզեր: Ուրիշ ի՞նչ մնաց որ, պիտի անշուշտ քմծիծաղիք. մնաց գլխաւո՛րը՝ նկարչութի՛ւնը: Ես անով կ՛ապրիմ, անով կը շնչեմ: Առանց նկարչութեան ես ոչինչ եմ:

Այս բոլորով, վախնամ ոմանք երանի տան ինծի, առանց գիտնալու, որ գոյնի եւ գիծի այս յափշտակութիւնս սուղի նստաւ վրաս: Նախ, դժբախտացուց հայրս. խեղճը աչքերը բաց գնաց: Ցանցանքը իմս չէր սակայն. հին գլուխ մարդ էր, երկրացի մնացած հայ, այն ալ՝ բնիկ Ակն քաղաքէն: Այնպէս որ զիս հասկնալ

բնաւ չկրցաւ։ Թէեւ նիւթապաշտ մը չէր։ Ընդհակառակը, ուրախ պահերուն, երկրէն բերած հայրէնները կ՛երգէր, բաժանորդագրուեր էր հայերէն բոլոր թերթերուն, կը յուզուէր երկրի հին-հին յուշերով եւ ամէն Կիրակի, օրինակելի բարեպաշտութեամբ եկեղեցի կ՛երթար։ Բայց գործի վաճառական էր, դրամին արժէքը գիտէր։ Մեր բախումը սակայն դրամի համար չէր, այլ՝ արժանապատուութեան։ Տարօրինակ մարդ էր. մեծութեան, փառք ու պատիւի արտառոց ըմբռնումներ ունէր։ Օրինակ, հակառակ բնիկ ակնցի ըլլալուն, համոզուած կը պնդէր, թէ ինք սերած էր Անի քաղաքի Պահլաւունեաց իշխանական մեծանուն տոհմէն։ Ուստի կը պահանջէր որ արժանի ըլլամ այդ ժառանգութեան։ Իրեն համար այդ կը նշանակէր բարձր ուսում ստանալ, համալսարան յաճախելով փաստաբան դառնալ։ Ըստ իրեն, դիրք ու պատիւի հասնելու լաւագոյն ուղին այդ էր։ - «Օրէնքը այս երկրին մեծագոյն ոյժն է», -կը կրկնէր ան։ -,եթէ ես անգլերէն գիտնայի եւ գիտակ ըլլայի այդ օրէնքներուն, շատոնց միլիոնատէր կը դառնայի Ֆորտին կամ Ռաքֆելըրներուն նման...

Ո՞վ գիտէ, գուցէ իրաւացի էր։ Բայց հարցը այն էր, որ ես չէի սիրեր փաստաբանութիւնը։ Կ՛ատէի օրէնք ու կաշկանդում։ Եւ խօսքը մէջերնիս, ուսումի ալ գլուխ չունէի։ Ինծի համար միայն նկարչութիւնը կար։ Ուստի երբ լքեցի գալէճի ուսումս, ան զայրացաւ, օրերով քէն պահեց հետս։ Վախցայ նոյնիսկ որ տունէն վտարէր զիս։ Բայց մայրս պաշտպան կանգնեցաւ ինծի։ «Բան մը սիրելով կ՛ըլլայ, ա՛յ մարդ. ինչ է չոճուխիս վրայ ինկեր ես. ապուքաթ չեղաւ, թող ուզած նկարիչը դառնայ»,- վճռեց ան։ Ու հայրս նահանջեց։ Մայրս սրբութիւն էր իրեն համար. չէ՞ որ Ակնի մեծ աղային աղջիկն էր ան։

Ու այսպէս, դարձայ նկարիչ։ Պիտի ըսէք՝ ուրկէ՞ց այս սէրն ու շնորհքը։ Պարզ է, մօրմէ՛ս։ Ան, իր ազատ ժամերուն Ակնի նուրբ ասեղնագործութիւն կը գործէր։ Ընտիր մետաքսի վրայ, մանրիկ, խատուտիկ թռչուններ, գոյնզգոյն ծաղիկներ եւ զուարթուններ կը ծաղկէր։ Անոնցմով կը զարդարէր մեր բարձերուն երեսները, սեղանի ծածկոցներն ու վարագոյրները։ Աչքերս բացեր, գոյներու եւ գիծերու այդ կախարդանքը տեսեր եմ։ Երբեմն սակայն, կը տարակուսիմ այս պարզեցուած բացատրականին։ Կը խորհիմ, թէ մի-

ջավայրն ու մթնոլորտը առանձինն չեն կրնար անձը նկարիչ դարձնել: Առ առաւելն, անոնք կրնան նպաստել ձիրքի ձեւաւորման ու զարգացումին, եթէ առկայ է այդ ձիրքը: Իսկ իմ պարագայիս, միշտ ունեցեր եմ այն զգացողութիւնը, թէ ի ծնէ ունեցեր եմ նկարելու այդ յատկութիւնը: Հազիւ ոտքի ելած, դգալ-պատառաքաղ բռնել չսորված, սկսեր եմ մատիտ բռնել եւ մեր տան պատերը գծազարդեր ու նախշեր: Իսկ տասը տարեկանիս, փորձեր եմ վիշապներ, եղնիկներ եւ ձիեր գծել:

- Տղա՛յ, ո՞ւր տեսեր ես այս անասունները,- զարմացեր էր մայրս:

Տարիներ ետք, ինծի այնպէս թուացեր էր, թէ հեռաւոր մշուշներու մէջ կորսուած անցեալի մը մէջ, տեսեր էի զանոնք: Բայց ի՜նչ անցեալ կրնար ունենալ տակաւին նորահաս պատանին: Մանկութեանս զոնէ զիս տարած ըլլային Նիւ Եորքի կենդանաբանական պարտէզը: Այդ օրերուն այդ ալ տակաւին չէի տեսած: Հետեւաբար, ինչպէ՞ս բացատրել ձին, եղնիկն ու առասպելական վիշապը: Ուղղակի առեղծուած էր: Մինչդեռ բնական, պարզ տղայ մըն էի. դասերուս մէջ միջակ, խաղն ու ընկերները սիրող պատանի մը, որ արդէն կը փնտռէր աղջիկներուն ներկայութիւնը: Միակ տարբերութիւնը որ կար իմ եւ ընկերներուս միջեւ, նկարչութեան հակումս էր, որուն համար, այն ատեն, պատահական ժամեր կը յատկացնէի: Կարելի չէր ըսել, թէ կը փնտռէի առանձնութիւնը:

Առանձնութեան սէրս արթնցաւ աւելի ուշ, երբ սիրահարեցայ Ճուլիային: Ինձմէ քանի մը տարիով փոքր, թուխ ու գանգուր խոպոպներով, զուարթ եւ ճռուողուն աղջիկ մըն էր ան, մեր թաղի իտալացի փռապանին դուստրը: Գալէճը միասին կ՛ըլլայինք միշտ եւ յաճախ շարժանկարի կամ պաղպաղակ ուտելու կը հրաւիրէի: Ան միշտ սիրով կ՛ընդառաջէր հրաւէրներուս: Հաճելի երաժշտութեան պէս կուգային ունկերուս իր անվերջանալի ճռուողիւններն ու խնդուքները: Հետզհետէ սակայն, շարժանկարն ու ծաղարանները սկսան չգոհացնել մեզ. մտերմութեան այլ պահանջներ ունեցանք: Սկսանք ժամադրուիլ եւ Սենթրըլ Փարք երթալ: Ձեռք ձեռքի բռնած պտոյտներ՝ թաւուտներուն ետեւն ալ գիրկընդխառնում եւ համբուրուիլներ: Հաճելի, երազային օրեր էին: Կերպարանափոխուած էի գրեթէ:

Շաբաթ կէսօրէ վերջ մը սակայն, Ճուլիան որ միշտ ճշդապահ կ՛ըլլար, ժամադրութեան չեկաւ։ Սպասեցի ժամէ մը աւելի, ապա մտահոգ՝ գացի պաղպաղակատունը եւ հեռաձայնեցի. տունն էր։ Ըսաւ թէ հայրը դէմ էր մեր հանդիպումներուն եւ դեռ՝ իտալացի հարուստ փեսացու մը ճարեր էին իրեն համար, որով, հարկադրուած էր վերջ տալ մեր հանդիպումներուն։

Կատարեալ սառած ջուրի ցնցուղ գլխուս։ Կատաղութեամբ փակեցի հեռաձայնը եւ սկսայ շլմորած վազել դէպի Փարք։ Ժամերով, աննպատակ, մտամոլոր չափչփեցի ծառուղիները։ Բիւրաւոր մեղուներու թժժոցն էր ականջներուս մէջ։

Յոգնած ու սպառած, ապաստանեցայ թաւուտներով եւ խտաշարք ծառերով մեկուսացած մեր անկիւնը եւ փռուեցայ մեր սովորական նստարանին վրայ։ Լալու անդիմադրելի փափաք մը կը պրկէր կոկորդս։ Կռնակիս վրայ պարկած, աչքերս անթարթ սեւեռեր էի վերի խիտ տերեւներուն։ Երկինքէն, - որ կապարի պէս գորշ էր, ծանր ու ճնշիչ,- հազիւ ափի մը լայնութեամբ ծուէն մը կ՛երեւէր։ Ցուրտ էր՝ մարմինս կը սրսփար։ Բայց կը յամառէի պառկած մնալ։ Կ՛ուզէի, հիւանդանալով պատժած ըլլալ խոստումնադրուժ Ճուլիան։

Ժամեր յետոյ, յանկարծ նկատեցի որ փոխուած բան մը կար շուրջս։ Մարմնիս դողը անցեր էր։ Նոյնիսկ տարօրինակ ջերմութեան հոսանք մը պատեր էր զիս։ Տարօրինակ զգացողութիւն մըն էր. մարմինս իմս էր, բայց ես՝ ես չէի։ Շրջապատս ա՛լ *Սենթրըլ* Փարքը չէր կարծես։ Այլ, պառկեր էի կանաչայորդ ձորի մը լանջին, խոտերու մէջ թաղուած։ Վերը, պայծառ երկինք մը կար, կապո՛յտ, կապո՜յտ ու պսպղուն անհունութեամբ։ Ու ամառ էր, սաստիկ տաք։ Կէսօրը ծնծղայ կը զարնէր։ Մօտիկ թաւուտներէն ծղրիթներու համերգն էր միալար ու յամառ։ Վարէն, ձորի խորերէն, մօտակայ գետի մը ֆշշոցն էր ահարկու։ Բերնիս յարդի շիւղ մը՝ ինչ երազներ կը հիւսէի։ Ու սիրտս, ահա՜, պիտի պայթէր ուրախութենէս՝ երբ յանկարծ հին ու ծանօթ ձայնով մը հնչեց արծաթէ կանչը աղջկան.

Ուհո՜ւ...ուհո՜ւ... ուհո՜ւ... Աշո՜տ, ո՞ւր ես...

Սրտադող, շուարած՝ նայեցայ վեր, ձայնին կողմը։ Ժայռերուն վրայէն պարժանուհի մը ինծի կը նայէր եղնիկի աչքերով։ Ժպտուն, բոց ու կրակ աչքեր էին սեւ, ընդգծուած յօնքերով։ Երկար ու կար-

միր պարեգօտին մէջ նրբագեղ մարմինը կը շորորար ուռենիի նազանքով: Ու յորդ, սեւ մազերուն ջրվէժը, ինկած պտղուն կուրծքերն ի վար, լոյսի կախարդական ծփանքներ կը ցոլացնէր: Ժպիտին մէջ խաղ ու նազանք կար, խինդ ու հրաւէր: Կարելի՞ էր դիմանալ այդքան նազանքի: Արտորանքով տեղէս վեր ցատկեցի: Ցատկեցի՝ ու տեսիլքը չքացաւ մէկէն: Դարձեալ Սենթրըլ Փարքի մենաւոր նստարանիս վրայ գտայ ինքզինքս: Ծշմած էի. միթէ՞ երազ էր տեսածս: Բայց աչքերս չէի փակած բնաւ: Վստահ էի. չէ՞ի նայեր միթէ վերի սաղարթներուն... ուրեմն... բացատրութիւն չունէի: Սակայն, ինչ ալ եղած ըլլար պատահածը, հրաշքի պէս էր: Ապացոյց որ արդէն մոռցեր էի Ճուլիան եւ իր դրժումը: Ձեռքերս թխմած գրպաններուս մէջ, սուլելով կը քալէի դէպի տուն: Ոտքերս կարծէք չէին դպչեր մայթերուն: Կախարդուած, կը թռէի, կը ծփայի օդին մէջ

Այս միջադէպէն ետք սկսայ փնտռել առանձնութիւնը: Ընկերներս ձանձրացուցիչ սկսան թուիլ եւ աղջիկներն ալ՝ անհրապոյր: Ոչ մէկ ճիգ թափեցի Ճուլիային հանդիպելու եւ բացատրութիւն պահանջելու: Անտարբեր դարձեր էի ամէն բանի նկատմամբ: Կար ու չկար, Սենթրըլ Փարքի իմ մենաւոր անկիւնս կար: Ազատ բոլոր ժամերուս, մեքենականօրէն, կը փութայի դէպի թաւուտներու նստարանս: Անձկութեամբ կը սպասէի կախարդանքի վերադարձին: Կարմիր պարեգօտով աղջկան տեսիլքին: Հաստատ համոզումն ունէի, որ ան կրկին պիտի յայտնուէր:

Եւ այդպէ՛ս ալ պատահեցաւ: Երկրորդ յայտնութիւնը տեղի ունեցաւ հինգ օր յետոյ: Երրորդը՝շաբաթ մը ետք: Ապա՝ տասնօրեակներու պարբերականութեամբ: Նոյն տեսարանն էր միշտ: Զորալանջի նոյն կանաչութիւնը, ծղրիթներու երգը եւ վարի սանձազերծ գետին նոյն շառաչը: Եւ անշուշտ, կարմիր պարեգօտով նոյն աղջիկը՝ հերարձակ ու ժպտադէմ: Ապա՝ արծաթահունչ նոյն կանչը.

Ուհո՜ւ...ուհո՜ւ... Աշո՜տ, ո՞ւր ես...

Ո՞վ էր այդ երանելի Աշոտը: Ո՞վ էր կարմիր պարեգօտով աղջիկը: Եւ ինչո՞ւ միշտ միեւնոյն հանգոյցին կը չքանար տեսիլքը, զիս ապշահար եւ յոգնասպառ վերադաձնելով Սենթրըլ Փարքի անհրապոյր իրականութեան: Գուցէ պատճառը պառկած տեղէս միշտ վեր

ցատկելս էր։ Քանիցս որոշեցի աղջկան յայտնութեան չշարժիլ բնա՛։ Բայց ի զուր. կամքէս անկախ, ներքին զսպանակ մը ոտքի կ՛արձակէր զիս եւ տեսիլք-կախարդանքը կը ցնդէր անմիջապէս։ Ա՛լ հաճոյք չէր, այլ` տառապանք, տեսակ մը սպառիչ յաճախանք։

Ժամանակ մը որոշեցի ա՛լ Սենթրըլ Փարք չերթալ։ Երրորդ օրը արդէն ջիղերու թնճուկ-կծիկ էի դարձած։ Իսկ չորրորդ օրը լրիւ հիւանդ` շնչահեղձութեամբ եւ գլխու պտոյտով։ Յաջորդ օրը դարձեալ հլու հնազանդ` նստեր էի Փարքին մենաւոր նստարանին, անձկութեամբ տեսիլքին սպասելով։

Տարի մը տեւեց այս հոգեվիճակը։ Հոգեվա՛րք եւ հոգեզմայլանք միանգամայն։ Հաշիշամոլի պէս էի. կամազուրկ եւ հեշտասէր։ Ոչ կեդրոնանալ եւ ոչ ալ ուսանիլ կրնայի։ Լքեցի գոլէճը։ Հայրս փոթորիկ բարձրացուց։ Առանձնութիւնս աւելի շեշտուեցաւ։ Ստուերի պէս կը մտնէի-կ՛ելլէի տունէն։ Կը խուսափէի բոլորէն։ Մէկ մտասեւեռում ունէի. մեկուսանալ եւ սպասել տեսիլքին։

Ինչպէ՛ս անցուցի այդ օրերը, ինչպէ՛ս տոկացի, չեմ գիտեր, յստակ չեմ յիշեր։ Մղձաւանջայի՞ն օրեր էին թէ երանութեան` չեմ կրնար որոշել։ Դատումն ու կամքը հոն տեղ չունէին։ Նախատնօրինուած ուղի մըն էր, ուրկից պէտք էր անցնէի։ Եւ անցա՛յ։ Անցայ յոգնած, հոգեկան անդորրս կորսնցուցած։ Որովհետեւ, վերջին շրջանին, միայն աղջկան տեսիլքը չէր որ կը խռովէր հոգիս։ Ուրիշ պատկերներ ալ սկսան հալածել զիս։ Առօրեայիս, շրջապատիս եւ անձիս հետ ոչ մէկ առնչութիւն ունեցող տարօրինակ դէպքեր, արտառոց հանդերձանքով անծանօթ մարդիկ ու կիներ, բնաւ չայցուած վայրերու շրջանակով, յանկարծ, պահ մը, կը պարզուէին աչքերուս առջեւ եւ կ՛աներեւութանային` շարժանկարային ագուցման եւ փոխանցման այն աղօտ նկարներուն նման։ Այդ դէպքերուն մէջ կարծէք ներկայ էի եւ չէի։ Վայրերը այնքան ալ անծանօթ չէին թուէր։ Սակայն ո՞ւր կրնայի տեսած ըլլալ այդ ծուռ ու նեղ գռիհները, երբ կրնայի այցելած ըլլալ կամարակապ, գմբեթազարդ այդ շինութիւնները` երբ տակաւին Նիւ Եորքէն դուրս ոչ մէկ տեղ գացած էի։ Իսկ թէ Նիւ Եորքին մէջ կայի՞ն այդպիսի փողոցներ կամ շինութիւններ` կ՛անգիտանայի։

Ուրեմն...

Հորս մահը ցնցեց էութիւնս եւ սթափեցուց զիս: Վերջապէս մղեց մտածումի եւ դատումի: Արթնցայ թմբիրէս խղճի ահաւոր խայթով, համոզուած՝ որ ես էի եղած հօրս մահուան պատճառը: Բարեբախտաբար, երկար չտեւեց այս նոր տառապանքը. խնամող բժիշկէն իմացայ, թէ հայրս սրտի անբաւարարութիւն ունէր երկար ժամանակ, եւ թէ չէր ուզած հիւանդութիւնը մեզի յայտնել, քաջութեամբ, առանձինն կրելով իր խաչը մինչեւ վերջին շունչը:

Ա՛լ բուժուած էի: Սենթրըլ Փարքը ալեւս չէր հրապուրեր զիս: Ձերբազատուած էի տեսիլքներէս: Բայց առանձին էի միշտ: Ոչ մէկ մտերիմ ունէի, բացի գծագրումներէս: Բայց ածխամատիտն ու ջրաներկը ա՛լ չէին գոհացներ զիս: Մակերեսային եւ թեթեւ կը թուէին բարդ ներաշխարհս արտացոլելու համար: Որոշեցի իւղաներկ գործածել, բայց անդրադարձայ որ անգիտակ էի անոր թեքնիքին: Ուստի, սկսայ գեղանկարչութեան դասընթացքներու հետեւիլ: Վճռեր էի սկիզբէն սկսիլ ամէն բան: Արձանագրուեցայ Նիւ Եորքի նշանաւոր Արուեստից Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանը, հոն, ուր տարիներով դասաւանդեր էր մեր հանճարեղ Արշիլ Կորքին: Ճարտարութիւն ձեռք ձգելու համար, անտրտունջ գծեցի ու նկարեցի անվերջանալի կուժեր, ծաղիկներ եւ աթոռ-սեղաններ: *Նաթիւր* մորթերուն վրայ աւելի սիրով աշխատեցայ. ջանացի թրթռացում ու կեանք տալ անկենդան թէյամաններուն, վառ գոյներով բռնկեցնել խնձորն ու խաղողը, նարինջն ու պանանը: Ամէն ինչ իր բնական ընթացքին մէջն էր: Ա՛լ շուրջիններուս պէս սովորական մարդ մըն ալ ես էի, լուռ ու քաշուող տղայ՝ որ երկարատեւ յուսախաբութենէ ետք կը փորձէր գոնէ միջակ նկարիչ մը դառնալ: Շատ էր ուզածս: Բայց ինծի զլացուեցաւ այդ քիչն իսկ:

Դէպքը պատահեցաւ աւարտականի վերջին տարին: Արդէն անցեր էինք բուն իւղանկարչութեան, ծաւալուն պաստառներու գործածութեան: Հիմնականօրէն մարդ կը վրձինէինք, այսինքն՝ մերկ կին: Այլազան պարմանուհիներ վճարովի կու գային, որպէս բնորդ կը մերկանային եւ կ՛անշարժանային փոքր պատուանդանին վրայ: Ու մենք կը վարժուէինք զիրենք գծել ու նկարել: Սկիզբները, այդ մերկութիւններուն դիմաց, տարօրինակ խռովք մը կը զգայի: Աչքերս կը շլանային: Չէի կրնար կանացի մարմնին կորու-

թիւններն ու նրբութիւնները իրապաշտօրէն նմանակել: Անոնք, իմ մօտ, միշտ չափազանցուած կամ այլանդակուած դուրս կու գային: Ուսուցիչներս սկսան ձեռք առնել անճարակութիւնս եւ դասընկերներս ալ ծաղրել զիս: Անգամ մը, նոյնիսկ, բնորդուհի մը նշմարելով իմ նկարած եղծուած իր մարմնանկարը, ջղայնացաւ ու հրապարակով անարգեց զիս: Զիս ծաղրով, նորելուկ Քոքոչքա անուանեցին հանրածանօթ եղծանկարիչին անունով:

Այս պայմաններուն եւ մթնոլորտին մէջ, կարելի չէր շարունակել: Ա՛լ կը պատրաստուէի դասերս լքել, երբ պատահեցաւ նոր դիպուածը:-

Ունեցանք նոր բնորդուհի մը: Մոտիլիանիի կիներուն յատուկ երկար ու բարակ վիզ մը ունէր, մինչեւ կոնքերը գահավիժող մազերու յորձանուտ մը եւ ածուխի պէս սեւ, ընդգծուած աչքեր: Իր շարժումներուն մէջ հեզ ու խոնարհ՝ երբ մերկացած եկաւ ու կանգնեցաւ պատուանդանին վրայ, տառապանքի խոր թախիծը կար աչքերուն մէջ: Կը սրսփար գրեթէ: Փետրուարեան ցուրտ օր մըն էր, գորշ ու մշուշոտ: Քիչ մը տաքնալու համար, թեւերը կուրծքերուն մօտ ծալլած, ծունկի եկաւ եւ աղուոր աչքերը սեւեռեց վերի պատուհաններուն: Զարմանալիօրէն, իր մերկութեան դիմաց ոչ խռովք եւ ոչ ալ շլացում ունեցայ: Խանդաղատանքի ալիք մը պարուրեր էր զիս: Վերցուցի վրձիններս եւ սկսայ ինքնավստահ ուրուագծերը ձեւաւորել: Ինքնեկ ձեւով ալ եկան գոյներն ու երանգները, արտայայտութիւնն ու կշռոյթը: Ամէն ինչ կ՛ընթանար բնական պարզութեամբ: Հոգեզմայլանքի մէջ վերացած, կը կռուէի պաստառին դէմ: Ուրիշ ոչինչ կը նշմարէի: Ես էի, բնորդուհին ու պաստառը: Կը զգայի որ գոյներս կը բոցավառէին եւ գիծերս ալ հաստ ու ճապուկ, մսեղ եւ ողորկ ձեւերու խրախճանք մը կը սարքէին:

Այս վերացումին մէջն էի, երբ յանկարծ, ետեւէս հնչեց ուսուցիչիս բացագանչութիւնը.

- Օ՜, *մայ* Կատ, Սամս՛ըն, մերկ աղջիկը Աստուածամա՛յր դարձուցեր ես...

Սթափեցայ: Զգաստ՝ նայեցայ պաստառին: Արդարեւ, ինծի կը նայէր փառահեղ Աստուածամայր մը, հարազատ հայ Աստուածածին մը՝ վառ կարմիր եւ եւ մութ կապոյտ, բազմածալք հանդերձանքով: Լաչակ չունէր: Երկար մազերուն հիւսկերը շնորհալիօրէն կը

պսակէին քիչ մը ձախ հակած անոր ձուաձեւ դէմքը: Նշաձեւ աչքերուն մէջէն կը ծորէր թախիծ մը տրտմանոյշ:

Երբ գիտակցութիւնս լրիւ ըմբռնեց պատահածը, խենթ ուրախութիւն մը առաւ զիս իր պտուտահողմին մէջ ու խայտաց խնդութս սանձազերծ: - Տարիներէ ի վեր, առաջին անգամ էր որ այդպէս անկաշկանդ կը խնդայի: Ա՛լ ինչ փոյթ, թէ շուրջս գոռում գոչիւն էր, հոմշտուք ու քաշքշուք՝ տեսնելու համար մերկ բնորդուհիէն ծնած Աստուածամայրը:

Ուրախութիւնս նկարածիս կատարեալ յաջողութեան համար չէր: Այլ այն, որ անոր դիմագծերուն ընդմէջէն, հեզ ու մեղմիկ ինծի կը ժպտէր կարմիր պարեգօտով ձորալանջի աղջիկը: Ճիշդ ու ճիշդ անոր աչքերն էին, կամար ունքերը, անոր բոլոր իւրայատուկ գիծերով: Ու ինծի կը թուէր, թէահա՛ պիտի հնչէր նաեւ անոր անխուսափելի կանչը.

-Ուհո՜ւ... Ուհո՜ւ... Աշո՜տ...

- Դ -

Վերջապէ՛ս, յաջողեր էի: Գտեր էի Փնտռածս եւ պէտք չունէի դասընթացքներուն: Ա՛լ իմս էր հրաշալիքներու աշխարհը: Տեսիլքներուն ալ կարիքը չունէի: Իմ հասկցած ձեւով, նուաճեր էի գիծի եւ գոյնի այն կարողականութիւնը, որ ինծի պիտի բերէր կախարդանքի անսահման աշխարհը:

Լքեցի դասերս բայց չծուլացայ: Օրերով կը փակուէի աշխատանոցի վերածուած մեր տան ստորերկրեայ մառանը, եւ հոն,մեծ թափով, կը նկարէի եւ կը գծէի: Մտապաստառիս վրայ յստակ ու մեկին ներկայ էր տեսիլքներուս աշխարհը, հեքիաթային իր երանգով, տարաշխարհիկ իր կենդանութեամբ: Պաստառին վրայ կը վերակենդանացնէի հատուածներ ու պատկերներ հին տեսիլքներէս: Մառանիս պատերը շուտով բնակուեցան գոյներու նոր բռնկումներով եւ արտասովոր բազմութիւններով: Յոգնիլն ինչ է՝ չէի գիտեր: Յաճախ, գիշերները կը լուսցնէի աշխատելով: Առտուայ դէմ, առանց հանուելու կը պառկէի աշխատանոցի խշտեակիս վրան: Եւ քունս կ՛ըլլար խաղաղ ու աներազ: Կէսօրուայ մօտ, կ՛արթննայի մառան իջնող մօրս ծանր քայլերու աղմուկէն: Ան ճռոցով կը բանար մառանին դուռը եւ կը վառէր լոյսերը: Խշտեակիս վրայ նս-

տած, լոյսերէն շլացած աչքերով կը դիտէի պատերէն կախած իւղանկարներս ու անձրկած, հարց կու տայի ես ինծի. ո՞ւր տեսեր էի այս բոլոր արտասովոր տեղերն ու մարդիկը: Անշուշտ միայն ու միայն տեսիլքներուս մէջ: Բայց չէ՞ որ, ըստ Ֆրէօյտեան տեսութեան, տեսիլքներն ու երազները իրականութեան այլափոխումներն են միայն: Սակայն իմ պարագայիս, ո՞ր մէկ իրականութեան: Նիւ Եորք ապրող Սամսոն Առաքելեանին գործ ու միապաղաղ իրականութիւնը թէ ուրիշի՛ մը: Թէ կայ ուրիշ մը՝ կասկածէ վեր է: Բայց ո՞վ է այդ ուրիշը, միւ՛սը: Ի՞նչ կապ ունի հետս: Անկեղծօրէն չեմ գիտեր:

Մայրս կըզգայ տառապիլս: Կը նստի քովիկս, յոգնած ձեռքերը կը տանի մազերուս ու կը շոյէ զանոնք գորովանքով: Ու ծուէն ծուէն խաղաղութիւնը կը պատէ հոգիս: Կը բանամ աչքերս ու կը տեսնեմ վրաս խոնարհած անոր մարախլապատ աչքերը աղերսարկու: Որքա՜ն տխրութիւն ու կարեկցանք կայ հոն ինծի համար: Արցունքի պատրաստ որքա՜ն քնքշութիւն:

- Տղա՛ս, այս ինչքա՜ն կ՚աշխատիս, մեղք ես...միշտ ներսերը մնալը լաւ չէ: Դէմքդ գոյն չէ մնացեր, մեղք ես... դուրս ելիր երբեմն, մարդ-մարդասանք տես, փոխուէ:

Ի՞նչ ըսեմ մօրս: Պատմե՞մ ցաւերս: Ի՞նչ կրնայ սակայն հասկնալ ան իմ բարդ գալարումներէս: Վստա՛հ եմ. պիտի չհասկնայ ու աւելիով պիտի շուարի, խեղճանայ: Նոյնիսկ զիս խելագարած պիտի կարծէ: Ուստի կ՚աճապարեմ ժպտիլ փորձել, փարատելու համար իր վախը: Յետոյ, հլու հնազանդ, կը վայելեմ բերած ճաշը եւ կը խոստանամ ածիլուելով անմիջապէս դուրս պտոյտի ելլել:

Դուրսը, բարկ արեւէն աչքերս կը շլանան ուղղակի: Որքա՜ն ժամանակ է չեմ տեսած այս արեւը: Հիմա արդէն Յունիս ամիսն ենք. մեծ տաքերուն սկիզբը գրեթէ: Առաջուայ պէս փակուած կարելի չէ շարունակել: Ճար մը գտնելու եմ, նոր կենսաձեւ մը որդեգրելու համար:

Կը բարձրանամ Հինգերորդ Պողոտային հոսանքն ի վեր: Աննպատակ քալելով, զարմացած կը դիտեմ վխտացող, խռնուող եւ մանաւանդ աճապարող այս բազմութիւնը: Ո՛ւր կ՚երթան, ինչո՞ւ կը վազեն՝ երբ այնքան հաճելի է, գաղջ արեւը վայելելով հանդարտ թափառիլ այս մայթերուն վրայ եւ անցնող-դարձող աղջիկներուն աչքերէն ժպիտ ու լոյս քաղել, գինովնալ անոնցմով: Մայրս

իրաւունք ունէր. մոռցեր եմ կեանքի բուրմունքը, ապրելու քաղցրութիւնը: Հիմա այնպիսի կարօտ մը կայ ներսիդիս, պարզ ու աննշան կարծուած բաներու կարօտը, որ զիս շուարումի կը մատնէ. ուրկէ՞ց սկսիլ, ի՞նչ ընել: Կ'երեւի գերագոյն հաճոյքը այս հարցականն իսկ է, այս աննպատակ թափառում-պտոյտը:

Ահա կանգ կ'առնեմ նկարչական ցուցասրահի մը առջեւ: Կը դիտեմ ցուցափեղկին որպէս նմոյշ դրուած քանի մը իւղանկարները: Վառ գոյներով բռնկումներ են: Կէտերու եւ գոյներու թեւածում մը՝ մասնաւոր ոչինչ ըսող: Թիթեռնիկներ են կարծես, թեթեւ ու թափանցիկ: Ինչ լաւ պիտի ըլլար եթէ ես ալ կարենայի նոյնպէս նկարել, հեզասահ ու լուսեղէն: Ո՛չ կիրք, ո՛չ ներքին կնճիռ եւ ոչ իսկ հատնում: Ուղղակի կը նախանձիմ այս անծանօթ նկարիչին: Ներողամիտ կը ժպտիմ ու կը շարունակեմ ճամբաս: Կ'անցնիմ դիմացի մայթը: Հոն, ուշադրութիւնս գրաւողը գրախանութ մըն է: Նուիւոր, գրաւիչ կազմով ու կողքով գիրքեր են նայուածքս բռնողները, բայց խորագիրներէն կը գուշակեմ՝ վանող եւ վհատեցնող անհամութիւններ են. սեռ, դրամ եւ ոճիր-արկած: Կը հեռանամ՝ փախչելու պէս:

Ահա նաեւ ճամբորդական գրասենեակ-ցուցասրահ մը: Կանգ կ'առնեմ. «ինչո՞ւ այս անոյշ խաբկանքին թակարդը չիյնալ կամովին, ինչո՞ւ չփորձել փախուստի այս աժան ձեւը», կը մտածեմ ինքնածաղրական: Արդարեւ, Փարիզն ու Հռոմը, Աթէնքն ու Պէյրութը, Ափրիկէն ու Ասիան, բոլորը՝ զիրար հրմշտկելով, հրաւիրող ժպիտով թեկնածու կը ներկայանան: Այդ գոյնզգոյն ազդագրերը մէջս կ'արթնցնեն արդէն մեկնումի անզսպելի փափաք մը: Ներս մտնելչմտնելու երկմտանքիս մէջ, յանկարծ կը նշմարեմ ուրիշ ծանուցաթերթիկ մը: Կասկած չկայ. հոն իշխողը մեր կաթողիկէն է, Աղթամարի Սուրբ Խաչ տաճարին գմբէ'թը: Ներս կը մտնեմ, մօտէն կարդալու համար մանրամասնութիւնները.- Նիւ Եորքի Սուրբ Պատրիկ տաճարէն, հնագէտ-ուղեցոյց Հայր Թամըսի առաջնորդութեամբ կազմակերպուած է ուխտագնաց շրջապտոյտ մը, դէպի Արեւելեան Անատոլու, ուսումնասիրելու համար քրիստոնէական հին եկեղեցիներն ու սրբատեղիները՝ տասնըեօթը օրով: Ամէն ինչը ներառեալ՝ երեք հազար տոլար: Ինչ կ'ըսես, Սամսոն: Ասկից աւելի փախուստի պատրուա՞կ... Չափուած, ձեւուած՝ ճիշդ քեզի համար:

Առանց երկար-բարակ մտածելու կը մօտենամ ժպտերես պաշտօնեային:

- Ե -

Վաղը, առաւօտուն կը մեկնինք Անի:

Մեր ուղեւորութեան վերջին օրն է եւ վերջին հանգրուանը:

Անհամբեր եմ հիւանդագին ըլլալու աստիճան: Որքա՜ն պիտի ուզէի, որ մեր ուղեծիրին վրայ Ակն քաղաքն ալ ըլլար: Մեր տան երազն էր տեսնել ծնողքիս եւ պապերուս ծննդավայրը: Հայրս չկրցաւ իրականացնել այդ երազը, գոնէ ես կարենայի: Բայց չեղաւ ու չեղա՛ւ: Ուղեծիրին վրայ չէր: Կարելի չէր ինծի համար փոփոխութեան ենթարկել ծրագիրը: Փորձեցի մասնաւոր արտօնութեամբ, առանձինս, մէկ օրով երթալ-գալ: Մեր խումբի պատասխանատու Հայր Թամըս չարտօնեց. վտանգաւոր գտաւ խումբէն բաժնուիլս: Հայ ըլլալու հանգամանքիս լաւապէս տեղեակ՝ ան, բոլորին առջեւ լռութեան մատնելով այդ փափուկ կէտը, ձախակողմեան քիւրտ հրոսակներուն վտանգը պատրուակելով, մերժեց առաջարկս: Հարկադրուած՝ համակերպեցայ, քանի այլապէս, կրնայի Անին ալ փախցնել: Անին եւս կարեւոր էր ինծի համար: Չէ՞ որ, հայրս ինքզինք ամէնէն առաջ Անեցի կը դաւանէր, այն ալ՝ ազնուական սերուցքէն. «Ակընը,- կ՚ըսէր ան,- մարմնական ծննդավայրս է, իսկ Անին՝ հոգեկան»: Ուրեմն ինծի կը մնար մխիթարուիլ Անիով:

Մեկնակէտնիս Կարս քաղաքն էր: Կարսի անկազմակերպ, թափթփած այս պանդոկը: Յոգնած-դադրած, երկնցեր եմ ճռճռան մահճակալին վրայ եւ սպասելով մեկնումին, այս ուղեւորութեան հաշուեկշիռը կ՚ընեմ: Պէտք էր նախաձեռնէի, այսպէս հապճեպ եւ անպատրաստից ձեւով: Ճիշդը՝ ի՞նչ կ՚անկնկալէի: Ի՞նչ բանի հետամուտ էի: Ինքնախաբութեամբ, եթէ շրջապատէս կամ զիս չարչրկող հարցադրումներէն փախուստն էր պատրուակը, չարաչար կը սխալէի: Առանձնութիւնս եւ մտալլկումներս մնացին եւ նոյնիսկ սրեցան ալ: Հետզհետէ յայտնաբերեցի, որ այս ուղեւորութիւնը դարձեր էր երթ մը դէպի ինքնութեան եւ էութեան ակունքները: Ուխտագնացութեան պէս բան մը: Ու վե՛րջ ինքնախաբութեան. ա՛լ յստակ գիտեմ թէ ելեր եմ այն միւսի փնտռտուքին: Միշտ ինծի հետ եղող այն միւսին: Աշոտի՛ն:

Ջղայնացած կը նստիմ մահճակալին վրայ: Հանգչելու, հանգստանալու ձեւ չէ ասիկա: Սենեակը արդէն տաք է ու հեղձուցիչ: Իսկ առաստաղի հովահարը իր հոգեվարքային տնքոցով անխնայ ջիղերս կը սղոցէ: Ու ալ ինչ հարցականներ, երբ հաստատ գիտեմ, թէ ճակատագրիս հրամայականն է, որ քաշեր, բերեր է զիս հոս, մինչեւ այս խուլ անկիւնները: Այո՛, գիտեմ, ինծի համար նախասահմանուած միակ ուղին է այս, կամքէս, կամեցողութենէս եւ դատողութենէս անկախ: Ուզեմ կամ ոչ՝ պիտի քալեմ այդ նախագծուած ուղիէն, մինչեւ՜ վերջ: Ո՛չ մէկ ոյժ, ոչ մէկ արգելք կրնայ կասեցնել կամ շեղել այդ երթը: Այն ատեն ինչո՞ւ այս մռմռքն ու խռովքը: ՝ Պա՛րզ է. սպասումն է զիս չարչրկողը: Այն ինչ որ կը սպասէի որ պատահէր, չիրագործուեցաւ դեռ: Տեսիլքներուս բացատրութիւնը, համոզուած էի, որ պիտի գտնէր իր վերջնական լուծումը: Այդ համոզումը ունեցայ, երբ ոտք դրի այս հողերուն վրայ: Որովհետեւ անմիջապէս հաստատեցի այս հողին, բնութեան, լոյսին ու բոյրին, մթնոլորտին ու շրջապատին նոյնութիւնը տեսիլքներուս պարունակին հետ: Հիմնական պատճառ մը այս մէկը՝ որպէսզի, արեւի ծազման սպասող արեւածաղիկին նման, ընկալչական բոլոր զգայարանքներս լայն բացած, սպասեմ տեսիլքներուս վերայայտնումին եւ բացայայտումին: Բայց անոնք, զարմանալիօրէն ուշացան, չեկա՛ն տակաւին:

Բուժումն էի միթէ. Բայց ես հիւանդ չէի բուժուելու համար: Ո՛չ ուղեղային տենդ ունէի եւ ոչ ալ հոգեկան խանգարում: Տեսիլքներս զառանցանք չէին բնաւ: Ուրեմն, աւելորդ է խօսիլ բուժումի մասին: Միայն՝ հոգեմաշեցնող է այս սպասումը: Թէեւ, հաստատ գիտեմ, թէ այս լեռներուն ու դաշտերուն բնական ենթահողին վրայ պիտի անպայման բացայայտուին տեսիլքներս, պիտի հասնին իրենց լրումին: Ա՛լ չեն կրնար ուշանալ, քանի վերջին օրն է շրջապտոյտին: Հլու, հնազանդ, համակերպած՝ կը սպասեմ:

Մինչ այդ, մի այպանէք զիս, եթէ յոգնած ու սպառած, տրտնջամ երբեմն: Իսկապէս որ շատ ծանր ճնշեց վրաս այս ճամբորդութիւնը: Թէեւ օրինակելի կանոնաւորութեամբ կազմակերպուած էր ան: Նիւ Եորքէն Պոլիս, Փան Ամերիգընի թռիչքը անթերի եւ հանգստաւէտ էր: Թըրքիշ Էրլայնզն ալ յուսախաբ չըրաւ մեզ: Իսկ Վանէն մինչեւ Կարս, մեզի յատկացուած Փուլմանը օժտուած էր

ամէն յարմարութիւններով: Ճիշդ է, դուրսի հեղձուցիչ տաքը, ճամբաներուն փոշին, քաղաքներուն կեղտն ու աղմուկը եւ սոխ ու սխտոր հոտող պանդոկներուն անյուսալի վիճակը, սպառեցին տոկունութեան եւ համբերութեան պաշարներս: Ինծի համար, թէեւ, անակնկալ մը չէին անոնք: Անսպասելին ու անտանելին՝ մեր լքուած կամ փլատակ եկեղեցիներուն սրտաճմլիկ վիճակն էր: Արհամարհուած ու սրբապղծուած՝ անոնք ցնցոտիներ հագած որբեվայրիներու տեսքը ունէին: Գեղեցիկ էին խղճալի վիճակի մէջ իսկ: Չսպասուած անկիւնէ մը երբ յանկարծ դէմս կ՚ելլէին, կը փոթորկէին ներաշխարհս, կը փշաքաղէին մարմինս: Կու լայի լուռ, ներքին արցունքներով: Դէմքիս անտարբերութեան դիմակ անցուցած՝ ներքնապէս կատաղութեան փոթորկումներ կ՚ունենայի: Ուղեկիցներս, տարեց ու միամիտ ամերիկացի զոյգեր, որոնք բերանբաց կը դիտէին ամէն բան, չէին կրնար նշմարել ծանր ապրումներս: Չէին կրնար ըմբռնել յամառող լռակեացութիւնս եւ մեկուսի մնալս: Պարզապէս զիս կը դասէին անհաղորդ, երկչոտ մարդու պիտակին տակ: Անհամ կացութիւն էր: Ոչ մէկ ջանք իմ կողմէս՝ փարատելու համար անախորժ այս տպաւորութիւնը: Այդպէս, աւելի ձեռնտու էր. նուազ հետաքրքրութիւն կը հրաւիրէի վրաս:

Բայց յանկարծ փոխուեցաւ ամէն բան: Աղթամարը փրկեց զիս: Վանայ լիճը, երբ երկինքի խորունկ կապոյտը գրկած, յանկարծ ժպտեցաւ ինծի՝ մոռցած ամէն զգուշութիւն, ոտաբոպիկ եւ մանկացած, մտայ ջուրը: Թանկագին հարազատի մը համբոյրը զգացի այտերուս: Երեսներս լուացի կապոյտ զովութեամբ եւ ա՛լ արտահոսող արցունքներս պարտկեցի դէմքիս ցօղուած ջուրերով:

Սուրբ Խաչ տաճարը իսկապէս որ *«մա՛րվըլըզ»* էր, ինչպէս սկսան բացագանչել ամերիկացի ուղեկիցներս: Վկայ՝ լուսանկարչական մեքենաներուն յանկարծ շատախօս դարձած չրխկոցները: Ես սակայն չկրցայ նկարել: Լուռ ու տրտում էի, մագնիսացած ու յափշտակուած: Հոլի պէս դարձայ տաճարին շուրջ: Աչքերս անբաւարար էին ընկալելու եւ ներսս ամբարելու համար խորաքանդակներուն գեղակերտ գիծերն ու ձեւերը, կառոյցին ստուերներն ու լոյսերը: Քանդակներ չէին անոնք միայն, այլ՝ ճիչ ու աղաղակ, կոծ ու կական: Չդիմացայ, վազելով գացի առանձնանալու ետեւի աւերակներուն մէջ: Մէկ առ մէկ համբուրեցի քարերը, հողը, շոյեցի

խոտերն ու ծղոտները։ Ու հոն է որ անձկութեամբ, կարօտով ու տառապանքով սպասեցի, յուսացի որ լուսաւորուէր վերջապէս տեսիլքս իր իմաստով։

Սուրբ Խաչն ալ չլսեց աղերսանքս։

Հոգ չէ. կը սպասեմ դեռ։ Կարս քաղաքի անհիւրընկալ պանդոկի սենեակիս մէջ, քրտնաթոր ու սպառած, գրեթէ լալագին՝ կը սպասեմ ճակատագրիս լրումին։

Գուցէ այսօ՜ր... քիչ յետո՜յ...

- Զ -

Այսպիսի լռութիւն երբ եղեր է, չեմ յիշեր, չեմ գիտեր, չեմ կրնար երեւակայել։ Լռութիւն մը՝ թանձր, զանգուածեղ ու քարեղէն, կախուած գլխուդ եւ հոգիիդ վրան, պայթելու պատրաստ, ամպրոպի մը նման՝ սպառնագին ու ահարկու։ Անոր դէմ շունչդ կը կարկամի, կը կենայ պահ մը։ Վախի արդիւնք չէ բնաւ, այլ՝ կախարդուած քաղաքի մը դէմ յանդիման գտնուելու մտածումէդ։ Եղերական, շշմեցնող պատահար մը, կարծէք պտտահողմի մը հանգոյն եկեր, խեղդեր, աւերեր ու ամայացուցեր է քաղաքը եւ զայն պարուրեր՝ սա խենթեցնող լռութեամբ։

Մինչդեռ, այնքան ծիծղուն է առաւօտը։ Հնչեղ արեւ մը կայ անամպ երկինքէն կախ։ Օդին մէջ՝ թռչուններ արագասոյր ու ճռուողուն, եւ հեռուն՝ բարտիներ օրօր-շորոր, արծաթամա՜ղ։ Բայց անոնք ոչի՜նչ։ Տիրականը սահմռկեցուցիչ լռութիւնն է։ Ու սահմռկեր ենք իսկապէս բոլորս։ Քով քովի կծկուած, շշմած կեցեր ենք մեր Անի քաղաքին աւերակ մուտքին, դարպասի զոյգ մը զանգուածեղ աշտարակներուն դիմաց։ Անոնց թիկունքին, պարսպապատերուն երկայնքին, ուրիշ աշտարակներ ալ կան, աւելի փոքր եւ նուազ անվթար։ Ամբողջութիւնը աւերակներու տպաւորութիւն չի թողուր, այլ խորհրդաւոր ոյժի, վեհութեան եւ ներդաշնակութեան համադրութիւն մը կը ստեղծէ։ Չես կրնար պատկերացնել, թէ հոն ա՛լ կեանք գոյութիւն չունի։ Կը սպասես որ, ահա ուր որ են, հնչեն պղինձէ շեփորները, եւ հայոց զօրականներն ու այրուձին խուժեն դարպասներէն դուրս։

- Այս հսկայ պարսպաշարը կառուցուած է հայոց Սմբատ արքային կողմէ, հազարամեակ մը առաջ,- դարանիստ լռութիւնը յան-

կարծ կը խզէ Հայր Թամըս։

Ազդանշանն է սթափումի։ Բոլորը կը խռնուին առաջնորդին շուրջ։ Լոսանկարչական գործիքները գործի կ՛անցնին։ Զբօսաշրջիկութիւնը կը մտնէ իր հունին մէջ։

Ես՝ անշարժ կը մնամ։ Եւ՝ մեկուսի։ Ներսս զգացումներու խառնարան մըն է, մտածումներու հրմշտուք։ Ուրիշներուն պէս չեմ կրնար բանեցնել լուսանկարչական մեքենաս։ *Թուրիսթ* չեմ։ Բացատրութիւններուն պէտք ալ չունիմ։ Կարծես վաղուց եւ սերտօրէն կը ճանչնամ այս հողն ու քարերը։ Ես պէտք է որ երկիւղածօրէն ծունկի գամ ու համբուրեմ այս սուրբ հողը։ Պէտք է որ սգամ ու ողբամ իմ որբ Անիս։ Պէտք է մխիթարեմ, յոյս տամ անոր, ամոքեմ ցաւը։ Ա՛յդ է տրամաբանականը, միակ փափաքս։ Բայց ուրկի՞ց ուր, օտարներուն առջեւ տկար չերեւալու անկոչ հպարտութիւն մը կը կ՛աշկանդէ զիս։ Ու, պատի մը յենած, որպէս թէ անտարբեր՝ կը դիտեմ աւերակները։ Նորութիւն մը չեն ներկայացներ անոնք ինծի համար։ Արդէն տեսած ըլլալու հաստատ տպաւորութիւնը ունիմ։ Բայց, իրա՛, ո՞ւր եւ ե՞րբ տեսեր եմ։ Առեղծուած է ուղղակի։ Վստահ՝ գիրքերուն մէջինները չեն։ Ասոնք բոլորովին տարբեր կենդանութիւն մը ունին։ Ահա՛, ալիք առ ալիք, ծփանուտ եւ աղօտ պատկերներով պարիսպները կ՛երերան, կը յստականան։ Ակնթարթ մը եւս՝ ապրող քաղաքի մը բացուող դարպասի կը վերածուին։ Կեանքի, եռուն առօրեայի աղմուկն է, որ կը խուժէ պատերէն դուրս։ Ուր որ են, պիտի հնչեն հիմա ու ղօղանջեն քաղաքին հազար ու մէկ եկեղեցիներուն զանգակները։

Երեւակայութեան խաբկա՞նք է այս թէ ցնորք։ Ամենեւին։ Ապացոյց, որ կը քալեմ հաստատաքայլ ու կը յառաջանամ, լայնանիստ, սալայատակուած այս պողոտայէն եւ ստոյգ գիտեմ, թէ քանի մը անգամ ոլորուելէ ետք, ան զիս պիտի հասցնէ Ծահաստանի եռուզեռին։ Վերջն ալ, դէմս պիտի ցցուի Միջնաբերդը։ Անհամբեր՝ կը սկսիմ վազել։ Աջին, պահականոցն են, զօրանոցներն ու մարզարանները։ Ձախին կը յայտնուին արքայական ախոռները, իրենց յարդի կծու հոտերով։ Անդին, բաղնետուներն են գմբեթաձեւ իրենց երդիքներէն բարձրացող ծուխերով։ Եւ ահա՛ նաեւ Ամիրայապետին մարմարակերտ շքեղ պալատն ալ։ Հասայ գրեթէ. անկիւնադարձին Ծահաստանն է, շարուէ շարան, խայտաբղէտ կրպակնե-

րու իր շարասիւնով։ Բայց, սպասուած աղմուկին եւ եռուզեռին փոխարէն, ծանր լռութիւնն է իշխողը։ Ո՛չ մէկ շունչ։ Ո՞ւր են մարդիկ։ Խուճապահար կ՚արագացնեմ վազքս, ու դէմ յանդիման կու գամ Մայր Տաճարին։ Խունկի բոյրն ու երգեցողութեան ձայնը, զիս մագնիսացած կը քաշեն դէպի ներս։ Առաջին պահ, կը խտխտան աչքերս։ Վառեր են բոլոր ջահերը բիւրաւոր մոմերով։ Բիւրեղեայ հնդկական իսկայ ջահն է՝ կը փայլփլի իր լուսեղէն հրաշքով։ Ու հաստաքերձ կամարներուն տակ կը թնթայ բազմաձայն շարականերգութիւնը։ Սակայն չեմ կրնար ըմբոշխնել հոգեպարար երգեցողութիւնն ալ։ - Հոս ալ ամայութիւն է։ Մարդ մարդասանք չկայ։

Վախցած՝ կը վազեմ դուրս։ Կ՚ուղղուիմ դէպի Ախուրեան գետի ձորը։ Բնութեան մէջ հետզհետէ կը հանդարտիմ։ Դանդաղաքայլ կ՚իջնեմ ձորն ի վար։ Կանաչի հրդեհ կայ վարը եւ գոյներու համերգ։ Ձորալանջին թզահասակ խոտեր կան թարմ ու բուրեան։ Կը նստիմ, կը թաղուիմ անոնց մէջ, հոտ կը քաշեմ։ Ապա կը պառկիմ կռնակի վրայ ու կը շլանամ. վերը, երկինք մըն է, կապո՛յտ-կապո՛յտ, պսպղո՛ւն, անսահմա՜ն։ Մօտիկ թաւուտներէն համատարած երգն է ծղրիթներուն, իսկ վարէն, սանձազերծ Ախուրեանն է որ կը ֆշշայ վիշապաձայն։ Ամառ է, սաստիկ տաք ու չոր։ Ու հակառակ Ախուրեանի ու ծղրիթներու համերգին, նոյն թանձր լռութիւնն է կախուեր օդին մէջ ու շնչահեղձ կ՚ըլլայ։ Սպասում մը կայ, լարուած, անբնական, անքա՛ցատրելի։

Նիրհը քարիք մըն է, որ պահ մը կ՚առնէ զիս իր գիրկը։ Բայց յանկարծ կ՚արթննամ ու կը նստիմ սրտադող։ Չեմ սխալած, վերէն մէկէն կը հնչէ արծաթահունչ կա՛նչը...

-Ուհո՛ւ...ուհո՛ւ...ուհո՛ւ...Աշո՛տ...

Կը նայիմ ձայնին ուղղութեամբ. հո՛ն է , աղջի՛կն է, ժայռերէն վեր, բացատին վրայ։ Ձեռքով նշան կ՚ընէ։ Հեռու չէ, եթէ երկարեմ ձեռքս կարծես կրնամ բռնել։ Սեւ, աչքերուն շողացող ժպիտ կայ։ Կարմրախայտ հագուստին վրայ, մազերուն հիւսկերը բոլորեր են նորածիլ կուրծքերը։ Խայտանք ու հրաւէր է ամբողջութեամբ։

Լուած չըլլալ կը ձեւացնեմ, դարձեալ լսելու համար իր կանչը՝ որ չուշանար.

-Ուհո՛ւ... ուհո՛ւ... Աշո՛տ...

Ա՛լ համբերել չեմ կրնար։ Ոտքի եմ արդէն։ Կը վազեմ դէպի

վեր։ Բայց զարմանալի, չեմ յառաջանար։ Տեղվազք է ըրածս։ Ին-չո՞ւ։ Արիւն քրտինքի մէջ եմ արդէն։ Կը շարժեմ սրունքներս բայց չեմ յառաջանար։ Ու աղջիկն ալ կը հեռանայ կարծես։ Կանգ կ՛առ-նեմ, հեւասպա՛ռ։ Կ՛ուզեմ ձայն տալ, բայց կ՛անդրադառնամ որ աղջկան անունը չեմ գիտեր։ Չեմ յիշեր։ Վստահ եմ, եթէ կարենամ յիշել անունը եւ ձայն տալ՝ պիտի կարենամ հասնիլ անոր։ Միայն թէ կարենամ…

Աստու՛ած իմ…ձիերու ի՞նչ թափիւն է այս…

-Աշո՛տ, հասի՛ր… Աշո՛տ, օգնութի՛ւն…

Այս անգամ աղիողորմ է ձայնը։ Երկու ձիաւորներ են, սպառա-զէն ու բարբարոս։ Ծիլ ու շեղ աչքեր ունին ու բորենիի քրքիջ։ Բռ-ներ են աղջկան ձեռքերէն ու կը փորձեն ձիուն վրայ քաշել զինք։ Աղջիկը կ՛ընդդիմանայ, կը պոռչտայ ու կը խածնէ առեւանգող ձեռ-քերը։ Գրեթէ կը տապլտկի ձիուն սմբակներուն տակ։

Օգնութի՜ւն…

Ա՛լ թեւեր առած, կը սլանամ դէպի վեր։ Կը հասնիմ սպիտակ ձիաւորին եւ կը խլեմ աղջիկը անոր ճիրաններէն։ Զինուորը մոն-կոլական շեղ աչքեր ունի վրաս յառած ու կատղած ձին վրաս կը քշէ։ Ես ալ կը խոյանամ ու արագ, անզուսպ շարժումով զինք վար կը քաշեմ ձիէն։ Կոկորդ կոկորդի փակած, կը թաւալուինք գետնին վրայ։ Կը բարձրացնեմ բռունցքս հարուածելու համար, երբ կը լսեմ աղջկան ճիչը.

-Աշո՛տ, զգո՛յշ։

Բայց ուշ է արդէն։ Տէգը կը խրի կռնակէս ու զիս կը գամէ հո-ղին։ Աշխարհը կը մթննայ մէկէն։ Ահաւոր ցաւը կը կծկէ մարմինս։ Տառապանքով կը բանամ աչքերս ու կը մրմնջեմ.

- Աշխէն…հոգի՜ս…

Ակռապլիկ ու խենեշ քրքիջ մը ձիուն վրայէն կը շպրտուի դէմ-քիս։ Մազոտ ձեռքեր , Աշխէնս գրկած կը տանին ձիուն վրայ։

Ու հետզհետէ՝ հեռացող սմբակներու մեռնող արձագանգ։

Սպիտակ, անէ՛զր, համատարա՛ծ լռութի՛ւն։

Մարգիս Վահագն

Յակոբ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Ծնվել է 1943 թ.-ին Հալեպ քաղաքում։ Անգլերեն լեզվի և գրականության մասնագետ է։

Չորս հրատարակած գրքերի, տասնյակ թարգմանությունների (անգլերեն, արաբերեն), բազմաթիվ հոդվածների և ակնարկների հեղինակ է։

Արժանացել է Գ. Մելիտինեցի անվան գրական մրցանակի։

Ծավալել է հիսուն տարիների թատերական (դերասանական-բեմադրական) բուռն գործունեություն։

Այժմ ԼՆԳԿ երկրորդական վարժարանում դասավանդում է հայոց լեզու և գրականություն։

Ութ ամիսներէ ի վեր Երեւան կ՚ապրէի ու կ՚աշխատէի, հայրենիքի մէջ վերջնական կայք հաստատելու որոշումս ի գործ դնելով։

Թումանեան - Նալբանդեան փողոցներու հատման կից բակին մէջ, բարձրայարկ շէնքի մը առաջին յարկը կը բնակէի առանձին։ Զորս հոգինոց մեր ընտանիքը անակնկալ քամիի մը բերանը ինկած, տարտղնուած էր ու ամէն մէկս կ՚ապրէինք տեղ մը։

Երկու աղջիկներէս մեծը արդէն Երեւան հաստատուած էր երկու տարիէ ի վեր եւ ուսման զուգահեռ, ընկերոջ մը հետ գործի մը ձեռնարկած էր, քաղաքի կեդրոնը, օփերային դիմաց, փոքրիկ, բայց գեղեցիկ ճաշարան մը բանեցնելով։

Փոքր աղջիկս կը մնար Հալէպ, կը շարունակէր իր վերջին տարուայ ուսումնառութիւնը Հալէպի համալսարանին մէջ, ու կը փորձէինք համոզել, որ աւարտելէ ետք ինք ալ Երեւան գայ մեզի միանալու, թէեւ այդ ուղղութեամբ որեւէ խանդավառութիւն ցոյց չէր տար։

Աշխատանքէս ետք, միակ մխիթարութիւնս, որպէս հարազատի, աղջիկս էր, որուն մօտ կ՚երթայի ամէն երեկոյ եւ ամէն ճաշարանին մօտենալուս, կ՚աղօթէի, որ սեղանները, գրաւուած ըլլան յաճախորդներով, որպէսզի ուրախանայի աղջկանս ուրախութեամբ, որ գործը երթալով յաջող ընթացք կը ստանայ։

Երեւանի մէջ նոր գործի ձեռնարկելը, չարչարանաց Գողգոթան բարձրանալ կընշանակէ... ծանօթ ու անծանօթ, օրինական թէ անօրէն տուրքերու գանձման պատրուակով, շահածդ աւազի պէս մատներուդ արանքէն կը փախչի։

Այո, ութ ամիսներէ ի վեր կ՚ապրիմ Երեւան, սակայն տրամադրութիւնս չինական ճաշերու համը ունի՝ քաղցրն ու աղին (չըսեմ լեղին) խառն են։

Շատ բաներ կան այստեղ զիս ուրախացնող ու հոգիս հրճուեցնող, յատկապէս քաղաքի մշակութային, գեղարուեստական միջոցառումներն ու մտաւորական, արուեստագէտ մարդկանց շրջանակը, Երեւանեան գեղեցիկ տեսարաններու ֆոնին վրայ, իսկ անդին կան նաեւ բաներ, ոչ թէ դրական տպաւորութիւններս հակակշռող, այլ անոնց վրայ որոշ ստուեր ձգող, մաս-

նաւորաբար տեղացիներու մեծամասնութեան անտարբեր, անտարբեր, աննրբանկատ, յաճախ կոպիտ վերաբերմունքը, յատկապէս նորեկներուս հանդէպ: Անցեալի ճնշումի մթնոլորտը շատ բան փոխած է մարդոց մէջ:

Անորոշութիւնը կախուած է գլխուս վրայ գորշ ամպի պէս: Տխուր եմ, որովհետեւ մինակ եմ: Այնքան սիրով ու գուրգուրանքով հիւսուած մեր ընտանիքը թել-թել քակուած է... ու չեմ գիտեր ինչ կը սպասէ ինծի, թէեւ լաւատեսութեան սիրահար աղջիկս, ընկրկումի պահերուս, անդադար կը մղէ զիս, որ լաւատես ըլլամ ու ձերբազատուիմ հոգիս ընկճող յուսահատութեան փչող հովերէն:

Յամի Տեառն 2001 թուականն է. օրը՝ Ապրիլ 30. Տարեդարձս է, կեանքիս 58-րդ տարեդարձը, որը առաջին անգամ ըլլալով պիտի դիմաւորեմ Հալէպէն դուրս:

Երեխայ չեմ, բայց կ'ըսեն ամէն մարդու մէջ ալ պահուած երեխայ մը կայ. այդպէս ալ միշտ ուրախացած եմ երբ տարեդարձիս օրը յիշած են զիս, նշած ենք ընտանեօք, հարազատներով. նուերներ եւ բարեմաղթութիւններ ստացած եմ:

Սակայն այսօր, միեւնոյն հոգեվիճակը չունիմ: Ընդհակառակը՝ մելամաղձոտ եմ, բան մը ծանրացած է սրտիս վրայ:

Աշխատանքէս ետք, եկած եմ տուն, պատառ մը բան դրած բերանս ու ելած փողոց:

Երեւանի փողոցներէն քալելը ինքնին հաճոյք է, բայց այսօր նոյնը չէ: Ձեռքերս գրպանս, գլխիկոր ու մտածկոտ կ'ուղղուիմ Թումանեանն ի վեր, դէպի օփերա, դէպի աղջկաս ռեստորանը «Բագու»:

Սովորութեանս համաձայն չեմ մտներ փողոցի մայր դռնէն, պարզապէս խուսափելու համար յաճախորդներու ինծի ուղղուած հայեացքներէն:

Կողմնակի մուտքէն կ'անցնիմ բակ, ուրկէ. ետեւէն երկրորդ մուտք մը զիս ուղղակի կ'առաջնորդէ ճաշարանի յետսակողմի գրասենեակը, ուր սովորաբար նստած կ'ըլլան աղջիկս ու իր գործընկերը:

Նուշիկը գրասենեակը չէր, երեւի խոհանոցն է, մտածեցի, որովհետեւ յաճախ խոհարարուհիին օգնելու համար ներս կ'երթայ:

Աւիկը, գործընկերը, գրասեղանին ետեւէն ընդոստ ոտքի ելաւ

ու ձայն տուաւ Նուշիկին:

Այսպէս զիս դիմաւորելը, սովորական չըլլալով հանդերձ, մասնաւոր տպաւորութիւն մը չձգեց վրաս:

Արագ ներս եկաւ Նուշիկը, խոշոր ժպիտ մը դէմքին ու թեւս անցած զիս ներս առաջնորդեց: Գիտէի որ տարեդարձս բնաւ չի մոռնար, կրնայինք հոս, գրասենեակը նստիլ ու բաժակ մը բան խմել, եթէ այդ էր տրամադրութիւնը, սակայն քաշելով զիս տարաւ ներս, ճաշարանի նախասենեակը, ու, ինչ տեսնեմ, փարթամ սեղանի մը շուրջ հայաստանցի իմ ամենամօտիկ, ամենասիրելի բարեկամներս՝ աննման նկարիչ Յակոբ Յակոբեանը իր արուեստագիտուհի կնոջ տիկ. Մարիի հետ, գրող-թարգմանիչ Կարպիս Սուրէնեանը, անզուգական մարդ եւ դերասան Սօս Սարգսեանն ու իր կինը՝ Նելլին, բեմադրիչ Նիկոլայ Ծատուրեանը եւ կինը Այտան, որոնք «մեղսակից» ժպիտներով դիմաւորեցին զիս ու «Բարի Տարեդարձ» ըսին:

Ես դեռ եղածէն ուշքի չեկած, անորոշ ժպիտ մը դէմքիս, կը փորձեմ ընկալել կեանքիս ամենագեղեցիկ անակնկալը...

Ուրեմն, աղջիկս յատուկ ծրագրեր ու դասաւորեր է, որ հայրենիքի մէջ իմ առաջին տարեդարձս անցնի անմոռանալի միջոցառմամբ: Թէ ինչպէս քիչ առաջուան մելամաղձոտութիւնս քարկոծուած շան նման, պոչը ոտքերուն մէջ քաշած, փախաւ գնաց, ես ալ չզգացի:

Հայաստանի «ցրտութեան» մէջ լոյսի ու ջերմութեան աղբիւր իմ «արեւ» բարեկամներս, կուտակուած գորշ ամպերը ճեղքած ու չորս բոլորը պայծառացուցած էին: Ամէնէն երջանիկը Նուշիկս էր, որովհետեւ յաջողած էր իր ծրագրածը իրագործելու ու հիմա, դէմքէս ճառագայթող բերկրութեան պտուղները ինք ալ կը քաղէր: Այս աղջիկը ոչինչ կը խնայէր զիս ուրախ պահելու համար:

Եկաւ նաեւ Աւիկը, Նուշիկի մտերիմ գործընկերն ու իսկական ընկերը եւ բաժակները սկսան ոչ միայն զրնգալ, այլ ղօղանջել եւ ալիք-ալիք խօսք ու մաղթանք, ժպիտ ու ծիծաղ շաղ տալ շուրջ բոլորը:

Յակոբեանը լռջախոհ մարդ է, մեծ արուեստագէտ ըլլալու կողքին նաեւ մեծ մտածող է ըսելիքը անկեղծ ու մէկին, յստակ ու ճակատային, մասնաւորաբար, երբ նիւթը կը դառնայ ազգային

հարցերու շուրջ, Հայաստանի քաղաքական ու ընկերային իրավիճակին շուրջ։

Մեծ մտածող եւ մեծագոյն համեստ մարդ, որ ոչ միայն չի յոխորտար իր նկարներուն արժէքին ու արժանիքներուն վարկով, այլ, ինծի պէս շատ սովորական արուեստ սիրողի մը առջեւ կրնայ իր նորագոյն գործերը ցուցադրել եւ կարծիք հարցնել թէ «լա՞ւ է, կը դիտուի՞...» ու ես յաճախ անճրկած եմ, ի՞նչ ըսեմ, ինչո՞վ պատասխանեմ իրեն պէս արուեստագէտի մը, որ իմ կարծիքիս, իմ դատողութեանս կը դիմէ։

Սակայն, ըրածը ձեւականութիւն չէ, անկեղծ է։ Հիմա եկուր բառեր գտիր արտայայտելու եւ զինք անպատասխան չձգելու, որ շողոմանք չըլլայ, ճապաղ չըլլայ, անկեղծ տրուած հարցումի մը անկեղծ պատասխանն ըլլայ։

Կը դիտես իր գործերը ու կը հիանաս։ Հայրենի բնութիւնը այսքան հոգեթով, այսքան պայծառ ու խօսուն կրկնօրինակ չէր կրնար ունենալ։ Կը հիանաս ոչ միայն նկարներով ու քանդակներով, այլ նորարարական իր ոգիին համար, որ այս տարիքին, տակաւին նոր թեմաներ ու նոր մեկնաբանութիւններ որոնելու ու կիրարկելու հետամուտ է։

Յակոբեանն ու իր կեանքի անբաժան ընկերուհին, կողակիցը, տիկ. Մարին, իր գեղանկարած ծաղիկներուն նման նուրբ ու քաղցրալեզու, հմայիչ ու ազնուական։

Ի՜նչ անհամբերութեամբ կը սպասէի Կիրակի օրերուն, երբ կէսօրուայ մօտ կ'այցելէի զիրենք իրենց բնակարան-արուեստանոցին մէջ, Քիէւեան կամուրջի մօտակայքը։

Սովորաբար Կարպիս Սուրէնեանն ալ կու գար ու քանի մը ժամ իրենց հետ կ'ապրէի իմ ամենահաճելի ամենաուսանելի պահերս, երբ իրենց բերնէն կախուած մտիկ կ'ընէի իրենց վերլուծումներն ու գնահատականները, ոչ միայն գրականութեան ու արուեստի մասին, այլ Հայաստանի անկախացումէն ետք տիրող քաղաքական, ընկերային ու տնտեսական իրավիճակին մասին։

Յակոբեան, որ հազար ու մէկ թելերով կապուած էր իր հողին, իր պատմութեան, իր մշակոյթին, չէր հանդուրժեր որ գային այսօր մարդիկ պաշտօնի գլուխ ու իրենց ոչ առաքինի ընթացքով, իրենց շահադիտական նկրտումներով պղտորէին երկրի մթնոլոր-

տը:

Սուրէնեանը սովորաբար իր հետ բերած կ'ըլլար քսան-երեսուն էջ մը իր «օրագիր»-ներէն, զորս հրատարակութեան կը պատրաստէր: Օրագրի բազմահարիւր էջեր, սկսած Մելգոնեանի ուսումնառութեան օրերէն, մինչեւ ներգաղթ ու ապա, կեանքը հայրենի հողին վրայ: Օրագրութեան էջեր, որոնց գոյութիւնն իսկ անգիտացած է եւ յանկարծ օրին մէկը յայտնաբերած է անոնց թաքստոցը, ուր պահ մտած էին կասկածի ու վախի լեղիով դառնացած հեռու անցեալի օրերուն:

Մեծ հետաքրքրութեամբ կը հետեւէինք իր պատանեկան ու երիտասարդական ապրումներու արձանագրութեանց:

Ապա, Յակոբեան դարակի մը վրայէն կը քաշէր տրցակ մը ձեռագրած թուղթեր ու անհամարձակ աշակերտի պէս կը սկսէր կարդալ իր գրած մէկ յօդուածը, կամ ակնարկը, սովորաբար զինք յուզող հարցերու շուրջ, իր իւրայատուկ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի խառնուրդ լեզուով. լեզու մը, որ երբ տպագրութեան համար յանձնուէր թերթի, կամ հանդէսի մը, ոչ մէկ խմբագիր կը փորձէր «խմբագրել»: Այնպէս ինչպէս կը յարգէին ու կը սիրէին իր արուեստը, այնպէս ալ կը յարգէին իր լեզուն:

Յակոբեանի այդ ակնարկները քանի մը տարիներ ետք պիտի ամփոփուէին գիրքի մը մէջ, որ պիտի կրէր իր պարունակութեան հայելի, իր ամենախօսուն խորագիրը, փոխ առնուած Թէքէեանէն՝ «Ու մերթ լացաւ ու մերթ խնդաց իմ հոգին»...

Ժամերը ինչպէս կը սահէին, չէի զգար: Սուրէնեանի իրերայաջորդ ընթերցումները իր օրագրութիւններուն, զորս տարիներ ետք պիտի հրատարակուէին երկու խոշոր հատորներով, ոչ միայն հետաքրքրական էին իրենց ինքնակենսագրական դիպաշարով, այլ, եւ որ ամենակարեւորն է ու մեր գրականութեան մէջ հազուադէպ կոչուելու արժանի անոր անաղարտ, բացառիկ, մաքրամաքուր հայերէնն էր, յատկապէս առաջին բաժինին մէջ, ուր տակաւին մինչեւ հայրենիք ներգաղթելը, շարադրած էր արեւմտահայերէնով, եւ ի՜նչ լեզու, անթերի՜, գեղեցիկ բառապաշարով, յաճախ ինքնակերտ, ու կը հաւատամ իրեն, երբ կ'ըսէ թէ պատահած է, որ երբեմն օր մը ամբողջ, կամ երկու, որոնած ըլլայ բառ մը, մասնաւորաբար թարգմանութեանց ատեն, իր ճիշդ իմաստով, ճիշդ

տեղը դնելու համար, այնքան բծախնդիր, բառերու նրբերանգներուն այնքան կարեւորութիւն տուող:

Կարպիս Սուրէնեանը, սիկառէթը մատներուն արանքը, կը բարբառէ պերճախօսութեամբ. պերճախօսութիւն մը, որուն բառերը երբեմն կը հանգուցուին բերնին մէջ, ապա իրենց ճամբան կը գտնեն դէպի դուրս:

Հաստատ է իր համոզումներուն ու տեսակէտներուն մէջ: Ինք ալ ութսունի ճամբան բռնած Յակոբեանի նման, ընկրկումի ոչ մէկ նշան ցոյց կու տայ, նոյնիսկ յաճախ իրեն այցելող գլխացաւը չի յաջողիր զինք զինաթափ ընել:

Կարպիսը իր ծնողքին հետ Հայաստան ներգաղթեց 1946-ին Յունաստանէն, սակայն իրենց «Սարկաւագեան» մականունը չյաջողեցաւ «ներգաղթել», որովհետեւ անկէ կրօնական հոտ կու գար ու դարձան Սուրէնեան:

Իր հեղինակած գիրքերուն զուգահեռ. ան հանրայայտ պիտի դառնար որպէս անստգիտ թարգմանիչը Տոլթոյսկիի «Քարամազով Եղբայրները» եւ ապա «Փորսայթներու պատմութիւնը» ստուարածաւալ, գիրքերուն:

Իր բացառիկ իմացութիւնը անգլերէնի եւ ռուսերէնի արտացոլաց նաեւ վերջերս լոյսին եկած իր «Պսակ թարգմանական» աշխատութեան մէջ:

Սակայն, Սուրէնեան միայն գրող ու թարգմանիչ չէր, բազմակողմանի զարգացում ունեցող մարդ էր: Շատ լաւ կը հասկնար երաժշտութիւնէ, յատկապէս մեր եկեղեցական շարականներէ: Տարիներ շարունակ, իր կնոջ հետ երգած էին Յ. Չէքիճեանի երգչախումբին մէջ:

Հմուտ գիտակ էր մեր ճարտարապետութեան ու մեր եկեղեցիներու շօշափելի եւ անշօշափելի խորհուրդը կը մեկնաբանէր իւրայատուկ ձեւով, վկայ՝ Հալէպի մէջ հրատարակած. իր գիրքը՝ «Ոգու Ամրոցներ»-ը:

Սօս Սարգսեանը տարօրինակ հմայք մը ունի. անբացատրելի քարիզմա մը, որուն գաղտնիքը իր աղ-պղպեղը մազ-մօրուքին մէջ է, թէ՞ թաւ ու թաւշեայ ձայնին. իր փայլուն, մանրիկ աչքերէն բխող նայուածքին, թէ՞...

«Զորի Միրօ»-ն քանիցս դիտած էի ու սիրած զինք հեռուէ-հե-

ռու, մինչեւ որ բախտ վիճակուեցաւ որ մօտ երկու ամիս վայելեմ իր ներկայութիւնը, երբ Հ. Ե. Ընկերակցութեան «Ադամեան» թատերախումբի հրաւէրով 1987-ին եկաւ Հալէպ, մեզի հետ Սարոյեանի «Իմ Սիրտը Լեռներում է» թատերգութեան մէջ գլխաւոր դերը ստանձնելու, որպէս Մէք Կրեկոր:

Ես պիտի խաղայի Պէն Ալեքսանտրի դերը: Պատկերացուցէք իմ եւ մեր բոլորին հոգեվիճակները: Հայրենի հռչակաւոր դերասան ու մենք ոչ-արհեստավարժ, սիրող դերակատարներ, միասին բեմ պիտի բարձրանայինք: Աննախընթաց երեւոյթ մեր գաղութին համար, իսկ մեզի համար իսկական հպարտութիւն, մեր ես-երը շոյող ու մեզ շփացնող պատմական առիթ, որ...

Որ սակայն իր լրումին չհասաւ...

Երիտասարդ բեմադրիչ Յ. Չննոզեան մեծ խռովք կ՚ապրէր Սօսի ներկայութեան իր ցուցմունքներով փորձերը ղեկավարելու ու յաճախ մտիկ կ՚ընէր Սօսին, որ իր տարիներու փորձառութեամբ ու Սարոյեանի այս գործին լաւ ծանօթ ըլլալով, մէջ ընդ մէջ առաջարկներ կ՚ընէր դերակատարներուս եւ ուղղութիւններ կու տար:

Բայց, գործը չբեմադրուած, Սօսը պարտադրուեցաւ ետ վերադառնալ Երեւան, ըստ այն օրերու Սովետական վիզայի օրէնքներուն եւ սահմանափակումներուն:

Սէրօ Խանզադեանը, որ այդ օրերուն Հալէպ կը գտնուէր, ոչ իր միջամտութիւնը տեղւոյն Սովետական հիւպատոսարան, ոչ ալ մեր թախանձանքները, որ երկարաձգեն Սօսի կեցութեան արտօնութիւնը, արդիւնք տուին:

Ու Սօսը գնաց...

Արցունքոտ աչքերով ճամբայ դրինք զինք: Ընդամէնը երկու շաբաթ մնացած էր թատերգութիւնը բեմ հանելու: Որմազդները, Սօսին նկարով, դրուած էին ամէն կողմ, տոմսերը տպուած էին...

Մնացինք որբ: Բայց չէինք կրնար երկու ամսուան աշխատանքը ջուրը թափել: Կացութիւնը փրկուեցաւ ձեւով մը, երբ բեմադրիչը ինք ստանձնեց Սօսի կիսաւարտ ձգած գլխաւոր դերը ու գործը բեմ բարձրացաւ:

Այս դէպքէս ետք, մեր կապը Սօս Սարգսեանի հետ չկտրուեցաւ: Ամէն անգամ, որ Երեւան կ՚այցելէի, անպայման մօտը կ՚երթայի Ամիրեան փողոցին վրայ, թատերական ինստիտուտի տնօ-

րէնութեան իր սենեակը: Կը խօսէր, հարցեր կու տար, հարցեր կու տայի ու մտիկ կ'ընէի բերնէն կախուած: Կշռադատուած տեսակէտներ ունէր ծանրախոհ մարդ էր, իր համոզումները Հայաստանի մասին, Սփիւռքի մասին, մեր մշակոյթին եւ յատկապէս մեր թատրոնին մասին, այնքան ուսանելի բաներ կը պարունակէին իրենց մէջ:

Հիմա, իր գեղեցկուհի կնոջ, Նելլիի հետ, սեղանին մէկ ծայրը նստած, պճլտուն աչքերով ու շրթունքին ծայրէն ծաղկող ժպիտով կը նայի ինծի անկեղծ գորովանքով:

Հալէպ գտնուած ատեն, օր մը ինծի ըսած էր, որ իմ տեղս Հայաստանն է. քիչ մը մտածեցի ու ըսի, որ մենք եւ մեզիպէսները, որոնք քիչ թէ շատ որոշ ձիրքեր ունին եւ կրնան, իրենց լուման դնել Սփիւռքի մէջ մեր հայկականութիւնը, մեր մշակոյթը պահելու, ո՞ւր ձգեն երթան... սիրած էր ըսածս եւ իրաւունք տուած ինծի: Այդ պատասխանս ապագային յիշուեցաւ նաեւ իր մէկ գրքոյկին մէջ:

«Կոլիայի», Նիքոլայ Ծատուրեանի հետ մեր բարեկամութիւնը սկսաւ 1993-ին, երբ որպէս բեմադրիչ հրաւիրուեցաւ «Ադամեան» թատերախումբին կողմէ (Սօս Սարգսեանի թելադրութեամբ): Ես արդէն երկար տարիներէ ի վեր կ'անդամակցէի այդ թատերախումբին, անոր վերածնունդի առաջին իսկ օրերէն, թէ՛ որպէս դերասան եւ թէ՛ որպէս դիմայարդար եւ նախագծող նկարիչ:

Սկիզբը, կարճ շրջան մը, Այտային հետ միասին մնացին մեր տան մէջ, ուր Հայաստանեան կատակերգութիւն մը կը մշակուէր, նոր ձեւաւորում եւ խմբագրութիւն կը ստանար: Կոլիան սովորականին պէս արթուն կը մնար մինչեւ առաւօտեան հինգը կամ վեցը ու թատերական պատկեր մը կը վերստեղծէր յարմարեցնելով մեր միջավայրին եւ թատերախումբի անդամներուն, նկատի առնելով անոնց նկարագրային գիծերը, տարիքն ու թատերական փորձառութիւնը: Իսկ ես, իր անկողին մտնելէն ետք, կ'անցնէի գործի, սեղանին վրայ իր ձգած էջերը արեւմտահայերէնի կը վերածէի եւ իր արտօնութեամբ, տեղ-տեղ կը համեմէի մեր հասարակութեան մատչելի հիմըրի արտայայտութիւններով:

Ու այսպէս, օրէ-օր հիւսուելով, մէջտեղ եկաւ «Երկինքէն իջած մարդը» կատակերգութիւնը, ըստ Ժիրայ Անանեանի գրեթէ համանուն գործին եւ որը աննախընթաց մեծ յաջողութիւն գտաւ ու գնա-

հատանքի արժանացաւ թէ՛ Հալէպի եւ թէ՛ Պէյրութի մէջ:

Մէկ թատերգութիւն բեմադրելու համար Հալէպ հրաւիրուած բեմադրիչը յաջորդող տարիներուն ալ շարունակեց գալ ու մին միւսը գերազանցող գործեր բեմադրել Ադամեանցիներու ուժերով: Սիրուեցաւ ու մնաց եւ կը շարունակէ ցարդ մնալ, որովհետեւ թատերախումբի անդամները իր մէջ գտան ան մեծ արուեստագէտը, այն խիստ, բայց բծախնդիր ու յոգնիլ չգիտցող, ստեղծագործ բեմադրիչը, որմէ շատ բան ունէին սորվելիք, որուն իւրաքանչիւր փորձը ինքնին դասապահ մըն էր, լի տեսական եւ գործնական դասերով:

Եւ Ադամեանը իսկապէս նոր շրջան մը ապրեցաւ. նոր որակ ստացաւ եւ անմոռանալի գործերու շարք մը հրամցուց հանդիսատեսին:

Անսպառ հիւմըրի աղբիւր, պատրաստաբան ու ընկերային ջերմ ու հաղորդական մարդ, որ ծնած է Այտայի նման գրաւիչ, ճաշակաւոր, կարգ-կանոնի սիրահար պահապան հրեշտակի մը, առանց որուն, կը թուայ թէ Կոլիան կորսուած վիճակ մը պիտի ունենար:

Երեւանի «Մեթրօ» թատրոնի անունին հետ կապուած մնաց Կոլիայի անունը, Հայաստանեան իր շարք մը բարձրորակ գործերով, որոնք ցարդ կը յիշուին որպէս բացառիկ իրագործումներ:

Ահա փունջ մը կեռոններ իմ տարեդարձի սեղանս զարդարող ու անոնց կողքին՝ Աւիկը, Աւետիս Պէրպէրեան երգահան-երաժիշտը, պայծառ անձնաւորութիւն մը, որ իմ երգչուհի-բանաստեղծուհի աղջկաս հետ, սովորական ճաշարանը վերածած են արուեստով յագեցած Երեւանեան իւրայատուկ ժամադրավայրի մը:

Կենացներն ու բաժակաճառերը կայծերու պէս կը շատրուանեն. սովորական քաղցր խօսքերն ու մաղթանքները աւելի կը քաղցրանան մտաւորական ու արուեստագէտ մարդոց բերնին մէջ...

«Դէ եկ վարդապետ, ու մի խեղանա...»

Տէր Աստուած շատ մի համարեր այսքան բանը: Ո՞վ բախտ ունեցեր է տարեդարձ տօնելու նկարիչ, գրող, դերասան, բեմադրիչ, երաժիշտ ու բանաստեղծ արուեստագէտներու աստղաբոյլի մը հետ:

Կը դիտեմ շուրջս եւ կրկին ու կրկին միտքս կու գայ Սեւակի տողը՝ «Դէ եկ վարդապետ...»

Մարդ ինչպէս չխելագարուի երբ ինչ-ինչ պատճառներով Երեւանը ձգելով, Հալէպ վերադառնալու որդը սկսած է կրծել հոգիս:

Ինչպէ՞ս հեռանալ այսպիսի մարդոց շուքէն անոնց օրինաքեր մագնիսադաշտէն:

Հայաստանը քար ու լեռ է, դաշտ ու անտառ է, երկինք ու ջուր է, եկեղեցի ու յուշարձան է միայն, թէ՞ այս է իսկական Հայաստանը, այս մարդոց մէջ, այսպիսի՜ հայրենասէր, հայրենանուէր մարդոց մէջ է Հայաստանը, մարդիկ որոնք իրենց խառնուածքով ու էութեամբ, իրենց մտածումներով, իրենց ապրումներով ու արուեստով կը հարստացնեն բազմերանգեան խճանկարը Հայաստանի ու չեն ներեր որեւէ մէկուն, որ բիծ մը իսկ դնէ այդ խճանկարի վրայ:

- Պիտի մնա՜ս:

Ծանր է հարցումը, որ արճիճի պէս կը նստի սրտիս վրայ:

Ի՞նչ պատասխան տամ: Շուար ու անել կացութեան մէջ եմ:

Բայց. հեռանալ կարելի՞ է: Չէ՞ որ մենք իր մէջ ըլլալէն աւելի. Ան մեր մէջն է, բաժնուիլ՝ կ'ըլլա՞յ:

- Կենացդ Հայաստան:

- Ձեր կենաց, Հայաստանի անգէն զինուորներ:

Բարի Տարեդարձ:

ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Արա ԱՐԾՐՈՒՆԻ

Ծնվել է 1932թ.: Հրապարակագիր, գրող, թատերագիր:

Աշխատակցել է Բեյրութի «Բագին», «Կամար» գրական հանդեսներին, «Ազդակ» օրաթերթին և «Արծիվ» ամսաթերթին:

Հրատարակած գրքեր

«Վիրաւոր ծիծեռնակը» (Պատմուածքներ) Բեյրութ, 1969, «Եղեռնի հետքերով» (հրապարակագրություն) Բեյրութ, 1972, «Ես զոհ, ես դահիճ» (թատերգությունների հավաքածու) Ա. հրատ. Երևան, 1993, Բ. հրատ. Բեյրութ, 1995, «Անաւարտ վէպը» (թատերգություն) արժանացել է «Վերժին և Վահրիճ Ճերեճեան» Գրական Մրցանակի, Բեյրութ, 2006, «Ողջոյն», «Պահածոյի տուփերը» (թատերգություններ) հրատ. «Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի», Բեյրութ, 2006:

Հրատարակած վեպ և վիպակ

«Ծովինար» (վէպ), «Սպիներ» (վիպակ), «Հերցոֆ» (վիպակ), «Արծիւ» ամսաթերթ:

Բեմադրած թատերգություններ

«Վահագն», «Փորձարարական թատրոն», Բեյրութ 1976, «Միալար երաժշտութիւն», «Փորձարարական թատրոն», Բեյրութ, 1980, «Մժեղը», «Համազգային», ժորժ Սարգիսեան թատերախումբ, Թորոնթօ, Կանադա, 2004, «Մժեղը», «Կամերային թատրոն», Երևան, 2005:

Ո՞Վ Է ԲԱԽՈՒՄ ԴՈՒՌԸ

ԱՆՀԵԹԵԹ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ
Նախերգանքով և երկու արարով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Կինը
Մարդը
Տղան
Աղջիկը

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Փակ վարագույրի առջև, իրարից հեռու, դրված են չորս աթոռներ: Ներկայացումը սկսվելու պահին սրահի բոլոր լույսերը հանգչում են և չորս լուսարձակները լուսավորում են չորս աթոռները: Բեմահարթակը դղրդում է թատերախաղի սկիզբն ազդարարող երեք ուժգին հարվածներից: Քիչ անց, աջից՝ ձախ գալիս են Կինը, Տղան և Աղջիկը և զբաղեցնում աթոռները: Մի պահ լռություն է տիրում: Չորս լուսարձակների լույսերը հանգչում են և աստիճանաբար լուսավորվում է բեմի առաջամասը: Դերակատարները իրար չեն նայում, իրենց խոսքը ուղղում են դեպի սրահ՝ միշտ նայելով հանդիսատեսներին:

ԿԻՆԸ - *(65 տարեկան. ուռած ոտքերով և սրունքներով. հնաոճ զգեստներով, չափազանց շատ արդուզարդով: Ոտքերին՝ բրդյա երկար գուլպաներ):* Բարև ձեզ:

ՄԱՐԴԸ- *(85 տարեկան, սպիտակ մազերով, մորուքով, դասական ոճի զգեստներով, թիթեռնիկ փողկապով):* Բարև ձեզ:

ՏՂԱՆ - *(Երեսուն տարեկան, գեղեցկադեմ, մկանոտ կազմվածքով: Հագին՝ սովորական կարճաթև վերնաշապիկ և տաբատ):* Բարև ձեզ:

ԱՂՋԻԿԸ - *(20 տարեկան. չափազանց գեղեցկատես և բա-*

րեմն: Հագին՝ ծաղկավոր, անճաշակ զգեստ): Բարև ձեզ:

(Մտախոհ, լարված նայում են սրահի ուղղությամբ):

ԿԻՆԸ - *(Շարունակ նայելով սրահի ուղղությամբ)*: Երջանի՞կ եմ ես, թե՞ դժբախտ: Ինքս էլ չեմ կարող պատասխանել: Երբ աղջնակ էի, այնքան սիրում էի կյանքը, ազատությո՛ւնը, ազատամտությո՛ւնը, որ լքելով ծնողներիս, սիրածս տղայի հետ տրվեցի սիրառատ արկածախնդրությունների հորձանքին: Բայց, վեց ամիս անց, նա ինձ լքեց և ես ետ, տո՛ւն վերադարձա: Ծնողներս ինձ չընդունեցին: Մնալով մենակ՝ ինձ համար նոր կյանք սկսեցի: *(Մի պահ լռություն է տիրում)*: Ես կյանքը սիրող աղջիկ էի, ծաղկե ծաղիկ թռչկոտող թիթեռնիկ: *(Ժպիտով)* : Գեղեցիկ էի, հրապուրիչ: Սիրում էի գիշերվա գույնզգույն լույսերը, և երկար շրջազգեստով, բարեձև աստվածուհու պես երբ հայտնվում էի պարահանդեսների սրահներում, հենց այդ պահին ժխորը մեղմանում էր, ես զգում էի, որ բոլոր գայթակղող նայվածքները ինձ էին ուղղված: Ոհ, շատ էի սիրում մերկաբաց ուսերով զգեստները, մանավանդ, երկարաթև ձեռնոցները, որոնք հասնում էին մինչև բազուկներս: Բարեձև սրունքներս՝ տղամարդկանց ուշադրության և կանանց նախանձի առարկան էին դարձել: Ո՞վ ուներ այդպիսի սրունքներ, ո՛հ, ո՛չ, ո՛չ, ո՛չ մի կին, ոչ մի աղջիկ: *(Մի պահ լռություն է տիրում)*: Ժպտո՞ւմ եք, ծիծաղո՞ւմ: Գիտեմ, բայելով ոտքերիս և սրունքներիս այլ բան եք մտածում: Հասկանում եմ, ձեզ չեմ մեղադրում, այսպիսին է կյանքը: *(Հառաչելով)* Այո՛, ես այս քաղաքի ամենացանկալի գեղեցկուհին էի... Ազատամի՛տ, լիբերա՛լ... Բայց շատ շուտ էի սիրահարվում և թռչկոտում էի ծաղկից ծաղիկ: Նվերներ՝ ընդունում էի, բայց դրամ՝ երբեք: *(Մի պահ լռություն է տիրում)* : Բայց ամենադժվարը՝ մենակությունն է: Այո՛, մենակ եմ, և պատճա՛ռը,,, Նախ՝ տղամարդիկ: Նրանք ցանկանում էին ինձ: Բայց չգիտեմ ինչո՞ւ, միայն ժամանակավորապես: Եւ այսպես, մինչև այն պահը, երբ երեսուն տարեկան էի, հանդիպեցի Ֆուֆուին: Ծիծաղո՞ւմ եք: Այո՛, ոչինչ ասել չեմ կարող, «Ֆուֆու» անունը որքան էլ իր իրական անվան փաղաքշական ձևը լինի, ճիշտ որ՝ արտառոց է: Ֆուֆուս գեղեցիկ չէր, մի քիչ էլ տգեղ էր: Շատ խելացի էլ չէր. շատերը բարեմիտ էին համարում, ոմանք էլ՝ միամիտ, ոմանք էլ... Բայց բարի էր Ֆուֆուս, ազնի՛վ, ներողամի՛տ: Սիրում էր իր տան պարտեզի տունկերն ու ծաղիկներն այն աստի-

ճան, որ գիշերները սովորաբար զբաղվում էր ծաղիկներով, և ես ստիպված էի մենակ գնալ պարահանդեսի: Սիրում էր իր գործը: Ֆուֆուս «Ազատամտություն» ռադիոկայանի խոսնակն էր, օրական տասը ժամ խոսում էր ազնիվ նյութերի մասին՝ բարոյախոսություն, մարդասիրություն... պայքար՝ խտրականության դեմ, կանանց իրավունքներն էր պաշտպանում... *(Հուզվում է):* Այո, հուզվում եմ, ոչ թե որովհետև Ֆուֆուս մահացավ տասը տարի առաջ, այլ՝ որովհետև ես շատ էի լսում այն փոքրիկ ձայնասփյուռը, որ Ֆուֆուս էր նվիրել ծննդյանս օրվա առթիվ, որ տանը նստած միշտ իր հետ լինեի, իր ձայնը լսեի: Այո, հուզվում եմ, որովհետև իմ սիրահարներից որևէ մեկը, երբ տուն էր գալիս, ես սպասում էի, որ ռադիոկայանի երաժշտությունը վերջանա, որ Ֆուֆույիս կեսժամանոց ծրագիրը սկսվի: Իր ձայնից ես ապահով էի, գիտեի, որ ռադիոկայանում է: Զգուշությունը լավ բան էր. երբ Ֆուֆուս վերջացնում էր իր խոսքը՝ սիրահարս անմիջապես մեկնում էր: Ձայնասփյուռի գոյությամբ նրանք էլ էին իրենց ապահով զգում: Հակառակ դեպքում, շատերը, սիրաբանությունից տաքացած, չէին էլ լսում ձայնասփյուռի ձայնը, իսկ ոմանք էլ՝ չէին էլ ուզում լսել Ֆուֆույիս ծրագիրը, խրտնում էին, մտովի խանգարվում, այո, այո, նույնիսկ ֆիզիկապես էին... *(Ժպտում է)* Արտառոց էին այդ տղամարդիկ: *(Մի պահ լռություն է տիրում):* Եւ ես այժմ, ամեն առավոտ փոշու լաթով սրբում եմ ձայնասփյուռը, ինձ այնպես է թվում, կարծես թե շոյում եմ սիրելի Ֆուֆույիս, որ միաժամանակ և ամուսինս էր, և հայրս, և եղբայրս: Ահա, այսպիսի երջանիկ կյանքով եմ ապրել: Բայց վեց ամիս առաջ ոտքերիս սրունքները միանգամից սկսեցին ուռչել, ստիպված գնացի բժշկի: «Շատ ես ուշացել,- ասաց բժիշկը և անմիջապես ուղարկեց բժշկական զննության, այնտեղից՝ հիվանդանոց, իսկ վերջնական եզրակացությունը հետևյալն էր. *(Նայելով գետնին)* մնացել է ապրելու շատ քիչ՝ վեց ամսից մեկ տարի: *(Մի պահ լռություն է տիրում):* Անհրաժեշտ դեղեր նշանակեցին, որոնք տրվում էին միայն Առողջապահության նախարարությունից: Դեղատոմսերը ձեռքիս գնացի համապատասխան բաժանմունք: Բազմություն, իրարանցում, նեխած մթնոլորտ: Շվարած, մտածում էի. ում հարցնեմ: Հանկարծ պատի տակ նստած, ձեռքին դեղատոմսեր մի ծեր մարդու տեսա, որը ժպտալով ինձ էր նայում: Մոտեցա, ասացի. «Բարև, պարոն»:

ՄԱՐԴԸ- *(Առանց կնոջը նայելու՝ սրահի ուղղությամբ նայելով)* Բարև, տիկին։

ԿԻՆԸ - *(Միշտ նայելով սրահի ուղղությամբ)* Կներեք, չգիտեմ ինչ անեմ։ Ու՞մ պետք է ներկայացնեմ այս դեղատոմսերը։

ՄԱՐԴԸ- Բացատրեցի իրեն. Նախ՝ առաջին խցիկից պետք է վերցնես մի թիվ, ապա, երբ այդ թիվը տեսնես լուսատախտակի վրա՝ կգնաս երկրորդ խցիկ, այնտեղ համակարգչի վրա գրանցված է դեղատոմսդ։ Իսկ երրորդ խցիկից արդեն դեղդ կստանաս։

ԿԻՆԸ – Ուրեմն հինգ րոպեից դեղս կստանամ։

ՄԱՐԴԸ- Ամենաքիչը՝ մեկ ու կես ժամ։

ԿԻՆԸ – Ո՜հ, ինչ եք ասում, պարոն, մեկ ու կես ժա՜մ...

ՄԱՐԴԸ- Այո՛, այդպես է։ Այստեղ դեղերը անվճար են։ Պետք է սպասենք։

ԿԻՆԸ – Շնորհակալություն, պարոն։

ՄԱՐԴԸ– Խնդրեմ, տիկին։ *(Մի պահ լռություն է տիրում)*։

Քարշ տալով իր հաստ ու հոգնած ոտքերը՝ կինը գնաց և հերթ կանգնեց։ Իսկ ես ութ տարի շարունակ, ամեն ամիս նախարարության դեղերի բաժին գնացող-եկող՝ դեռ հին մտքերիս հետ եմ... Եվ ո՞վ եմ ես։ Մի երեխա, որ ծնվելով և ապրելով բնության հարստության մեջ՝ մշտապես սիրեց ճշմարտությունը։ Բայց մարդիկ, ընդհանրապես, չեն սիրում ճշմարտություն, որովհետև այն կաշկանդում է, ետ պահում ապօրինություններից։ Ես շատերի երեսին եմ ասել իրենց ապօրինությունների մասին, չեմ երկյուղել՝ ճշմարտությունն եմ ասել։ Եւ ինձնից աստիճանաբար հեռացան՝ ծանո՛թ, ընկե՛ր, բարեկա՛մ, իսկ հետո՝ հարազատներս՝ քո՛յր, եղբա՛յր, երեխա՛, կի՛ն։ Եւ ես ճշմարտության հետ մենակ մնացի։ Եւ երբ մարմնիս մեջ բույն դրեց այս անիծյալ հիվանդությունը, ես արդեն մերժված մի մարդ էի շրջապատիս կողմից։ Բայց, պայքարս շարունակեցի։ Ես պայքարում էի այն մարդկանց դեմ, ովքեր մերժում էին Գեղեցի՛կը, Բա՛րին, Նվիրո՛ւմը։ Բայց, կյանքը, այո՛, այո՛, կյա՛նքը հաճախ էր ինձ զգուշացնում. «Մի՛ պայքարիր, երիտասարդ։ Մի՛ տագնապիր, թո՛յլ մարդ։ Ուշադիր նայիր շուրջդ և, ի վերջո, ընդունի՛ր, համակերպվի՛ր, որ դու ի ծնե պարտյալ ես։ Ուզես, թե չուզես, պետք է համակերպվես իրականության հետ։ Այն իրականության, որի ձեռքը ընդմիշտ սեղմում է կոկորդդ։ Ախր, միամիտ ես. շոյիր այդ ձեռքը և զգուշությամբ հեռացրու կոկորդիցդ, որպեսզի չխեղդ-

վես, որպեսզի շնչես, որ ապրես արարածի պես»: (*Մի պահ լռություն է տիրում*): Բայց ես ասացի (*Ճչալով*) «արարած չեմ, ես մա՛րդ եմ, մա՛րդ, մա՛րդ... Ես չեմ ուզում ապրել արարածի, անասունի, ստրուկի կյանքով...» (*Ձեռքերով բռնում է գլուխը*): Ո՜հ, Աստված իմ:

ԿԻՆԸ – Պարոն, ահա իմ թիվը՝ 836:

ՄԱՐԴԸ- (*Ուղղելով գլուխն ու մեջքը*): Ուրախ եմ, տիկին:

ԿԻՆԸ – Կարո՞ղ եմ նստել ձեր կողքի աթոռին:

ՄԱՐԴԸ- Անշուշտ, տիկին: Խնդրեմ:

ԿԻՆԸ – Թիվ 836-ը լա՞վ թիվ է:

ՄԱՐԴԸ- (*Ժպիտով*): Բոլոր թվերի մեջ էլ լավ ու վատը կա, տիկի՛ն: Բոլորն էլ պայմանական են: Այսօր, երբ նախորդ օրերի համեմատ իրարանցումը ավելի է, բնական է, որ ձեր թիվը լավ չի կարելի համարել: Տեսե՛ք, երրորդ խցիկի առջև սպասողի թիվը՝ 637-ն է: Հիմա (*մտովի հաշվելով*) ձեզնից առաջ, կարծես թե... 150 հոգի սպասող կա: Դեռ երկու ժամ էլ ունեք, մինչև ձեր հերթը հասնի:

ԿԻՆԸ – Հասկացա: Ուրիշ ճար չունեմ: Պետք է սպասեմ: (*Մի պահ լռություն է տիրում*): Մի պահ նայեցի շուրջս, հետո մտածեցի, գուցե այս մարդուն հարցնեմ. «Պարոն, սրահում գտնվող մարդիկ բոլորն էլ հիվա՞նդ են»:

ՄԱՐԴԸ– Ո՛չ բոլորը: Նրանցից ոմանք՝ մահվան ներկայությունը զգացող հիվանդներ են, մյուսները՝ հիվանդների հարազատներն են, որոնք մոտալուտ մահվան զգացողությունից դեռևս հեռու են:

ԿԻՆԸ – Ուրեմն նրանք, ովքեր ժպտադեմ են՝ հիվանդներ չեն, իսկ ովքեր տխուր են՝ հիվանդներ են:

ՄԱՐԴԸ– Ճի՛շտ հակառակը, տիկի՛ն: Ընդհանրապես, նրանք, ովքեր ժպտադեմ են, ծանր հիվանդներ են, որոնք զգալով մոտալուտ մահը՝ գիտակցում են կյանքի իրական արժեքը և լի են սիրով: Տեսնո՞ւմ եք, տիկի՛ն, տեսնո՞ւմ եք խմբված երիտասարդներին, որոնք ուրախ-զվարթ զրուցում են: Նրանք, կարելի է ասել՝ մահամերձ են. նրանցից երկուսին ճանաչում եմ: (*Ցույց տալով սրահի ուղղությամբ մի կետ*): Ա՛յ, այն կարճաթև վերնաշապիկով և սովորական տաբատով երիտասարդը 30 տարեկան է: Նաև, այն մեկը՝ այն գեղեցիկ և բարետես աղջիկը՝ ծաղկավոր զգեստով, նա

էլ՝ 20 տարեկան է։ Նրանց թվում է, թե տարիների կյանք ունեն։ Մինչդեռ ես գիտեմ, որ նրանց մի քանի ամիս է մնացել ապրելու, ինչ ասեմ... (*Մի պահ լռություն է տիրում*)։ Բայց... նրանք սիրում են իրար։ (*անդավառությամբ*)։ Սիրում են իրար խենթորեն, անբացատրելի սիրով, որ միայն մահամերձներին է բնորոշ... Այո՛, միայն մահը զգացող-ապրողներին.միայն նրանք գիտեն մեկ օրվա, մեկ ժամի, մեկ րոպեի իսկական արժեքը։ Նրանք ուզում են յուրաքանչյուր րոպեն լցնել ուրախությամբ, իրականանալի երազո՛վ, ու նաև... երազո՛վ... անիրականանալի՜... (*Մեղմ*) ես եմ նրանց, այդ երկուսին սովորեցրել, թե ինչ է սերը և լիարժեք կյանքը... Նրանց բացատրել եմ, թե ինչ է արևածագը... հրաշալի արևածագը...

ՏՂԱՆ - Արևածա՛գ... ես քաղաք եմ եկել լեռների գագաթին թառած այն փոքրիկ գյուղաքաղաքից, որը շատ մոտ է երկնքին և Աստծուն։ Հայրական աշխատավայրում, շրջապատված բազմաթիվ աշխատակիցներով, ես ապրում էի բարեկեցիկ կյանքով։ Մեր լեռների, ժայռերի պես՝ առողջ և տոկուն։ Բայց մի օր... կյանքն անակնկալ մատուցեց... Անհույս էր վիճակս։ Բժիշկը փորձում էր համոզել, որ համակերպվեմ և սպասեմ վերահաս մահվան։ (*Կրքով*)։ Բայց ես, որ ողջ կյանքումս շրջապատիս պարտադրել էի ինձ ենթարկվել՝ ինչպես կարող էի հոժարակամ համակերպվել մահվան և չպայքարել։ (*Քմծիծաղով*)։ Այո՛, ընտանիքս ուզում էր, որ անկողնում մնալով, մոմի պես հալվեմ, սպառվեմ։ Մերժեցի՛։ Եւ լքելով ամեն ինչ՝ եկա այս խոնավ, տխուր, ապականված քաղաք։ Տարբեր տեղեր շրջելով, հասա այստեղ, ուր մարդիկ դեռ չեն կորցրել ապրելու հույսը։ Եւ մի օր էլ, պատահաբար հանդիպեցի մի ծեր մարդու, որը ութ տարի շարունակ գալիս է այստեղ դեղեր ստանալու։ Հարցրեցի. «Ի՞նչ հիվանդությամբ եք տառապում, պարոն»։

ՄԱՐԴԸ– Հրաշալի արևածագով...

ՏՂԱՆ – Նա չցանկացավ հիշել իր հիվանդության անունը, և այն կոչեց.

ՄԱՐԴԸ– Սպասում...

ՏՂԱՆ - Բայց ութ տարի շարունակ դեղերդ ես ընդունում ու դեռ ողջ ես...

ՄԱՐԴԸ– Որովհետև հավատում եմ, որ վաղը դարձյալ տես-

նելու եմ հրաշալի արևածագը:

ՏՂԱՆ - *(Դառը ժպիտով):* Խաբկանք… Իսկ մյուս օ՞րը…

ՄԱՐԴԸ- Ես մտածում եմ միայն վաղվա արևածագի մասին, երիտասա՛րդ: Ահա՛, այսօր, առավոտյան, հիվանդության օրվանից սկսած, 2876-րդ արևածագը ցոլցլաց հորիզոնից: *(Մի պահ լռություն է տիրում):* Դեռ մութ էր, բայց ես՝ խե՛նթ, անհամբե՛ր, անհանդա՛րտ մի սիրահարի պես սպասում էի արևածագին, քանի որ ապրել էի ուզում: Պետք է ապրեի… *(Կրքով):* Գիտեի. ևս մեկ օր ես պետք է ապրեի: *(Մեղմ):* Եւ հանկարծ հորիզոնի ետևից լույսի մի նշույլ բարձրացավ վեր: Հույսի մի նշույլ… Այդ ես էի, որ վաղվա հետ վերածնվում էի՝ ևս մեկ օրվա համար: Եւ ահա՛, լույսը աճելով՝ տարածվեց: Ես տեսա տեսիլքը, որ լույսերի միջից, կամաց-կամաց տեսանելի էր դառնում. մի երեխա էր դեպի ինձ գալիս՝ կյանքի դափնեպսակը ձեռքին: Նա դափնեպսակը մեկնում էր ինձ, և ես դողդոջուն ձեռքերով վերցնո՛ւմ էի, վերցնո՛ւմ էի, երևակայո՞ւմ ես, կյանքի դափնեպսակը: Ո՜վ, ո՞վ կարող է ապրել այս բացառիկ պահը, եթե ոչ՝ միայ՛ն այն մահամերձը, որ ամեն օր, ամեն ժամ ու րոպե սպասում է վաղվա արևածագին…

ՏՂԱՆ - *(Շփոթված):* Ուրեմն… արևածա՛գը: Արդյոք այն աղոթք է: Արդյոք՝ աղոթքի խո՞րքն է… թե աղոթքի խռովքը…

ՄԱՐԴԸ– Խորացի՛ր: Խորհի՛ր: Սպասի՛ր: Ու երբ գա պահը՝ գրկի՛ր արևածագը:

ՏՂԱՆ - Ես օրեցօր համոզվեցի, որ ամեն մի արևածա՛գ նոր, անծանոթ մի տեսիլք է պարփակում իր մեջ: Ես… ամեն օր եմ սպասել արևածագի…

ԱՂՋԻԿԸ - *(Չնայելով տղային. նայելով սրահի ուղղությամբ):* Եւ մի օր էլ, երբ դեղերի բաշխման այս սրահում հանդիպեցի նրան, նա ինձ ասաց.

ՏՂԱՆ – Ինչո՞ւ ես տխուր, մանուշակի նման թախծոտ աղջիկ…

ԱՂՋԻԿԸ - Ես զարմացա և հարցրի այդ սիրուն տղային. ինչպե՞ս իմացար, որ ես մի թախծոտ մանուշակ եմ:

ՏՂԱՆ – Որովհետև քո տխուր աչքերում երազ կա…

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, «երազ» ասաց այդ սիրուն տղան… Այո՛, ես շատ եմ սիրում երազել, որովհետև իմ մեջ ընդմիշտ ապրում է մանկությունս… այսինքն՝ ծաղկավաճառ այն աղջիկը, ընդամենը

ութ տարեկան. մանկապարտեզից ինձ որդեգրած ծեր այն կնոջ ստիպողությամբ. նա մեկ տարի առաջ մահացավ, ես նրա բռնություններից ազատվելով, մնացի մենակ, բայց գործս շարունակեցի՝ մնալով, ինչպես ինձ կոչում էին «Ծաղկավաճառ տխուր աղջիկը»: Ձախ ձեռքիս՝ միշտ ծաղիկների զամբյուղը, աջ ձեռքիս միշտ մի ծաղիկ, միշտ ժպտերես, միշտ նո՛յն մայթի վրա, նո՛յն տեղում, տարինե՛ր... տարինե՛ր շարունակ... կյանքի նման երկար ու ձիգ տարինե՛ր... *(Ոտքի ելնելով՝ ձախ ձեռքը կրծքին սեղմած, աջ ձեռքը երկարելով սրահի ուղղությամբ)*: «Պարո՛ն, ահա՛, ձեզ համար թարմ ծաղիկներ եմ հավաքել: Գնե՛ք, որ ձեր կյանքը լցվի կյանքի բուրմունքով... Խնդրում եմ, խնդրում եմ, մի մերժեք» *(Կիսով չափ շրջվելով)* «Ո՜հ, տիկին, դուք վարդի նման գեղեցիկ եք, ես ձեզ համար դաշտերից մանուշակներ եմ հավաքել: Խնդրում եմ, խնդրո՛ւմ եմ, մի՛ մերժեք»: *(Շրջվելով մի փոքր այլ կողմ)*: «Իսկ քեզ համար, երիտասարդ, որ մենությանդ մեջ սուզված, քմծիծաղով ես նայում կյանքին, տե՛ս, բերել եմ աշխարհի լավագույն նունուֆարները, որոնց թերթիկների վրա ինքդ քեզ կտեսնես: Խնդրում եմ, մի՛ մերժիր, երիտասարդ»: *(Կտրուկ նայելով դեպի սրահի խորքը)* «Իսկ քե՛զ համար, ծերունի պարոն, այս անթառամները քաղել եմ լեռների և ժայռերի վրայից... *(Զարմացած)* Բայց, ինչո՞ւ ինչո՞ւ եք մերժում անթառամ ծաղիկները, ասում եք շատ են նման արհեստական ծաղիկների... *(Ժպիտով)* Այո՛, դուք ճիշտ եք, կյանքի չարն ու բարին ճանաչող իմ լավ ծերունի: Ուրեմն, խնդրո՛ւմ եմ, դե՛ն նետեք այդ անթառամ ծաղիկները: *(Ուրախ)* Ահա՛, ձեզ նվիրում եմ մի թարմ, կարմիր մեխակ, թողեք այն անցկացնեմ ձեր լամբակին: Ո՛չ, ո՛չ, խնդրում եմ, պարոն, ի՞նչ արժի մի մեխակը, ո՛հ, ոչի՜նչ, ոչի՜նչ: Մինչդեռ նրա իրական արժե՛քը... իրական իմա՛ստը... Գնաք բարով, բարի ճանապարհ: Շնորհակալ եմ, որ չմերժեցիք: Ահա՛, դուք ժպտացիք և ես լիովին ինձ վարձատրված եմ զգում: Գնաք բարով, պարոն... Դուք՝ Մա՛րդ, Մա՛րդ...»: *(Նստում է աթոռին)*;

(Մի պահ լռություն է տիրում):

ՏՂԱՆ - Անհանդուրժելի է, անհանդուրժելի... Աստծո ստեղծած հրաշալիք՝ ծաղիկներով ապրող աղջիկը՝ սեր և խանդավառություն ունեցող կյանքի հանդեպ և հանկարծ... մարմնի մեջ հայտնված ֆիզիկական ցավը աճելով՝ ոչնչացնում է հոգին:

ԱՂՋԻԿԸ – Ո՛չ, ո՛չ, հոգիս՝ անվնաս է: Ես հավատում եմ արևածագին:

ՏՂԱՆ - *(Երազկոտ)*: Ո՜հ, այնքան եմ ցանկանում քեզ առնել թևերիս մեջ և դիտել արևածագը՝ շնչելով մազերիդ բույրը... և զգալ, որ կյանքը՝ դո՛ւ ես, դո՛ւ, որ ամեն օր արևածագին վերածնվում է...

ԱՂՋԻԿԸ - Այո՛, շուտով, շատ շուտով միասին պետք է դիմավորենք այդ հրաշալի արևածագը, որի տեսիլքով և սպասումով մենք դեռ ապրում ենք...

ՄԱՐԴ - ... մենք՝ լքվածներս, կյանքի լուսանցքում ապրողներս, և նաև ըմբոստներս: Մենք, միայն մենք ենք զգում, թե ինչպես են մարդիկ ընթանում դեպի առանձնություն, և ինչպես է նրանց միջև աստիճանաբար նվազում փոխադարձ կապը, ջերմությունը...

ԿԻՆԸ – Ո՜հ, սիրելիս, եթե իմանաք, թե ես ի՜նչ անկյուններից եմ դիտել արևածագը: Բայց ամեն անգամ ինձ անհասկանալի է թվացել, ամեն անգամ՝ տարբեր... *(Մի պահ լռություն է տիրում)*: Սակայն անցյալ օրը, ի վերջո, հասկացա: Վստահ եմ, նա՛ էր՝ հրաշալի արևածա՛գը: Անկասկած, ավելի գեղեցիկ ու ավելի իմաստալից, քան Մարդու տեսած տեսիլք-արևածագը, մի մանուկ դափնեպսակ էր մեզ բերում: *(Մի պահ լռություն է տիրում)*: Ես տեսա՛... *(Շփոթված)* Ո՜հ, ինչպե՜ս կարելի է բացատրել... անծանո՛թը... անբացատրելի՜ն... Եկե՛ք, սիրելիներս, վաղը երեկոյան անպայման եկե՛ք իմ տուն: Եկե՛ք խնջույքի. և մենք միասին, նախ դիմավորենք խավարը, այնուհետև ողջունենք այդ հրաշալի արևածագը...

(Լույսերը հանգչում են: Լսվում է ժամանակակից զվարթ երաժշտություն):

Ա. ԱՐԱՐ

(Լսվում է ժամանակակից զվարթ երաժշտություն: Ապա բացվում է վարագույրը: Երաժշտությունը տևում է 2-3 րոպե: Կնոջ տան հյուրասենյակը՝ սպիտակ, բաց վարդագույն և բաց մանուշակագույն գույներով: Աջ կողմում դեպի պարտեզ բացվող մուտքի դուռ: Ձախ կողմում՝ ննջարան տանող դուռ: Մուտքի դռան մոտ՝ խոհանոց տանող միջանցք: Դիմացի պատին կախված են Կնոջ և Ֆու-

ֆույի մեծադիր նկարները, որոնց տակ մի լրագրասեղան, որի վրա՝ հին ձայնասփյուռ, երկու կողմերում արհեստական ծաղիկներով ծաղկամաններ: Ժամանակակից ոճի կահույք. բազկաթոռներ, մի բազմոց, ցածրադիր սեղաններ, արձանիկներ և այլն: Ցածրադիր սեղանի վրա՝ խմիչքի բազմաթիվ շշեր, աղանդերներ:

Քիչ անց, երաժշտությունը դադարում է: Ննջարանի կողմից բեմ է մտնում Կինը՝ երեկոյան պաշտոնական զգեստով, պարանոցին՝ վզնոցներ, ապարանջաններ, մազերին՝ փոքրիկ թագ-ծամակալ):

ԿԻՆԸ – Ուր որ է՝ շուտով կգան: *(Նայելով թևի ժամացույցին):* Արդեն ժամը տասնմեկ անց է: Ուշացան: *(Տան մուտքի դուռը բացելով, երկինք նայելով)* Աստղազարդ երկինք է: Անկասկած, այս պայծառ եղանակին՝ արևածագը բացառիկ պետք է լինի... *(Խորունկ շնչում է):* Ո՜հ, կյա՛նք, կյա՛նք... դո՛ւ երջանկություն ես *(Դուռը փակում է, նայում է շուրջը)* Ամեն ինչ իր տեղն է. *(մատով ցույց է տալիս)* խմիչքները՝ 14 շիշ, աղանդերներ, պիստակ, նուշ... Մրգեղենը և քաղցրեղենը դեռ խոհանոցում են, հետո կբերեմ: Լա՛վ: Ամեն ինչ կատարյալ է: *(Հանկարծ ցնցվում է)* Ո՜հ, Աստված իմ: Ինչպես էի մոռացել. Ֆուֆո՛ւս, Ֆուֆո՛ւս... *(Մոտենում է ձայնասփյուռին):* Ինչո՞ւ եմ անջատել: *(Միացնում է՝ շոշափելով ձայնասփյուռը, մտովի խոսում է)* Ֆուֆո՛ւս... Ֆուֆո՛ւս... այսօր հյուր ունենք. Մա՛րդը, Տղա՛ն և Աղջի՛կը գալու են: Պետք է հին օրերիս հաճույքը ապրե՛մ, զվարճանա՛մ: Տե՛ս, ամեն ինչ պատրաստել եմ, որպեսզի երեկոն ուրախ անցկացնենք և չձանձրանանք մինչև արևածագ: Ո՜հ, Ֆուֆո՛ւս, հիշո՞ւմ ես այն օրը, երբ առավոտվա կողմ տուն եկա, և քեզ գտա տան դռան առջև՝ երկինք նայելի՛ս: Ասացի՛. «Ֆուֆո՛ւս, այս ժամին ի՞նչ ես անում դրսում: Ի՞նչ է, երկնքում թռչող սկավառակնե՞ր ես փնտրում»: Դու ժպտացի՛ր, իմ անուշի՛կ Ֆուֆո՛ւս, և ասացի՛ր. «Արևածա՛գն եմ դիտում»: Ասացի՛ր. «Կի՛ն, դո՛ւ էլ դիտիր արևածագը»: Բայց ես գինով էի, և ինձ անմիջապես սթափվել էր պետք, մինչև կհասնեի բաղնիք...

(Հնչում է դռան զանգ)

ԿԻՆԸ - Ա՜հ, արդեն եկա՛ն: *(Բացում է դուռը):*

(Ներս են մտնում Մարդը, Տղան և Աղջիկը: Նույն զգեստներով են: Մարդու և Տղայի ձեռքին՝ խմիչքի շշեր, Աղջկա ձեռքին՝ մեկ կարմիր վարդ):

ԱՂՋԻԿ – Տիկին, այս կարմիր վարդը ձեզ, քիչ առաջ եմ քաղել, տեսեք, վարդի վրայի լուսնի շողը...

ԿԻՆԸ - *(Վերցնելով վարդը՝ համբուրում է Աղջկան):* Շնորհակալություն, աղջիկս:

(Վերցնելով խմիչքի շշերը տղամարդկանց ձեռքից, ողջագուրվում է նրանց հետ) Շնորհակալություն, պարոն:

ՄԱՐԴԸ– Խնդրեմ, տիկին:

ԿԻՆԸ – Ո՛հ, մերսի, երիտասարդ:

ՏՂԱՆ – Չարժե, տիկին:

ԿԻՆԸ – Խնդրեմ, խնդրեմ, ներս եկեք, նստեք: *(Հյուրերը նստում են: Տղան և Աղջիկը՝ բազմոցի վրա, իրար շատ մոտ և դիտում են իրենց շուրջը):* Հիմա, հիմա, շշերը դնեմ այստեղ՝ սեղանին: Ո՛հ, կներեք, մի փոքրիկ ծաղկաման գտնեմ այս գեղեցիկ կարմիր վարդի համար, որ շուտ չթառամի: *(Մտնում է խոհանոց):*

(Հյուրերը շարունակում են իրենց շուրջը նայել):

ՏՂԱՆ – Ֆուֆուն:

ԱՂՋԻԿԸ - Ա՛հ, այդ նկարը Ֆուգոյի նկարն է:

ՏՂԱՆ - (Ծիծաղելով): Ես նկատի ունեի, ահա, այն՝ ձայնասփյուռը: Իրական Ֆուֆուն նա է:

ԱՂՋԻԿԸ - *(Հանդիմանանքով)* Հոգիս, ամոթ է. մեռած մարդու վրա չեն ծիծաղում:

ՄԱՐԴԸ– Մի քիչ նրբանկատ եղեք: Տիկինը կարող է ձեր խոսակցությունը լսել:

(Ներս է մտնում Կինը՝ ձեռքին փոքր ծաղկաման, որի մեջ դրված է վարդը):

ԿԻՆԸ - Ահա, դնեմ ձայնասփյուռի մոտ, մյուս ծաղիկների կողքին:

ԱՂՋԻԿԸ - Այդ ծաղիկները իսկական են, տիկին, թե...

ԿԻՆԸ - *(Նստելով)* Արհեստական են. երեսուն տարի առաջ Ֆուֆուս է ինձ նվիրել: Գեղեցիկ են, չէ՞...

ՏՂԱՆ - *(Ժպիտով)* Այո, շատ նման են իսկական ծաղիկների:

ԱՂՋԻԿԸ - Այսինքն... Այդ ծաղիկները բուրմունք ունեն, տիկին:

ԿԻՆԸ - Ա՛հ, գիտեք, արհեստական են: Երբ Ֆուֆուս այս ծաղիկները բերեց, ներարկիչով վարդաբույր օծանելիք էր սրսկել:

Բայց, որոշ ժամանակ անց հոտը ցնդեց և ծաղիկների վրա փոշի նստեց: Խեղճ ֆուֆուս ամեն Նոր Տարի նույն վարդաբույրն էր սրսկում: Իսկ իր մահվանից հետո, ես ոչ մի բան չեմ արել...

(Մի պահ լռություն է տիրում):

ԿԻՆԸ - Էհ, ինչպե՞ս եք, լա՞վ եք:

ՄԱՐԴԸ– Լա՛վ: Լա՛վ:

ԿԻՆԸ – Փա՛ռք Աստծո: *(Մի պահ լռություն է տիրում):* Դու ինչպե՞ս ես, աղջիկս:

ԱՂՋԻԿԸ - Այսինքն... չեմ հասկանում, թե ի՞նչ եք հարցնում: Չգիտեմ, արդյոք կարելի՞ է, որ մահամերձները՝ հարցնեն մահամերձների որպիսությունը, երբ ապրելու քիչ ժամանակ է մնացել...

ԿԻՆԸ – Ճի՛շտ ես: Բայց... գիտե՞ս... մի տեսակ... ի՞նչ անեմ... ձևականություն է...

ՄԱՐԴԸ- Անիմաստ ձևականություն է նաև պատասխանը *(ժպիտով)* «Լա՛վ եմ»:

ԱՂՋԻԿԸ – Ուրիշ բաներից խոսենք. մի՛ մոռացեք, որ մենք եկել ենք այստեղ՝ հրաշալի արևածագը դիտելու համար...

ՏՂԱՆ - *(Գրկելով աղջկան)* Այո՛, հրաշալի՛ արևածագը:

ԿԻՆԸ – Ուրեմն, լցնենք բաժակները...

ՏՂԱՆ - *(Զվարթորեն)* Լցնենք բաժակները՝ կյանքի խմիչքով...

ԱՂՋԻԿԸ - Կամ կյանքի ծաղիկներով... կյանքի բուրմունքով...

ԿԻՆԸ - *(Ելնելով ոտքի)* Ի՞նչ եք ուզում խմել:

ՄԱՐԴԸ- Ես՝ մի բաժակ ջուր:

ԿԻՆԸ – Ջո՞ւր՞: Ո՜հ, չի՛ կարելի, պարոն, ինչո՞ւ ջուր, այսօր մենք պետք է խմենք՝ սպասելով հրաշալի արևածագին:

ՏՂԱՆ – Չնայած բժիշկը ինձ արգելել է ալկոհոլը, բայց այսօր պետք է խմեմ: Սկզբում՝ վիսկի, կրկնակի, առանց սառույցի:

ԿԻՆԸ - Անուշիկ օրիորդ, իսկ դո՞ւ:

ԱՂՋԻԿԸ – Օրանժ-ժյուս:

ՏՂԱՆ – Օրանժ-ժյո՞ւս: Այսօր՝ օրանժ-ժյո՞ւս... բայց չի կարելի, հոգի՛ս: Գոնե մի քիչ վիսկի կամ գարեջուր...

ԱՂՋԻԿԸ - *(Ձղային)* Ո՛չ, ո՛չ... Հիվա՛նդ եմ, հիվանդ:

ԿԻՆԸ - Այսօր հիվանդ չենք: Բոլորս էլ հիվանդ չենք: Ես պետք է խմեմ կոնյակ, ապա՝ վիսկի, հետո՝ պլատի Մերի, իսկ

հետո՝ գարեջուր, ներսս մաքրելու համար:

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, տիկին: Կոնյա՛կ-վիսկի՛-պլատի-Մեյրի՛-գարեջո՛ւր: Ինչպե՜ս կարելի է, տիկի՛ն, կմեռնե՜ք: Ձեր ոտքերը ավելի կուռչեն:

ՏՂԱՆ - Բայց տիկինը ինչո՞ւ պետք է մեռնի: *(Աղջկան՝ խնդրելով):* Հոգի՛ս, վիսկի խմիր:

ԱՂՋԻԿԸ - *(Համառելով)* Ո՛չ, օրանժ-ջյուս:

ԿԻՆԸ – Օրանժ-ջյուս չունեմ, աղջիկս:

ԱՂՋԻԿԸ – Չունե՞ք: Ուրեմն, մի բաժակ ջուր:

ԿԻՆԸ - *(Դժգոհ)* Շատ բարի: Ուրեմն. մեկ կրկնակի վիսկի, մեկ կոնյակ և երկու բաժակ ջուր: *(Մի բաժակ և վիսկիի շիշը դնելով Տղայի դիմաց):* Բաժակը դո՛ւ լցրու, ինչքան ուզում ես և շարունակի՛ր: Ապրե՛ս, երիտասարդ, շիշը դիմացդ է: *(Դժգոհ)* Գնամ ջուր բերեմ: *(Մտնում է խոհանոց)* :

ՏՂԱՆ - *(Լցնելով իր բաժակը)* Ինչպիսի՜ն է այսօրվա հայտագիրը:

ՄԱՐԴԸ– *(Նայելով ժամացույցին)* Մոտավորապես մինչև արևածագ դեռ հինգ ժամ ունենք:

ԱՂՋԻԿԸ - *(Տղային)* «Հայտագիր» ասելով ի՞նչ նկատի ունես:

ՏՂԱՆ - Այսինքն, ի՞նչ անենք հինգ ժամ: *(Ջղային)* Հույս ունեմ, որ հինգ ժամ ջուր չպետք է խմես: *(Խմում է):*

ԱՂՋԻԿԸ – *(Խնդրելով)* Մի՛ նեղվիր, հոգի՛ս:

(Ներս է մտնում կինը՝ ձեռքի ափսեի վրա երկու բաժակ ջուր, որոնք դնում է Մարդու և Աղջկա մոտ գտնվող ցածրադիր սեղանների վրա):

ԿԻՆԸ – Հիմա լցնեմ կոնյակս: *(Մի մեծ բաժակի մեջ կոնյակ է լցնում):*

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, այդքան մեծ բաժա՛կ: Տիկի՛ն, միթե՞ այդ ամբողջ կոնյակը պետք է խմեք:

ԿԻՆԸ - Այս ինչ է որ. միայն սկիզբ:

ՏՂԱՆ – Տիկի՛ն, դեռ հինգ ժամ կա մինչև արևածագ: Ինչպիսի՜ն է հայտագիրը: *(Խմում է):*

ԿԻՆԸ – Խմենք, զվարճանանք, պարենք: Ա՛յս է կյանքը: *(Մի պահ լռություն է տիրում: Նայում են իրար):* Այո՛, ա՛յս է կյանքը: *(Մեղմ)* Վերջն էլ... արևածագ...

ՄԱՐԴԸ– Հրաշալի՛ արևածագ:

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, ինչո՞ւ է ուշանում հրաշալի արևածագը: Երանի հիմա՛, հիմա՛ գա...

ՄԱՐԴԸ- Աղջի՛կս, ամեն ինչ՝ իր ժամանակին:

(*Մի պահ լռություն է տիրում*):

ՏՂԱՆ - Գիտեք, ես ատում եմ այս լռությունը: (*Ջղային*) Ատո՛ւմ եմ ատո՛ւմ: Այս լռությունը մեռելային չե՞ք համարում: Խոսե՛ք, ինչո՞ւ եք լռում: Մի բա՛ն ասեք: Ինչ որ բանով լցրե՛ք այս լռությունը: (*Լցնում է իր բաժակը և խմում*):

ԱՂՋԻԿԸ - Խոսե՞լ ես ուզում: Այո՛, խոսե՛նք: Օրինակ. (*Նայելով շուրջը*) խոսենք Տիկնոջ պատից կախված նկարի մասին: (*Հիացմունքով*) Ո՜հ, ինչպիսին եք եղել երիտասարդ ժամանակ, տիկի՛ն: Ով գիտե, ինչ սրտեր եք այրել...

ԿԻՆԸ - (*Հուզված*) Այո՛, այո՛... ո՜հ, շա՛տ... շա՛տ...

ԱՂՋԻԿԸ - (*Նայելով նկարին*) Աստվա՜ծ իմ, ինչ հրաշալի է ձեր զգեստը, տիկի՛ն: Եւ ձեր մինչև բազուկները հասնող երկար, նրբագեղ ձեռնոցները...

ԿԻՆԸ - (*Հուզված*) Ձեռնոցներ... ժանյակե ձեռնոցներ...

ԱՂՋԻԿԸ - Տիկի՛ն, հիշո՞ւմ եք, երբ դեղերի սրահում մի օր զրուցում էինք, դուք ինձ խոստացաք նվիրել ժանյակե ձեռնոցներ:

ԿԻՆԸ - (*Հուզված՝ ցույց տալով իր նկարը*) Այո՛, այո՛, սրանք ժանյակե ձեռնոցներս են: Պետք է քեզ նվիրեմ: (*Ուրախ*) Նաև այդ զգեստը կնվիրեմ, եթե ուզում ես, դեռ նոր է... (*Խոր հուզմունքով*) Նոր ես նաև դու՝ ծաղկավաճառ անուշի՛կ աղջիկս... Իսկ ես... ես...

ԱՂՋԻԿԸ - (*Գրկելով Կնոջը և նրան ցույց տալով պատի նկարը*) Մի՛, մի՛ հուզվիր, տիկի՛ն: Նայի՛ր, նայիր անցյալի նկարիդ և ուրախացի՛ր... և հպարտացի՛ր... Դու արևածագի նման անցյալում գեղեցիկ ես եղել... տիկի՛ն... տիկի՛ն...

ԿԻՆԸ – Նստի՛ր, նստի՛ր, աղջի՛կս և սպասի՛ր: Իսկ ես գնամ ննջարան և բերեմ զգեստն ու ձեռնոցները: Բայց պետք է քեզնից խնդրեմ, որ հենց այս գիշեր հագնես, որ մինչև արևածագ քեզ դիտելով՝ հիշեմ երիտասարդությո՛ւնս, անցյա՛լս, կյա՛նքս: Գնա՛մ, գնա՛մ ննջարան, բերեմ: (*Մտնում է ննջարան*):

ԱՂՋԻԿԸ - (*Դիտելով տղամարդկանց*) Ինչ ազնիվ է Տիկինը:

ՄԱՐԴԸ– Նա զգում է, որ մահը շատ մոտ է:

ՏՂԱՆ - (*Ջղային*) Շատ մի օգտագործիր այդ բառը:

ՄԱՐԴԸ- *(Դառը ժպիտով)* Ո՞ր բառը:

ՏՂԱՆ – Մահ:

ՄԱՐԴԸ- Ասում եմ ճշմարտությունը:

ՏՂԱՆ - *(Ճչալով)* Ո՛չ, ո՛չ: Ճշմարտությունը՝ կյանքն է: Միայն կյա՛նքը:

ՄԱՐԴԸ– Կյանքը՝ սովորական հանգրվան է... Մինչդեռ՝ մահը...

ՏՂԱՆ - *(Ընդմիջելով)* Լա՛վ, այլևս չխոսես մահվան մասին, հանգիստ ջո՛ւրդ խմիր: Վերջերս նկատել եմ, որ քո այդ փիլիսոփայական , բարոյախոսական խոսքերը՝ կեղծիք են: Եւ քո ազնիվ խոսքերի ետևում՝ մի ուրիշ անձ է թաքնված: *(Իր բաժակը լցնում է վիսկիով):*

ԱՂՋԻԿԸ - *(Վրդովմունքով)* Ինչե՞ր ես ասում, հոգի՛ս: Կարո՞ղ եք, մի պահ խաղաղվեք: Եւ եթե ձեզ նեղում են «Կյանք» և «Մահ» բառերը՝ խոսենք «Հրաշալի արևածագի» մասին:

ՄԱՐԴԸ- *(Ծիծաղում է, ծիծաղում է երկար՝ առանց որևէ բառ ասելու)*

(Ներս է մտնում Կինը):

ԿԻՆԸ – Ո՜հ, ինչ ուրախ եմ, որ զվարճանում եք: *(Մարդը լռում է)* Աղջի՛կս, գնա՛ ննջարան: Զգեստը, ձեռնոցնե՛րը, բարձրակրունկ կոշիկնե՛րը անկողնու վրա են: Դրանք արդեն քոնն են: Հագնվի՛ր և եկ... Քե՛զ ենք սպասում:

ԱՂՋԻԿ - *(Ուրախ)* Ո՜հ, տիկի՛ն, դուք նման եք գեղեցիկ հավերժահարսի, որը գավազանի հարվածով հրաշքներ է գործում... *(Համբուրում է կնոջը):*

ԿԻՆԸ - Գնա՛, աղջիկս, գնա՛:

(Աղջիկը մտնում է ննջարան: Կինը նստելով թիկնաթոռին՝ լցնում է իր բաժակը):

ԿԻՆԸ – Հիմա կտեսնեք, թե ինչ հրաշալիքի է նա վերածվելու:

ՏՂԱՆ - *(Ոտքի ելնելով)* Գնամ ննջարան, օգնեմ: *(Խմում է բաժակի ամբողջ պարունակությունը և մտնում է ննջարան):*

ԿԻՆԸ – Ո՜հ, բայց ինչ համարձակն ես...

ՄԱՐԴԸ– Մի՛ զարմացեք: Նրանք իրար շատ են սիրում, որովհետև երիտասարդ են և մահը նրանց շատ մոտ է...

ԿԻՆԸ – Մի՛ խոսիր մահվան մասին, պարոն: Պետք չէ՛ հիշ-

ել...

ՄԱՐԴԸ– Պետք չէ հիշել...*(Ծիծաղում է երկար՝ առանց որևէ բառ ասելու, մինչև որ աստիճանաբար հանգչում են բեմի լույսերը և 2-3 րոպե լսվում է զվարթ երաժշտություն):*

(Մի պահ լռություն է տիրում: Ապա, աստիճանաբար լույսերը վառվում են: Կինն ու Մարդը նստած են նույն բազկաթոռներին):

ԿԻՆԸ – Սրանք կես ժամ է ներսում են՝ ննջարանում... երկար մնացին.: Տեսնես ինչ են անում: *(Մի պահ լռություն է տիրում):*

(Բացվում է ննջարանի դուռը, և հայտնվում է աղջիկը՝ հագին Տիկնոջ կարմիր կարճափեշ, ուսերը բաց հագուստով, ժանյակե ձեռնոցներով, բարձրակրունկ կոշիկներով):

ԱՂՋԻԿԸ - Եւ ահա ես՝ Տիկինը՝ երեսուն տարի առաջ:

ԿԻՆԸ - *(Հուզված)* Ո՜հ, հրաշալի՜ է, հրաշալի՜... ես... ես... Բայց դա՝ դո՜ւ ես, ծաղկավաճառ աղջիկ... դո՜ւ՝ երեսուն տարի առաջ...

(Ննջարանի բաց դռնից ներս է մտնում Տղան՝ հագած Ֆուֆուի ճիշտ պատից կախված նկարի հագուստները):

ՏՂԱՆ - Ահա՜ և ես՝ Ֆուֆուն, երեսուն տարի առաջ...

ԿԻՆԸ - *(Հուզված)* Ո՜հ, Ֆուֆո՜ւս... Աստվա՜ծ իմ, ինքն է, ինքը... Բայց նա բարի էր, համեստ... Ո՜հ, այո՜, այո՜... Ֆուֆույիս այդ հագուստները, երիտասարդ, քեզ եմ նվիրում:

ՏՂԱՆ - *(Ազնվականի պես խոնարհվելով)* Շնորհակալությո՜ւն, դքսուհի:

ԿԻՆԸ - *(Զարմացած)* Դքսուհի՞: Ինչպե՞ս իմացար:

ՏՂԱՆ – Ննջարանի պատից կախված քո կիսամերկ նկարի Ֆուֆույի արած մակագրությունից՝ *(արտիստիկ տոնով)* «Իմ անգին դքսուհի՜ս, որն ունի աշխարհի ամենագեղեցիկ սրունքներն ու... ու...»:

ԿԻՆԸ – Սխալվեցի՛ր: Այդ նկարի մակագրությունը արել է ինձ լուսանկարող բանաստեղծ բարեկամս՝ իմ սիրահարներից մեկը... Ասում էր՝ դքսուհի... դքսուհի... և դեռ ինչե՜ր, ինչեր չէր ասում... Էհ, օրե՛ր, օրե՛ր, ի՜նչ օրեր էին...

ՏՂԱՆ - *(Բռնելով աղջկա ձեռքը)* Դքսուհի, արդյոք կցանկանա՞ս հաջորդ պոլկան պարել բանաստեղծիս հետ:

ԱՂՋԻԿԸ - Անշո՜ւշտ, պարոն բանաստեղծ, եթե խոստանաք

մի պոեմ գրել իմ տխուր մանուշակների մասին…

ԿԻՆԸ – Խնդրո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ չշարժվեք, այդպես լավ է… Ես հիմա կմիացնեմ երաժշտությունը, որ պարեք:

(Աղջիկն ու տղան անշարժացած սպասում են, կինը մոտենում է ձայնասփյուռին և միացնում, լսվում է տանգոյի եղանակ: Աղջիկն ու տղան իրար փաթաթված՝ պարում են: Կինը մի պահ հիացած դիտում է պարող երիտասարդ զույգին: Այնուհետև մոտենում է Մարդուն):

ԿԻՆԸ - Անանո՛ւն պարոն, ես այն անանունն եմ, որ սիրով ձեզ պարի է հրավիրում:

ՄԱՐԴԸ- *(Ելնելով ոտքի)* Ձեր առաջարկը ընդունում եմ, անանո՛ւն տիկին: *(Բռնում է կնոջ մեջքն ու ձեռքը և իրենից որոշ հեռավորության վրա պահելով՝ սկսում են պարել: Քիչ անց):* Գիտե՞ս, ժամանակը մոտենում է:

ԿԻՆԸ - Արևածագի՞…

ՄԱՐԴԸ- *(Ծիծաղում է երկար՝ առանց որևէ բառ արտաբերելու, մինչ այդ կինը զարմացած նայում է նրա աչքերին):*

(Երաժշտության ձայնը ուժգնանում է և Մարդու ծիծաղը այլևս չի լսվում… Քիչ անց, Մարդը՝ արտիստիկ կնամեծարությամբ Կնոջը մոտեցնում է թիկնաթոռին, և ինքն էլ նստում է իր տեղը: Երաժշտության ձայնը աստիճանաբար մեղմանում է և լռում: Տղան և Աղջիկը իրար գրկած շարունակում են պարել: Հանկարծ ձայնասփյուռից լսվում է Ֆոֆոյի ձայնը):

ՁԱՅՆԸ - «Սիրելի ունկնդիրներ: Ահա՛, սկսում ենք մեր այսօրվա բարոյախոսական հաղորդումը. այսօրվա թեման է՝ «Զույգերի միջև եղած հավատարմությունը»…

(Զարմացած իրար են նայում: Կինը շտապելով ելնում է ոտքի):

ԿԻՆԸ – Ֆոֆո՛ս է… Ֆոֆո՛ս… Կներեք, ձայնասփյուռը պետք է անջատեմ…

ՁԱՅՆԸ - *(Շարունակելով)* «Զույգերի միջև գոյություն ունեցող սիրո հավասարակշռությունը հիմնականում հավատարմության արդյունք է, երբ տղամարդու անհատականությունը ավելի է շեշտվում և սերը…»

(Կինը անջատում է ձայնասփյուռը: Մի պահ լռություն է տիրում):

ԿԻՆԸ – Ֆուֆուս է։ Իր լավագույն հաղորդումներից է։ Ձայնագրել եմ և միշտ լսում եմ։ Այո՛, հավատարմությունը. տղամարդու անհատականությունը. խենծ Ֆուֆուս… սերը… սերը։ *(Մի բաժակ վիսկի է լցնում. խմում է)* Ինչ լավ էր խոսում հանգուցյալը…

(Մի պահ լռություն է տիրում)։

ՏՂԱՆ - *(Ջղային։ Գինովցած)* Նորից լռություն։ Ո՛չ, ո՛չ, անկարելի է։ Մերժո՛ւմ եմ լռությունը։ Լցրեք բաժակները։ *(Իր և Կնոջ բաժակները նորից է լցնում, ապա վիսկի է լցնում Աղջկա և Մարդու ջրի բաժակների մեջ);*

ԱՂՋԻԿԸ - *(Նեղսրտած)* Բայց, հոգի՛ս, ի՞նչ ես անում, գիտես, որ ալկոհոլ չեմ սիրում։

ՏՂԱՆ - *(Աղջկա բաժակը բռնությամբ մոտեցնելով Աղջկա շուրթերին)* Խմի՛ր, հոգի՛ս, խմի՛ր, մեր սիրո համար։

ԱՂՋԻԿԸ - *(Ջղային)* Չե՛մ ուզում, չե՛մ ուզում, հիվա՛նդ եմ, հիվա՛նդ։

ՏՂԱՆ - *(Ավելի կոպտորեն)* Պե՛տք է խմես, պետք է խմես։

(Իրարանցման ժամանակ բաժակի պարունակությունը թափվում է Աղջկա զգեստի վրա)։

ԿԻՆԸ – Հագո՛ւստը… ձեռնոցնե՛րը… *(Տղային)* Խո՛զ, խո՛զ։

(Հեռանալով տղայից, Աղջիկը սկսում է արտասվել. մինչ այդ կինը սրբում է Աղջկա զգեստը)։

ՄԱՐԴԸ- *(ոտքն ուղղելով տղային. ճչալով)*։ Բավակա՛ն է, բավակա՛ն է։ Վե՛րջ տուր խայտառակություններիդ։ Ամաչի՛ր գոնե, որ մեր երեկոն, մեր տրամադրությունը փչացնում ես։

ՏՂԱՆ - *(Մարդուն)* Լռի՛ր, կեղծավո՛ր։ Քեզ պահիր բարոյախոսությունդ։ Ո՞վ ես դու, ո՞վ. անծանոթ մեկը, որ չի ուզում մեզ պատմել իր անցյալից։ Ես քո անցյալում վատ կյանքով ապրած մեկին եմ տեսնում, քեզ… Խորհրդավոր… անծանոթ…

ՄԱՐԴԸ- Լռի՛ր, տգե՛տ։ Դու կյանքից ոչինչ չես հասկանում և թունավորում ես մեր կյանքը։

ՏՂԱՆ - *(Բաժակը և շիշը ձեռքին ելնում է ոտքի)* Կյանքը… Ո՞վ է մեր կյանքը թունավորողը։ Ես, թե՛ դո՛ւ… Խոսի՛ր, ես, թե՛ նա, ով մեզ հրաշալի արևածագ է խոստանում… *(Ծիծաղում է)* Արևածա՛գ… հրաշալի՛ արևածագ…

ԿԻՆԸ - *(Վիսկիի շիշը տղայի ձեռքից խլելով)* Էլ մի խմիր, խո՛զ։ Եթե կարծում ես, որ ես այս նկարի դքսուհին եմ, սխալվում

ես: Ես քեզ կարող եմ ցույց տալ իմ մյուս դեմքը: *(Ճչալով)* Բո՛զի տղա:

ԱՂՋԻԿԸ - *(Ընդվզելով)* Ո՛չ, Տիկին:

ՏՂԱՆ - *(Զսպված զայրույթով)* Ես ձեզ միշտ հարգել եմ, Տիկի՛ն: Չափավորեք ձեր խոսքերը. հակառակ դեպքում...

ԿԻՆԸ - *(Ճչալով)* Հակառակ դեպքում՝ ի՞նչ: Ձայնդ կտրի՛ր և գնա մի անկյուն գտի՛ր, շնթռկի՛ր: Այնտեղ, այն թիկնաթոռին, հարբած խոզ:

(Տղան իրեն նետում է թիկնաթոռի մեջ: Աղջիկը սրբում է աչքերը):

ԿԻՆԸ - Ե՛կ, աղջիկս, ե՛կ ինձ մոտ, նստի՛ր այս բազմոցին: Հանգստացի՛ր: Խեղճ թռչնակս: *(Նստելով բազմոցին, իր մոտ է նստեցնում Աղջկան՝ շոյում նրա մազերը):*

(Մի պահ լռություն է տիրում):

ԿԻՆԸ – Իմացի՛ր, աղջի՛կս, Տղամարդիկ մեծ երեխաներ են: Այս խոսքս երբեք չմոռանաս: Այս հարբեցող-սիրահարդ՝ վաղը զղջալու է իր արածի համար: Որովհետև տղամարդ է և ամեն տղամարդ միշտ կարծում է, որ ինքը ուրիշ տղամարդկանցից ավելի տղամարդ է և չի ընդունում իր ցանկացած սխալ: Քեզ մնում է՝ հիմա գնալ նրա մոտ, շոյե՛լ, գգվե՛լ նրա՛ն, և ցույց տալ, որ դու իրեն սիրում ես և արդեն ներել ես: Գնա՛, գնա՛, մոռացի՛ր եղածը:

(Աղջիկը գնում և նստում է Տղայի կողքին):

ԱՂՋԻԿԸ - *(Շոյելով տղայի մազերը)* Հոգի՛ս...

ՏՂԱՆ - *(Փակ աչքերով)* Հը՛...

ԱՂՋԻԿԸ – Հոգի՛ս... ես այլ կերպ պետք է քեզ հետ վարվեի... Կներես... Գիտե՛ս... *(Լռում է):*

ՏՂԱՆ – Հը՛...

ԱՂՋԻԿԸ - *(Զարմացած նայում է Տղային: Տղան խռացնում է)* Տիկին, ի՞նչ անեմ, խռացնում է:

ԿԻՆԸ – Վե՛րջ: Արդեն հասել է խոզության վերջին սահմանին: Տղամա՛րդ... տղամա՛րդ...

ՄԱՐԴ - Այս տհաճ մթնոլորտը չհիշելու համար, առաջարկում եմ որոշ ժամանակ աչքերս փակենք, մտածենք գալիք հրաշալի արևածագի մասին... և հանգստանանք: *(Նայելով սրահի ուղղությամբ)* Մինչ այդ, սիրելի հանդիսատես, օգտվելով միջնարարից,

կարող եք դուրս ելնել: Առանձին չմնալու համար՝ կարող եք զրուցել, ծխել, խմել և զբաղվել ձեր գործերով: Կարևորը՝ ձեր միջև ստեղծեք մարդկային ջերմություն: Սարսափելի է մենակությունը: Բայց չմոռանաք, առաջին իսկ զանգին զբաղեցնեք ձեր տեղերը: Վերադարձեք, որպեսզի միասին դիմավորենք հրաշալի արևածագը...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

(Միջնարարի ժամանակ լսվում է զվարթ երաժշտություն):

Բ. ԱՐԱՐ

(Մարդը և Կինը նստած են նույն տեղում: Կինը՝ մրափում է: Հանկարծ, խոհանոցի կողմից լսվում են կոկորդային արտառոց ձայներ: Քիչ անց, խոհանոցի դռների մոտ երևում է Աղջիկը):

ԱՂՋԻԿԸ - *(Այլայլված)* Տիկին...

ՏԻԿԻՆԸ - *(Արթնանալով)* Ի՞նչ է պատահել... Աստված իմ...

ԱՂՋԻԿԸ – Փսխեց... *(Զզվանքով)* Եւ այնքան զզվելի հոտ է տարածվել... Մեջն էլ՝ գույնզգույն կտորներ...

ՄԱՐԴԸ- *(Ժպիտով)* Երանի գույնզգույն ծաղիկներ լինեին...

ԱՂՋԻԿԸ – Ո՞վ պետք է սրբի այդ աղտը: Ես չեմ կարող: Ես վախենում եմ, հիվա՛նդ եմ, հիվա՛նդ... *(Սկսում է արտասվել):*

ԿԻՆԸ – Թող մնա այնպես, ինչպես կա: Արևածագից հետո, այդ խոզին կստիպեմ մաքրել իր բաղնիքը:

ԱՂՋԻԿԸ - *(Արտասվելով)* Եւ խոհանո՛ցը...

ԿԻՆԸ - *(Ջղային)* Եւ խոհանո՛ցը...

ԱՂՋԻԿԸ – Մրգերի և հրուշակեղենի վրա էլ է փսխել...

ԿԻՆԸ - *(Զայրացած)* Էհ, բավական չէ՞: Խոզը... խոզ է:

(Աղջիկը աչքերը սրբելով՝ նստում է Կնոջ մոտ: Մի պահ լռություն է տիրում):

ՄԱՐԴԸ- *(Նայելով ժամացույցին)* Մեկ ժամից դիմավորելու ենք՝ հրաշալի՛... օ հրաշալի՛ անածագ ...

ԿԻՆԸ – Ի՞նչ անենք մեկ ժամ:

ՄԱՐԴԸ– Մթնոլորտը՝ փոխենք: Պատմենք զվարճալի պատմություններ և կամ ինչ որ խաղ խաղանք...

ԱՂՋԻԿԸ - *(Տխուր: Աչքերը սրբելով)* Չենք կարող, դե, սալոնային մի խաղ խաղալ...

ՄԱՐԴԸ– Հրաշալի՜ է: Այո՛, սալոնային մի ինչ որ խաղ: Ուրեմն, ես երկու հանելուկ գիտեմ, որոնց պատասխանը տեսնեմ, կգուշակե՞ք...

ԱՂՋԻԿԸ - *(Ուրախ)* Ո՜հ, ինչ լավ է. հարցրեք:

ՄԱՐԴԸ- Առաջին հանելուկ. Խոսքս երկուսիդ եմ ուղղում: Եթե ասեմ՝ «կյանք», ի՞նչ ես հասկանում, և ինչպե՞ս կբացատրես կյանքը՝ քեզ նվիրված մարդու, ինչպես նաև նրանց կյանքը, ովքեր քեզ հետ ունեն անմիջական կապ կամ ընդհանրապես չունեն: Եւ կամ դու նրանց հետ ունես անմիջական կապ կամ ընդհանրապես չունես...

(Երկու կանայք լռում են):

ՄԱՐԴԸ– Չիմացա՞ք: Կամ իմացաք, բայց չեք պատասխանում: Երկրորդ հանելուկ. եթե ասեմ՝ «սեր», ի՞նչ ես հասկանում և ի՞նչ ես զգում նրա նկատմամբ, որ սիրում է քեզ: Եւ կամ նրա նկատմամբ, ով քեզ չի սիրում, բայց այնպես է ձևացնում, իբր քեզ սիրում է:

(Երկու կանայք լռում են);

ԿԻՆԸ - Անիմաստ հանելուկնե՛ր են, պարո՛ն, դու շատ ես սիրում կյանքը բարդացնել:

ԱՂՋԻԿԸ - Այդ հանելուկների իմաստը չեմ հասկանում, բայց ներսումս ինչ որ բան զգում եմ: Ինչպե՞ս բացատրեմ... Ինձ համար կարևորն այն է, որ ամեն ինչ լինի գեղեցի՛կ, ճշմարի՛տ, արդա՛ր:

(Խոհանոցի դռների մոտ երևում է կիսամերկ Տղան, որն օրորվում է):

ԱՂՋԻԿԸ – Հոգի՛ս, ո՞ւր են զգեստներդ... մետաքսյա սպիտակ վերնաշապի՛կդ...

(Մոտենում է օրորվող Տղային և գրկում, որ չընկնի):

ՏՂԱՆ - Զգեստներովս, ամեն ինչով, վրաս գլուխս մաքրեցի: *(Ծորորվելով)* Ա՜հ, գլո՛ւխս, գլո՛ւխս:

ԱՂՋԻԿԸ - Ալկոհոլից հոտել ես: Թթված հարբեցող: *(Տղան նստում է բազմոցին):*

ԿԻՆԸ - *(Զզվանքով)* Օ՜ֆ, կոյուղու գարշահոտ եմ առնում: *(Մեկուսի)* Խեղճ Ֆուֆուս, զգեստներդ էլ քեզ պես հանգուցյալ են:

ԱՂՋԻԿԸ – Պառկի՛ր, հոգի՛ս: *(Պառկեցնում է)* Կոշիկներդ հա-

նեմ: *(Հանաում է կոշիկները):*

ՏՂԱՆ - Գարեջուր կա՞... Ստամոքսս մաքրեմ...

ԿԻՆԸ - *(Ճչալով)* Չկա՛, չկա՛: Հիմա գարեջրի ժամանա՞կն է: *(Դիմելով Աղջկան. ցածր ձայնով)* Քնեցրո՛ւ այդ խոզին:

ԱՂՋԻԿԸ – Չկա՛, հոգի՛ս, գարեջուր չկա՛...

ԿԻՆԸ – Թող քնի: Գնամ մի ծածկոց բերեմ: *(Մտնում է ննջարան):*

ԱՂՋԻԿԸ – Քնի՛ր, հոգի՛ս, քնի՛ր:

ՄԱՐԴԸ– Ինչո՞ւ ես սիրում այս երիտասարդին:

ԱՂՋԻԿԸ - *(Ջղային)* Վախենո՛ւմ եմ, վախենո՛ւմ: Չե՛մ ուզում մենակ մնալ, չե՛մ ուզում: Մենակությունը՝ մա՛հ է, մա՛հ...

ԿԻՆԸ - *(Ներս մտնելով):* Ահա՛ ծածկոցը: *(Ծածկում է Տղային)* Արդեն այս խոզը քնում է:

(Նստում են: Նորից լռություն է տիրում):

ՄԱՐԴԸ- Եթե ուզում եք, մի ուրիշ խաղ կարող ենք խաղալ:

ԿԻՆԸ - *(Խիստ)* Միայն՝ ո՛չ հանելուկ: Սովորական խաղ:

ՄԱՐԴԸ- Այո՛, հիմա կխաղանք աշխարհի ամենասովորական խաղը: Հիմա կներկայացնենք մի թատերախաղ, որի դերակատարները՝ մենք ենք:

ԿԻՆԸ- -Բայց մեր խաղացածն արդեն թատրոն է: Կյանքն ամբողջովին թատրո՛ն է... *(Մտածկոտ)* Հիմա, ի՞նչ՝ թատրոն՝ թատրոնի մե՞ջ:

ՄԱՐԴԸ- *(Ժպտալով)* Կամ՝ թատրոն՝ թատրոնի մեջ, որի մեջ նույն թատրոնն է:

ԱՂՋԻԿԸ – Հետաքրքիր է: Եւ ի՞նչ է այդ թատերգության անունը:

(Մի պահ լռություն է տիրում):

ՄԱՐԴԸ– «Ո՞վ է բախում դուռը»...

ԱՂՋԻԿԸ – Սալոնայի՞ն խաղ է:

ՄԱՐԴԸ- *(Մեղմ)* Մեր խաղացած բոլոր խաղերը՝ սալոնային խաղեր են, օրիո՛րդ:

ԿԻՆԸ - Այսի՞նքն:

ՄԱՐԴԸ– Մահվան դերը ստանձնելու ենք հաջորդաբար. մահը երբ այցելի մեզ:

ԱՂՋԻԿԸ - *(Ժպիտով)* Ծիծաղելի է:

ԿԻՆԸ - *(Վախեցած)* Հաճելի չէ, որ մահը մեզ այցելի...

ՄԱՐԴԸ– Վախենալու ոչինչ չկա, Տիկի՛ն: Վերջին հաշվով ամբողջ կյանքը խաղ է, ինչպես դիմակավոր պարահանդեսներում: *(Ժպտալով)* Դիմակավոր պարահանդեսների երբևէ մասնակցե՞լ եք:

ԿԻՆԸ - *(Ինքն իրեն գտնելով)* Շա՜տ, բազմի՜ցս... Եւ ամեն անգամ տարբեր դիմակներով ծպտված, տարբեր զգեստներով: Ա՜հ, լա՜վ հիշեցի. այնտեղ տեսել եմ նաև Մահվան զգեստ և Մահվան դիմակ: Գնամ, բերեմ - եւ դեռ ինչե՜ր, ինչե՜ր ունեմ: Աղջիկս, եկ ինձ հետ, օգնիր ինձ:

ԱՂՋԻԿԸ - Այո՛, Տիկին:

(Երկուսով մտնում են ննջասենյակ: Մարդը նայում է սրահի ուղղությամբ. ժպտում է):

ՄԱՐԴԸ– Խեղճ Տիկին, ասում է «Մահվան դիմակ»: Մինչդեռ Մահը դիմակ չունի, որովհետև չի դիմակավորվում Մահը: Յուրաքանչյուր մարդ մահվան երեսին իր դեմքն է փակցրել և այն «դիմակ» է կոչում:

(Ներս են մտնում կանայք՝ մի կերպ քարշ տալով մեծ գունավոր անիվներով մի սնդուկ, որը դնում են բեմի կենտրոնում և այնտեղից հանում են դիմակահանդեսի զգեստներ և դիմակներ):

ԿԻՆԸ - *(Փնտրելով)* Ո՞ւր են, ո՞ւր են Մահվան զգեստն ու դիմակը:

ԱՂՋԻԿԸ - *(Խանդավառված յուրաքանչյուր դիմակով և զգեստով)* Ո՜հ, Առլեկինի զգեստնե՜րը... Կիսամերկ դքսուհու զգե՜ստը... Ա՛յս էլ՝ մարդու դիմակ... Այս մե՜կը... այս մե՜կը... զգեստնե՜ր... դիմակնե՜ր... Հա՜... հա՜... էշի դիմա՜կ... Պարուհու փեշե՜ր... Ո՜հ, եղջյուրավոր մարդու դիմակ... Զգեստներ... դիմակներ... *(Գույնզգույն զգեստները նետում աջ ու ձախ):* Կյանքի աղբյուրն է այս սնդուկը... Կյանքի աղբյո՜ւրը...

ԿԻՆԸ - Ահա՛, Մահվան զգեստն ու դիմակը, գտա՛...

(Աղջիկը դադարեցնում է իր աշխատանքը և լռջանալով նայում է Մահվան զգեստին և դիմակին: Մարդը՝ ժպտում է):

ԱՂՋԻԿԸ – Սարսափելի՛ է:

ՄԱՐԴԸ- Գեղեցի՛կ է:

ԿԻՆԸ - *(Մարդուն)* Վերցրեք:

ՄԱՐԴԸ- *(Կնոջ ձեռքից խլում է Մահվան զգեստը)* Այո՛, ճի՛շտ որ, շատ գեղեցիկ է Մահվան զգեստը: Իսկ դիմակը՝ տո՛ւր Աղջ-

կան:

ԱՂՋԻԿԸ - *(Վախեցած)* Չեմ ուզում, ես հիվանդ եմ. ծախենում եմ:

ՄԱՐԴԸ- *(Խորհրդավոր)* Ես հիմա դուրս կգնամ և շուտով կվերադառնամ իբրև Մահ: *(Ուղղվում է դեպի ելքի դուռը):*

ԿԻՆԸ - *(Ծիծաղելով)* Մահվան գերանդին պարտեզի գործիքների խցում է: Զմռռանամս: *(Մահվան դիմակը ուղղահայաց դնում է ձայնասփյուռի առջև. մյուս դիմակները նույն ուղղահայաց դիրքով դնում է տարբեր տեղեր՝ դեմքերը դեպի սրահ):*

(Մարդը ելնում է դուրս):

ԱՂՋԻԿԸ - *(Վախեցած)* Ո՞վ է այս մարդը:

ԿԻՆԸ - *(Անտարբեր)* Մի մարդ, որին թվում է, թե ինքն իրենից ինչ-որ բան ներկայացնում է:

ԱՂՋԻԿԸ - *(Մտահոգ)* Զարմանալի մարդ է. ինչքան էլ անլուծելի հանելուկներ գիտի: Իսկ այս Մահվան խաղը... *(Լռում է):*

(Ձեռքի հարվածներով երեք անգամ բախում են դուռը):

ԱՂՋԻԿԸ - *(Ցնցվելով)* Ա՜հ, վախենում եմ:

ԿԻՆԸ – Ինչո՞ւ ես վախենում: Արդեն գիտես, որ նա՛ է՝ Մարդը:

ԱՂՋԻԿԸ - Այո՛, գիտեմ, Տիկի՛ն: Բայց, եթե դուռը բախողը Մահը լինի:

(Նորից են դուռը երեք անգամ բախում):

ԿԻՆԸ - *(Ուրախ)* Մի՛ փոքր նրանով չզվարճանա՞նք... *(Բարձրաձայն)* Ո՞վ է բախում դուռը:

ՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ - *(Սարսափազդու)* Ես եմ՝ Մահը: Եկել եմ, քանի որ պարտականություններ ունեմ:

ԱՂՋԻԿԸ - *(Վախեցած)* Ասա՛, թող մի ուրիշ տուն գնա:

ԿԻՆԸ - Ամո՛թ է, աղջի՛կս: Ես եմ այս տան տերը. կարո՞ղ եմ հյուրիս ասել. «Մի ուրիշ տուն գնա»:

ԱՂՋԻԿԸ – Իսկ եթե Մարդը չէ՛, Մա՛հն է...

(Դուռը բախում են վեց անգամ, ուժգնորեն):

ԱՂՋԻԿԸ – Կատաղե՛ց:

ԿԻՆԸ - Ապուշը հիմա դուռը կջարդի: Գնամ, բացեմ:

(Կինը բացում է դուռը: Ներս է մտնում Մահ-Մարդը՝ մահվան պատմուճանը հակառակ կողմից հագած՝ բորբ-կարմիր գույնի: Ձեռքին՝ Մահվան երկար գերանդին, գլխին՝ սպիտակ ծաղկահյուս

դափնեպսակ)։

ՄԱՐԴ-ՄԱՀԸ - *(Բամբ ձայնով)* Ես եմ՝ Մա՛հը։

ԿԻՆԸ - *(Ծիծաղելով)* Մահվան պատմուճանը թարս ես հագել, պարո՛ն Մահ։

Մարդ-Մահը - *(Խիստ)* Ա՛յս է, որ կա Մահվան պատմուճանը՝ կարմի՛ր, կարմի՛ր... արյո՛ւն։ Սևը՝ կեղծիք է...

ԱՂՋԻԿԸ – *(Թաքնվելով կնոջ թիկունքում)* Խենթացել է...

ԿԻՆԸ - Գլխիդ էլ Ֆուֆոյիս պատրաստած դափնեպսակն ես դրել։

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, պարո՛ն Մահ, մեզ վախեցնելու համար ինչո՞ւ մահվան դիմակ չես դրել կամ դեմքդ ինչո՞ւ չես սևացրել մրով...

ՄԱՀ – ՄԱՐԴԸ– Մահվան դեմքն այն դեմքն է, որ ունի յուրաքանչյուր մարդ։

ԱՂՋԻԿԸ - *(Մեղմ ծիծաղելով)* Տիկի՛ն, արթնացրեք երիտասարդին, թող նա էլ զվարճանա։

ԿԻՆԸ - Արթնացի՛ր, խո՛զ։

ԱՂՋԻԿԸ - *(Ցնցելով տղային)* Հոգյա՛կս, արթնացի՛ր, տե՛ս, ո՞վ է եկել։

ՏՂԱՆ - *(Արթնանալով)* Արևածա՞գն է։

ԱՂՋԻԿԸ - *(Ծիծաղելով)* Ո՛չ, ո՛չ, Մա՛հն է, Մա՛հը։

ՏՂԱՆ - *(Նստելով և շփելով աչքերը)* Իսկ արևածագը... հրաշալի արևածագը, գնա՞ց։

ԱՂՋԻԿԸ – Ո՛չ, ո՛չ, դեռ չեկած, ո՞ւր պետք է գնար... Մինչ այդ՝ եկավ Մա՛հը։ Մենք հիմա Մահ ենք խաղում...

ՏՂԱՆ -*(Զարմացած)* Մահ ենք խաղո՞ւմ։ *(Հանկարծ նշմարելով Մարդ- Մարդուն։ Ցնցվելով)* Ո՞վ է սա։

ՄԱՀ-ՄԱՐԴԸ- *(Արտառոց և բանբ ձայնով)* Ես եմ՝ Մա՛հը։

ԱՂՋԻԿԸ - *(Տղային)* Չվախենա՛ս, հոգյա՛կս։ Իրականը չէ՛, կեղծ մահն է։ Քիչ հետո, դու էլ պետք է Մահ լինես։

ՏՂԱՆ - *(Մտածկոտ)* Ես է՞լ։ Մա՞հ ենք խաղում։։

ՄԱՀ-ՄԱՐԴԸ- Այո՛, Մա՛հ։ Եկել եմ երեքիցդ մեկին տանելու։

ՏՂԱՆ – Շա՛տ հիմար խաղ... *(Գլուխը բռնելով)* Ահ, գլո՛ւխս, գլո՛ւխս... Կարծես թե իմը չլինի, գլո՛ւխս...

ՄԱՀ-ՄԱՐԴԸ- Այո՛, գլուխդ կորցրել ես և արդեն բռնել ես մահվան ճամփան։ *(Խիստ)* Ամենասկզբում քեզ եմ տանելու այն աշխարհ։ Քո ապրած կյանքը, սրտխառնոցներդ, կոպտություն-

ներդ՝ ծաղկավաճառ այս քնքուշ աղջկա նկատմամբ՝ ինձ ստիպում է, որ քեզ ուղարկեմ այն աշխարհ. դու առաջին ճամփորդն ես լինելու անդենականի:

ԱՂՋԻԿԸ - *(Կնոջը)* Անդենականը որտե՞ղ է, տիկին, գոնե լա՞վ տեղ է:

ԿԻՆԸ - *(Ծիծաղելով)* Անդենականը այն աշխարհն է, ուր գնում են մեռածները:

ԱՂՋԻԿԸ - *(Վախեցած)* Ո՜հ, ես չեմ ուզում գնալ այնտեղ: Ես վախենո՜ւմ եմ: *(Տղային)* Հոգի՜ս, դո՜ւ էլ մի գնա: Հրաժարվի՛ր, հրաժարվի՛ր:

ՏՂԱՆ – Վերջացրեք այս հիմար խաղը: *(Շփելով ճակատը)* Ա՜հ, գլո՜ւխս, գլո՜ւխս:

Մահ – ՄԱՐԴԸ- *(Խիստ)* Դու աշխարհի ամենավատ մարդն ես, դու արժանի ես, որ քեզ տանեմ: Կամ ինձ հետ կգաս կամ մահվան գերանդիով գլուխդ կկտրեմ և հոգիդ առած կմեկնեմ անդենական:

ՏՂԱՆ – Տա՛ր, տա՛ր, գլուխս, որ ազատվեմ այս ցավերից:

ՄԱՀ – ՄԱՐԴԸ- Ա՜հ, այս պահին անդենականի արժանի մարդկանց թիվը շա՜տ է. շատ-շատ: Նրանք բոլորն էլ իրենց հերթին են սպասում. ամեն մեկը՝ ձեռքին բռնած սպիտակ և չգրված մի թուղթ, սպասում է: Դուք՝ երեքդ, *(Նայելով սրահի ուղղությամբ)* և մյուսները, որոնք այս տնից դուրս են, իրենց տներում են կամ զբոսավայրերո՛ւմ են, հանդեսասրահներո՛ւմ, անտեղյակ նայում են իրենց ձեռքերի սպիտակ թղթերին՝ կարծելով, որ իրենք անմահ են... Միամիտնե՜ր... *(Ցույց տալով սրահը)* Բայց ես գիտեմ յուրաքանչյուրի հաջորդականությունը. *(սարսափազդու տոնով)* բարձրացնելով մահվան գերանդին՝ մեկ առ մեկ կինձեմ, ու հոգիները կուղարկեմ անդենական: *(Մեղմ)* Ո՜հ, եթե իմանա՛ք, միայն իմանա՛ք, թե ինչ հաճույքով եմ ջարդում հատկապես անօրեններին, սեքս-մանյակներին, վաշխառուներին, քաղաքական կեղծ գործիչներին, անհավատ կրոնավորներին, ավազակներին, ոճրագործներին, դավադիրներին: Հավատացեք ինձ, նրանք ավելի վատն են, քան Մա՛հը: Եվ ես՝ Մա՛հս, իրավունք ունեմ հաճույքով կատարելու իմ պարտականությունը: Հավատացե՛ք ինձ, հնձելով դրանց, ես մարդասիրական գործ կատարած կլինեմ: Ա՜հ, եթե դուք հասկանա՛ք, որ իմ գոհունակությունը արդար է, ձեր կյանքում շատ բան

կարող եք փոխել, բարեփոխել: Շատ բան...

ԱՂՋԻԿԸ - Բայց, պարո՛ն Մահ, մենք երեքս՝ ո՛չ վաշխառու ենք և ո՛չ էլ քաղաքական գործիչ:

ՄԱՀ –ՄԱՐԴԸ- *(Մեղմ)* Այո՛, ճի՛շտ ես, փափկասուն օրիորդ: Ինձ համար դա ցավ է: Եթե միայն իմանաք, թե հանցավորի ինչ զգացումով եմ անդենական ուղարկում որևէ անմեղ հոգու... Երբեմն, նույնիսկ ինձ չեմ կարողանում զսպել, հուզվո՛ւմ եմ, լա՜ց լինում: Այո՛, զարմանում եմ, բայց հավատացե՛ք: Մա՛հն էլ է լացում, երբ անդենական է տանում ողջ կյանքը պարկեշտ ապրած մի մարդու... Բայց պարտականությո՛ւնս է: Ա՛յս է կյանքի օրենքը... որովհետև, ավա՛ղ, բարիների համար անմահություն չկա...

ԱՂՋԻԿԸ - *(Ժպիտով)* Պարո՛ն Մահ, տեսնում եմ, որ դուք իսկապես շատ բարի և ազնիվ Մահ եք: Մի խնդրանք ունեմ. արդյոք չե՞ք կարող մի քանի ամիս կամ գոնե մի տարի մեզ հանգիստ թողնել:

ՄԱՐԴ-ՄԱՀԸ - Անկարելի է, աղջի՛կս, պարտականությունս պետք է կատարեմ: Ես ստիպված եմ անդենական տանելու այս երիտասարդին:

ԱՂՋԻԿԸ - *(Մեղմ ձայնով)* Պարոն Մահ, կարո՞ղ եմ ձեր ականջին մի բան ասել:

ԿԻՆԸ – Ո՛չ, չի՛ կարելի: Այս խաղում ամեն ինչ պետք է բացահայտ լինի: Գաղտնի խոսակցություններն արգելված են:

ՄԱՀ-ՄԱՐԴԸ- *(Մտածկոտ)* Պետք է ասել, որ առաջին անգամ է, որ մահկանացուն ցանկանում է թաքուն ինձ ինչ որ բան ասել: Հետաքրքիր է: Տիկին, թույլ տվեք, որ բացառություն անեմ մեր օրիորդին: *(Ժպիտով. ձեռքով նշան է անում, որ Աղջիկը մոտենա: Աղջիկը մոտենում է Մահ-Մարդուն և սկսում է փսփսալ նրա ականջին: Տղան ժպտում է: Կինը փորձում է ինչ-որ բան լսել: Մահ-Մարդու դեմքի արտահայտությունը աստիճանաբար փոխվում է՝ սկզբում՝ հետաքրքրություն, ապա՝ ուրախություն է արտահայտում):*

ԱՂՋԻԿԸ - *(Հեռանալով Մահ-Մարդուց: Աղաչական):* Պարո՛ն Մահ, խնդրո՛ւմ եմ, առաջարկս ընդունե՛ք:

(Մի պահ լռություն է տիրում):

ՄԱՀ –ՄԱՐԴԸ- *(Մտածում է՝ շուրջը նայելով)* Տիկի՛ն, անդենական քեզ պետք է տանեմ:

ԿԻՆԸ - *(Ցնցվելով)* Ի՞նձ: Ի՞նչ է, կաշառվեցի՞ր, Մա՛հ: Այդ աղջիկը քեզ ի՞նչ խոստացավ:

ՄԱՀ –ՄԱՐԴԸ- *(Վիրավորված)* Տիկի՛ն, խնդրում եմ, արժանապատվությունս չվիրավորեք: Մա՛հը... մա՛հը երբեք չի՛ կաշառվում, երբե՛ք: Բայց իմ զգացողությունս ինձ հուշում է, որ դու ես անդենականի արժանի թեկնածուն, քեզ պետք է տանեմ...

ԿԻՆԸ – Ո՛չ, համաձայն չեմ, դուք խաղի օրենքը չե՛ք հարգում...

ԱՂՋԻԿԸ – Տիկի՛ն, խնդրո՛ւմ եմ, համաձայնվե՛ք: Դուք գոնե լավ գիտեք, թե ձեզ ինչպես եմ սիրում և հարգում...

ԿԻՆԸ - Էլ ի՞նչ սե՛ր ու հարգա՛նք, երբ ես ավելի բարի եմ, քան այս երիտասարդը, բայց ինձ եք ուզում տանել անդենական: Կյանքումս ի՞նչ մեղք եմ գործել՝ տղամարդկանց խելքահան անելուց բացի... ո՛չ, ո՛չ, ես չե՛մ ուզում մեռնել և վե՛րջ...

ԿԻՆԸ - *(Վճռական)* Ո՛չ, ե՛ս եմ որոշողը: Չե՛մ գնա:

ՄԱՀ – ՄԱՐԴԸ- *(Մի պահ մտածելուց հետո)* Օրիո՛րդ, տեսնում ես, թե ինչ համառ է այս կինը: Եւ ես հանուն արդարության՝ ստիպված պետք է լինեմ...

ԱՂՋԻԿԸ - *(Ընդմիջելով)* Ո՛չ, ո՛չ, պարոն Մահ, խնդրո՛ւմ եմ, խնդրո՛ւմ...

ՄԱՀ – ՄԱՐԴԸ- Պաշտոնապես հայտարարում եմ. օրիորդը հղի՛ է...

(Կինը և Տղան ելնում են ուռքի):

ԿԻՆԸ – Թատրո՞ն է, թե՞ իրականություն...

ՏՂԱՆ – Հոգի՛ս, կատա՞կ է, թե՞ ճշմարտությո՞ւն...

ԱՂՋԻԿԸ - *(Բռնելով փորը)* Արդեն երկու ամիս է...

ՏՂԱՆ - *(Գրկելով և կրծքին սեղմելով Աղջկան)* Ա՜հ, հոգի՛ս, հոգի՛ս, ինչո՞ւ ավելի շուտ չասացիր... Հոգի՛ս, դու շուտով մայր պետք է դառնաս, մա՛յր...

ԱՂՋԻԿԸ - *(Հուզված)* Ինչպե՜ս... ինչպե՜ս... ուզում եք, որ ես այս երջանկությունը չվայելած դժբախտանամ... և երեխայիս հայրը մեռնի... ա՛խ, անդենական...

ՏՂԱՆ – Հոգի՛ս, մի՛ հուզվիր, լաց մի՛ եղիր... Միշտ քեզ հետ կլինեմ... տե՛ս, քիչ հետո տեսնելու ենք հրաշալի արևածագը... մենք՝ երեքով... հոգի՛ս... հոգի՛ս... *(Իր արցունքները սրբելով):*

ԿԻՆԸ - *(Խոր հուզմունքով)* Այո՛, հրաշալի արևածագը բոլոր

խնդիրները լուծելու է: Դո՛ւք, սիրելի երիտասարդներ, պետք է երկար ապրեք, որովհետև Մարդ է ծնվելու. *(Մեկուսի)* Իսկ ես, ես արդեն ծերության սեմին եմ, ոտքերս` ուռած, սրունքներս` ուռած: *(Աղջկան)* Մի՛ հուզվիր, աղջիկս, երիտասարդը` երեխայիդ հայրը քեզ հետ կլինի: Այո՛, համաձա՛յն եմ, անդենական ես եմ գնալու... Պարոն Մահ, ես պատրաստ եմ, կարող եք ինձ տանել:

ՄԱՀ –ՄԱՐԴՈՒ - *(Հուզված)* Տիկի՛ն, ձեր խոսքերից նույնիսկ Մահս հուզվեց: Ինչպիսի՛ զոհաբերություն, ինչպիսի՛ զգայնություն... Այո՛, դուք արժանի եք բացառիկ ճամփորդության դեպի դեպի անդենական: Եւ, գնահատելով ձեր այս ազնիվ կեցվածքը, խոստանում եմ` դուք կվերստանաք ձեր անցյալի գեղեցիկ մարմինը` սլացիկ սրունքներո՛վ և... ը՛հ... *(Մի պահ լռում է)* և այլնը... ձեր ամբողջական և գայթակղող մերկությամբ... պատկերացրեք... պառկած եք սպիտակ ամպերով հյուսված մի կառքում` սպիտակ նժույգներով սլացող, շրջապատված հարյուրավոր նժույգներով, որոնց ձեռքին տավիղներ կան, իսկ շուրթերին` սրինգներ և ձեզ տանում են անդենական: Եւ հենց այնտեղ` դրախտի մուտքի մոտ են հնչելու ձեզ ընդունող քերովբեների և սերովբեների շեփորները: Տիկի՛ն, դուք արժանի եք դրախտի: *(Բացում է տան ելքի դուռը)*: Համեցեք: *(Կինը ծանր քայլերով առաջանում է դեպի դուռը: Մի պահ շրջվում է, նայում ողջագուրված զույգին և շշնջում)*

ԿԻՆԸ - Երբ երեխան ծնվի` անունը Ֆուֆու դրեք. թող երջանիկ լինի... *(Կինը և Մահ-Մարդը դուրս են ելնում)*:

ՏՂԱՆ – Նստի՛ր, հոգիս: Պետք է քեզ արդեն լավ պահես, քի՛չ շարժվես, շա՛տ չհուզվես: Հղիությունդ պետք է անցնի հանգի՛ստ, բնակա՛ն:

ԱՂՋԻԿԸ - Այո՛, վախենում եմ. խնդրում եմ մնա ինձ մոտ: Ես հիվանդ եմ և վախենում եմ:

ՏՂԱՆ - Այո՛, հոգիս, միշտ քեզ հետ կլինեմ:

(Ներս է մտնում Մարդը)

ՏՂԱՆ – Որտե՞ղ է Կինը:

ՄԱՐԴԸ– Պատրաստվում է: Իր հերթն է: Հաջորդ Մահը` ինքն է:

ՏՂԱՆ - Ես այս հիմար խաղը չեմ սիրում. ավելի լավ չէ՞ Կյանքի խաղը խաղանք:

ՄԱՐԴԸ– Նույն է, տղա՛ս, նո՛ւյնը:

ՏՂԱՆ - *(Զայրույթով)* Ինչպես թե նույնն է, երբ Մահը կործանում է, իսկ կյանքը՝ երջանկություն: Սիրում ես երկիմաստ խոսքեր՝ ցույց տալու համար, որ մեզ գերազանցում ես:

(Ձեռքի հարվածներով երեք անգամ բախում են դուռը):

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, վախենում եմ:

ՏՂԱՆ – Ինչո՞ւ ես վախենում, երբ գիտես, որ Տիկինն է…

ԱՂՋԻԿԸ - Այո՛, ճի՛շտ ես, հոգիս: Բայց, եթե դուռը բախողը Մահը լինի…

(Նորից են երեք անգամ դուռը բախում):

ՄԱՐԴԸ– Տիկինը սիրում է կատակել: *(Բարձրաձայն) Ո՞վ է դուռը բախում:*

ԿՆՈՋ ՁԱՅՆԸ - *(Սարսափազդու)* Ես եմ՝ Մա՛հը: Եկել եմ պարտականություններս կատարելու:

(Ներս է մտնում Մահ-Կինը՝ հակառակ կողմից հագած մահվան պատմուճանը: Ձեռքին՝ մահվան երկար գերանդին, գլխին՝ սպիտակ ծաղիկներով դափնեպսակ):

ՄԱՀ –ԿԻՆԸ - *(Բամբ ձայնով)* Ես եմ՝ Մա՛հը:

ԱՂՋԻԿԸ - *(Ուրախ)* Տիկի՛նն է, Տիկի՛նը…

ՏՂԱՆ - *(Ժպիտով)* Դքսուհու զգեստը քեզ ավելի վայել է, Տիկի՛ն, քան թե այս ծիծաղելի պատմուճանն ու գերանդին:

ՄԱՀ- ԿԻՆԸ - *(Սարսափազդու ձայնով)* Խնդրում եմ սարսափեք ինձնից: Ես՝ Մահն եմ և եկել եմ, որ կարգուկանոն հաստատեմ ձեր՝ մահկանացուներիդ մեջ:

ՄԱՐԴԸ- Աստծո գործերին մի խառնվի՛ր, Մա՛հ:

ՄԱՀ- ԿԻՆԸ – Մահը՝ ի՛մ, ի՛մ գործն է, փիլիսոփա: Նույնիսկ Աստված իրավունք չունի խառնվելու մահվան գործերին:

ՄԱՐԴԸ– Սխալվո՛ւմ ես: Աստված է՝ Առաջինն ու Վերջինը: *(Ծիծաղելով)* Ինչպես տեսնում եմ, դու՝ Տիկին-Մահ, բավականին անտեղյակ ես և չես ճանաչում մահվան և կյանքի խորհուրդները: Քեզ մի քանի հարցեր ունեմ տալու:

ՄԱՀ – ԿԻՆԸ - *(Խիստ)* Հանելուկն՝ արգելված է:

ՄԱՐԴԸ- Արդյոք մահվան խորհուրդը միաժամանակ կյանքի խորհուրդը չէ՞: Արդյոք մենք հաճախ չե՞նք շփոթում կյանքն ու մահը, կամ իրար չե՞ն լրացնում…

ՄԱՀԸ - ԿԻՆԸ – *(Նստելով աթոռին)* Նորի՛ց, նորի՛ց սկսեց

խառնիխուռն իր հանելուկները...

ՄԱՐԴԸ- Արդյոք Մահը չի՞ պարտադրում կյանքին՝ վերջ և այդ հակազդեցության պատճառով յուրաքանչյուր անձ այլ կերպ է մոտենում կյանքին: Արդյոք մահը կյանքի առաջմղիչ ուժը չէ՞:

ՄԱՀ – ԿԻՆԸ – Պատասխանելու համար պետք է հարցը հասկանամ: (*Գերանդին դնելով գետնին*) Երիտասարդ, վիսկի լցրո՛ւ Մահվան համար: Մի քանի չափաբաժին...

(*Տղան ծիծաղելով մի ամբողջ բաժակ վիսկի է լցնում և տալիս Մահ-Կնոջը*):

ՏՂԱՆ - (*Մարդուն*) եթե այսպես շարունակ չարչարես Տիկնոջը, նա քեզ դժոխքի կրակների մեջ կնետի...

ՄԱՐԴԸ– Տիկին Մահ, եթե հանկարծ Աստված քեզ հրամայի և ասի. «Մա՛հ, մարդիկ այլևս չպետք է մեռնեն, պետք է ապրեն հավիտյան», այն ժամանակ, ասա՛, ինչպե՞ս պետք է իրենց կյանքը վերադասավորեն:

ՄԱՀ- ԿԻՆԸ - (*Խմելով*) Չգիտե՛մ: Եթե կյանքն ու մահը այսպես բարդ են, ես կհրաժարվեմ Մահ լինելուց: Վե՛րջ, ես այլևս Մահը չեմ... (*Մահվան զգեստը հանում է*):

ՄԱՐԴԸ- (*Ծիծաղելով*) Տիկին Մահ, խնդրում եմ, մեզ մի՛ լքեք: Կյանքը՝ Մահվան կարիքը զգում է: Մահվան գոյությամբ է իմաստավորված շարունակականությունը: Շարունակականությո՛ւն... հորից զավակ և թոռ, մարդուց՝ մարդ, ազգասերից՝ ազգասեր, ստեղծագործողից՝ ստեղծագործող, կյանքից՝ կյանք:

(*Մահ-Կինը հուսահատորեն խմում է բաժակի ամբողջ պարունակությունը*):

ՏՂԱՆ - (*Մարդուն*) Խնդրեմ, մի՛ բարդացրու: Հանգիստ թող Տիկնոջը, թող շարունակի խաղալ իր դերը, ինչպես կամենում է: (*Մահ-Կնոջը*) Խնդրեմ, Տիկի՛ն, շարունակեք ձեր դերը:

ՄԱՀ- ԿԻՆԸ - Այն պայմանով, որ այս մարդը լռի:

(*Տղան օգնում է Մահ-Կնոջը, որ մահվան զգեստը հագնի, գետնից վերցնում է գերանդին*):

ԱՂՋԻԿԸ - (*Ուրախ*) Ապրե՛ս, հոգի՛ս, մի՛ վախեցիր, խա՛ղ է, սովորական խա՛ղ: (*Մահ-Կնոջը*) Շարունակեք, Տիկին:

ՄԱՀ- ԿԻՆԸ - Ես Տիկին չե՛մ, հարբեցող խոզ, ես Մա՛հն եմ: (*Հանդարտ: Երազային*) Ես ոչ էգ եմ, ոչ արու: Մարմնով՝ ողորկ... մաքուր-մաքուր... առանց սեռանդամների...

ԱՂՋԻԿԸ - *(Ցնցվելով)* Ո՜հ, ամոթ է, Տիկի՛ն: *(Զարմացած՝ Տղային)* Այդ տեսակ բան հնարավո՞ր է, հոգի՛ս:

ՏՂԱՆ - *(Ժպիտով)* Անհնարին է: Տիկնոջ համար շատ աննպաստ:

ՄԱՀ- ԿԻՆԸ – Հրեշտակները՝ արու են, թե՞ էգ: Ո՞վ է նրանց սեռանդամները տեսել: Ոչ ոք: Որովհետև չունեն: Ո՞վ է տեսել հրեշտակների ծնունդը և մահը: Ոչ ոք: *(Նայելով սրահի ուղղությամբ):* Կարո՞ղ եք ասել, տեսե՞լ եք հուրիների և փերիների ծերանալը, քերովբեների և սերովբեների մահը... *(Ինքնավստահ)* Երբե՛ք...

ՏՂԱՆ - *(Ծիծաղելով)* Կեցցե՛ք: Համամիտ եմ: Շատ լավ սկսեցիր:

ՄԱՀ- ԿԻՆԸ - Դու լռի՛ր, խո՛զ: Հիշի՛ր, մետաքսե վերնաշապիկը: *(Նայելով սրահի ուղղությամբ)* Մարդիկ, ուշադի՛ր եղեք: Ամեն մի դժբախտություն սկսվում է սեռական կյանքից և ծերությունից:

ՏՂԱՆ - *(Ցածր ձայնով)* Ծերացել է, բայց ուշքն ու միտքը դեռ սեռական կյանքն է:

ՄԱՀ- ԿԻՆԸ - *(Ցույց տալով Մարդուն)* Այս մարդը չնայած փիլիսոփայում է, բայց կյանքից ոչինչ չի հասկանում: *(Նայելով սրահի ուղղությամբ)* Հիմա, ե՛ս, ե՛ս պետք է բարեկարգեմ «Մահվան օրենքը», որ ժամանակավրեպ է... *(Սպառնալից)* Նախ պետք է մահվան գերանդիով հնձեմ ձեր մեջ գտնվող բոլոր վաշխառուներին, քաղաքական կեղծ գործիչներին, անհավատ կրոնավորներին, ավազակներին, ոճրագործներին, դավադիրներին... և նրանց մարմինները պետք է հանձնեմ բորոտ շներին, որ ուտեն և գոհանան... (*խստ)* Սեքս-մանյակներին երկու տարի ժամանակ եմ տալու, որ կամ զսպեն իրենց կրքերը, կամ ենթարկվեն մահվան գերանդուն: (*Ցածր ձայնով)* Գիտեմ, մեղք են, բայց օրենքը՝ օրենք է: Այս ջարդից հետո (*Լայնաժպիտ և ինքնագոհ)* բոլոր տարեցները և ծերերը կերիտասարդանան և կգեղեցկանան: Տղամարդիկ կլինեն՝ 32, կանայք՝ 27 տարեկան... Նորածինները՝ կմեծանան, պատանիներն էլ պետք է հասկանան, որ երբ տղաները դառնան՝ 32, իսկ աղջիկները՝ 27 տարեկան, այդպես, այդ տարիքին էլ պետք է մնան...

ԱՂՋԻԿԸ - (*Հիացմունքով)* Ո՜հ, դուք մարդկային զգացմունքով Մահն եք. (*Մտահոգ)* բայց ուզում եմ ձեզ հարցնել, 32 և 27

տարեկան երիտասարդները՝ հրեշտակների պես սեռանդամներ չեն ունենալու...

ՄԱՀ- ԿԻՆԸ - Անպայման կունենան, և այն էլ ինչպիսի...

ԱՂՋԻԿԸ - *(Տղային: Ուրախ)* Օ՜հ, ինչ լա՜վ է, հոգիս, որ ունենալու են...

ՄԱՀ- ԿԻՆԸ – Ունենալու են և պետք է սերնդաստեղծման գործին ծառայեցնեն... *(Խիստ)* Բայց, ուշադի՛ր. իրենց ապրած բարի կյանքով՝ իրենց նպատակին հասնելուց հետո, վա՛յ իրենց, եթե չարանան և սխալվեն: Այն ժամանակ, մահվան գերանդին կհասնի՛, կհասնի՛ իրենց վզին, և... կհայտնվեն՝ բորոտ շների հսկողության տակ գտնվող անդենական աշխարհում... *(Խիստ)* Եւ դուք, այստեղ մնացողներդ, 32 տարեկան տղամարդիկ և 27 տարեկան կանայք, այս նոր օրենքի հսկողության տակ, սարսափած, արդեն ընդմիշտ կհրաժարվեք այս սովորական, հիմար կյանքից, որ հիմա եք ապրում... Ամոթ ձեզ: Ամեն օր, ամեն պահ, կատեք իրար: Բռնությո՛ւն: Բռնությո՛ւն: Ի՞նչ է, կարծում եք, ձեր ապրածը կյանք է: Ա՞յս է, ա՛յս է մարդու կյանքը: *(Մի պահ լռություն է տիրում)* Այո՛, ես ձեզ կտանեմ երկրային դրախտ, բայց պետք է պահեմ մահվան գերանդուս մնայուն սարսափի տակ:

ԱՂՋԻԿԸ - *(Մտահոգ)* Հոգիս, սկսեցի նորից վախենալ: Այն ժամանակ ի՞նչ պետք է անենք:

ՏՂԱՆ – Կանենք, մի բան կանենք: Մի՛ մտահոգվիր:

ՄԱՀ- ԿԻՆԸ -*(Ջղային)* Դու լռի՛ր: Եւ ոտքի ել: *(Տղան ժպտերես ոտքի է ելնում: Աղջիկը մտահոգվում է)*: Դո՛ւ, հարբեցող խո՛զ, անամոթաբար չորս կողմդ փսխեցիր և չամաչեցիր՝ մաքրել մի անմեղ մարդու մետաքսյա վերնաշապիկով, հենց քե՛զ, քե՛զ պետք է տանեմ անդենական:

ԱՂՋԻԿԸ - *(Վախեցած)* Օ՜հ, տիկին, տիկի՛ն, խնդրում եմ, խնայի՛ր, երեխայիս հայրն է, հա՛յրը...

ՄԱՀ- ԿԻՆԸ - Պետք է տանեմ: Չեմ կարող մոռանալ ոչ վերնաշապիկը, ոչ էլ...

ՄԱՐԴԸ- *(Ժպիտով, ընդհատելով)* Տիկին Մահ, բարոյախոսական հիանալի ճառերից հետո, դու քեզ հակասում ես, որ մի վերնաշապիկի համար երիտասարդին անդենական ես տանում:

ՄԱՀ- ԿԻՆԸ - *(Ջղային)* Դու լռի՛ր: Չխոսե՛ս: Պետք է տանեմ, պետք է անպայման տանեմ այս երիտասարդին: Չեմ կարող մո-

ռանալ, չեմ կարող...

ՏՂԱՆ - *(ժպտալով)* Համաձայն եմ Մահվան հետ: Տարեք ինձ, Տիկին Մահ, որ հետո էլ ես վերադառնամ իբրև Մահ: *(Աղջկան)* Ցտեսություն, հոգիս:

ԱՂՋԻԿԸ – Զուշանաս, հոգիս: Գիտես, վախենում եմ մենակությունից:

ՄԱՀ- ԿԻՆԸ – Շարժվիր, հարբեցող խոզ: *(Տղային հրմշտելով հանում է դուրս. մինչ այդ տղան ծիծաղում է):*

ԱՂՋԻԿԸ – Ո՜հ, ինչ հրաշալի Մահ կլինի երեխայիս հայրը: *(Ժպիտով)* Գիտեք, պարոն, այն օրվանից, ինչ հղի եմ, ինձ բոլորովին ուրիշ մեկն եմ զգում: *(Երազկոտ)* Պատկերացնում եմ ինձ շատ բարեբեր հողի վրա՝ բլրի գագաթին իբրև միայնակ ծաղիկ, որ իր շուրջ սերմեր է շաղ տալիս: Եւ հողը՝ իր մերկ գիրկը լայն բացած դեպի վեր՝ անմիջապես իր մեջ է առնում սերմերը:

ՄԱՐԴԸ– Հրաշալի զգացողություն. Մայրությունը արդեն սկսել է քո հոգում իմաստավորվել:

ԱՂՋԻԿԸ – Ո՛չ, պարոն, ո՛չ: Մայրությունից շատ տարբեր է այդ զգացումը, որի շնորհիվ ես սկսել եմ արհամարհել այն մահը, որն ինձ մեկ ամիս առաջ տանելու էր: Չգիտեմ էլ՝ ինչ զգացում է:

ՄԱՐԴԸ– Շարունակականությո՛ւն...

ԱՂՋԻԿԸ – Շարունակականությո՛ւն...

ՄԱՐԴԸ- Դու կմեռնես, բայց կծնվի քեզ հաջորդող՝ շարունականությո՛ւնը...

ԱՂՋԻԿԸ – Շարունակականությո՛ւն...

ՄԱՐԴԸ– Որտեղ ծնվեցիր դու, և ո՞վ ծնեց քեզ: Անցյալում դու էլ սերմ էիր, որ մի օր տերևաթափ ծաղկի թերթերից ընկար հողին... Տերևաթափ ծաղկից ստեղծվեցիր դո՛ւ, որ ինքն էլ անցյալում սերմ էր... Եւ այսպես, հաջորդաբար՝ տերևաթափ ծաղկի՜ց՝ թերևաթափ ծաղի՜կ, սերմի՜ց՝ սերմ...

ԱՂՋԻԿԸ - Արդեն հասկանում եմ, հաջորդականությո՛ւն...

(Ներս է մտնում Կինը՝ մազերն ուղղելով):

ԿԻՆԸ - *(ժպիտով)* Ինչպե՞ս էր, լավ խաղացի՞ Մահվան դերը:

ԱՂՋԻԿԸ – Տիկի՛ն, ես ձեզնից մի փոքր նեղացած եմ: Խի՜ստ էիք երիտասարդի նկատմամբ:

ԿԻՆԸ - Բայց ինքն էլ իրեն չէր կարողանում զսպել:

(Ձեռքի հարվածներով երեք անգամ բախում են դուռը):

ՄԱՐԴԸ– Ո՞վ է բախում դուռը:

ԱՂՋԻԿԸ - *(Ծիծաղելով)* Հոգիս, այդ դո՛ւ ես:

ՏՂԱՅԻ ՁԱՅՆԸ - *(Սարսափազդու)* Այո՛, ես եմ, ես՝ Մա՛հը:

ԱՂՋԻԿԸ - *(Ուրախ)* Ինքն է: Ինքը: Մահը չէ: Մահը չէ:

(Աղջիկը բացում է դուռը: Ներս է մտնում Մահ-Տղան՝ հագին մահվան սև պատմուճանը: Ձեռքին՝ մահվան երկար գերանդին: Գլխին դափնեպսակ չի դրել: Անմիջապես մոտենալով Մարդուն՝ գերանդին բռնությամբ մոտեցնում է Մարդու վզին):

ԱՂՋԻԿԸ - *(Սարսափահար)* Հոգիս, ինչ ես անում: Հո խելագար չես::

ԿԻՆԸ - *(Սարսափահար)* Ո՛չ, ո՛չ, ֆիզիկական բռնությունն արգելված է: Խաղ է, մենք խաղում ենք:

ՄԱՐԴԸ- *(Ճչալով)* Զգո՛ւյշ, ինձ կարող ես վիրավորել:

ՄԱՀ-ՏՂԱՆ - *(Երկու քայլ հեռանալով Մարդուց)* Նպատակս քեզ վիրավորելը չէ, Մա՛րդ, այլ՝ սպանելը: *(Դիմելով կանանց: Խիստ)* Իսկ դուք, քանի որ ձեզ թատրոնում եք պատկերացնում, հանգիստ նստեք և հետևեք հեղինակության և Մահվան խաղին: *(Կանայք սարսափած նստում են):* Այո՛, պարոն, սա մահվան խաղն է. ես մահն եմ, դու՝ զո՛հը: Եւ եթե մահը խաղ է, ուրեմն անենօրյա խաղն էլ իր հերթին՝ մահն է:

ՄԱՐԴԸ– Մահ, սկսեցիր փիլիսոփայել:

ՄԱՀ-ՏՂԱՆ - *(Գերանդու շեղբը Մարդու վզից հեռացնելով)* Հիմա հաշվեհարդարի պահն է, Մա՛րդ: Դու ամիսներ շարունակ մեզ ապրեցրիր հրաշալի արևածագի հրապույրով, այդպիսով՝ ինքդ քեզ հեղինակություն դարձրիր: Բայց ես գիտեմ, որ քո հեղինակությունը կեղծ է: Քեզ պետք է դիմակազերծեմ: Ասա՛, ո՞վ ես դու:

ՄԱՐԴԸ- ես՝ հեղինակություն եմ:

ՄԱՀ-ՏՂԱՆ - Դու այդ խաղդ խաղացիր ամբողջ կյանքում: Բայց հիմա դու գտնվում ես Մահվան դատաստանի առաջ և, ի վերջո, պետք է ողջ ճշմարտությունը հայտնես: *(Ճչալով)* Ասա՛, ո՞վ էիր դու անցյալո՛ւմ, և ո՞վ ես այսօր:

ՄԱՐԴԸ- ես… անցյալում… հեղինակություն էի…

ՄԱՀ-ՏՂԱՆ – Իսկ այսօ՞ր: *(Սպառնալից)* Ճշմարտության գերանդին վզիդ վրա է, Մա՛րդ: Պատասխանի՛ր. *(Ճչալով)* , Իսկ այսօ՞ր:

ՄԱՐԴԸ- *(Թույլ ձայնով)* Այսօր... ոչինչ...

(Մահ-Տղան ետ է քաշվում գերանդին: Մարդը շփում է վիզը: Կանայք սարսափած և լուռ հետևում են խոսակցությանը):

ՄԱՀ-ՏՂԱՆ – Խոստովանիր:

ՄԱՐԴԸ- *(Մեղմ)* Այո՛, ես ծանոթ էի մարդկային բոլոր ազնիվ սկզբունքներին և ի չարս գործադրվող հնարավորություններին, որոնք միշտ շահագործում էի: Դո՛ւ, Մա՛հ, հիմա կարող ես կյանքս խլել, *(Ժպիտով)* բայց, իմացի՛ր, մահվան այս տնից դուրս, մարդկությունը ինձ վերջին հրաժեշտը կտա իբրև բարոյախոսի՛ և ազնիվ հեղինակության:

ՄԱՀ-ՏՂԱՆ - Դու կեղծ հեղինակությո՛ւն ես, նրանք էլ՝ կեղծավորնե՛ր...

ՄԱՐԴԸ- Անցյալում՝ պայքարում էի անարդարությունների դեմ: Բայց եկավ մի պահ, համոզվեցի, որ ի զուր է պայքարս, երբ կեղծ հեղինակությունները զարտուղի և ապօրինի միջոցներով գերազանցում են ինձ: Նրանք հեղինակության համար պայքար էին մղում. տեսական առումով՝ կա՛ր բարոյախոսությո՛ւն, գաղափարաբանությո՛ւն, իսկ գործնականում՝ դա՛վ, սադրա՛նք, բռնությո՛ւն... *(Դառնությամբ)* Այո՛, ես պարտվեցի՛: Եւ ո՞վ հեգնանք... Մի օր էլ, հեղինակությունս պահելու համար՝ որոշեցի վարվել նրանց պես...

ՄԱՀ -ՏՂԱՆ - Դու վա՛տ, վա՛տ արարած ես:

ՄԱՐԴԸ- *(Շարունակելով)* Բայց ավա՜ղ, ես չկարողացա մնալ այնտեղ՝ կեղծավորների կրկեսի մեջ: Ես սովոր չէի այդ սադրանքներին և դավերին: Դուրս նետվեցի պայքարի՛ց, բեմի՛ց, և հանկարծ ինձ գտա մանկության մեջ: *(Աղաչական)* Մի լա՛ստ, փրկության մի լա՛ստ էր պետք , որ գոնե պահպանեի գոյությունս: Եւ ես դարձյալ ինձ նետեցի այն լաստի վրա, որ կոչվում էր բարոյախոսական հեղինակություն:

ՄԱՀ-ՏՂԱՆ – Թո՛ւյլ, թո՛ւյլ, սովորական արարած...

ՄԱՐԴԸ- *(Շարունակելով)* Փոխանակ վեր բարձրանալու և տարբերվելու մյուսներից, բարձունքից ցած իջա, պարզ ու բարեմիտ մարդկանց շրջանում սկսեցի ինքնահաստատվել՝ հեղինակություն վայելելու համար: Ո՜հ, հեշտ էր: Հասարակական վայրերում, պարտեզների մեջ, աղոթատեղերում, բակերում, շուկաներում, դեղատներում վխտացող ազնիվ և միամիտ մարդիկ ուրախությամբ էին լսում և ընդունում բարոյախոսական բարձրագոչ

մտքերս…

ՄԱՀ-ՏՂԱՆ - *(Ճչալով)* Դու վատ, վատ արարած ես։

ՄԱՐԴԸ- Բայց, Մահ, ես այդ ազնիվ և բարեհոգի մարդկանց հորդորում էի սիրել իրար. կյանքի ջերմությունը փոխանցել իրար, որովհետև մարդկությունը գնում է դեպի միայնություն, որի հետևանքով մարդկանց միջև նվազում է սերը, հաղորդակցությունը։

ՄԱՀ-ՏՂԱՆ – Մի՛ արդարացիր։ Դու հեղինակություն չես։

ՄԱՐԴԸ - *(Ճչալով)* Նայի՛ր շուրջդ, Մահ։ Եւ ասա, այս պահին քանի հեղինակություն ես տեսնում մեր շուրջը, որոնք հեղինակության են հասել իրենց մարդկային արժանիքների շնորհիվ։ Քանի՜, քանի՜ հեղինակություն…

ՄԱՀ-ՏՂԱՆ - *(Մեղմ)* Իրավացի ես, բայց դա չի արդարացնում քեզ։

(Մարդ-Տղան գերանդու շեղբը մոտեցնում է Մարդու վզին)։

ՄԱՀ-ՏՂԱՆ – Ընդունի՛ր, ընդունի՛ր, որ ձախողված ես։

ՄԱՐԴԸ- *(Ընկճված)* Այո՛, ընդունո՛ւմ եմ, ձախողված եմ…

ՄԱՀ-ՏՂԱՆ - Ընդունի՛ր, որ կեղծ հեղինակությամբ ազդել ես թույլ և անգետ մարդկանց վրա։

ՄԱՐԴ - Ընդունո՛ւմ եմ։

ՄԱՀ-ՏՂԱՆ - *(Ճչալով)* Ընդունի՛ր, որ չես փորձել պայքարել նրանց դեմ, ովքեր քեզնից ավելի զորեղ են, և նրանցից հաշիվ չե՛ս պահանջել։

ՄԱՐԴԸ– Ընդունո՛ւմ եմ։ Չե՛մ փորձել…

ՄԱՀ-ՏՂԱՆ - *(Մեղմ)* Ուրեմն դու արժանի ես մահվան։

ՄԱՐԴԸ - *(Թույլ ձայնով)* Մահվա՜ն…

(Մի պահ լռություն է տիրում։ Մահ-Տղան գերանդին հեռացնում է Մարդու վզից)։

ՄԱՀ-ՏՂԱՆ - Դո՛ւ, սովորական արարած, արժանի չես դիմավորելու հրաշալի արևածագը։

ՄԱՐԴԸ– Հրաշալի արևածա՜գը…

ՄԱՀ-ՏՂԱՆ - Դո՛ւ, սովորական արարած, պետք է մահանաս։ Եւ մինչև հրաշալի արևածագի գալուստը, կմնաս այս բազմոցին՝ անշարժ, իբրև դիակ։ Իսկ մենք դիակդ կհանձնենք արևածագին։

ՄԱՐԴԸ– Մա՛հ, ինձ առաջարկում ես մեռնե՞լ։

ՄԱՀ-ՏՂԱՆ - Այո՛, առաջարկում եմ, պետք է մեռնե՛ս և լինես

իրական դիակ և ոչ այն դիակի նման, որ սովոր եք քաշքշել ձեր ողջ կյանքում:

ՄԱՐԴԸ- *(Մեռելի պես պառկելով բազմոցի վրա՝ ձեռքերը խաչաձևելով կրծքին)* Ա՛հ, մենության մեջ վերածվում եմ իրական դիակի: Հիացի՛ր: *(Աչքերը փակում է):*

(Լռություն: Կանայք սարսափած նայում են իրար):

ՄԱՀ-ՏՂԱՆ – Վարագո՛յր: Ներկայացումն ավարտվե՛ց:

(Կանայք մի պահ շփոթված նայում են իրար):

ԿԻՆԸ- *(ժպիտով)* Այո՛, ճի՛շտ ես, երիտասարդ, մենք խաղում էինք... թատրո՛ն... թատրո՛ն: Պատկերացրու, մոռացել էի: *(Ծափահարելով)* Բռավո՛... բռավո՛... հրաշալի թատրո՛ն... հրաշալի՛ տեսարաններ... Բռավո՛...

(Լռություն):

ԱՂՋԻԿԸ - *(Նայելով Մարդուն)* Հոգիս, ես վախենում եմ մեռած մարդուց: Ընդհանրապես: Մի բան արա, դե՛ շուտ, այս դիակը տար այստեղից: Քիչ հետո կնեխի:

ՏՂԱՆ - Դիակը շուտով հանձնելու ենք արևածագին:

ԿԻՆԸ – Որպեսզի չվախենաք՝ սպիտակ սավանով դիակը ծածկեմ: *(Գնում է ննջարան):*

ՏՂԱՆ - Այժմ, հերթը քո՛նն է, հոգիս... Դու ես Մահը: *(Գտնելով մահվան պատմուճանը):*

ԱՂՋԻԿԸ - Ես վախենում եմ, մենակ պարտեզ չեմ գնա: Դրսում մո՛ւթ է:

(Կինը բերում է սպիտակ սավաններ և մարդու մարմինը մինչև վիզը ծածկում է):

ՏՂԱՆ - (*Փորձելով աղջկան տալ մահվան զգեստն ու գերանդին):* Վերցրու մահվան զգեստն ու գերանդին և դո՛ւրս ել: Այժմ դո՛ւ ես Մահը:

ԱՂՋԻԿԸ – Ո՛չ, ո՛չ, ես Մահը չե՛մ: Իմ մեջ սաղմնավորվում է Կյա՛նքը...

ՏՂԱՆ - *(Ճչալով)* Կյանք չկա՛, չկա՛: Դու մահն ես սերմանում քո մեջ: Պետք է այդ սաղմը սպանեմ: *(Աղջկան քաշքշելով դեպի ելքի դուռը):* Պետք է սպանեմ սա՛ղմը, որ Մա՛հ է...

ԱՂՋԻԿԸ - *(Ճչալով)* Ո՛չ, ո՛չ, մեր երեխան է նա, մեր կյանքը...

ՏՂԱՆ - Դո՛ւ, մա՛հ սերմանող Մա՛հ, վերցրու մահվան զգեստն

ու գերանդին և դուրս ել... դո՛ւրս... դո՛ւրս...

ԱՂՋԻԿԸ- *(Լալագին: Մերժելով)* Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում, չեմ ուզում... չեմ...

ՏՂԱՆ - *(Հրելով աղջկան դեպի դուռը)* Դո՛ւրս, դո՛ւրս, վախկո՛տ Մահ, դո՛ւրս... հեռացի՛ր մեր կյանքից...

(Տղան բռնությամբ դռնից դուրս է հրում Աղջկան և դուրս նետելով մահվան զգեստն ու գերանդին՝ դուռը փակում է):

ԿԻՆԸ - *(Որ մինչ այդ սարսափած հետևում էր խոսակցությանը)* Ծա՛տ ես բիրտ, երիտասա՛րդ, կո՛շտ, կոպի՛տ:

ՏՂԱՆ - *(Լցնելով բաժակը)* Չգիտեմ, չգիտեմ... այս պահին... ուզում եմ ինչ որ մեկին սպանել...

ԿԻՆԸ - *(Սարսափած: Խրատական տոնով)* Տիրապետի՛ր քեզ, տղա՛ս, հանդարտվի՛ր, ի՞նչ է, մոռացե՞լ ես, որ մենք խաղում ենք...

ՏՂԱՆ – Խաղո՛ւմ ենք... խաղո՛ւմ ենք... Ամեն ինչ խա՛ղ է... ամեն ինչ... *(Ճչալով)* Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ պետք է այս խաղը խաղամ...

(Ձեռքի հարվածներով երեք անգամ բախում են դուռը):

ԿԻՆԸ - *(Տղային հանդարտեցնելով)* Լսեցի՛ր, դուռն են բախում, աղջի՛կն է, քո սիրած աղջի՛կը՝ հոգի՛դ...

ՏՂԱՆ - *(Հուզումնախառն զայրույթով)* Ոչ, ոչ: Մա՛հն է... Մա՛հը...

ԿԻՆԸ - *(Նայելով դռան ուղղությամբ)* Ո՞վ է բախում դուռը...

(Լռություն: Քիչ անց դուռը նորից են երեք անգամ բախում):

ԿԻՆԸ - *(Կասկածով)* Ո՞վ է...

(Լռություն: Տղան մտահոգ ելնում է ոտքի, մոտենում դռանը: Դուռը նորից են երեք անգամ բախում):

ՏՂԱՆ - *(Խիստ)* Ո՞վ է բախում դուռը...

ԿԻՆԸ - *(Վախեցած)* Գուցե Մա՞հն է:

(Տղան բացում է դուռը: Աղջիկը՝ տխուր ու շփոթված ներս է մտնում, առանց մահվան զգեստի և գերանդու, գլխին՝ դափնեպսակը):

ՏՂԱՆ - *(Խիստ)* Ինչո՞ւ չպատասխանեցիր և չասացիր. «Ես եմ՝ Մահը»:

ԱՂՋԻԿԸ – Ո՛չ, ե՛ս... ե՛ս... Մահը չե՛մ: *(Նայելով սրահի ուղղությամբ)* Ես քիչ առաջ... պարտեզում ... մթության մեջ... կյանքի գերանդիով Մահին... սպանեցի, որ նա արևածագին այստեղ չլինի...

ԿԻՆԸ – Սպանեցի՜ր... Մահի՜ն...

ԱՂՋԻԿԸ - Այո՛, այո՛... որովհետև ես՝ կյա՛նքն եմ...

ՏՂԱՆ – *(Իրեն մի կերպ նետելով թիկնաթոռին)* Միամի՜տ, միամի՜տ...

ԿԻՆԸ – *(Հիացմունքով)* Կյա՜նքը... Այո՛, դու կյա՛նքն ես... անմեղությո՛ւն...

ԱՂՋԻԿԸ - Ես՝ կյանք... ծաղկավաճառ աղջի՛կ... ծաղիկներ եմ բաժանում... Ո՞ւր են ծաղիկները... ո՞ւր են...

ՏՂԱՆ - *(Ցույց տալով երկու խոշոր ծաղկամանները)* Այնտե՛ղ, ծաղկամաններում... *(Մոտենալով ծաղկամաններին, վերցնելով արհեստական ծաղիկները)* Արհեստակա՛ն, փոշոտվա՛ծ, անբո՛յր ծաղիկներ... *(Ճչալով)* վերցրու այս ծաղիկները և բաժանիր մարդկանց: *(Արհեստական ծաղիկները փորձում է բռնությամբ տալ աղջկան)* Վերցրո՛ւ... վերցրո՛ւ...

ԱՂՋԻԿԸ – Ո՛չ, ո՛չ: *(Ճչալով)* Ես ատո՛ւմ եմ արհեստական ծաղիկները, ատո՛ւմ եմ: *(Ծաղիկների մի մասը թափվում են՝ աղջկա ոտքերի տակ)* Տա՛ր, տա՛ր այդ մահվան ծաղիկները և դիր մարդու դիակի վրա: Ես Մահը չե՛մ... Մահը չե՛մ... *(Տղան իր ձեռքերում մնացած ծաղիկները նետում է մարդու դիակի վրա և նստում է նրա մոտ՝ գլուխը ափերի մեջ):*

ԱՂՋԻԿԸ - *(Նայելով սրահի ուղղությամբ: Հուզումով)* Ես այն ծաղի՛կն եմ... տերևաթա՛փ... մենավո՛ր... բլրի գագաթին աճած, որ իր սերմերը՝ իր շուրջն է թափում... Եւ հողը, որ մնայուն կյանք է, իր գիրկը լայն բացելով՝ դեպի վեր, կարոտով սերմը իր մեջ է առնում... *(հուզված)* Ո՜հ, Աստվա՛ծ իմ, Նա՛ է շարունակականությունը. կյա՛նք, որ փոխանցվում է հողից-հող, սերմից-սերմ: *(Բարձր աղաղակելով)* Ո՛չ, մահ չկա՛, մահ չկա՛: Ես կյանքի շարունակականության գերանդիով սպանեցի Մահին: *(Մեղմ: Խոսքն ուղղելով դեպի սրահ):* Տիկնա՛յք, պարոնա՛յք, օրիորդներ, հիշո՞ւմ եք, երկու ժամ առաջ էր, կամ... մի կյանք առաջ, երբ ես, այս բեմից թարմ ծաղիկներ ձեզ առաջարկելով, ասացի՛. «Տեսե՛ք, ձեզ համար թարմ ծաղիկներ եմ հավաքել, վերցրե՛ք, որպեսզի ձեր կյանքը լցվի կյանքի բուրմունքով և իմաստավորվի»: *(Նայելով հակառակ ուղղությամբ)* Եւ ասացի ձեզ. «Ո՜հ, տիկի՛ն, տիկի՛ն, դուք վարդի նման գեղեցիկ եք, ես ձեզ համար մանուշակներ եմ հավաքել այն հրաշալի բլուրի լանջերից... *(Ժպտալով)* Գիտե՞ք, տիկին, այդ մանուշ-

ակներն իրենց մեջ սերմեր ունեն: (*Նայելով բոլորովին հակառակ ուղղությամբ*) Իսկ այնտեղ, իր մենության մեջ մխրճված երիտասարդն այլևս չկա... (*Մի պահ լռություն է տիրում*) Այո՛, դուք մերժեցի՛ք կյանքի իսկական ծաղիկները... ավա՜ղ... մերժեցի՛ք: (*Նայելով հեռու՝ սրահի խորքը*) Իսկ ո՞ւր է այն ծերունին, որ ինձ վերադարձրեց անթառամ ծաղիկները, վերադարձրեց, որովհետև շատ էին նման արհեստական ծաղիկների: (*Նայելով հեռու՝ վեր: Բարձր աղաղակելով*) Ո՞ւր եք, պարոն ծերունի: (*Մեղմ*) Ա՜հ, հիշո՞ւմ եք, ձեզ մի կարմիր մեխակ նվիրեցի: Դո՛ւք, ազնվական պարոն, դո՛ւք՝ Մարդ, հասկացաք, որ այն կյանքի թարմ և հավիտենական ծաղիկն է: Մենք այդ ծաղիկով իրար ճանաչեցինք: Այո՛, կյանքը, իրական կյանքն էր, որ իր ջերմությամբ այդ պահին միացրեց մեզ... Դուք ժպտացի՛ք և գնացի՛ք. ձեր հայացքի մեջ վերադարձի խոստումը կար... Հիմա, ո՞ւր եք... Եթե իմանաք, ինձ այնպես մենակ եմ զգում: Ո՜հ, վերադարձե՛ք, կյանքի կյանքի թարմ ծաղիկներով իմաստավորված հրաշալի Ստեղծագործություն... Վերադարձե՛ք...

(Երեք անգամ բախում են դուռը: Կինն ու Տղան սարսափած նայում են դռան ուղղությամբ):

ԿԻՆԸ - (*Դողացող ձայնով*) Ո՞վ է...

(Մի պահ լռություն է տիրում):

ՏՂԱՆ - (*Ցնցելով Մարդու մարմինը. ճչալով*) Մա՛րդ, արթնացի՛ր: Հարցրու. «Ո՞վ է բախում դուռը»:

(Մարդը չի շարժվում: Դարձյալ երեք անգամ բախում են դուռը: Լույսերը աստիճանաբար սկսում են հանգչել):

(Հանկարծ բացվում է դուռը և կուրացուցիչ լույսը ներս է խուժում: Մինչ այդ բեմի բոլոր լույսերը հանգչում են և դռնից թափանցող լույսը միանգամից լուսավորում է Աղջկան , որ լայն բացած թևերով ընդառաջ է գնում դեպի լույսը):

ԱՂՋԻԿԸ - Արևածա՛գ, գրկի՛ր ինձ: Ես կյանքի ծաղիկն եմ: Տե՛ս, իմ չորսբոլոր սերմեր են թափված, որովհետև ե՛ս եմ, ես եմ Շարունակականությունը:

(Մի պահ լռություն է տիրում: Բեմահարթակի վրա լսվում են թատերախաղի սկիզբն ազդարարող երեք ուժգին հարվածներ

...կարճ ժամանակով փակվում է վարագույրը):



Խորեն ԱՐԱՄՈՒՆԻ

Ծնվել է Իրանում 1948 թվականին: Տարրական կրթությունը ստացել է հայոց ազգային Նաիրի և Հուր. իսկ միջնակարգը՝ պարսկական Ադիբ դպրոցում: Մեկնել է Իսֆահան, ընդունվել տեղի համալսարանի հայագիտական բաժին, երկու տարի ուսանելուց հետո 1969 թվականին ընտանիքով հայրենադարձվել է: 1975-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժինը: Գիտական աշխատանք է կատարել մատենադարանում, մշակույթի տանը, ապա Պետական պատկերասրահում, որպես գիտաշխատող զբաղվել է ուսուցչությամբ:

1980 թվականին արտագաղթել է ԱՄՆ: Գիտական ու հրապարակախոսական հոդվածներով հանդես է եկել տեղի պարբերականներում:

2004 թվականից Հայաստանի Գրողների Միության անդամ է:

Տպագրվել են.

1991-ին թվականին «Հետմահու հարսանիք» պատմվածքների ժողովածու (Երևան)

1993-ին «Երբ որ բաց են դռներն հուսո» վիպակների ժողովածու (Լոս Անջելես)

1996-ին «Մահվան պար» վիպակների ժողովածու (Լոս Անջելես)

1996-ին «Մի բուռ առօրյա» պատմվածքների ժողովածու (Լոս Անջելես)

1999-ին «Դարի ճանապարհ» պատմվածքների շարքը (Լոս Անջելես)

2002-ին «Թատրոն» վեպը: (Լոս Անջելես):

2004-ին «Անվերադարձ ապագա» թատերգությունների ժողովածուն (Լոս Անջելես)

2005-ին «Անվավեր» պատմվածքների շարքը (Երևան)

2005-ին «Դպրոցի ճամբան» հուշապատումը (Լոս Անջելես)

2008-ին «Ուղիղ տունը» (Երևան)

2010-ին «Խրամատից դուրս» (Երևան):

Թատերգություններից բեմադրվել են.

1996-ին երկու գործողությամբ «Հարութ պապը» դրաման (Լոս Անջելես)

1997-ին երկու գործողությամբ «Պողոս քեռու այցը» դրաման (Լոս Անջելես)

1997-ին «Երթ ու դարձի տոմս դրախտի համար» կատակերգությունը (Երևան ապա Լոս Անջելես)

2004-ին «Անվերադարձ ապագա» տրագիկոմեդիան (Լոս Անջելես): Այս գործը այժմ բեմադրվում է Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում:

2007-ին «Ետ ցնցում» երկու գործողությամբ դրամա (Լոս Անջելես)

ՀԱՐՍՆԱՑՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Դրամա երկու գործողությամբ

Գործող անձինք
ՎԱՐԴԱՆ՝ 55-60 տարեկան
ՏԱՏ՝ 75-80 տարեկան
ԿԱՐԵՆ՝ 25-30 տարեկան
ՍՅՈՒԶԻ՝ 25-30 տարեկան
ՀԱՍՄԻԿ՝ 35-40 տարեկան

Լոս Անջելես, հայկական գողտրիկ մի սենյակ, Հասմիկը միայնակ նախաճաշի սեղան է դնում։ Հեռախոսը հնչում է։

ՀԱՍՄԻԿ – *(Պատասխանում է* հեռախոսին*)* Ալո, այո, ես եմ... Բարև, ով է... *(*զգուշավոր*)* Ես քեզ ասացի, որ մի զանգիր, խնդրեցի, չէ՞... Ես քեզ վաղուց եմ մոռացել, դու ինձ համար ընդհանրապես չկաս, մոռացիր... էս իմ աշխատանքի տեղն ա, մի զանգիր... Քեզ ինչ հետաքրքիր ա, թե ինչ եմ անում, աշխատում եմ, ինձ պահում եմ, մի զանգիր և վերջ...

ԿԱՐԵՆ – *(Ներս է* մտնում*)* Բայց ինչու է քեզ թվում, որ էս տանը աշխատում ես։ Ինձ էդպես չի թվում, ինձ թվում ա, որ էս քո տունն *ա (Հասմիկը շփոթված հեռախոսը կախում է),* ինձ թվում ա, որ առանց քեզ էս ընտանիքը... այսինքն՝ ինձ թվում ա, որ դու մեր ընտանիքի Օփրավ անդամն ես։

ՀԱՍՄԻԿ – Բայց ես ինձ միայն թեկնածու էի կարծում...

ԿԱՐԵՆ – Ո՞վ էր։

ՀԱՍՄԻԿ – Ինչո՞ւ։

ԿԱՐԵՆ – Ներողություն...

ՀԱՍՄԻԿ – Երևանում վիճակը ծանր ա, շատ եմ վախենում, ասում են հարյուրից ավելի մարդ ա զոհվել...

ԿԱՐԵՆ – Ինձ մի հատ քաֆֆի տուր էլի, խնդրում եմ...

ՀԱՍՄԻԿ – էս ղարաբաղցիները Երևանը վարի կտան...

ԿԱՐԵՆ – Ինը մարդ է մահացել։

ՀԱՍՄԻԿ – Սուտ են ասում, իմ ականջով եմ լսել, հարյուրից ավելի զոհ կա:

ԿԱՐԵՆ – Ինչքան ես գիտեմ, ինը մարդ է սպանվել, տաս հոգու չափ էլ վիրավորներ կան, ինչ որ ա, մեկ զոհն էլ շատ *ա*...

ՀԱՍՄԻԿ – *(Քաֆֆին սեղանին դնելով)* Մի բան կեր, Կարեն:

ԿԱՐԵՆ – Ախորժակ չունեմ, դու գիտես, որ ես նախաճաշել չեմ սիրում:

ՀԱՍՄԻԿ – Ինչու՞ գոնե մի անգամ Երևան չես գնում, գոնե նախաճաշ ուտել կսովորես...

ԿԱՐԵՆ – Հայրս ասում է՝ նախաճաշի հետ մի հարյուր գրամի չափ էլ «բարի լուս բարի» են *անում*...

ՎԱՐԴԱՆ – *(Ներս է մտնում)* Որ ավտո չքշեի, հենց հիմա մի բաժակ կխմեի: Ուզում եմ գնալ, շատ եմ կարոտել:

ՀԱՍՄԻԿ – Բարի լույս:

ՎԱՐԴԱՆ – Բարի լույս:

ՀԱՍՄԻԿ – Քաֆֆի կուզեք, պարոն Վարդան:

ՎԱՐԴԱՆ – Բարի լույս, Կարեն:

ԿԱՐԵՆ – Բարի լույս, հայրիկ, Հասմիկը հարցնում ա՝ քաֆֆի կուզե՞ս:

ՎԱՐԴԱՆ – Հա, Հասմիկ, տուր: Կարեն, տատդ ու՞ր ա:

ԿԱՐԵՆ – Ինչու՞ Հասմիկից չես հարցնում:

ՎԱՐԴԱՆ – Որովհետև քո տատն է:

ԿԱՐԵՆ – Բայց Հասմիկի հետ ավելի շատ է շփվում, Հասմիկն է նրան նայում, միշտ միասին են, համարյա նրա մայրն է:

ՀԱՍՄԻԿ – Երևի քնած ա:

ԿԱՐԵՆ – Բա տեսա՞ր, բայց տատիին ի՞նչ ես *անում*:

ՏԱՏ – *(Ներս է մտնում)* Էսօր կիրակի ա, քնած չեմ, ուզում եմ միասին նախաճաշենք, հետո եկեղեցի պիտի գնամ:

ՀԱՍՄԻԿ – Բարի լույս, մամ:

ՎԱՐԴԱՆ – Բարի լույս, մա, արի, արի նստիր:

ԿԱՐԵՆ – Բարի լույս, տատ ջան, չեմ հիշում, ե՞րբ ենք միասին սեղան նստել:

ՀԱՍՄԻԿ – Ի՞նչ կուզես, մամ:

ՏԱՏ – Էս ինչ ա, դուք քաֆֆիո՞վ եք սնվում:

ՀԱՍՄԻԿ – Ասում են ախորժակ չունենք:

ՏԱՏ – Ինչքան հիշում եմ, Կարենս դպրոցը ավարտելուց հետո նախաճաշի համ չի առել, Վարդանս էլ միշտ աշխատանքից է ուշացել ու չի կարողացել սեղանի նստել: Նախաճաշ ու ճաշ հասկացողությունը մեր ընտանիքում վաղուց է մոռացվել: Ինձ էլ մի հայկական սուրճ տուր, Հասմիկ ջան: Ձերոնք ո՞նց են, ցավդ տանեմ, Երևանից լուր ունե՞ս:

ԿԱՐԵՆ – Ոնց որ մեկը Երևանից զանգեց, ո՞վ էր:

ՀԱՍՄԻԿ – Էդ հեչ, մերոնք քաղաքական գործերին չեն խառնվում, բայց ասում են վիճակը ծանր ա, հարյուրավոր մարդկանց վրա են կրակել:

ՎԱՐԴԱՆ – Սկսվեց, խնդրում եմ, էդ ապուշ խոսակցություններին վերջ տվեք, ասում են... ո՞վ ա ասում, հարյուրից ավել մարդ ա մահացել, հազարավոր վիրավորներ... ասեք քաղաքացիական պատերազմ էլի...

ԿԱՐԵՆ – Մարդկանց վրա են կրակել, պա:

ՎԱՐԴԱՆ – Ո՞վ, ինչի՞ համար, ո՞ր մարդկանց...

ՏԱՏ – Միայն թուրքը կարող է էդ բանը անել:

ՀԱՍՄԻԿ – Ասում են՝ Նախագահի հրամանն են կատարել:

ՎԱՐԴԱՆ – Ասում են, ասում են, թրքացրեք, Ղարաբաղն էլ *թրքացրեք... (Վեր է* կենում*)* Երկրի կեսը փախավ, մյուս կեսին էլ դուք սպանեք: Էս լուրերը որտեղի՞ց եք ստանում, չեմ հասկանում... Ես գնացի:

ՏԱՏ – Ո՞ւր, բալես:

ՎԱՐԴԱՆ – Ես շատ գիտեմ, երևի գործի, հետո էլ հազար ու մի պրոբլեմ...

ՏԱՏ – Մի կիրակի է, տանը մնա, բալես...

ԿԱՐԵՆ – Ինչքան հիշում եմ, նույնն է կրկնվում: Ես էլ եմ գնում:

ՏԱՏ – Առտու կանուխ էս ու՞ր:

ԿԱՐԵՆ – Ժամը տասնմեկն ա տատ, ժամադրություն ունեմ, գուցե ծով գնանք: Ուրախ չե՞ս, կիրակի է, ի՞նչ *անեմ (դուրս է գալիս)*:

ՀԱՍՄԻԿ – Տատ, սուրճս կնայես:

ՏԱՏ – Եկեղեցի պիտի գնամ, բայց բեր, *կնայեմ*:

ՀԱՍՄԻԿ – *(Գավաթը մեկնում է տատիկին)* Տատ, շատ եմ վախում, արյուն է թափվել, տես լավ բաներ կա՞ն:

ՏԱՏ – Աղջիկ ջան, քո կյանքն էլ մի բանի նման չի, բայց բաժակիդ մեջ լույս կա, շուտով հետաքրքիր անակնկալ կհանդիպես, վերջերս քեզ զանգող է լինում, գուցե լույսը հենց էդ ա...

ՀԱՍՄԻԿ – Չէ, ինչ ես ասում, տատ, մոռացիր, տես ուրիշ ինչ կա...

ՏԱՏ – Բան չեմ հասկանում, եկեղեցիից կուշանամ բալես, բաժակդ լուսավորված ա, մի մտածիր, ամեն ինչ լավ կլինի, պիտի քայլեմ:

ՀԱՍՄԻԿ – Կարենին ասեիր՝ կտաներ:

ՏԱՏ – Չէ, ավելի լավ ա *քայլեմ*: *(Դուրս է գալիս)*:

ՀԱՍՄԻԿ – *(Սեղանը* հավաքելով*)* Այ քեզ ընտանիք, մի տարուց ավել է, դեռ չեմ տեսել հինգ րոպե միասին սեղանի շուրջ *նստեն*: *(Հեռուստացույցը միացնում է, Հայաստանից լուրեր են)*:

ՆՈՐ ՊԱՏԿԵՐ

Լույսերը մարում, նորից լուսավորվում է, Վարդանը լոգարանից դուրս է եկել, տրամադրությունը բարձր է, պատրաստվում է տանից դուրս գալ, մայրը ձեռքին ինչ-որ իրեր ներս է մտնում:

ՎԱՐԴԱՆ – Մայրի՜կ:

ՏԱՏ – Բարև, բալես:

ՎԱՐԴԱՆ – Էս ինչ գործի ես: Նորից *դրա՞նք*...

ՏԱՏ – *(Ձեռքի իրերը սեղանին շարելով)* Հարազատներս են:

ՎԱՐԴԱՆ – Բա, դրա՞նք...

ՏԱՏ – Մասունքներն են, դու լավ գիտես, բալես: Ինչու՞ ես նորից հարցնում, ինչու՞ ես հոգուս հետ խաղում...

ՎԱՐԴԱՆ – Էսքան էլ անցյալով ապրել կլինի՞, ներկադ ապրիր, ցավդ տանեմ...

ՏԱՏ – Ես, ներկաս իմաստավորում եմ անցյալով, հանգուցյալների հետ եմ ապրում, նրանք ինձ մենակ չեն թողնում, հիմա

դու էլ դուրս կգաս ու ես նորից մերոնց հետ եմ: Ես ապրում եմ, որ ինձ բացակա չդնեք, թե ոչ...

ՎԱՐԴԱՆ – Դու, մեզ համար միշտ էլ ներկա ես:

ՏԱՏ – Այ, տեսա՞ր, իմ ծնողներն էլ ինձ համար են ներկա, նրանց հետ զրուցում եմ, կիսվում եմ, դու ջահել ես, չեմ ուզում վիշտ պատճառել:

ՎԱՐԴԱՆ – Ձերոնց ի՞նչ ես ասում, մայրիկ, էդ ի՞նչ վիշտ ես կիսում: Վիշտը թեթևացնելու համար հազարամյակների սովորույթ կա, ինքնահոդ, յոթ, քառասունք, տարի...

ՏԱՏ – Իմ վիշտը ազգային է, մեծ ողբերգություն, տարին քիչ է, հարյուրամյակն էլ չի հերիքի, բայց ես ավելի շատ նրանց եմ լսում, մեր վիճակից որ ասեմ, նրանք նորից կմեռնեն, կիսելու բան չունեմ, ավելի շատ լսում եմ: Վարդան ջան, հավատա, բոլորի ձայնը ականջիս է, երբեմն անգամ պատկերներն են շարժվում...

ՎԱՐԴԱՆ – Դժվար կյանք ես ապրել: ժամանակները փոխվել են, մայրիկ, հիմա մխիթարվելու շատ բան ունես, խաղաղ կյանք ես ապրում: Կուզե՞ս ուղարկեմ Հայաստան, մի քիչ կփոխվես:

ՏԱՏ – Չէ, չեմ ուզի, բոլորովին:

ՎԱՐԴԱՆ – Ասում են Հայաստանը շատ է լավացել, մի վախեցիր, սովետները գնացին, պրծավ, հիմա երկիր ունենք, անկախություն: Նախնիներիդ բոլոր երազները, համարյա թե, իրականացել են...

ՏԱՏ – Կիսված է, ամեն ինչ կիսված է, ամեն ինչի կեսն է մնացել, ոչինչի կեսը կարժեք չի լինում: Կիսված երկիր, կիսված լեզու, կիսված ուղղագրություն, բաժան-բաժան հանրապետություններ, բաժան-բաժան կաթողիկոսություններ, կես գրող, կես հոգևորական, կես մարդ, կես հայ... Համմիկը ու՞ր գնաց:

ՎԱՐԴԱՆ – Կես հայ...

ՏԱՏ – Համմիկը ու՞ր գնաց:

ՎԱՐԴԱՆ – Մարկետ:

ՏԱՏ – Համմիկը լավն ա, բալես, խելքդ գլուխդ հավաքիր...

ՎԱՐԴԱՆ – Հա, լավն ա, ո՞վ ա բան ասում:

ՏԱՏ – Ես եմ ասում, մի ուշացրու, նկատել եմ՝ երբեմն հեռախոսով ինչ-որ մեկի հետ... Մի ուշացրու, բալես։

ՎԱՐԴԱՆ – Մի տարուց ավել ա՝ մեր տանն ա, ոնց որ ընտանիքի անդամ լինի, նրան միշտ քրոջ նման եմ վերաբերվել, հիմա էլ շվարած եմ...

ՏԱՏ – Մի տարի կնոջդ էլ, ինձ է՝լ քրոջ ու մոր պես նայել ա... Եթե նա գնա, Սեդայի բացակայությունը ավելի կզգաս... Ես իմ ոտքի վրա եմ, նրան ուղղակի վարժվել եմ, նա հրաշալի հարսնություն կանի, հրաշալի կին կդառնա, Հասմիկին Աստված է ուղարկել մեր տուն...

ՎԱՐԴԱՆ – Էս մի տարվա ընթացքում դեռ իրար հետ կարգին չենք էլ խոսել, չգիտեմ ինչու ինձ հետ խոսելուց, հանդիպելուց խուսափում ա, հեց մենակ ենք լինում, ինչ-որ պատրվակով փախչում ա։

ՏԱՏ – Սեդան կար, կինդ էր, ողջ էր, անկողնային էր, բայց ողջ էր, Հասմիկը պարկեշտ կին ա... լավն ա, բալես, լավն ա... չփորձես տանից հանել, մտերմացիր հետը, նա քո նկատմամբ վատ տրամադրված չի, ես կին եմ, լավ եմ հասկանում... Կարենին էլ ամուսնացրու, մի *ուշացնի... (մոտենում է Սեդայի լուսանկարին)* Ափսոս, Սեդա, ափսոս, գոնե տղայիդ ամուսնացնեիր նոր, *անխիղճ... (հուզվում է)*։

ՎԱՐԴԱՆ – Հանգստացիր, մայրիկ, հանգստացիր, ամեն ինչ լավ կլինի։ Ես պիտի գնամ, ուշանում եմ, ուր որ է Հասմիկը կերևա, մենակ չես լինի։

ՏԱՏ – Նորից աշխատանքի, հա... գոնե սպասիր, կգա, կհանդիպես, նոր կգնաս։

ՎԱՐԴԱՆ – Չէ, շատ եմ շտապում, կգամ, շուտ կգամ, շատ չեմ *ուշանա*։

ՏԱՏ – *(Ինքն իրեն)* Անբախտ *բալա*։ *(Բարձր)* Հա, բալես, հա։

ՎԱՐԴԱՆ – Կփորձեմ շուտ գալ, գնացի, քեզ լավ *նայիր (կատակով),* հարազատներիդ էլ բարևներ *արա*։

ՏԱՏ – *(Լուսանկարներն ու մասունքները առանձնացնում, դասավորում է)* Գնա, բալես, *գնա (սկսում է մի օրորոցային դնդնալ)...*

ԿԱՐԵՆ – *(Ձայնը անգլերենով)* Արի, արի, խնդրում եմ...

ՍՅՈՒԶԻ – *(Միշտ խոսում է անգլերենով)* Լավ, *հանգստացիր*։

ԿԱՐԵՆ – *(Աղջկան կիսագրկած ներս է բերում, ուղիղ բազմոցին, տատը մեջքով շրջվում է, շվար կանգնած, չի նայում)* Ափսոս էսօր տանը մարդ չկա, բոլորին պիտի ծանոթացնեմ...

ՏԱՏ – Ծան *տղա... (Երգը բարձրաձայն շարունակում է, աղջիկը անակնկալի է գալիս, իրեն կարգի է* բերում*)*

ԿԱՐԵՆ – Տատ, դու տա՞նն ես, բա չպիտի գնայի՞ր...

ՏԱՏ – Ո՞ւր։

ԿԱՐԵՆ – Դեյ քեյր։

ՊԱՊ – Չէ՛, տրամադրություն չունեմ, էնտեղ էլ եմ ձանձրանում...

ԿԱՐԵՆ – Ինչու՞, Համմիկն ուր ա... Տատ, ծանոթացիր, ընկերուհիս ա՝ Սյուզին։

ՏԱՏ – Բարև, Սյուզի, բարի ես եկել, աղջիկս։

ՍՅՈՒԶԻ –Բարև։

ԿԱՐԵՆ – Տատս անգլերեն չգիտի։ Տատ, ասում է՝ բարև։

ՏԱՏ – Էդքանը *գիտեմ (անգլերենով հայկական ակցենտով* Սյուզիին*)*։ Ինչպե՞ս ես։

ՍՅՈՒԶԻ –Շատ լավ, շնորհակալ եմ։

ԿԱՐԵՆ – Լավ էլ անգլերեն ես խոսում, տատ։ Սյուզին մնա էստեղ, հետը զբաղվիր, ես տաս-քսան րոպեից կվերադառնամ։

ՏԱՏ – Էս օտարական, անլեզու բերան հայվանին թողնում, ու՞ր ես գնում։

ԿԱՐԵՆ – Այ տատ, էդ հայվան չի, Սյուզին ա, ուզում եմ՝ մի քիչ մենակ մնաք, լավ անգլերեն գիտի, հետը խոսա, կբացվես... Ես գնացի։

ՏԱՏ – Ծան տղա, դասատու ա բերել, հայ չկա՞ր–– *(գնում է նկարների և մասունքների մոտ, երգը շարունակելով զբաղվում է նկարների հետ։ Սյուզին շատ ուշադիր լսում է, հուզումը թաքցնում է, հետո դանդաղ մոտենում, հետաքրքրություն է ցուցաբերում, տատը առանց նրան նայելու, մի նկար ձեռքին խոսում է)* Սա իմ մորից մնացած միակ լուսանկարն է, երեխա ա, դաժան կյանք ա ունեցել, էս լուսանկարը որբանոցում է, էս բոլոր երեխաները

եղեռնից մազապուրծ եղած որբեր են: Մայրս պատմում էր, թե ինչպես են իր ողջ ընտանիքին մորթել ու տունը վառել, ինքը տաս տարեկան ա եղել, ինչ-որ թուրք փրկել ա, ով իմանա՝ ինչի համար, թուրքի սիրտը դժվար թե քրիստոնյա հայ երեխայի համար ցավար: էդպես էլ մայրս դրա մասին ոչինչ չասաց...

ՍՅՈՒԶԻ – էս թու՞րք ա:

ՏԱՏ – Ի՞նչ:

ՍՅՈՒԶԻ – Ասում եմ, է՛ս, թու՞րք ա:

ՏԱՏ – Թո՞ւրք:

ՍՅՈՒԶԻ – *Լա՛,* թուրք:

ՏԱՏ – Բերանդ խեր բաց արա, աղջիկ ջան, ես եմ, Հալեպում, հազիվ տասնհինգ տարեկան *լինեի... (Սյուզին մի նկար է վերցնում, հետաքրքրված նայում է)* էդ Սիբիրում եմ, 46 թվականին հայրենադարձվեցինք, վեց ամիս հետո մեզ ընտանիքով քշեցին Սիբիր, ամուսինս նավի մեջ դաշնակցականների մասին ինչ-որ բան էր պատմել, լսող էր *եղել...*

ՀԱՍՄԻԿ – *(Առևտուրը ձեռքին ներս է* մտնում*)* Բարև, տատ:

ՏԱՏ – Բարև, աղջիկս: Վերջապես ես չհասկացա, քո տա՞տն եմ, թե՞ մայրիկը:

ՀԱՍՄԻԿ – Այն օրվանից, որ քեզ հանդիպել եմ, դու իմ ամեն ինչն ես:

ՏԱՏ – Միայն մի բանից եմ վախենում:

ՀԱՍՄԻԿ – Ինչի՞ց:

ՏԱՏ – Սկեսուր *լինելուց (ծիծաղում է),* լավ, լավ կատակ եմ *անում:*

ՀԱՍՄԻԿ – *(Սյուզիին* նկատելով*)* Բարև ձեզ:

ՏԱՏ – Կարենի ընկերուհին ա, հայերեն չգիտի: Օտար ա:

ՀԱՍՄԻԿ – *(Անգլերենով)* Բարև:

ՍՅՈՒԶԻ – Բարև: Ես Սյուզին եմ:

ՀԱՍՄԻԿ – Ուրախ եմ: Իմ անունը Հասմիկ է: Նստեք, հիմա ես... Կարենն ու՞ր ա:

ՏԱՏ – Ի՞նչ իմանամ, սրան բերեց գցեց էստեղ, ինքը գնաց, եսիմ... Անգլերեն եմ պարապում: Կարենն ասաց, որ մի քիչ խոսեմ, անգլերենս բացվի: Ասում եմ, Հասմիկ, չլինի թե Կարենը էս

աղջկա հետ...

ՀԱՍՄԻԿ – Չէ, ինչ ես ասում, ջահել են, ընկերություն են անում... Մեր ժամանակի ջահելների սերը նման է Զիվանու երգին՝ այսօր այստեղ, վաղն այնտեղ...

ՏԱՏ – էս հարցով դուք՝ հայաստանցիներդ, ավելի հանգիստ եք, միայն թե քրիստոնյա լինի, Հայաստանում ինչքա՜ն ռուս հարսներ կային... Իսկ, որ ֆրանսիացի, ամերիկացի կամ իտալացի լինի, անգամ հպարտանում եք: Փորձում եք արիստոկրատ ձևանալ, բայց միևնույն է, գյուղացին որ քաղաք մտնի, դեռ քառասուն տարի գյուղացի է, քաղաքացին որ գյուղ մտնի, քառասուն տարի կմնա քաղաքացի: Դրա համար էլ մեր երկիր դեռ քառասուն տարի չի դառնա Եվրոպա, ջինս հագնելով ու պորտները բացելով հո չի...

ՀԱՍՄԻԿ – Սոված չե՞ս, *տատ (թեման փոխում է)*:

ՏԱՏ – Չէ, բալես, շուտ ա, ոնց որ դուրդ չեկավ, չէ՞:

ՀԱՍՄԻԿ – Չէ, ուղղակի կարոտել եմ, երբ Երևանից ենք խոսում, հուզվում *եմ: (Սյուզիին, անգլերենով)* Սուրճ կխմե՞ս, Սյուզի:

ՍՅՈՒԶԻ – Ոչ, շնորհակալ եմ, մի բաժակ ջուր, եթե կարելի է:

ՏԱՏ – Ջուր ա ուզում, Հասմիկ ջան...

ՀԱՍՄԻԿ – Հա, տատ, իմացա:

ՏԱՏ – Հասմիկ, ասում եմ՝ կարո՞ղ ա Կարենը իսկականից սիրահարվել ա էս օտարին:

ՀԱՍՄԻԿ – Մեծ աշխարհ ա, տատ, ամեն ինչի էլ *սպասիր... (ջուրը տալով* Սյուզիին*)* Լավիկն ա, տատ, ինչո՞ւ ես անհանգիստ:

ՍՅՈՒԶԻ – Շնորհակալություն:

ՏԱՏ – Անհանգիստ չեմ, բալես, սիրտս ա կանգնում, ես մեռոնց հետ ամեն օր զրուցում եմ, բա ի՞նչ պատասխան պիտի տամ: Թուրքի դեմ կռված, հերոս Ավետիքի տղան հայրենիքը լքել, եկել ա Ամերիկա, հիմի էլ թոռը ինչ-որ օտարի հետ... Չէ, չի լինի, էդպիսի բան չի լինի, ես պիտի պատասխան տամ, ես ամեն օր նրանց հետ զրուցում եմ, Կարենին ես եմ մեծացրել... էդ տղան ո՞ւր գնաց... էս աղջկան ինչի թողեց էստեղ:

ՀԱՍՄԻԿ – *(Սյուզիին)* Կուզե՞ս Թի-Վի՞Ն *միացնեմ (միացնում է, հայկական հաղորդում է, Արևմտահայաստանի պատմական*

վայրերն է):

ՍՅՈՒԶԻ – Սա հայերեն է:

ՀԱՍՄԻԿ – Այո, Հայաստանից է, Արևմտահայաստանի՝ պատմական Հայաստանի մասին է:

ՏԱՏ – Վանա *լիճն* ա, աղջիկ ջան, սա էլ Աղթամարի կղզին ա, Սուրբ խաչ եկեղեցին ա, անամոթները խաչը հանել են, եկեղեցին էլ դարձրել են սովորական շենք, ոչ պատարագ, ոչ քահանա, ոչ մի սրբություն չեն թողել, անիծված ազգ են, այ էս էլ Անին ա, մեր մայրաքաղաքներից ա, սրանք բոլորը հայկական հողեր են, մեր պապենական հողերն են:

ՀԱՍՄԻԿ – Ինքը բան չի հասկանում, *տատ (կայանը փոխում է)*:

ՍՅՈՒԶԻ – Ինչո՞ւ *փոխեցիր*:

ԿԱՐԵՆ – *(Ներս է մտնում, ձեռքին մի փոքրիկ կարկանդակ ու մի փունջ* վարդեր*)* էյ, սիրելիս, հո չես ձանձրացել:

ՍՅՈՒԶԻ – Չէ, ամեն ինչ լավ է:

ԿԱՐԵՆ – Բարև, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ – Բարև, Կարեն, ո՞նց ես:

ԿԱՐԵՆ – Լավ եմ, հիանալի, ծանոթացա՞ր:

ՀԱՍՄԻԿ – Հա, լավիկն *ա*:

ԿԱՐԵՆ – *(Հասմիկին)* Սրանք քեզ համար են, ծնունդդ շնորհավոր, գինի բացեմ, դու էլ սուրճ *դիր*:

ՀԱՍՄԻԿ – *(Զարմացած,* հրճվանքով*)* էս ի՞նչ սյուրպրիզ, դու որտեղի՞ց իմացար: Արի համբուրեմ, շնորհակալություն:

ՏԱՏ – Վայ, ցավդ տանեմ, ինչո՞ւ չէիր ասում, շնորհավորում եմ, Հասմիկ ջան, շնորհավորում *եմ*: *(Գրկում համբուրում, հուզվում է)*:

ԿԱՐԵՆ – Սյուզի, Հասմիկի ծնունդն է:

ՍՅՈՒԶԻ – Ծնունդդ շնորհավոր, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ – (Հուզված) Շնորհակալություն: Կարեն ջան, էնքան շնորհակալ եմ, ցավդ տանեմ, չէի սպասում, էս ա, սրանք դնեմ ծաղկամանը, Սյուզիին ասա տես հայկական սուրճ կխմի՞:

ԿԱՐԵՆ – Ինչ ա, էդքան էլ անգլերեն...

ՀԱՍՄԻԿ – Բո ասելը ուրիշ ա:

ԿԱՐԵՆ – Հայկական սուրճ կխմե՞ս, Սյուզի:

ՍՅՈՒԶԻ – *Կխմեմ:*

ՀԱՍՄԻԿ – *(Սուրճի սեղանը* պատրաստելով*)* Բա որ ասում եմ:

ՏԱՏ – Սրանք էսպես են, Հասմիկ ջան, ինչ տաս, չեն մերժի, մերժում չկա... Վարդանս մի քանի անգամ ամերիկացի ընկեր ա բերել, ինչ դրել ենք՝ կերել ա, սրանք համբուրգերից բացի բան չեն տեսել... Տոլմայի համար գժվում են...

ԿԱՐԵՆ – Տատ ջան, ցավդ տանեմ, ինքը դրանցից չի, մեր կողմերից ա: Սյուզի, դու տորթը դիր, մոմերը շարի, ես գինին կբացեմ:

ՀԱՍՄԻԿ – Ծաքար չեմ դնում, Սյուզի, Նո շուգըր, օքեյ:

ՍՅՈՒԶԻ – Օքեյ:

ԿԱՐԵՆ – Բայց Սյուզին լավն ա, չէ՞, տատ:

ՏԱՏ – Ամեն ազգի մեջ էլ լավ ու վատ կա, բալես, բայց մերը՝ մերն ա, օտարը կարկատանի պես բան ա, ինչ էլ անես, վրադ կարկատան ա երևալու, ասենք՝ հիմի կարկատանն էլ, ծակ շալվարն էլ ա *մոդա*...

ՀԱՍՄԻԿ – *(Սուրճ է տալիս* Սյուզիին*)* Խմիր, տատին բաժակդ կնայի:

ՍՅՈՒԶԻ – Բայց սա թուրքական սուրճ ա, ասում էիք հայկական...

ՀԱՍՄԻԿ – Նույնն ա, էլի:

ՏԱՏ – Ի՞նչ ա ասում:

ԿԱՐԵՆ – Ասում ա՝ սա թուրքական սուրճ ա:

ՏԱՏ –Դու որտեղի՞ց գիտես, որ դա թուքական ա:

ԿԱՐԵՆ – Ինքը Թուրքիայից ա, տատ:

ՏԱՏ – Վայ *իմ... (վատ է զգում, հանգստացնում, դուրս են տանում, միայն Կարենն է* վերադառնում*)*:

ՍՅՈՒԶԻ – Ի՞նչ պատահեց:

ԿԱՐԵՆ – Հեչ, մեծ կին ա...

ՍՅՈՒԶԻ – Հիմա ո՞նց է:

ՀԱՍՄԻԿ – *(Ներս է մտնում, սենյակը կարգի է* բերում*)* էս ի՞նչ բան էր, Աստված իմ...

ԿԱՐԵՆ – Լավ ա, լավ, գինի լից, Հասմիկ, մոմերը վառիր...

ՀԱՍՄԻԿ – Լավ կլիներ սպասեինք պարոն Վարդանին, նա ուր որ է կերևա:

ԿԱՐԵՆ – էդ դեպքում՝ ավելի լավ է մենք *գնանք*: *(Դուրս են գալիս)*:

ՎԱՐԴԱՆ – *(Ներս է մտնում)* Բարև, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ – Բարև, պարոն Վարդան:

ՎԱՐԴԱՆ – Ինձ «պարոն» մի ասա, խնդրում եմ, ինչ կլինի:

ՀԱՍՄԻԿ – Սովոր եմ, չեմ կարողանում:

ՎԱՐԴԱՆ – Կարենը ու՞մ հետ էր, ո՞ւր էր շտապում:

ՀԱՍՄԻԿ – Ընկերուհին էր, բան չասաց, սուրճն էլ կիսատ մնաց:

ՎԱՐԴԱՆ – Գիտեի, որ մեկի հետ ֆրֆռում ա, բայց չէի տեսել, լավիկն էր երևում:

ՀԱՍՄԻԿ – Հա, լավն ա:

ՎԱՐԴԱՆ – Սրանք ինչ են: էս ինչի՞ ես էսպես խառնված:

ՀԱՍՄԻԿ – Կարենը սյուրպրիզ է արել, էսօր ծնունդս ա, ես էլ չէի հիշում, ուղղակի էսպես անակնկալի եկա, երբեք, երբևէ, որևէ մեկը իմ նկատմամբ էսպես ուշադիր չի եղել:

ՎԱՐԴԱՆ – Հա, Կարենը էդպես ա, բոլորի նկատմամբ ա ուշադիր, ես չէ, ես մի քիչ ցրված եմ, էդպիսի բաներին շատ կարևորություն չեմ տալիս:

ՀԱՍՄԻԿ – Պարոն Վարդան, տորթից կուտե՞ք:

ՎԱՐԴԱՆ – Եթե ձեր ծննդյան տորթն ա, *այո՛*:

ՀԱՍՄԻԿ – *(Տորթը հրամցնելով)* Մի բան եմ ուզում ասել, պարոն Վարդան:

ՎԱՐԴԱՆ – Նախ ծնունդդ շնորհավոր, հետո ասա:

ՀԱՍՄԻԿ – Սեդայի մահից հետո, ես իմ տեղը չեմ գտնում, ինձ թվում ա, ես պետք է իմ գլխի ճարը տեսնեմ:

ՎԱՐԴԱՆ – Դրա մասին մտածելը, Հասմիկ, մի քիչ շուտ ա: Տարուց ավելի ա էս տանն ես, հարմարվել ենք...

ՀԱՍՄԻԿ – Չէ, պարզապես, ինձ թվում ա անելիք չունեմ,... Սուրճ կխմե՞ս:

ՎԱՐԴԱՆ – Սիրով, բայց մայրս քո կարիքը շատ է զգում, ես

էլ, գիտես, քեզ կկարոտեմ։

ՀԱՍՄԻԿ – Բայց, պարոն Վարդան, ճիշտ չի, ես կարող եմ ուրիշ տեղ ապրել, ու մայրիկիդ ինչ-որ հարցերով օգնել։

ՎԱՐԴԱՆ – Սեդան երկար, շատ երկար տառապեց, երկու տարի անկողնային, մի տարի է, ինչ դու մեր տան անդամի նման, քրոջ նման նրան խնամել ես, մի ամբողջ տարի, ամեն օր քեզ կնոջս անկողնու մոտ եմ հանդիպել, ես կնոջս սիրել եմ, շատ եմ սիրել, բայց տարիներ է, ինչ նա ինձ համար ոչ թե կին, այլ սովորական տան անդամ և Կարենի մայրն է եղել...

ՀԱՍՄԻԿ – Հասկանում եմ, պարոն Վարդան, ես ձեզ հասկանում եմ, դուք դեռ երիտասարդ եք...

ՎԱՐԴԱՆ – Իսկ դուք գեղեցիկ, պարկեշտ, *ազնիվ*։ *(Մոտենում է)* Նորից ծնունդդ շնորհավոր, որ իմանայի, անպայման դատարկ ձեռքով չէի գա։

ՀԱՍՄԻԿ – Շնորհակալ եմ, պարոն Վարդան, ես ձեզ միշտ հարգել ու նայել եմ որպես մեծ եղբայր, դուք հրաշալի մարդ եք, իսկ ես...

ՎԱՐԴԱՆ – Դու մենակ ես, այս աշխարհում ոչ ոքի չունես, դու չպիտի մենակ ապրես, քանի ես այս տանն եմ, դու այստեղից չես գնա... Նաև ուզում եմ մի բան խնդրել։ Այս տանը Սեդային հիշեցնող ինչքան իրեր կան, հավաքիր։

ՀԱՍՄԻԿ – Ինչո՞ւ, պարոն Վարդան, քառասունքը նոր եք տվել... Հետո, տատիկի պատասխանը ինչ կտաս։

ՎԱՐԴԱՆ – Դրանով մայրս կուրախանա, նա ինձ կհասկանա։ Ես ուզում եմ նոր կյանք սկսել, եթե դու ուզես, կարող ես օգնել։

ՀԱՍՄԻԿ – Ես կօգնեմ, բայց ինչպես։

ՎԱՐԴԱՆ – Հասմիկ, դու խելացի ես, ես ուզում եմ, որ դու այս տանը մնաս։

ՀԱՍՄԻԿ – Բայց...

ՎԱՐԴԱՆ – *(Ուսերը գրկելով)* Վաղուց է, որ ես քո նկատմամբ անտարբեր չեմ, պարզապես...

ՀԱՍՄԻԿ – *(Հուզված)* Ես ինձ վատ եմ զգում...

ՎԱՐԴԱՆ – Երեխա մի լինի, եթե ցանկանաս, կարող ես այս

տանը մնալ, ես կլինեմ քոնը, իսկ քեզ վաղուց եմ իմը *համարել*:

ՀԱՍՄԻԿ – *(Վարդանից պոկվում է, սկսում է սենյակը կարգի բերել, տատիկի սենյակը ցույց տալով)* Տատին իրեն լավ չէր զգում, պառկեց:

ՎԱՐԴԱՆ – Ինչու՞: Նորից նախնիների հետ սեղանի՞ էր նստել, նրա իրերին ձեռք *չտաս... (դուրս է* գալիս*)*:

ՀԱՍՄԻԿ – Ինչպես միշտ, ճամպրուկի մեջ եմ *դնելու*: *(Հավաքում, դնում է ճամպրուկի մեջ: Վարդանի և Սեդայի լուսանկարը վերցնում է, երկար նայում է Սեդային, սրբում ու տանում է ամենաերևացող տեղը: Իսկ Վարդանի դիմանկարը երկար նայելուց հետո, զգուշորեն սեղմում է կրծքին ու տեղն է դնում)*:

ՎԱՐԴԱՆ – *(Ներս է* գալիս*)* Մայրիկին ինչ է պատահել:

ՀԱՍՄԻԿ – Սուրճդ չխմեցիր...

ՎԱՐԴԱՆ – Հարցնում եմ՝ մորս ինչ է պատահել, չի խոսում, սարսափած աչքերիս է նայում, ինչ-որ բան պիտի ասի, բայց չի համարձակվում:

ՀԱՍՄԻԿ – Բան էլ չի պատահել, Կարենի ընկերուհուն հայկական սուրճ տվեցի, նա ասաց, որ սա հայկական չի, թուրքական ա, տատիկն հարցրեց, թե որտեղից գիտի, Սյուզիի փոխարեն Կարենը պատասխանեց, ասաց, որ ինքը Թուրքիայից ա, տատիկն էլ վատացավ:

ՎԱՐԴԱՆ – Անունը Սյուզի՞ ա:

ՀԱՍՄԻԿ – Հա, բայց Թուրքիայից ա:

ՎԱՐԴԱՆ – Ուզում ես ասել՝ թու՞րք ա:

ՀԱՍՄԻԿ – Չէ, երևի տատին էդպես հասկացավ:

ՎԱՐԴԱՆ – Ես չեմ ուզում էդպես հասկանալ, սուրճս չեմ խմում, որ խնդրեմ մի բաժակ վիսկի կտա՞ս:

ՀԱՍՄԻԿ – Քեզ ինչ պատահեց:

ՎԱՐԴԱՆ – *Հեչ: (Սենյակի չորս շուրջը պտտում է, տեսնում է իրերի ու լուսանկարների տեղաշարժեր է եղել, գոհունակություն է ցույց* տալիս*)* Այսօր ուզում եմ հարբել:

ՀԱՍՄԻԿ – Ցերեկո՞վ, գործ չունե՞ս:

ՎԱՐԴԱՆ – Չէ, ուզում եմ ամբողջ օրը հարբած լինել:

ՀԱՍՄԻԿ – Ինչու՞:

ՎԱՐԴԱՆ – Քեզ էլ գինի լցրու, չէ, ես կլցնեմ: Դու գինի ես սիրում, ի միջի այլոց, նաև գիտեմ, թե ինչ գինի, անգամ ինչպիսի գավաթով:

ՀԱՍՄԻԿ – Ես գինի ունեմ, տատիկին նայեմ, գամ:

ՎԱՐԴԱՆ – Հանգիստ թող նրան:

ՀԱՍՄԻԿ – Սա վերցրեք, ես *հիմա (վիսկին տալիս, դուրս է գալիս)*:

ՎԱՐԴԱՆ – Թուրքիայից ա, հայկական սուրճը՝ թուրքական ա, հա էլի, հայկական սուրճ երբ ենք ունեցել որ, ճիշտ ա ասել աղջիկը... Ծիկահեր, գեղեցիկ աղջիկ էր: Թուրքիայի՞ց, թե՞ թուրք, բան չեմ *հասկանում (Նկատում է, որ իր և կնոջ լուսանկարի տեղը փոխված է, մոտենում, կնոջ լուսանկարը վերցնում, դուրս է գնում)*:

ՀԱՍՄԻԿ – *(Ներս է մտնում, մազերը ավելի կոկիկ, վերնաշապիկը փոխված, նկատում է, որ լուսանկարը չկա)* Տատին լավ է, քնած է...

ՎԱՐԴԱՆ – *(Ներս է մտնում, գինին վերցնում, մոտենում է Հասմիկին, տալիս է նրան, երկար նայում է աչքերին)* Դու այս տանից չես *գնա...*

Լույսերը մարում են, նորից լուսավորվում է, տատիկը մտնում է սենյակ, նորից լուսանկարների ու մասունքների հետ է, բացում է փոքրիկ ճամպրուկը, ալբոմներն ու սկսում է ինքն իրեն զրուցել:

ՏԱՏ – *(վերցնում է Սեդայի նկարներից* մեկը*)* Հարսս էլ գնաց հիշողությունների գիրկը: Նա էլ ավելացավ այս հին ընտանիքին: Սեդա ջան, լավն էիր, հարս էիր, բայց լավն էիր, բախտդ չբերեց, Կարենիս հարսանիքը չտեսար... Վախենում եմ, Սեդա ջան, շատ եմ վախենում, չեմ ուզում հանդերձյալ աշխարհում քեզ վիշտ պատճառել, բայց վախենում եմ, որ Կարենիս ընկերուհին թուրք լինի: Մի անգամ եմ հանդիպել, գեղեցիկ, անուշիկ աղջիկ ա, ասում են՝ էդ անամոթ ժողովրդի նոր սերունդը շատ է գեղեցկացել: Վայ թե հայի խառնուրդ լինի: Ինչքան հայ բռնաբարեցին, ջուրը նետեցին, թրքացրին... Չէ, Սեդա ջան, թույլ չեմ տա, դա լինելու բան չէ, Սարդարապատում կռված հերոս Ավոյի թոռը չպի-

տի թուրքի, մուսուլմանի հետ *ամուսնանա*։

ՀԱՍՄԻԿ – *(Ներս է մտնում՝ առանց տատիին* նայելու*)* Ասում են՝ հարյուր հազարավոր այդպիսի հայեր կան։

ՏԱՏ – Ինչպիսի՞...

ՀԱՍՄԻԿ – Հավատափոխ, թրքացած...

ՏԱՏ – Հա, կան, ստիպված են եղել, ի՞նչ անեին։

ՀԱՍՄԻԿ – Միգուցե դրանց Հայաստան տանեն, նրանց փոխադրեն հայրենիք։

ՏԱՏ – Ի՞նչ։ Եթե նրանք իրենց հայ են համարում, ուրեմն արդեն հայրենիքում են, իրենց պապենական հողի վրա։

ՀԱՍՄԻԿ – Բայց Հայաստանում հայախոս սերունդ կտան, չէ՞։

ՏԱՏ – Ի՞նչ ես կարծում, հայաստանցին նրանց մուսուլման լինելն ու հայերեն չիմանալը կհանդուրժի՞, գուցե նրանք Հայաստանում ուզեն իրենց մզկիթն ունենալ, հայ Առաքելական եկեղեցու հարևանությամբ՝ հայկական *մզկիթը*...

ՀԱՍՄԻԿ – *(Ծիծաղելով)* Հայկական մզկի՞թ...

ՏԱՏ – Հա՛, զարմացար, չէ՞, հայկական մզկիթ։ Խաչակնքող հայի կողքին ծնկաչոք նամազ անող հայ...

ՀԱՍՄԻԿ – Իրականություն ա, պիտի հաշտվես։

ՏԱՏ – Երևանցիներդ մեզ հայախոս, քրիստոնյա հայերիս չհանդուրժեցիք, ախպարի պիտակով, երրորդ կարգի քաղաքացու կարգավիճակ շնորհեցիք ու հայդե՝ Սիբիր, էսօր նույն ժողովուրդը ղարաբաղցուն է թրքացնում...

ՀԱՍՄԻԿ –Սխալվում ես, տատ...

ՏԱՏ – Բա էս ցույցերը ինչ են, էս լոզունգները...

ՀԱՍՄԻԿ – Իշխանության, դեմ են այս իշխանավորներին, չեն սիրում։

ՏԱՏ – Որովհետև էրևանցի չեն...

ՀԱՍՄԻԿ – Թալանում են, կաշառակերությունը առել տանում ա, Հայաստանում երբեք կոռուպցիան այսքան ուժեղ չի եղել... Մի քանի օր առաջ քանի՜ անմեղ մարդու արյուն թափեցին...

ՏԱՏ – Ո՞վ թափեց, թու՞րքը։ Լավ էլ բառ եք գտել՝ կոռուպցիա, ասա կաշառակերություն՝ պրծի... Անմեղ մարդու արյուն... Երբ ես տեսել ցույց կազմակերպողը կամ հեղաշրջում անողը սպան-

վի, իհարկե, անմեղներն են սպանվում, միամիտները, հայրենասիրությամբ լցված երիտասարդները: Պարագլուխները ապահով նստած հեռահար վահանակով ժողովրդին ուր ասես տեղափոխում են: Աթոռի համը տեսածը չի կարող հրաժարվի նրանից...

ՀԱՍՄԻԿ – Տատ, իսկականից դու շատ բան գիտես, կյանքի մեծ փորձ ունես, էսպիսի բան տեսե՞լ ես, տեսե՞լ ես ինչ-որ պետություն կրակ բաց անի իր քաղաքացիների վրա, իր երեխաների, ջահելների վրա...

ՏԱՏ – Բալես, դու ոչինչ չգիտես, ոչ բոլշևիկներից, ոչ ստաբան ռեժիմից, ոչ էլ կոմունիստների ուղղիչ տներից, կացնահարում էին տանդ մեջ, երեխայիդ առաջ էին գյուղում: Եվ գիտե՞ս ինչի համար, ոչինչի համար... Իհարկե, մեր օրերը տարբեր են, չպիտի անմեղ արյուն թափվի, դա էլ չէր լինի, եթե պայքարը աթոռի համար չլիներ, փողի ու պաշտոնի համար են եղբայրասպան լինում: Հեռու չգնանք, էստեղ, Գլենդեյլի քաղաքապետարանի ընտրություններին, մեկ տեղի համար ինը հայ թեկնածու ունենք... Աթոռի համար ամեն տեսակի ստորության դիմում են, հայրենասիրությունն ու ցեղասպանությունը բիզնեսի վերածած, միմյանց հոշոտում են... Մինչև ընտրությունները եռագույն հայ են, ընտրվելուց հետո աստղաշատ ամերիկացի... Ասենք՝ կարգն ա էդպես, ինչո՞ւ ենք զարմանում...

ՀԱՍՄԻԿ – Բարդ հարցեր են: Անգամ ընտանիքները պրոբլեմներ ունեն...

ՏԱՏ – Փառք Աստծո, մեր ընտանիքում որևէ խնդիր չկա:

ՀԱՍՄԻԿ –Կա, տատ, կա...

ՏԱՏ – Ուզում ես ասել՝ Կարենի *ընկերուհին... (Հեռախոսի զանգ է հնչում, վերցնում է)* Ալո, ո՞վ է: Ո՞վ, ո՞ւմ, Հասմիկին, հա, նա էստեղ է ապրում, ո՞վ է հարցնում: Լսում եմ, ասում եմ՝ ո՞վ է հարցնում: Ո՞վ, ամուսի՞նը, Հասմի՞կի ամուսինը... Որտեղի՞ց, Մոսկվայի՞ց... Օ՛, Աստված իմ, դու փրկիր մեզ... Չէ, չէ, ձեր ուզած Հասմիկը էստեղ չի ապրում, դուք սխալ եք *զանգել: (Լսափողը կախում է):*

ՀԱՍՄԻԿ – Ես էստեղ եմ, բայց ով էր:

ՏԱՏ – Սխալ համար էին հավաքել, ինչ-որ Հասմիկի էր ու-

զում, ամուսինն էր, Մոսկվայից էր զանգում: Գիտես չէ՞, սխալ համար էլ որ հավաքես, անպայման հայի տուն ա ընկնում:

ՀԱՍՄԻԿ – Համոզվա՞ծ ես, որ ինձ համար չէր:

ՏԱՏ – Հա՛, իհարկե, Մոսկվայից էր, չէ՛, քեզ համար չէր: Կնոջն էր *հարցնում*:

ՀԱՍՄԻԿ – *(Շփոթված)* Տատ, գիտես, չէ՞...

ՏԱՏ – Էս քեզ ինչ պատահեց...

ՀԱՍՄԻԿ – Ոչինչ, ոչինչ, Վարդանը ինձ ընթրիքի է հրավիրել, երեկոյան միասին դուրս ենք գալու, հո դեմ չե՞ս:

ՏԱՏ – Չէ, չէ, ի՞նչ ես ասում:

ՀԱՍՄԻԿ – Դե, որ էդպես ա, որ զանգող եղավ, ասեք՝ մենք Հասմիկ չունենք և վերջ:

ՏԱՏ – Բայց չէ՞ որ ունենք:

ՀԱՍՄԻԿ – Երբ ես տանը չեմ՝ չունենք, երբ տանն եմ՝ ունենք, հա՞, տատի ջան:

ՏԱՏ – Լավ, ցավդ տանեմ, լավ:

ՀԱՍՄԻԿ – Դե, ես գնացի, շուտ *կգամ... (դուրս է գալիս)*:

ՏԱՏ – *(Ինքն իրեն)* Բան չեմ հասկանում, Մոսկվայից, ամուսին, էստեղ չեմ ապրում, էստեղ եմ *ապրում...*

ՎԱՐԴԱՆ – *(Ներս է մտնում)* Մամ ջան, առանց նկարների ո՞ւմ հետ ես խոսում:

ՏԱՏ – Հասմիկի հետ էի խոսում, նոր դուրս եկավ:

ՎԱՐԴԱՆ – Հա, գիտեմ, տեսա... Մա, Հասմիկը մնալու է մեր տանը, մեզ հետ է ապրելու՝ ընդմիշտ: Հետը խոսել եմ, ամեն ինչ լավ ա, ուղղակի չեմ ուզում հարսանիք ու էսպիսի բաներ լինի, ինձ չի սազում, հենց էնպես, ինչպես միշտ մեր տանն ա, թող էդպես էլ շարունակվի...

ՏԱՏ – Բայց Հասմիկը քո կինն ա քնելու, բալաս... Նա դեռ երիտասարդ ա, առաջին անգամն ա ամուսնանում...

ՎԱՐԴԱՆ – Արդեն համարիր, որ նա իմ կինն ա: Էդպես ենք պայմանավորվել, չի դժգոհում:

ՏԱՏ – Նա արդեն քո կի՞նն ա: Բայց ինչո՞ւ շտապեցիր, բալես, գուցե ...

ՎԱՐԴԱՆ – Ուրախ չե՞ս, մա, արդեն տարուց ավելի ա, ինչ

ճանաչում ենք, հերիք չի, դու էլ դեմ չէիր...

ՏԱՏ – Հա, բայց... Քո իմանալն ա, իհարկե, Համմիկը հրաշալի աղջիկ *ա...*

ԿԱՐԵՆ – *(Ներս է մտնում, վրդովված է)* Բարև, պա:

ՎԱՐԴԱՆ – Բարև, էս ինչ ա պատահել: Ինչի՞ ես իրար անցել:

ՏԱՏ – Բարև, Կարեն ջան, ինչ ա պատահել, *բալես*:

ԿԱՐԵՆ –*(Բղավելով)* Սյուզին թուրք չի:

ՎԱՐԴԱՆ – Ինչու՞ ես բղավում, բայց հայ էլ չի:

ԿԱՐԵՆ – Իսկ ես, ես ինչ *եմ (ցույց տալով ամերիկյան անձնագիրը՝ փախչում է)*:

ՏԱՏ – (Հետևից) Դու Սարդարապատի ճակատամարտին մասնակցած հերոս Ավոյի թոռն ես...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Կարենն ու Սյուզին առանձնացած ինչ-որ վայրում, զույգ բեմի վրա փակ վարագույրի առաջ...

ԿԱՐԵՆ – Ինչ ես ասում, գնանք Թուրքիա:

ՍՅՈՒԶԻ –Ոչ:

ԿԱՐԵՆ – Չես ուզում ծնողներիդ տեսնես...

ՍՅՈՒԶԻ –Չէ:

ԿԱՐԵՆ –Ես եմ ուզում:

ՍՅՈՒԶԻ – Իրենք կգան, ձերոնք կընդունեն: Ես թրքախոս հայերի երրորդ սերունդն եմ: Թերևս ձերոնք ծնողներիս ավելի ջերմ ընդունեն, նրանց մոտ քիչ թե շատ հայկական երևույթներ նկատվում են:

ԿԱՐԵՆ – Քեզ ջերմ չեն ընդունում:

ՍՅՈՒԶԻ – Կարեն, չեմ մեղադրում, բայց ես էլ եմ մարդ, վատ եմ զգում, ես ինքս ինձ չեմ ճանաչում, ձերոնք ոնց...

ԿԱՐԵՆ – Էս մուսուլմանության հարցը չլիներ, մերոնք ոչ մի պրոբլեմ չէին ունենա: Մի նեղվիր, Սյուզի: Նախապաշարումներ են, ժամանակը ամեն ինչ կհարթի:

ՍՅՈՒԶԻ – Բայց ես մուսուլման չեմ:

ԿԱՐԵՆ – Թուրք ասելիս հասկանում են նաև մուսուլման: Ոնց որ հայ ենք ասում, նշանակում է քրիստոնյա:

ՍՅՈՒԶԻ – Ուրիշ կրոն դավանող հայ չկա՞:

ԿԱՐԵՆ – Չէ, եթե հայ ա, ուրեմն նաև քրիստոնյա ա:

ՍՅՈՒԶԻ – Իսկ եթե հայ ու հավատացյալ չի՞:

ԿԱՐԵՆ – Լեցուն են, սովետը յոթանասուն տարի դա էր քարոզում:

ՍՅՈՒԶԻ – Հայաստանում ռուսախոս հայեր չկայի՞ն:

ԿԱՐԵՆ – Հիմա էլ կան, համոզված եմ:

ՍՅՈՒԶԻ – Հայ չե՞ն:

ԿԱՐԵՆ –Կարծում եմ՝ հայ են:

ՍՅՈՒԶԻ - Իսկ ինչո՞ւ թրքախոսը չի կարող հայ լինել:

ԿԱՐԵՆ - Էդ ինչո՞ւ ես էդպես կարծում:

ՍՅՈՒԶԻ - Տատդ վատացավ, չէ՞:

ԿԱՐԵՆ - Մոռացիր, դրան էլ կհաշտվեն... Այ դրա համար էլ չէի շտապում քեզ ծանոթացնել, ուզում էի հող պատրաստել, նոր, բայց ի՞նչ անենք, էդպես ստացվեց...

ՍՅՈՒԶԻ - Դժվար թե կարողանամ նորից ձեր տուն գալ:

ԿԱՐԵՆ - Ինչու՞:

ՍՅՈՒԶԻ - Նախ տատիկին չնեղացնելու համար, հետո՝ ես ինձ հանգիստ չեմ զգում:

ԿԱՐԵՆ - Դա թող ես որոշեմ:

ՍՅՈՒԶԻ - Այսինքն՝ ես քո կամակատարն եմ:

ԿԱՐԵՆ - Չէ, դու ինձ սիրում ես, ինձ չես մերժի:

ՍՅՈՒԶԻ - Իսկ դու էլ ինձ ես սիրում, ինձ չես հակաճառի:

ԿԱՐԵՆ – Հիմա իմ տունը պիտի համարես նաև քոնը, դեռ ուզում եմ, որ գաս մեզ հետ ապրես...

ՍՅՈՒԶԻ – Դա արդեն շատ եղավ: Հայրդ է ամուսնանում, ոչ՝ մենք:

ԿԱՐԵՆ – Նա արդեն ամուսնացած է, նրանք միասին են:

Մեզ չի խանգարի, սենյակները կան, մինչև ամուսնանալ կապրես մեր տանը, ամուսնանալուց հետո՝ կառանձնանանք, կգնանք մեր առանձին բնակարանը:

ՍՅՈՒԶԻ – Դու արի ինձ մոտ: Ի՞նչն է *խանգարում*:

ԿԱՐԵՆ – *(դանդաղ* անհայտանալով*)* Մերոնք ծանր կտանեն, տատս...

ՍՅՈՒԶԻ – Լա՛վ մտածիր, չեմ ուզում ընտանիքիդ մեջ անախորժություն լինի, բայց լավ կլիներ մի որոշ ժամանակ չհանդիպեմ ձերոնց...

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Նույն սենյակը: Վարդանը ոգելից է լցնում, Կարենը ներս է մտնում, հեռու Վարդանից մի անկյունում նստում է, լռությունը ինքն է խզում:

ԿԱՐԵՆ – Հայրիկ, տատը ոչ մի կերպ չի ուզում ինձ հասկանա:

ՎԱՐԴԱՆ – Կխմե՞ս:

ԿԱՐԵՆ – Չէ:

ՎԱՐԴԱՆ –Դու նրան հասկանու՞մ ես:

ԿԱՐԵՆ – Ի՞նչ է, նա թրքախոս հայեր չի՞ տեսել:

ՎԱՐԴԱՆ – Ինձ հասկանու՞մ ես: Ես քեզ չեմ հասկանում, չէ՛, չէ՛, սերնդափոխության հարց չի, ուղղակի չեմ հասկանում, գուցե չեմ ուզում հասկանալ, հա՛, գուցե իսկապես չեմ ուզում հասկանալ... թրքախոս հայ... իհարկե, տեսել ենք, ես էլ, տատդ էլ, բայց ոչ թրքացած:

ԿԱՐԵՆ – Սյուզին թուրք չի...

ՎԱՐԴԱՆ – Ինչո՞վ ա հայ, հայկական ոչինչ չկա նրա մոտ, վզին կախած խաչն էլ դու ես նվիրել...

ԿԱՐԵՆ – Խաչը հայության խորհրդանի՞շ ա, ինչ ա, ես էլ քրիստոնյա չեմ, ընդհանրապես հավատ չունեմ, պրծա՞նք: Ի՞նչ ա, հայ չե՞մ...

ՎԱՐԴԱՆ – Մենք քեզ էնպես չենք մեծացրել, ես էլ մոլեռանդ քրիստոնյա չեմ, բայց քրիստոնեությունն ու նրա հետ կապված ծեսերը այսօր մեր ազգային մշակույթի մաս են կազմում, էդ հողի վրա փառավոր մշակույթ ա ստեղծվել:

ԿԱՐԵՆ – Քրիստոնեական, թե՞ հայկական:

ՎԱՐԴԱՆ – Քրիստոնեական, համեմված հայկականով, կամ հակառակը՝ հայկական, համեմված քրիստոնեությամբ...

ԿԱՐԵՆ – Երեսուն տարի ա էդ եմ լսում, ես հպարտ եմ իմ ազգով ու նրա ընդունած հավատով, եղա՞վ, Սյուզիի հետ կմտնենք եկեղեցի, դրանով ամեն ինչ կվերջանա՞, հայկական հարցերը կլուծվե՞ն, Երևանում օրը ցերեկով զոհեր չե՞ն լինի...

ՎԱՐԴԱՆ – Տատիկդ գիտի՞, որ Սյուզին հավատափոխ է:

ԿԱՐԵՆ – Դու աթեիզմի դասեր չե՞ս անցել, չե՞ն փորձել քեզ հավատափոխ անել, Լենին ու Ստալին պաշտել, Սիբիրում ի՞նչ են քարոզել...

ՎԱՐԴԱՆ – Հարցնում եմ՝ տատիկդ գիտի՞, որ Սյուզին հավատափոխ է:

ԿԱՐԵՆ – Տատը ավելի շատ քրիստոնյա ա, քան՝ հայ: Երկիրը ձեռից առան, տուն-տեղ, ամեն ինչից հրաժարվեց, եկավ: Հլա փորձիր հավատափոխ անես, չես կարող, փորձիր Քրիստոսին հանել նրա սրտից, անհնար է: Սյուզին շատ ավելի հայ ա, քան... չեմ ուզում վիրավորել, պա... ուղղակի ուզում եմ ասել՝ Սյուզին հայ ա, նրա հետ շփվեք, կիսվեք, նա մեղավոր չի... Ո՞վ է մեղավոր, բռնի հավատափոխ եղած նրա ծնողնե՞րը, տա՞տը... Դո՞ւ, որ ծնվել ես Սիբիրում, հասակ առել Հայաստանում ու հասել ես Ամերիկա, ե՞ս...

ՎԱՐԴԱՆ – Վերջացրու, հա... ես էլ իմ երազներն ունեմ, արի մեղավորներ չփնտրենք, դու էլ իրավունք ունես, բայց ոնց էլ մտածում եմ, չի ստացվում, էստեղ տրամաբանությունը չի աշխատում...

ԿԱՐԵՆ – Որ ուզում ես ճիշտն իմանալ, ես էլ եմ տուժած սերունդ, Ամերիկայում ծնվածն ամերիկացի, ինձ բռնի եք հայացրել, հա՛, բռնի: Հայկական շաբաթօրյա, հայկական երգ, պար, ճաշ, մարքեթ, խաշ, խորոված... էս ամենը իմ երջանիկ մանկության ու պատանեկության հաշվին, ես շատ եմ տարբերվում Հայաստանցի

երիտասարդներից, կարծես տարբեր ազգի էրեխեք լինենք...

ՎԱՐԴԱՆ – Սիրահարված ես, Կարեն: Երանի քեզ...

ԿԱՐԵՆ – էդ առումով ինձ լավ ես հասկանում, որովհետև...

ՎԱՐԴԱՆ – Դու քոնը ասա, ասա, թե չէ ես կշարունակեմ, քեզ թվում ա, ես չեմ հասկանում, աչք ես բացել՝ ցույցերի ենք տարել, հիշում եմ, եռագույնը թաթերիդ մեջ առած, իմ և պապիկիդ ուսերից չէիր իջնում, հետո սովորեցրինք կոկորդ պատռել...

ԿԱՐԵՆ – Անկախություն գոռալ, հող ուզել, հատուցում, արդարություն ուզել, բայց թե ումից, չգիտեի, ոչ ոք չգիտեր, թե ումից ինչ է ուզում...

ՎԱՐԴԱՆ – Հետո՞:

ԿԱՐԵՆ – Հետո՝ հեչ... Գնա Լիթըլ Արմենիա, այնտեղ էլ անկախացած Հայաստանիդ դեմ են ցույց անում, հայը հայից ա պահանջում, Հայաստանի կառավարության դեմ են նստացույց անում, չգիտեն՝ ումից ինչ են պահանջում... Վաղը մյուս օրն էլԱպրիլի 24 ա, Թուրքիայի հյուպատոսության առաջ դրոշ ենք վառելու... Հա, ես էլ կգամ, "լի լի<աէ յստճտ, լի ո ճօ յ'օս լի<աէ ւէ, ո«իէ ոօլի": Սյուզին էսօր գալու ա, թե ինչպես կընդունեք, ձեր գործն ա, բայց իմացեք, որ ամենավեհում մենք աշխարհաքաղաքացի ենք ու վերջ: Եղա՞վ: Իսկ դուք՝ առնվազն Ամերիկացի:

ՎԱՐԴԱՆ – Աշխարհաքաղաքացի... գլոբալիզացիա, հիմա էլ էդպէս մաքրեք, ոչնչացրեք, մի բուռ ժողովուրդ ենք, գլոբալիզացիա խաղացեք...

ԿԱՐԵՆ – Բայց Սյուզին զտարյուն հայ ա, ինչու՞ եք վանում ազգից, ինչու՞ չեք ուզում փրկել էդ *զոհին... (Համմիկը անհամարձակ ներս է մտնում, լուռ նստում է)*, էնտեղ, քո երկրում, երկու հարյուր հազար ղարաբաղցու են թրքացնում, գոնե էս մեկին փրկեք...

ՎԱՐԴԱՆ –Առանց էդ էլ ներվ չունեմ...

ԿԱՐԵՆ – Քեզ թվում ա՝ մենք՝ ջահելներս ունենք: Ես գնացի, կվերադառնամ՝ Սյուզիի *հետ*: *(Դուրս է գալիս)*:

ՀԱՍՄԻԿ – *(Միանգամից հեկեկում է)* Շատ եմ փոշմանել, շատ, ինքս ինձ ատում *եմ*...

ՎԱՐԴԱՆ –*(Բղավելով)* Իսկ ինձ:

ՀԱՍՄԻԿ – Դու լավն ես, Վարդան:

ՎԱՐԴԱՆ – Դրա համար էլ ամեն ինչ արեցիր, որ երջանիկ լինեմ, չէ՞:

ՀԱՍՄԻԿ – Խնդրում եմ, ներիր ինձ, ես...

ՎԱՐԴԱՆ – Մտածում էիր՝ կամուսնանաս ու մի կերպ մորդ ու երեխայիդ կքերես, *հա՞ (ոգելից է խմում)*:

ՀԱՍՄԻԿ – Դու խմիչքը չէիր չարաշահում, հուսով եմ, որ դրա ազդեցության տակ չես:

ՎԱՐԴԱՆ – Ո՛չ, տիկին Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ – Արի միմյանց չվիրավորենք, հեգնանքով մի խոսիր: Ես իմ արածից զղջում եմ, ես... Ես պիտի ասեի, որ ամուսին եմ ունեցել, հարբեցող է եղել, մեզ լքել, գնացել է ռուսաստաններ, երեք տարի էր ոչ մի լուր...

ՎԱՐԴԱՆ – Գեղեցիկ, հեզ, ազնիվ, բարի, սիրալիր, պարկեշտ, կանացի... էս ինչ արիր, Հասմիկ...

ՀԱՍՄԻԿ – Իմ կարծիքը քո մասին չեմ փոխել...

ՎԱՐԴԱՆ – Ինչու՞ չէիր ասում:

ՀԱՍՄԻԿ – Չգիտեմ:

ՎԱՐԴԱՆ – Ամերիկան էր քեզ գերել, թե՛ ես, ճիշտ ասա՛, ասա, ասա՛...

ՀԱՍՄԻԿ – Ինչե՞ր ես ասում: Պարզապես ինչ-որ բան ինձ խանգարում էր: Գուցե վախենում էի, կամ դժբախտությունս էր...

ՎԱՐԴԱՆ – Չէի՞ր կարծում, որ մի օր ամեն ինչ ջրի երես է գալու:

ՀԱՍՄԻԿ – Ինձ մի քիչ էլ թվում էր, թե դու պարզապես ինձ քո կողքին ունենալու համար ես ուզում, չէ՞ որ մենք տարիքի մեծ տարբերություն ունենք:

ՎԱՐԴԱՆ – Վիրավորված եմ, արժանապատվությունս այնպես ես տրորել, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ – Հասկանում եմ, դրա համար էլ...

ՎԱՐԴԱՆ – Երանի առաջին օրն ասեիր, ինչու՞ մեկ շաբաթ հետո... Գոնե նրա առաջին զանգից հետո...

ՀԱՍՄԻԿ – Վախենում էի, չէի համարձակվում...

ՎԱՐԴԱՆ – Վախենում էիր տանից հանեի՛, հա՛:

ՀԱՍՄԻԿ – Եթե ուզես, հենց հիմա կգնամ:

ՎԱՐԴԱՆ – Իսկ ինչու՞ կինս դարձար: Չէ՞ որ հիմա դու իմ կինն ես...

ՀԱՍՄԻԿ – Չգիտեմ, խնդրում եմ մի մանրանա, մեղքի զգացումը ինձ սպանում է, ես մեղավոր եմ և առանց աղջնակիս ապրել չեմ *կարող (լացակումած)*: Աղաչում եմ, ինձ օգնիր...

ՎԱՐԴԱՆ – Քո կամքն է, երկու շաբաթ իմ կինն ես եղել, պառկել ենք նույն անկողնում, ես ինձ քո լիիրավ ամուսինն եմ համարում, հիմա դու ինձ համար պատահական կին չես: Մեր օջախում մինչև հիմա հայկական ավանդույթներ կան, մայրս դեռ ողջ է, նա ապրում է իր նախնիների հոգեբանությամբ, երկու շաբաթ մորս աչքի առաջ միասին անկողին մտնելուց հետո... Մորս ինչ պատասխան պիտի տամ, ինչպե՞ս համոզեմ, որ իրոք ինձ չես օգտագործում ամուսնուդ ու աղջնակիդ փրկելու համար:

ՀԱՍՄԻԿ – Նա իմ ամուսինը չէ, նրան վաղուց եմ թողել, նա ինձ համար գոյություն չունի... Ես մայրիկի հետ կխոսեմ, նա ինձ կհավատա:

ՎԱՐԴԱՆ – Երեխայիդ էլ, ինձ էլ խաղալիք դարձրած խամաճիկություն ես անում: Փո՞ղ է պետք, *վերցրու (ինչ-որ գումար է գցում* սեղանին*)*, կբավարարի, երեխայիդ էլ ինչ-որ Նվերներ կտանես, կուրախանա, տիկին Հասմիկ:

ՏԱՏ – *(Ներս է* մտնում*)* Վարդան, որդիս, աջացիր: Մորդ ոչինչ չունես պատասխանելու, համոզելու ոչինչ չկա: Մի շտապիր: Հասմիկը քո կինն ա, իմ էլ աղջիկը, մի շտապիր, տղաս: Երեխա չես, կյանքի փորձ ունես, աճապարելու ոչինչ չկա, Հասմիկը չի գնալու, նա այս տանը կապրի այնքան ժամանակ, ինչքան ես ողջ եմ, իսկ դու, լավ մտածիր...

ՀԱՍՄԻԿ – Ես երեխա ունեմ, մայրիկ: Վարդանին չեմ ասել: Փաստորեն ստել եմ, իսկ նա... Ես ինձ մեղավոր եմ զգում, ես պիտի վերադառնամ...

ՏԱՏ – Գիտեմ, գիտեմ, որ երեխա ունես, նաև գիտեմ, որ աղջիկ ա:

ՀԱՍՄԻԿ – Այո, աղջիկ...

ՏԱՏ – Հրաշալի ա:

ՀԱՍՄԻԿ – Բայց դու...

ՏԱՏ – Աղջնակդ գեղեցի՞կ ա, անունն ի՞նչ ա:

ՀԱՍՄԻԿ – Սոնա:

ՏԱՏ – Քեզ նման ա, հա՞:

ՀԱՍՄԻԿ –Կարծում եմ:

ՏԱՏ – Ուրեմն շատ գեղեցիկ ա: Լուսանկար ունե՞ս:

ՀԱՍՄԻԿ – *Այո (պայուսակից հանում է մի* լուսանկար*)*:

ՏԱՏ – Էս իրեշտակ ա: Քանի՞ տարեկան ա:

ՀԱՍՄԻԿ – Չորս:

ՏԱՏ – Մի լար, ամեն ինչ լավ կլինի: Վարդանն էլ երեխա ունի:

ՀԱՍՄԻԿ –Ես ստել եմ:

ՏԱՏ – Չես ստել, պարզապես չես ասել, ուշացումով ես ասել, լավ ա ուշ, քան երբեք: Ընդամենը երկու շաբաթ ուշացումով ես ասել: Ես իմ տղային լավ եմ ճանաչում, նա քեզ կհասկանա...

ՎԱՐԴԱՆ – Հասմիկ, ես քեզ հետ կիսելու այլևս ոչինչ չունեմ: Վերցրու էդ փողը, կարծում եմ կբավարարի: Վերցրու և մեր ընտանիքի անդորրը մի պղտորի:

ՀԱՍՄԻԿ – Մեծահոգության համար շնորհակալ եմ, առանց դրան էլ մի ելք *կգտնեմ (փորձում է տանից դուրս գալ, տատը արգելում է)*: Թող, տատ, խնդրում եմ, այս ընտանիքի մեջ ես ինձ ավելորդ եմ զգում, խնդրում *եմ (փարվում է տատին, հեկեկում է)*:

ՏԱՏ – *(Հասմիկին գրկած մոտեցնում է սեղանին, նստեցնում է)* Քանի ես ողջ եմ, դու ոչ մի տեղ չես գնա: Վարդան, վաղվանից կզբաղվես Հասմիկի մոր ու աղջնակի գործերով, ես եմ նրանց երաշխավորում: Սոնա թոռնիկս մայրիկին կարոտած կլինի, իսկ ես արդեն չեմ դիմանում, վայրկյան շուտ ուզում եմ թոռնուհուս *տեսնել*...

ՎԱՐԴԱՆ – *(Զայրացած)* Մա, խնդրում եմ մեր փոխարեն որոշումներ չկայացնես:

ՏԱՏ – Ինչ որոշում էլ կայացնեմ, դա ինձ համար է: Հասմիկին կընդունես, թե չէ, էդ քո գործն ա, միևնույն ա, նա չի գնալու, ամենավեհում մենք կապրենք առանձին: Ավելի լավ ա՝ դու Կարենի հարցը լուրջի առնես՝ թուրք հարս ես ունենալու:

ՎԱՐԴԱՆ – էդ որտեղից մոգոնեցիր, նա ոչ թե թու՛րք, այլ բռնի հավատափոխ եղած հայ ա:

ՏԱՏ – Քրիստոնյա հայից բան չի մնացել, էդ էր պակաս, հիմի էլ իսլամացած հայ: Ուրիշ պատրվակ ունե՞ս: Իսլամը ո՞նց կարող ա հայ լինի, էս ինչե՞ր ես սարքում, չեմ հասկանում, ինչու՞ ես ուզում ինձ ողջ-ողջ թաղել:

ՎԱՐԴԱՆ – Հարյուր հազարավորներ կան, մայրիկ, ստիպված են եղել, հիշիր էն արհավիրքի տարիները, նրանք իրենց մաշկը փրկելու համար ամեն քայլի դիմել են, իրենց ինքնությունը թաքցրել են չմորթվելու համար, նրանց երակներում հայի արյուն կա, մայրիկ, սերունդը հայերեն չգիտի, մեղավոր չի...

ՏԱՏ – Իսլամը ընդունած, հայերեն չխոսողն էլ ի՞նչ հայ...

ՎԱՐԴԱՆ – Ինչու՞, մինչ քրիստոնեություն ընդունելը հայերը հայ չէի՞ն:

ՏԱՏ – Բայց հայերեն էին խոսում, հայերեն էին մտածում, բոլորը նույն հավատն էին դավանում...

ՎԱՐԴԱՆ – Համոզվա՞ծ ես, որ ծոռդ այսափերում հայերեն ա խոսելու...

ՏԱՏ – Այն ժամանակ ես մեռած կլինեմ, ինչ որ ա, չեմ ուզում էդ աղջկան էս օջախում տեսնել, քանի գիշեր ա մղձավանջների մեջ եմ, մորթում, բռնաբարում են, մեր տունն են վառում, հա, վառում են, հարսնացուիդ պապերն են վառում, դրանք անիծված ցեղ են... ի՞նչ ես կորցրել, ինչ ես փնտրում: Հրեշտակի պես Համիկ ես ճանապարհում, ու՞ր, ինչի համար, որովհետև երեխա՞ ունի, իսկ քո տղա՞ն, երեխա չի՞, ի՞նչ ա...

ՎԱՐԴԱՆ – Ես նրանից ոչինչ չեմ թաքցրել, մայրիկ, նա թաքցրել ա, ես հավատացել եմ նրան, մենք մի ամբողջ տարի նույն հարկի տակ ենք եղել, այդ մասին ոչ մի խոսք չի եղել:

ՏԱՏ – Որ ցանկանայիր, կլիներ...

ՎԱՐԴԱՆ – Դու էլ որ ցանկանաս, կհամոզվես, որ ...

ՏԱՏ – Ուզում ես ասել՝ նրա մուսուլման լինելը քեզ այդքան էլ չի հուզում, հա՞: Ո՛չ, սուտ ես ասում, դու ստում ես, որովհետև վախենում ես, երեխայիդ փրկելու համար ես ստում, երեխայիդ կաշին փրկելու համար ես այդպես մտածում... Ինձ հասկանու՞մ

ես՝ երեխայիդ փրկության համար ես ստում, հա, հենց դրա համար...

ՎԱՐԴԱՆ – Կարենը որոշել ա մեզանից հեռանալ:

ՏԱՏ – Այ, տեսնու՞մ ես, ես չեմ սխալվում: Նա իր հայ լինելու՞ց է փախչում:

ՎԱՐԴԱՆ – Հա, հենց իր հայ լինելուց: Շուրջդ նայիր, մա, հայկականությունից էլ զզվեցինք, հայերից էլ: Միացրու, հայկական կայանները միացրու, իրար հոշոտում են, այնտեղ, հենց քո հայրենիքում, օրը ցերեկով կրակում են անմեղ մարդկանց վրա, երեխաների ու կանանց վրա, իսկ այստեղ հայրենափոխները իրենց թշվառության վրա նստած, իրենց փախուստը արդարացնելու համար ուզում են հայրենի ժողովրդի

ճակատագիրը գրեն: Երեկվա միապետից, խավարից ու գրտից փախած, այդ նույն խավարի ու գրտի արարիչին են կուռք դարձրել, գահընկեց արածին են առաջնորդ դարձրել, հայրենիքդ են քանդում: Հայրենիքդ դրել են վաճառքի, մա: Հայաստանում հայ չի մնացել, մնացել են երևանցիներ ու ղարաբաղցիներ, երևանցիները ղարաբաղցիներին պատերազմ են հայտարարել... Հա, դու ճիշտ ես, այսօր անգամ ղարաբաղցին հայ չի, ինչպե՞ս կարող ենք բռնի իսլամացած հայի ծոռանը հայ համարել...

ՀԱՍՄԻԿ – Սխալ ինֆորմացիա ունես: Չի կարելի այդպես վիրավորել:

ՎԱՐԴԱՆ – Իհարկե, ինձ հասած բոլոր ինֆորմացիաները սխալ են լինում... Երևի Կարենը ճիշտ է անում, թող փախչի...

ՏԱՏ – Տղայիդ փիլիսոփայությունն ես կրկնում: Ճառ ես ասում: Վախենում ես: Թող գնա թրքուհու հետ միասին վայելի նույն անկողինն ու մզկիթում աղոթեն իրենց նորածինի լուսավոր ապագայի համար, լավ ա անում, իր իրավունքն ա: Նորածինը կմեծանա, հայ և թուրք ժողովրդի բարեկամության միջնորդը կդառնա: Հասմիկ, աղջիկս, սուրճ եփիր, հա՞: Հայրենասիրության դրսևորման նոր ձև՝ ոչ հայախոս մուսուլման հայ... Չմոռանաս, Վարդանին էլ սուրճ դիր...

ՎԱՐԴԱՆ –Ես չեմ *խմում (խմիչք է լցնում)*:

ՏԱՏ – Դիր, դիր, կխմի, իմը լեղի արա, թող օրվա հետ հա-

մահունչ լինի:

ՎԱՐԴԱՆ – Մայրիկ, սուրճդ լեղի կխմես թե քաղցր, միևնույն է, Սուսանը՝ հայ ա:

Կարենն ու Սույզին միասին ներս են մտնում:

ԿԱՐԵՆ –Բարև ձեզ:

ՍՅՈՒԶԻ –Բարև ձեզ:

ԿԱՐԵՆ – Սուրճի բուրմունքը լավն ա...

ՏԱՏ – Հա, ընտանիքում հայի հոտը վերացել, թրքական անուշ սուրճի բուրմունքն է մնացել:

ԿԱՐԵՆ – Տատ, դու գիտես, որ քեզ շատ եմ սիրում:

ՀԱՍՄԻԿ – Կարեն, կուզե՞ք ձեզ համար էլ դնեմ:

ԿԱՐԵՆ – Չէ, պետք չի, Սյուզին կդնի:

ՏԱՏ – Հասմիկ, իմ սուրճը առանձին ջազվայով եփիր, հայկական և դառը:

ԿԱՐԵՆ – Ամբողջ կյանքում թրքական ես խմել, նո՞ր հիշեցիր: Հետո էլ, տատ, դու միշտ խոսքդ ուղիղ ճակատին էիր ասում, էս ի՞նչ ա պատահել, ինչ-որ բանից զգուշանում ես, մեջդ վախ կա, հա՞...

ՏԱՏ – Վախ չի, սարսափ ա: Էն սարսափը, որ ապրել եմ վաղ մանկությանս տարիներին, մորթվում ենք, վերանում ենք, մենք ինքներս ենք մեզ վերացնում, հայրդ ճիշտ է ասում, Հայաստանում երևանցու և ղարաբաղցու կռիվ ա, էստեղ էլ մենք մեր մեջ թշնամի ծնելով հանձնվում ենք, ինչքան կարելի ա դիմանալ, արդեն ուժ չի մնացել, չեմ դիմանում...

ԿԱՐԵՆ –Տատ, խնդրում եմ, տատ:

ՏԱՏ - Էլ տատ չի մնացել, տատին սպանեցիր, բալես:

ԿԱՐԵՆ - *(մի կերպ կատաղությունը զսպելով)* Ձառանցում ես, տատ...

ՎԱՐԴԱՆ - Լակոտ, էդ ի՞նչ խոսելու ձև ա, արածդ մի բանի նման էլ լինի...

ԿԱՐԵՆ – Ո՞րն է սխալս, չեմ հասկանում:

ՎԱՐԴԱՆ – Ինչ-որ ճիշտ բանի մասին խոսիր:

ՍՅՈՒԶԻ – Ինչ է կատարվում այստեղ, չեմ հասկանում:

ԿԱՐԵՆ – Քեզ թվում ա,ես հասկանու՞մ եմ:

ՏԱՏ –Դու երբեք էլ չես հասկանա:

ԿԱՐԵՆ – Տատ, ես քեզ շատ եմ սիրում, դու իմ ամեն ինչն ես, առավել քան մայրս էր ու հիմա հայրս է, ես քո ծնկներին եմ մեծացել, քո աղոթներով, հայրս աշխատանքից աչք չի բացել, մայրս երկար տարիներ վատառողջ է եղել, իսկ դու ոչինչ չես խնայել ինձ համար: Ես եղեռն տեսած ազգի երրորդ սերունդ եմ: Մի ազգի, որը վեց հարյուր տարի, տարբեր կայսրություններում ստրկացած կյանք է ապրել, նույն հոգեբանությամբ էլ ես եմ դաստիարակվել, ստրուկի զավակ, արել եմ այն, ինչ ծնողներս են ուզել, ուր իրենք են ուզել, տարել են առանց իմ կամքը հարցնելու, ինչ իրենց է դուր եկել, ես այն եմ կերել՝ առանց ախորժելու, երբ ասել են քնիր՝ քնել եմ, երբ ասել են զարթնիր՝ զարթնել եմ, նստիր՝ նստել եմ, կանգնիր՝ կանգնել եմ: Դեռ մի քանի տարի առաջ կոճակներս մայրս էր կոճկում, հագուստս նա էր ընտրում, անգամ մասնագիտությունս իրենք են ընտրել, ստրուկի պես հլու հպատակ ապրել եմ, հիմա ուզում եմ ինքնուրույն լինել: Հայաստանս իր երեք միլիոն ժողովրդով անկախացավ, ինչու՞ ինձ չեք արտոնում այդ երջանկությունը, ես էլ եմ ուզում հայրենիքիս պես բարեկամության ձեռք մեկնել հավատափոխ ազգակիցներիս, ես էլ եմ ուզում քանդել սահմանի փշալարերը, ինչու՞ եք խանգարում, ինչու՞ պիտի դուք սիրեք, իսկ ես՝ *ամուսնանամ*:

ՀԱՍՄԻԿ – *(սուրճը բաժանելով)* Ինձ կներեք, ես պիտի դուրս գամ...

ՏԱՏ – Հասմիկ ջան, մնա, խնդրում եմ:

ՀԱՍՄԻԿ – Ընտանեկան հարցեր են, չեմ ուզում խառնվել:

ՏԱՏ – Դու էլ ես էս ընտանիքի անդամ:

ՎԱՐԴԱՆ – Հասմիկ, *նստիր*: *(Հասմիկը նստում է)*: Իսկ դու՝ Կարեն, շատ ես փիլիսոփայում, առանց հաշվի առնելով մեր անցյալը, պապիկիդ ու տատիկիդ կրած տառապանքները, էս հայի ընտանիք ա: Ես չեմ համարձակվել մորս հետ էդպես խոսել, դու...

ՍՅՈՒԶԻ – Զգնանք, Կարեն:

ԿԱՐԵՆ – Չէ՛: Էսպես շարունակել հնարավոր չի:

ՍՅՈՒԶԻ – Ես հայերեն չեմ հասկանում, բայց զգում եմ, որ իմ ներկայությունը այս ընտանիքում ավելորդ է: Կարեն, ես պիտի գնամ:

ՎԱՐԴԱՆ – Ոչ մի գնալ, սպասի՛ր, ինչու՞ ես շտապում:

ՍՅՈՒԶԻ – Պարոն Վարդան...

ՎԱՐԴԱՆ – Ո՛չ, նստիր, այսինքն գնա, քո և Կարենի համար սուրճ եփիր՝ *հայկական: (Լռություն է տիրում)*:

ՍՅՈՒԶԻ – *(Մոտենում է տատիկին, սկսում է օրորոցային մի երգ երգել, նույն երգը, որը երգում էր տատիկը, բոլորը քարացած լսում են, երգելիս արտասվում է)* Տատս է ինձ խնամել, այս երգով եմ քուն մտել, ցածրաձայն էր երգում, հետո իմացա, որ վախեցել է բարձր երգել, երբեմն բառերը չէր արտասանում, միայն մեղեդիով բավարարվում էր: Մի օր էլ տատիկս ինձ այսպես խոսեց– «Ուր էլ երթաս, հայ լինելդ կիմանան, մենք իրավունք չունինք մեր նախնյաց հողերը լքելու, մեր նախնյաց հողերուն վրա ապրիլը մեր ճիտին պարտքն է, մենք այս հողերուն միայն տերը չենք, նաև պատիվն ենք, մենք այս արյունոտ հողերուն վկաներն ենք: Թերևս օր մը եփրատը լեզու կ' ելլե, կպատմե իր ապրածները, թերևս օր մը գետինը ճեղքվի, ժայռերը, հողերը, լեռները, բոլոր արարածները լեզու կառնեն, կխոսին, արդարութիւնը տեղը կգտնե...»:

ՏԱՏ – Տատիկիդ անունը ի՞նչ էր, բալես:

ՍՅՈՒԶԻ – *Նազլու (շարունակում է մրմնջալ նույն* օրորոցայինը*)*:

ՏԱՏ – Նազենի... *Նազենի... (ծնկները ծալվում, նստում ու ձայնակցում է* Սյուզիին*)* ես էլ եմ այս երգով քուն մտել, *բալես: (Երգը շարունակում է, Սյուզին մոտենում, տատին գրկում է, Կարենը մոտենում Սյուզիին է գրկում, Հասմիկը Կարենին է փարվում, իսկ վերջում Վարդանը մոտենում, Հասմիկի ուսերն է գիրկն* առնում):

ՎԵՐՋ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարի Ռոզ ԱԲՈՒՍԵՖՅԱՆ

Մարի Ռոզ Աբուսեֆյան (1944, Հալեպ), դերասանուհի, բեմադրիչ, հրապարակագիր, բանաստեղծուհի, գրական տեսաբան:

1966թ ավարտել է Երեւանի Գեղարվեստա Թատերական Ինստիտուտը: Որպես առաջատար դերասանուհի աշխատել է Երեւանի Դրամատիկական թատրոնում եւ Արշալույս նորարական թատրոնում:

Մասնակցել է բազմաթիվ Հեռուստատեսային եւ ռադիո բեմադրություններիների, գրական հաղորդաշարերի: Նկարահանվել է ՀայՖիլմի մի շարք կինոնկարներում:

1983թ-ից հաստատվել է ԱՄՆ, Սան Ֆրանսիսկո ուր ստեղծել է մենաթատրոնի իր ինքնատիպ տեսակը: Նա այդ մենաներկայացումների նյութերի եւ հեղինակն է, եւ բեմադրիչը, եւ երաժշտական ու լույսային ձեւավորողը եւ միեւնույն ժամանակ մենակատարը:

Առաջին կին դերասանուհին է, որ միայնակ կատարումով ներկայացրեց Ֆ. Վերֆելի «Մուսա Լեռան 40 Օրերը» վեպը: 21 տարբեր կերպարների միջոցով ներկայացնելով ամբողջ վեպը: Իր խաղացանկի մասն են կազմում «Վ. Տերյան», Կ. Զարյան՝ «Տատրագոմի հարսը», Մ. Զարիֆյան՝ «Խենթը», «Մոռանալ եղե՞նը», «Անլռելի Զանգակատուն», Վ. Պետրոսյան՝ «Կարսից Տրո-

յա», «Ժամադրություն Սիրո հետ», անգլերեն եւ հայերեն լեզուներով, «Պ. Սեւակի մեծ սերը», Հ. Օշականի «Ծակ պտուկը», «Մնացորդացը»: Րաֆֆի` «Խենթը», Զորավար Անդրանիկին, Դրոյին, Արամ Մանուկյանին նվիրված արձակ գործեր, եղեռնի 95-ին տարելիցին նվիրված «Գ. Զոհրապ` Գողգոթայի ճանապարհին» մենաներկայացումը, Հայ Դատին ու հայ պահանջատիրությանը նվիրված բազմաթիվ ներկայացումներ:

1997-2001թթ որպես Բեմադրիչ ղեկավարել է Սան Ֆրանսիսկոյի Համազգային Թատերախումբը: Բեմադրել է Շ. Շահնուր` «Նահանջն Առանց Երգի», Վ. Քաչա «Գավազանը», «Գիշատիչների խնջույքը», Ա. Թրուայա` «Փորձակենդանիներ», Մ. Ռոզ «Դա այն թիվն էր» եղեռնին նվիրված, Գորին` «Հերոստրատ», «Կյանք եւ Սեր» եւ այլ գործեր:

Որպես հրապարակագիր աշխատակցում է սփյուռքի տարբեր թերթերին` «Ազդակ», «Ասպարեզ», «Հայրենիք», «Ազատ Օր», «Հորիզոն», «Բագին»:

Իր բանաստեղծությունները լույս են տեսել` Բագին, Հորիզոն, Ասպարեզի գրական էջերում:

Հայ դատի եւ պահանջատիրության անընկճելի խոսնակ ու պաշտպան է նա եւ իր ելույթներով եւ իր համարձակ հոդվածներով:

Այստեղ հրամցվող նյութը Մարի Ռոզ Աբուսեֆյանի Դոկտորական թեզից մի հատված է:

«ՀԱՃԻ ՄՈՒՐԱՏ» ՎԵՊԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻ ՀԱՏՎԱԾ

«Որքան ալ շատ ըլլան ձեր կորեւլիք միջոցները -էջերը- ձեզի հետ ունիք այս ապահովութիւնը նոյնատարր, նոյներանգ ապրումներուն, որոնց գումարն է միշտ մարդկային ամէն կառոյց»

Հ. Օշական

«Հաճի Մուրատ» վեպը Օշականի «Հարիր Մէկ Տարուան» եռագրությունը կազմող առաջին վեպն է, որը գրված է «Ծակ-Պտուկ»-ից անմիջապես հետո, 1933թ., նույնպես հրատարակվելով Բոստոնի «Հայրենիք» եւ Գահիրէի «Հուսաբեր» օրաթերթերում:

Այս վեպն էլ իր մեջ ընդգրկում է խորը հարցադրումներ, ժամանակագրական եւ հոգեբանական խորը վերլուծումներ արեւմտահայի կյանքին ու ճակատագրին վերաբերվող:

Այն աչքի է ընկնում նաեւ վիպային հետաքրքիր կառուցվածքով:

Եռագրությունը եւ նաեւ «Մաթիկ Մելիքխանյան» վեպերը «Մնացորդաց»-ից անջատված գործեր են, որոնք իրենց ինքնուրույն զարգացմամբ դարձել են անկախ վեպեր:

Ըստ հեղինակի բացատրության «Մնացորդացը» ավելորդ ընդարձակումից ու ծանրաբեռնումից ազատելու համար տվյալ նյութերը դարձրել է առանձին գործեր: Հայաստանում այսօր ունենք չորս սքանչելի վեպեր իրարից անկախ խորը ընդգրկումով, տարբեր ասելիքներով: Այն իր մեջ պարփակում է մոտ հարյուր տարվա ապրված ու պատմություն դարձած կյանք:

«Հաճի Մուրատ» վեպը նույնպես իրական եղելության վրա հյուսված գործ է, որը պատկերում է ՝Նիկիա լճի մեկ այլ հայ գյուղի կյանք, ամբողջովին տարբեր նույն ՝Նիկիա լճի «Ծակ-Պտուկը» պատկերող գյուղի կյանքից:

՝Նիկիա լճի շրջակայքում ութ հայաբնակ գյուղեր են եղել, որոնց մի մասը հազարից ավել զուտ հայ բնակչություն է ունեցել, բայց որոնք շրջապատված, խեղդված են եղել թուրքաբնակ գյուղերով: Ապրել են Օշականի ***խոսքերով «թրքության ծովը իրենց շուրջ»:***

Այդ գյուղերից մեկում տեղի ունեցած դեպքերի մասին է պատմ-

վում վեպում:

Քանի որ ժամանակաշրջանի առումով ավելի ուշ 1890-ական թվականների կյանքն է պատկերվում վեպում, այն արդեն զուտ հայ կյանքը չէ, ինչպես «Ծակ Պտուկում» էր, այլ թուրքով շնչող հայ կյանքը, այդ կյանքի պատմությունը, թուրքի անտանելի ճնշումից ծնված հայի ըմբոստացումը եւ միեւնույն ժամանակ թուրքիայում կառավարության կողմից ձեռնարկվող հայակործան քաղաքականության արդեն գործողություն դարձած օրենքների սկիզբը:

Վեպը ոչ միայն ազգային, պատմական եւ տեղեկագրական հարուստ նյութով է հագեցված, այլ իր սյուժեի մատուցման ձեւով եւ իր գեղարվեստական արժանիքով իսկապես ուսումնասիրություն է պարտադրում:

Այն հնարավորություն է ստեղծում ավելի խորը ճանաչելու, ըմբռնելու այն աշխարհը, իրարահաջորդ այն տարիները, որ հայի կյանքի մեջ սկսել էր բռնի մուտք գործել թուրքը, որ հայի կյանքը վատից վերածվում էր անտանելիի:

Վեպում նկարագրվածը «Ծակ պտուկը»-ի ժամանակաշրջանը չէ այլեւս: Թուրքերի վերաբերմունքը դարավերջում հայերի հանդեպ արդեն քաղաքական լուրջ ծրագիր էր դարձել: Իր հողի վրա ապրող հային, իր հարեւանին թուրքը նայում էր որպես բացարձակ թշնամու, իսկ նրա ունեցվածքը համարում էր իր սեփականությունը, որին իրավունք ուներ տիրանալու, երբ ցանկանար:

Ընդամենը քսանհինգ տարի հետո, այն վերածվելու էր հայերի ընդհանուր բնաջնջման եւ ոչինչ էր մնալու «Ծակ պտուկը»-ի կամ «Հարյուր մեկ տարվան» վեպերի ներկայացրած «մեր հողերու կերպարանքներեն», որոնց խորը նկարագրությամբ լեցված է եռագրության շարքը:

Տնտեսական ահավոր ճգնաժամի մեջ մխրճված Թուրքիան անկարող իր երկրի ներսում տեղի ունեցող կողոպուտների, սպանությունների առաջն առնելու, օրենքներ սահմանելու, փոխարենը է՛լ ավելի էր հրահրում, սրում ազգային ատելությունը, բորբոքելով մոլեռանդ թշնամություն հայերի դեմ, նրանց տնտեսապես ոչնչացնելու, ամբողջովին վերացնելու, նրանց ունեցվածքին ու հողերին տիրանալու համար: Հայերի դեմ պայքարը երկրի ներքին բացահայտ քաղաքականությունն էր դառնում պետական լուրջ ծրագրով գործադրվող:

Պարզ էր, որ հայը բոլորովին անպաշտպան էր եւ թուրք հարեւանի, եւ թուրք կառավարության խտրականության անվերջանալի ոտնձգությունների դեմ, ե՛ւ թուրք արդարադատության առջեւ:

Հարեւան թուրքերը տարբեր միջոցներով հարձակվում, կողոպտում, բռնաբարում, սպանում էին հայերին ու անպատիժ ***մնում***:

«Այդ արարքներուն անպատիժ մնալը թուրք արդարադատության համար նախատինք մը չէր, այլ պատրուակ մը, որպէսզի գոհերն ու բողոքողները քաշկռտուէին կառավարութեան կեդրոնները, ծեծուէին եւ ըսէին ձիշդ հակառակը...» («Հաճի Մուրատ» էջ 325):

Այդ հակառակը պարզ է, որ թուրքերի կողմից գործվող հանցանքներն ու մեղքը հայերի վրա նետելն էր: Եւ հայերը տեսնելով, որ թուրք կառավարությունը ոչ միայն միջոցներ չի ձեռնարկում այդ վայրագությունները կասեցնելու, այլ ինքն է հրահրում, կազմակերպում դրանք, ստիպված իրենք են դառնում իրենց իրավունքների եւ անձի պաշտպանները: Ստեղծվում են հայ ըմբոստ քաջերի խմբավորումներ, ապստամբ անունը կրող, որոնք միայնակ սկսում են հաշվեհարդար տեսնել իրենց հալածող, իրենց կողոպտող թուրքերից:

Սկզբնական շրջանում թուրքերն իրենք էլ, անտեսական իրենց վիճակից դժգոհ, սկսել են հայերի հետ միասին անհատական պայքարի ելնել:

«Հայն ու թուրքը, այսինքն աառնցմէ անոնք, որոնք բազուկ մը ունէին դանակ փալատելու կարող, ու սիրտ մը արեան վազքը դիտելու դիմացող, կրնային խմել քով քովի, պոռնիկ խաղցնել, կրկես իջնել կուլի կամ խաղի» (էջ 326):

Այդ թուրքերին էլ այդ շրջանում նույնպես ապստամբ են անվանել, սակայն դրանք տարբեր են եղել հայ ապստամբներից: Թուրք ապստամբները իրենք են կողոպտել ու սպանել իրենց կողոպտող

ավազակներին եւ ավելի հաճախ իրենք են բռնաբարել ու սպանել:

Թուրքերի այդ ըմբոստացումը կառավարությունը ոչ թէ չեզոքացրել, այլ օգտագործել է հայերի դեմ պայքարելու, նրանց թուրք ասպատակների միջոցով մաքրելու համար: Արագորեն, կառավարության ջանքերով հատուկ ծրագրեր են մշակվել հայ ըմբոստներին էլ ավելի ներգրավելու ասպատակության մեջ, նրանց մեկընդմիշտ վերացնելու համար:

Թուրքերի ճնշման ուժեղացումով թուրքաբնակ գյուղերով շրջափակված հայաշատ վայրերում շատացել է հայ ասպատակների թիվը, արդեն դարձել ժողովրդին պաշտպանող զորավոր ուժ: Թուրք կառավարությունը, այդ զորացման մեջ իրենց հանդեպ վտանգ զգալով, այն վերացնելու համար սկսել է անխնա պայքարել հայ ասպատակների դեմ տարբեր միջոցներով: Ահա այդ իրադարձությունների վրա է հյուսված այս վեպը:

Վեպում ներառնված է նաեւ նոր ծնունդ առնող մեր ազգային հեղափոխությունը եւ առաջին անգամ վիպային մասշտաբով, թեկուզ փոքրիկ հատվածով, ներկայանում է օտար պետությունների քաղաքական դիրքորոշումը մեր ազգային վտանգված հարցի հանդեպ:

Վեպը խորությամբ ընկալելու համար շատ կարեւոր է հասկանալ այդ ժամանակաշրջանում թուրքի վարած քաղաքականության մեջ հայերի վիճակը, նրանց մտածելակերպն ու հոգեբանությունը:

«Երբեմն այդ գռեհները կը վերածուէին ճշմարիտ խուժումի, երբ կը բռնաբարուէին տասը նոր մտած աղջիկներ ու կը սպաննուէին մայրեր, իրենց զաւակներուն պատիւը պաշտպանած ատեն»: Եւ հետո ավելացնում ***է «Հաճի Մուրատ ջախջախեց անոնց ոտքերը»*** (էջ 344):

Ծխախոտի մաքսանենգությամբ են ապրել այդ շրջաններում, ինչպես Հաճի Ստեփանը, Զաքարը «Ծակ պտուկը»-ում: Թուրք պաշտոնյաները տեսնելով, որ հայ ասպատակները ավելի քաջ ու վստահելի են, իրենց ծխախոտի մաքսանենգության ապահով փոխադրությունը թուրք ավազակներից պաշտպանելու համար հանձնել են հայերին: Հայերը ոգեւորված այդ վստահությունից ներգրավվել են այդ գործի մեջ, չհասկանալով թուրքերի իրենց եղնչացման ծուղակ ծրագիրը: Դա հային ոչնչացնելու խելացի ու ամենահեշտ միջոցն էր: Մաքսանենգերի եւ ավազակների բախումներում թուրքերի փոխա-

րեն հայն է զոհվել, հայն է ոստիկանության հետապնդման ու դատին արժանացել: Հայերը, առանց ըմբռնելու թուրքերի իրենց այդ միջոցով ոչնչացնելու խորամանկ քաղաքականությունը, շարունակել են հավասար կերպով պաշտպանել նաև թուրքի ունեցվածքը: Որեմն, ավազակների, կողոպտողի ու ապանդների այս խառնաշփոթ աշխարհում էլ ձևավորվում են վեպի դեպքերը:

Սակայն միայն հայի և թուրքի ընդհարումներով, կամ ազգային արթնացումի լիցքավորումով ապրող հայի կյանքի վրա չէ հիմնված վեպը, այլ հոգեբանական խոր շերտավորումների բացահայտումով լեցված աշխարհ է ներկայացվում այստեղ, մեզ համար բոլորովին անծանոթ մի աշխարհ, որ իշխում է նաև թուրք կինը սեռային իր բոլոր հատկանիշներով:

Դեպքը, որի մասին պատմվում է վեպում պատահել է 1896–ի ջարդերից առաջ: Բնավորությամբ խաղաղ, հավասարակշիռ, ուսումնատենչ 20 ամյա երիտասարդ Մուրադը, պատրաստվում է հաջորդել իր մեծ հորը քահանա դառնալ, երբ մի օր անսպասելիորեն զոհ է դառնում չերքեզ ավազակների հարձակումին: Նրանք ստորացուցիչ հայհոյանքներով ծեծում են նրան, անպատվում, խլում նրա ձիուն: Մուրադը, չհանդուրժելով այդ նվաստացումը, որոշում է վրիժառու լինել, հեռանում է անից, քաշվում լեռները, պաշտպանելու իր ազգի իր նման անպաշտպաններին այդ նենգ հալածողներից: Թողած իր նշանածին, իր մորն ու մեծ հորը, իր ապագայի ծրագրերը, նա դառնում է մարդասպան ու ավազակ հալածող, ապրելով անից հեռու, գյուղի մոտակայքի լեռներում ու կիրճերում: Ընտանեկան հոգատար միջավայրից կտրվելով, այդ 20 ամյա նուրբ երիտասարդը ընկնում է բիրտ ու դաժան, զրկանքներով ու մահերով լեցուն մի անծանոթ, իր նկարագրից ու իր բնավորությունից դուրս աշխարհ: Բայց իր վճռին հավատարիմ, հաղթահարելով բազում դժվարություններ, առաջին իսկ ընդհարումից ապացուցում է իր անկոտրում կամքը, անընկճելի քաջությունն ու ազնվությունը, և դառնում օրինակելի չափանիշ և ազդեցիկ անուն շրջապատի բոլոր ապստամբների համար: Մ՚իևնույն ժամանակ անորսալի ու վտանգավոր անձ թուրք ոստիկանության համար: Հային վայել մեծահոգությամբ նա փրկում է ավազակների հարձակման ենթարկված անզեն մի խմբի, որտեղից էլ սկսվում է իր քաջության համբավի տարածումը:

Ընդհարումներից մեկի ժամանակ նա սպանում է չորս սանձարձակ թուրք ավազակապետերի, փախուստի մատնում նրանց խմբին եւ ազատ արձակում նրանց կողմից վերցված գերիներին, կապկպված, իրենց մահին սպասող սարսափա–հար կանանց ու տղամարդկանց: Պարզվում է, դրանք Պրոսայի դիվանապետի կնոջ չերքեզուհի Սանամի, ծառաներն ու ուղեկիցներն են: Իսկ չերքեզուհին նետված կիրճի ներսը, զգեստները պատառոտված, ըլկված, ծեծված, ուշակորույս վիճակում սպասում է իր մահին:

Հաճի Մուրատն անմիջապես ուշքի է բերում չերքեզուհուն, գրկած դուրս հանում կիրճից, եւ նստեցնում կառք եւ ապահով ճանապարհում: Սանամը իր եւ իր ծառաների փրկության հա–մար անհուն երախտագիտությամբ է լեցվում այդ հայ քաջ երիտասարդի հանդեպ:

Պատահարի լուրը հասնում է թուրք ոստիկանությանը, որը երկար ժամանակ աշխատում էր գտնել ու ձերբակալել Մուրատին: Արդեն իրենց ձեռքում որոշակի տեղեկություն ունենալով նրա ուր լինելու մասին, ոստիկաններն սկսում են հետապնդել նրան: Անմիջապես պաշարում են գյուղը, սակայն Մուրատը կարողանում է հարեւան տների ու տանիքների արանքից ճողոպրել, մի քանի ոստիկան գետին գլորելով, փախչել եւ դեպի լեռները, որը քաջերի միակ ամենաապահով ապաստարանն է եղել այդ օրերին: Մեկ շաբաթում երկու մեծ քաջագործություն՝ ե՛ւ ավազակապետերի սպանություն, ե՛ւ ոստիկանների ձեռքից ճարպկորեն խուսանավում, պանծացնում են նրա քաջի համբավը:

Ծրջապատի հայ գյուղերը Հաճի Մուրատի հսկողության շնորհիվ սկսում են շունչ քաշել: Հայերի այդ հանգիստ կյանքը թուրքերին ձեռնտու չլինելով, ոստիկանները թաքուն, իրենք հրահրելով նոր սպանություններ ու կողոպուտներ, մեղքը բարդում են Հաճի Մուրատի վրա, նրա հանցանքը դատական օրենքի առջեւ առավել ծանրացնելու համար:

Մյուս կողմից հայ կյանքում արդեն սկսում են ծիլեր տալ հեղափոխական շարժումները: Քաղաքից առաքված հեղափոխական գործիչներին պետք էր Հաճի Մուրատի պես ազգի խիզախ պաշտպաններ: Նրանք Հաճիին համոզելով տանում են Պոլիս, հեղափոխական առաջադրանքներ հանձնարարում: Սակայն լեռների ազա-

տության մեջ անկախ գործող. ինքնագլուխ իր որոշումներում այս քաջը. իրեն կաշկանդված, նեհմացած զգալով քաղաքային կեղծ. զգոյշ բարքերի մեջ եւ ամբողջ խորությամբ չնկալելով իր ազգի գլխին կանգնած վտանգը. նրա փրկության հրատապ անհրաժեշտությունը. նա է վերադառնում լեռները. իր հին կյանքին. թուրք ավազակ ու մարդասպան հետապնդող իր միայնակ միսիային:

Բայց Հաճիին ոստիկաններից առավել հալածում է մեկ այլ բան: Կիրճում չերքեզուհուն փրկելուց. նրան գրկած կառք նստեցնելուց հետո խանգարվել էր նրա հոգեկան հանգիստը:

Կանանց հարցում այս անփորձ երիտասարդը. առաջին անգամ մոտիկից զգալով գեղեցկուհի Սանամի մարմնի թրթիռը. խելակորույս սիրա—հարվում է նրան եւ մոռացած վտանգ. ազգի պատկանելություն ու նպատակ. գնում է նրա ետեւից:

Սանամի մեջ նույնպես այդ կարճ հանդիպումը մեծ ցանկասիրություն էր արթնացրել:

Ի հակադրություն Հաճիի. կյանքի եւ տղամարդուն տիրելու հարուստ փորձառությամբ հայտնի Սանամը. այդ խիզախ երիտասարդի թեւերի մեջ ապրած մի քանի վայրկյաններում. զգացել էր նրա առնականությունը եւ անհագուրդ ցանկասիրությամբ լեցվել նրա հանդեպ: Նա որոշում է ինչ գնով էլ լինի տիրանալ այդ քաջին:

Համբավավոր իր կրքի. սիրած էակին տիրանալու իր նպատակասլացությամբ. ի վերջո Սանամը կարողանում է ձեռք ձգել Հաճի Մուրատին: Կանանց հարցում բոլորովին անփորձ Մուրատը իր լեռներն ու միսիան թողած. ամբողջովին հանձնվում է չերքեզուհուն: Նրանց գաղտնի սիրային տեսակցությունների լուրը Սանամի տանը. հասնում է թուրք ոստիկաններին: Նրանք սկսում են իրենց հետապնդումները Սանամի տան մոտակայքում. սակայն յուրաքանչյուր անգամ Հաճին կարողանում է ճարպկությամբ փախուստ տալ: Բայց այս անպարտելի երիտասարդը կրքից տարված. ի վերջո. ընկնում է չերքեզուհու ամուսնու լարած թակարդը: Գիշերով Սանամի տունը շրջապատած ոստիկաններին հաջողվում է Սանամի անկող—նում ձերբակալել Հաճիին: Սանամը մտածելով. որ կառավարության մեջ իր ունեցած կապերով կարող է փրկել իր սիրեկանին. համոզում է Մուրատին առանց կռվի հանձնվել ոստիկաններին: Այդ միամիտ հավատը չերքեզուհու խոստումի հանդեպ կործանում է Հաճիին: Իր

սիրած էակին վստահելով. նա հանձնվում է ոստիկաններին:

Կառավարությունը վերջապես իր ձեռքում ունենալով այդքան փնտրված հային, դատապարտում է նրան 101տարվա բանտարկության: Բանտային աննկարագրելի տանջանքների մեջ իր հույսը ամեն ինչից կտրած, հաշտված իր դաժան ճակատագրի հետ Մուրատը մխիթարվում է ազատության մեջ իր ապրած 25 տարիների հիշողությամբ միայն, որին մենք ականջալուր եղանք:

Սյուժեի այս պատմողական գիծը Օշականը հարստացնում է իրական պատկերներով, որոնք ստեղծում են գեղարվեստական լիարժեք, ամբողջական միջավայր եւ նյութը, եւ տվյալ ժամանակաշրջանը լիովին ըմբռնելու համար:

Ինչպես նախորդ, այս վեպում էլ զարմանալի բազմաձայնավորումով է աշխատում վիպասանը: Նա կարողանում է վարպետորեն հավաքել այդ ձայնավորումները, իրար հանգուցել, ստեղծել մի ամբողջական հսկա պատկեր:

Ավազակների հետ Մուրատի բախումը, դառնում է վեպի կենտրոնաձիգ առանցքներից մեկը, միեւնույն ժամանակ այն բաժանում տարբեր ձայնավորումների, նրանցից յուրաքանչյուրը տարբեր հոգեբանական վիճակների աստիճանական զարգացմամբ բացելով:

Մեր դեմ պատկերվում է անպատկառ, անսիրտ ավազակների մի ոհմակ, թուրքի անմարդկային հատկություններով լեցված, ընդդեմ անպաշտպան, իրավազուրկ մարդկային մի խմբի:

Նրանց կողքին թուրք բարձրաստիճան պաշտոնյայի կինը, չերքեզուհի Սանամը, անպատված ու ուշակորույս, կանացի գեղեցկության իր բոլոր առավելությունների մեջ անպաշտպան ու խոցելի:

Նաեւ Սանամի ամուսինը՝ Պրուսայի դիվանապետը, իր ողորմելի ցանկասիրությամբ ու գազանային անխղճությամբ:

Եւ սրանց հակադիր հայտնվում է Հաճի Մուրատը՝ քաջությամբ ու ազգային բարոյական վեհ մաքրությամբ լեցված երիտասարդը:

Սրանց է միացնում նաեւ թուրք ոստիկաններին ***«այլուրի ներկուած պարկերը իբր համազգեստ հագնող այդ մարդիկը»***, որոնք ներկայացնում են մի ամբողջ երկրի օրենք ու ներքին քաղաքականություն: Առանց արտոնագրի զենքը պաշարելու նրանց արարքը, որն ընդգծում էր ***«տհաքեկման եւ ձերբակալման այս***

եղանակը նորույթին էր» (էջ 338), հետո վեպում զարգանում ու հաստատում է պետության ընդունած հայերին վերացնելու քաղաքական ուղեգծը:

Այս հակադիր բախումներով լեցված իրավիճակից էլ ծնվում է մի նոր, բոլորովին անսպասելի հարաբերություն ու վեպը շեղում մեր սպասածից այլ ուղղությամբ: Ստեղծում է դեպքերի մի նոր շղթա որ կրկին իրեն հատուկ վարպետությամբ բացում է մարդկային հոգու ապրումների մի հսկա աշխարհ:

Ավազակների ձեռքով տանջված, ընկված չերքեզ-զոհին իր փրկարարի Հաճի Մուրատի քաջա-գործությունից ու մեծահոգությունից ազդված, որպես երախտագիտություն, իր մատանին է նվիրում նրան, որը վիպասանը դարձնում է վեպի անկյունադարձը: Նվիրաբերման այդ պահը դառնում է ճակատագրական երկուսի թե՛ Մուրատի, եւ թե՛ չերքեզուհի Սանամի համար: *«Կան պահեր, որոնց մէջ վէր ենք աշխարհէն»*, այսպես է նկարագրում այդ պահը վիպասանը: Ու այդ *«վէրը»* դառնում է տիկինի նայվածքից առաջացած անբացատրելի տեղաշարժը Մուրատի հոգու մեջ:

«Ու տիկինին նայվածքը, մատանիին վրայով, ինկաւ խոր, շատ խոր, հոգիին մէջը երիտա-սարդին, ընելով ակնթարթի մէջ, ինչ որ մեր յաւիտեանը կարծէ»: Իսկ այդ հավիտյանը այն *«բզզիւնին մէջ էր, որ կը յառնէ մեր լռութեան խորխորատներէն հոն կը դրոշմէ, անկորուստ ու վճռական, ուրիշը, ան, որ մեզմէ աւելի սուղ պիտի ըլլա մեզի: Որուն համար մենք, առանց թարթելու, պատրաստ ենք զոհելու մեր անձը անգամ»* (էջ 336):

Այսպիսին է մարդու հոգին եւ Օշականը իրեն հատուկ զարմանալի տարողությամբ ընդամենը մի քանի տողերի մեջ տեղավորում է հոգու այդ անբացատրելի, անտեսանելի փրծողությունը ակնթարթային տեղաշարժը, կապը երկու տարբեր սեռերի մեջ առեղծվող: Դա սերն է արդյո՞ք, կրքի բռնկու՞մը, հակառակ սեռին ունենալու տե՞նչը: Նա չի մասնանշում թէ որ մեկն է ծնվում երկու տարբեր եւ թշնամի սեռերի մեջ, բայց եւ այդ ամենի համատեղությամբ տեսանելի է դարձնում նրանց խորքում ծնունդ առնող բռնկումը:

Այստեղ նա դիմում է վիպային այլ միջոցի, հետո է պարզելու կատարվածը, իսկ մինչ այդ կրկին մի նոր շեղումով մեզ տանում է

անսպասելի մեկ այլ արահետով: Մուրատի մաքուր հոգում սկիզբ առնող ներքին զգացական ապրումների կողքին կրկին հայտնվում է թուրքը իր հալածանքներով: «***Կռիւը ամէնօրեա իրողութիւն է տաճկական, ինչպէս եւ հայկական գեղերուն մէջ***» եւ սա եղել է մեր նախորդների ապրած կյանքը այդ տարիներին:

՝Ներքին ապրումների եւ սոցիալական իրավիճակի կտրուկ փոփոխություններով, նա կրկին բազմաթիվ թելերով, մեզ կապում է այդ կյանքին: Տարբեր գործողությունների շաղախով հիշեցնում վեպում շնչող իրական կյանքը թուրքի եւ հայի հարաբերությունը, հայի նվաստ վիճակը:

Կյանքից վերցված յուրաքանչյուր իրադրություն, դա լինի մարդկային զգացում կամ հարաբերություն, ինչպես ինքն է մատնանշում- «կարոտ է հարյուրավոր էջերու» (Հ.. հտ.10. էջ 188):

Եւ անշուշտ նա այս ամենը մատուցում է բարձրագույն գեղարվեստական չափի, ներդաշնակության եւ բնականության մեջ: Քանի որ իր պատկերած կյանքը եւ մարդիկ արդեն չկան, կրկին հայտնվում է Օշականի պատմողը, մաս կազմում վեպին, մեզ ծանոթացնում վեպի կյանքի կարեւոր, ուսանելի մանրամասնություններին, մինչեւ իսկ կռիվ—ընդհարումների օրենքներին: Հաղորդում այնքան կարեւոր տեղեկություններ որոնք դժվար թէ ուրիշ միջոցներով կարելի է հայտնաբերել: Այդ տեղեկությունների մեջ ներդնում է խորություններ, որոնք առաջին հայացքից այնքան էլ կարեւոր չեն թվում: Ահա թեկուզ աննշան թվացող հիշատակում

թուրքերը ամեն ինչից վեր մեծ հարգանք են ունեցել համազգեստի հանդեպ եւ հայ—թուրք բախումներում, կռվող կողմը հատկապես ապստամբը, խուսափել է ոստիկան կամ զինվոր սպանել, քանի որ պետական այդ համազգեստավորներին սպաննողի մահապատիժը անխուսափելի է եղել: «***Կրնաս կողոպտել պետութեան փոստան, հերիք է որ չիյնայ ընկերացող ոստիկանը: Անգամ մը, որ արիւնը թափի համազգեստէն, շարժման մէջ կը դրուին պետութեան բոլոր միջոցները եւ հետապնդումը չի դադարիր մինչեւ որ ապստամբը չսպաննուի իր կարգին***» (էջ 340):

Օրենքի չգոյության երկրում օրենք են պարտադրել պետական պաշտոնյաների հանդեպ, ի դեմս բոլոր համազգեստավորների, որով արդարացրել ու պաշտպանել են նրանց գործած ոճիրները:

Մյուս կողմից. այս ձեւով ժողովրդին եւ հատկապես հային, միշտ վախի ու սարսափի կախման մեջ պահել:

Զինվորներով կամ ոստիկաններով շրջափակման դեպքում լավագույն միջոցը եղել է փախուստը:

Հետո նա ավելի է ընդլայնում իրավիճակը: Մինչ փոքրիկ հայ գավառը Հաճի Մուրատի քաջագործության պաշտպանությամբ մի փոքր շունչ է քաշում, մեր հեղափոխությունը սկսում է իր նոր ծիլերը նետել կարծր, խոպան ու անմշակ գյուղացիների ուղեղներում: «Ձայն մը հնչեց»-ը դառնում էր ժողովրդին աստիճանաբար իր մարդկային ու ազգային իրավունքներին մղող անտեսանելի ուժ:

Այսօր. մեր այս հեռավորությունից դիտված պատմական դեպքերը. ամբողջական են դառնում, երբ այն ներկայացվում է իրենց ծնունդ տված իրական միջավայրում: Այդ միջավայրը իր բոլոր կողմերով տեսնում ենք այստեղ:

Ազգի աստիճանական արթնացումը իրապես մեծ երեւույթ է ժողովուրդների կյանքում եւ հատկապես դարեր ճնշված. առանց պետականության ապրող մեր ժողովրդի համար: Եւ Օշականի նման լայնածավալ մտածող վիպասանը անկարող էր լռության մատնել այդ նշանակալից իրադրությունը իր ներկայացրած կյանքում:

Գավառներում եւ գյուղերում կյանքը գնալով անտանելի դառնալով քաղաքներն էին ծանրակենտրոն դառնում ե՛ւ անտեսական աճի ե՛ւ քաղաքական հասունացման համար:

Քաղաքներում ծնունդ առնող հուզումները անհրաժեշտ էր տարածել ամենուրեք. ընդգրկել իրական ժողովրդին, որը գյուղում ու գավառում էր:

Ինչպես վեպի բովանդակության մեջ նշեցինք` Մուրատի քաջագործության լուրը հասնելով հայ հեղափոխականներին, նրան հրավիրում են Պոլիս, ուր քաղաքական նոր շարժումների սկիզբն էր դրվում: Ազատության տենչը իր նոր ծիլերն էր արձակում նաեւ հայ կյանքում: Այդ դժվարին առաքելության համար անհրաժեշտ էին Մուրատի պես ուժեղ, արդարության համար իրենց կյանքը նվիրաբերող մարդիկ: Հատկապես այդ օրերին պայքարի գիտակցության արթնացումը ամենադժվարին գործն էր: ***«Յեղափոխութիւն: Բանը խոշոր էր այն ատեն ու մռայլ: Միայն գիտէին, թէ հեռուներէն «հայուն աստուածը» ճամբայ էր ինկած: Ապստամբու-***

թի՞ն: Այդքանին չէր հասներ այդ աղոց խելքը» (էջ 342):

Մտածողության, հոգեբանության հեղաշրջումի պատմական այդ օրերին պարզ ու հավատավոր մարդիկ հիմնովին փոխում էին ազգի գոյատեւման ընթացքը, ժողովրդի հոգում եւ ուղեղում աճեցնում հայրենի հողի ու ազգայինի հանդեպ, ոչ միայն նվիրում, այլ նաեւ զոհաբերություն: ***«Այդ բարակ պարոններուն մօտն էր, որ անիկա սորվեցաւ ճանչնալ մշեցին, վանեցին, պիթլիսցին, ախազցին, կարնեցին եւ զանազան ուրիշ վայրերէ Պոլիս ինկած իր եղբայրները, նոր-նոր հայեր, ըսես ուրիշ ժողովուրդի զաւակներ, երբ առաջին շփումը կունենաս հետերնին, բայց պահ մը ետքը տարօրէն նման իրարու»*** (էջ 360):

Այս մի քանի տողերի մեջ ոչ միայն պատմական, այլ հոգեփոխության ճշմարիտ իրավիճակներ է տեղադրում գրողը: Պոլսից եկած այդ «բարակ պարոնները» մեր հեղափոխական սկնաակ գործիչներն են, տարբեր գավառներից եկած, ամբողջովին պայքարի գիտակցությամբ լեցված «նոր-նոր հայերը», որոնք մեծ ազդեցություն են թողնում Մուրատի վրա: Նրանք ընդհանուր ժողովրդից տարբերվում են իրենց մտածողությամբ, բայց նման են իրենց կյանքի անտանելի տառապանքի մեջ: Նրանցից յուրաքանչյուրը իր հոգում կրում է թուրքի ձեռքով լլկված կնոջ, մոր, զավկի կորստի վրեժը: Նրանց հոգիներում նույնպես ծանր շղթաներ կան դրված, թուրքի շղթաները: Ահա նրանցից մեկը ***«Վանէն, թաց ու հաստ, ամբողջ մկան ու առնութիւն: Որուն կինը տարած էին լեռ, սպաննած, վրայէն անցնելէն ետքը: Կը նայէր դէմը, տեսնելու պատկերը, թէ չտեսնելու: Լուռ էր ու կացնահար. . . Ան ինչ անգթութեամբ, անիկա պիտի կցօխէր սկիին էնոնց, որոնք խարամ ըրին Աստուծոյ արեւը իրեն»*** (էջ 361):

Այսպես էր բոլոր գյուղերում ու գավառներում, հայն ամենուրեք ճնշված էր ու սրտով վիրավոր, ***«արիւն թարախ կը ծորէր անոնց հոգիին բոլոր ճամբաներուն»*** (էջ 362).

Բայց այդ ճնշվածության մեջ սկսում էր գլուխ բարձրացնել ճնշողներից ազատագրվելու տենչը: ***«Դարերով ճշտուած դիրքեր ցեղէ ցեղ փոխելու վրայ էին, քիչ-քիչ»*** (նույն տեղում):

Ինչպես տեսնում եք դեռ տարերային բնույթ ունի այդ պայքարի արթնացումը, «քիչ-քիչ», դեռ սկսար ու սխալ ըմբռնում ունի ժողովուր-

դը. դեռ անվստահության ու կասկածի տատանումների մեջ է. բայց շարժումը սկսված է եւ Օշականի. այդ շարժման հանդեպ. հիացումն ու գնահատանքն է նաեւ տեսանելի:

Նա իր հերոսին՝ Սորատին. դարձնում է առաջիններից մեկը այն նվիրյալներից. որի համար ասպատակությունը կարծես այլեւս փոխելու է իր իմաստը. բայց դեռ ոչ լիովին. նա դեռ չի դառնում նվիրյալ այդ գործին: Նա դեռ խորությամբ չի ըմբռնում իր հայի. նվաստ վիճակը եւ չի տեսնում իրեն այդ վիճակի մատնողին:

Օշականի. որպես կյանքը գրականության փոխադրողի. յուրահատկությունը նաեւ այստեղ է շեշտվում. նա անկեղծ ու ճշգրիտ է մինչեւ իսկ դարի ժողովրդային մտածողությունը փոխանցելիս: Սորատի պայքարը թուրքի դեմ ատելությունից չի ծնվել: Ազգային ատելության դեռ չկա. քանի որ չի հասկանում թուրքի քաղաքականությունը: Նա պարզապես անարդարության դեմ է պայքարում: Ատելություն ու թշնամություն ունի իրեն հարստահարողի. բայց ոչ ճնշողի. իրեն ճորտի վիճակից վար պահողի. հալածողի հանդեպ: Նա դեռ չի հասկանում «հպատակներուն պարտադրուած» իր վիճակը. որ պետական մի ամբողջ մեխանիզմ է գործի դրվել իր ազգին խաղաղ ոչնչացնելու համար: Դեռ վստահում է թուրքին. հավատում նրա խոսքին: Վկան Սանասարին հավատալով իր հանձնվելն է թուրք ոստիկաններին: Այդ դյուրահավատությունը. շեշտում է Օշականը. որը հայի բնավորության մեծագույն կործանարարն է եւ հատկապես թուրքին թշնամի չճանաչելը. մեր արեւմտահայության հոգեբանությունն է եղել: Հայը դժգոհ է. որ հարստահարվում է. բայց եւ շնորհակալ. որ «իրենց գլուխները իրենց ուսերուն վրա են»:

Օշականի համար կարեւոր էր այս

իրավիճակը շեշտելը: Դա հայի ստրկամտության. թշնամուն քծնելու. արդեն ամուր բնավորություն դարձած հիմնական հատկությունն էր:

Ահա թե ինչու. մեր ժողովուրդը. ջարդերի մեղքը բարդում էր հատկապես հեղափոխականների եւ արդեն մասսայական ջարդերի ժամանակ կուսակցությունների վրա: Նրանք մտածում էին. որ թուրքը իրենց չէր կոտորի եթե իրենք չըմբոստանային:

Օշականին հանգիստ չի տվել այս շատ կարեւոր հարցը հայության մտածողության մեջ: Նա մինչեւ իսկ վիպային լեզվով մեկնա-

բանել է հայի թմբիրից դուրս սպրդելու անհրաժեշտությունը: Այդ մասին ավելի պատկերավոր ու ընդարձակ խոսում է «Մնացորդացը», «Մաթիկ Մելիքխանյան» վեպերում, իսկ այստեղ ժամանակաշրջանին հարազատ մնալով միայն տալիս է այդ ամենի ուրվագիծը:

Իր գրչին յուրահատուկ պատկերավորությամբ ներկայացվում է Պոլսում, հայ նոր կազմավորվող հեղափոխականների հանդիպումներում Մուրատի ազգային զգացումների աստիճանական արթնացումը: Մուրատը նրանց շրջապատում է ճանաչում իր ազգային պատկանելիությունը: Այստեղ է ճանաչում իր ժողովրդին, որը մինչ այդ իր իմացած միայն Պրուսայի խեղճ ու խոնարհ հայությունը չէ, այլ պայքարի ելած հայեր, «***որոնց ճակատէն կը վառէր յստակ կանթեղը ցեղին, որոնց սիրտը արյունոտ ու լուսնի չափ վերք կը կրեր: Չկար մէկը, որուն սրտին վրա մարդ մը կախած չըլլային***» (էջ 362): Այս վերջին մեկ պատկերավոր տողով նա խտացրել է ամբողջ ժողովրդի ապրած ողբերգությունը: Այդ տառապանք տեսած մարդկանց շրջապատում է Օշականը իմաստնացնում իր հերոսին, սովորեցնում իր ժողովրդի պատմությունը, հասկացնում, որ թուրքը միայն ավազակային կողոպուտով ու սպանություններով չէ, որ ճնշում է հային, այլ ուզում է իսպառ ոչնչացնել նրան, որ միայն Պրուսայում չէ, որ կոտորվում է հայը: Պրուսայից դուրս էլ, ամենուրեք կոտորվում է հայը եւ հարկավոր է պայքարի ելնել: «***Թուրքերուն կայսրութիւնը կը մտնէր իր եղերական ծիածաններէն մէկուն մէջ: Կու գային կրկէս անոնց նախնիքները, իրենց նախնական զէնքերով ու բնազդներով: Հայկական հարցը կը վազէր իր սրտաճմլիկ արարուածներուն, նախանցէ նախանց, նոյն ու անողոք: Արձակուած էին ուրականին երախները***» (էջ 387):

Կրկին առիթը օգտագործում է 90-ի ջարդերի կողքին նաեւ 15-ի գալիք ջարդը շեշտելու:

Մուրատի, իր ազգի ճանաչման աստիճանական զարգացման մեջ արթնանում է նաեւ սերը իր ժողովրդի ու երկրի հանդեպ, արդեն ***գիտակցորեն***: «***Անիկա սիրեց իր ազգը նոր, օտար, մոռցուած ու վերագտնուած բանի մը պէս լուսամփոփելով իր մէջ այդ տարօրինակ զգացումը***» (365):

Մուրատի մտածումների ու ապրումների արթնացման միջոցով Օշականը առաջին անգամ խոսում է ազգի նվիրյալների մասին.

որոնք երբեք չսակարկեցին իրենց կյանքը, երբեք չվարանեցին զոհաբերվելու ազգի փրկության համար: Մուրադի զգացումների արտացոլման միջոցով նա վերլուծում է հայրենիքի հանդեպ մեր ունեցած բարդ ու խորը, անբացատրելի զգացողությունը: Դա հեռուներից եկած, հազարամյակներում մեր էության մեջ կուտակված բազմաշերտ այն տարերքն է, խառնվածքը, որի մեջ թաքնված են բազում առեղծվածներ ու խորհուրդներ: Մուրադի մեջ թեւ առած այդ խորհուրդները հանգիստ չեն տալիս նրան:

Եւ հեղինակը հոգու տարբեր շերտավորումներ պեղելով, բացում է մինչեւ իսկ իրեն ընթերցողին, անհայտ ազգային հատկանիշների անբացատրելի առեղծվածը տեղավորված յուրաքանչյուր անձի եւ հատկապես հայի ներսում: ***«Այս շփումէն անիկա գտաւ իր սիրտը մեծցած: Հասարակ տապաստակի անոր պարունակին մէջ բացուեցաւ շքեղ ծաղիկը հայրենասէր երիտասարդին»*** (352):

Մուրադի համար այլես նեղ է Պոլիսը: Իր մեջ արթնացող խռովքները տանջում են իրեն: Խեղդվում ու կաշկանդվում է քաղաքի միջավայրից, «տուներու անապատ կոյտերէն», անբարո ոստիկանության ու զինվորության խստագույն գործելակերպից, անվերջ զգույշ գործելու, ապրելու պարտադրանքից եւ անգամներ անզգուշությամբ իր կյանքն ու հեղափոխական առաջադրանքը վտանգելով, հազիվ փրկվում է արդեն իր հետքը գտած քաղաքային ոստիկանների ձեռքից: Հիմա էլ դառնում է թուրքական վերին իշխանության կողմից փնտրվող հանցագործ:

Նա գերադասում է կրկին վերադառնալ զրկանքներով լի, բայց ազատ ու անկաշկանդ հայրենի լեռների մենակյաց իր կյանքին:

Թվում է այս բոլորից հետո մտքով ու զգացումներով հասունացած Մուրադը, թուրքի դեմ իր պայքարը ավազակ հալածելուց, մի նոր մակարդակի պիտի հասցնի ու ավելի կազմակերպված, ավելի մեծ տարողությամբ պիտի ծավալի: Նա իր բնազդներով արդեն զգում է, որ իր ազգին սպասում է ***«հսկա սպառնալիքը, որ կը զարնէր ահա արմատը իր ցեղին»*** (էջ371): Այդ գիտակցումն է պատճառը, որ նա ազատ է արձակում իր խմբի հայ ապստամբ տղաներին ասելով, որ ***«Ամէն տղայ պէտք է իր տունին: Սեւ օրերը ճամբայ էին ինկած»*** (էջ 371):

Բայց այս բոլորից հետո, վիպասանը հոգեբանական անսպասելի մի շրջադարձով, կրկին է փոխում վեպի ընթացքը: Անասելի գոհողություններով ծնված այդ ազգային տառապանքի գիտակցումը հանկարծ իր տեղը զիջում է անձնական զգացմանը, ֆիզիկական ձգտմանը: Եւ այն էլ ու՞մ հանդեպ . .. Չերքեզուհի Սանամի:

Միանգամից կարծես վեպի մեջ մի նոր վեպ է ստեղծվում:

Օշականը չի թաքցնում մարդկային զգացումների աններդաշնակությունը մինչեւ իսկ իր հերոսի կերպարում: Ազգային այդքան խոր զարթոնքից հետո Մուրատը տեսնում ու փնտրում է միայն չերքեզուհի Սանամին: Կրկին տեսնում ենք մարդկային ընդերքը փորփրող ստեղծագործողին, որի գրչի ուժով բացվում են նաեւ ապրված խորը գաղտնիքներ քաջ լեռնականների կյանքից: Ինչպես գիտեք Օշականի համար շատ կարեւոր է եղել բացահայտել թուրքի դերը մեր ժողովրդի ճակատագրում ուր իր մասնակցությունն է բերել նաեւ թուրք կինը: Ըստ վեպի տված տեղեկության, ութսունական–իննսունական թվականներին թուրք անբարո կանանց դյութամառչելիությունը ձգել է նաեւ քրիստոնյա երիտասարդներին, հատկապես մենակյաց լեռնականներին, իրենց նոր արթնացող սեռական հաճույքները գոհացնելու համար: Հայ գյուղերում, իրենց խիստ բարքերի հետեւորդ հայ երիտասարդները, ըստ Օշականի, հաճախ ընկել են այդ կանանց թակարդը: Ահա իր ականատեսի վկայությունը ***«Պաշտական (սարայլը) կիները, 1900ին լեգէոն էին մեր կողմերը: Անոնց տարփանքները երբեմն կը փռուէին փողոցներուն, երբեմն կը ստեղծէին խոշոր հեշտանքներով ցլամարտեր, երբ կնոջ մը համար ութը-տասը երիտասարդ իրար կը կոտորէին, անհնարին կատաղութեամբ»*** («Համապատկեր», 10, էջ 140):

«Ծակ–Պտուկը»-ում արդեն հանդիպեցինք Հաճի Ստեփանին, որն իր կյանքն անցնում էր թուրք «պոռնիկներ խաղցնելով» եւ որոնց նույնիսկ համարձակվում էր աղամարդու հագուստներով հաճախ հայ գյուղ, իր տունը բերել: Ուրեմն այդ կենցաղը թեեւ մերժվելով, դատապարտվելով, բայց եղել է հայի կյանքում: Հայը թուրքին չմերժելով հանդերձ, ընդունել, կենակցել է նրանց կանանց հետ, մտածելով, որ այդպիսով անաղարտ է պահում իր ազգին, չի ոտնակոխում նրա բարքերը: Այս բացահայտումը ծնում է մեկ այլ շատ կարեւոր հարց որը երբեք ուշադրության չենք արժանացրել, չենք պարզել մին-

չեւ այսօր: Դա թուրք կանանց հետ մեր երիտասարդների մերձեցումից ծնվածների հարցն է: Ինչ ճակատագիր ունեցան նրանք: Այս մասին թեեւ վեպում չի մանրամասնվում, բայց որպես իրական տեղեկություն, որպես փաստ է արձանագրվում եւ մեր պատմության համար դառնում է չբացահայտված էջ: Թուրք կնոջ ներկայությունը հայի կյանքում անժխտելիորեն եղել է եւ սերունդ է աճել այդ շփումից, որը մեզ կանգնեցնում է մեկ այլ հարցադրման առջեւ ու ր է այդ սերունդը... Իսկ Հաճի Մուրատի կյանքում կատարվածը բնականաբար մեզ կանգնեցնում է հիմնական հարցի առջեւ: Դա կրկին հայի եւ թուրքի հարաբերության հարցն է: Վեպում թուրքի ու հայի մեջ առեղծված հալածանքի կողքին ծնվում է անսանձելի ձգտում, կրքի հրդեհ, սեր, որը ծնկի է բերում անկոտրելի Մուրատին: Կիրքը իշխում է Օշականի բոլոր վեպերում, ինչպես նախորդ գլխում շեշտվեց, վիպասանի առեղծագործական տեսադաշտի խնդիրներից է, որը կյանքից է փոխադրել վեպ: Կյանքում սեռական հարաբերությունը, դրան մղող կիրքը մեծագույն մղիչ ուժն է: Ուրեմն ինչպես կյանքը մեծ ու զարմանալի է իր անակնկալներով, իր հակասություններով, անսպասելի շրջադարձերով, շատ հաճախ անկառավարելի զգացումներով, բնականաբար այդպես է լինելու նաեւ վեպում: Ի վերջո ինչպես ինքն է նշում ***«Մարդը մեղքի գործարան մըն է ու անոր ամէն ձեւերուն համար իր մարմինը պատրաստ է խորան, տաղավար հանդերձել»*** («Համապատկեր», 10, էջ 139):

Ահա թէ ինչու նա վեպի հերոսին չի մաքրում մեղքերից, նրան օրինակելի պահելու համար, այլ կյանքի հողի վրա ապրեցնելով, պարզում է ե՛ւ մարդկային թուլություն, կիրք, սեռ, ե՛ւ մի ամբողջ ժամանակաշրջանի արատավոր կենցաղ ***«Արիւնն ու սերմը կը տիրեն այդ շրջապատին»:***

«Ծակ Պտուկը»-ում տեսանք, զգացինք կրքի ներկայությունը իր հերոսների կյանքում: Եւ հիմա նույն կիրքը բռնկել է երիտասարդ Մուրատին: Իր հալածականի վիճակը մոռացած, արյունը, մահը աչքին առնելով, նա գնում է հագուրդ տալու իր կրքին:

Քաջության մեջ անպարտելի երիտասարդը, հեշտորեն պարտվում է, կքում կրքի առաջ, ընկնում Սանամի ծուղակը:

Հրաչյա ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԶԱՎԵՆ ՊԻՊԵՌՅԱՆԻ «ՄՐՋՅՈՒՆՆԵՐՈՒ ՎԵՐՋԱԼՈՒՅՍԸ»՝ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԸ



Ֆյոդոր Դոստոևսկու «Գրառումներ մեռյալ տնից» վիպակում այսպիսի մի նախադասություն կա. «Մարդ ուտիճ էլ չի դառնում»: «Երբ Գրեգոր Զամզան մի առավոտ անհանգիստ երազներից արթնացավ, տեսավ, որ անկողնում սարսափելի ուտիճի է վերափոխվել»: Այս նախադասությամբ է Ֆրանց Կաֆկան մեզ ուղեկցում «Կերպարանափոխություն» վիպակի մղձավանջային մթնոլորտ: Եվ հնարավոր է, որ մարդու ուտիճի կերպարանափոխության միտքը Կաֆկային հուշել է Դոստոևսկու հենց այդ նախադասությունը: Զավեն Պիպեռյանի «Մրջյուններու վերջալույսը» վեպի հերոսը՝ Պարետը, երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին վերադառնալով զինվորական ծառայությունից, հայտնվում է գրեթե կաֆկայական մի իրականության մեջ, ուր շուրջը ամեն ինչ և ամեն ոք օտար է. «Միշտ այնպես թուած էր իրեն, թէ ամէն կողմէ, տուներէն, պատուհաններէն զինքը պիտի դիտէին շարուած, իրարու պիտի ցուցնէին: Մինչդեռ մարդ իրեն չէր նայեր պատուհաններէն: Ժամ մը առաջ, երբ քաղնիք կը փութար, օտար կը զգար ինքզինքը իր թաղին, իր փողոցներուն, իր տունին մէջ: Մորթ փոխելու կ՚եր-

*«Զավեն Պիպեռեան «Մրջուններու Լուսաբացը», Ստամբոլ, 2009, աշխատասիրությամբ Սեւան Տեիրմենճեանի:

թար. ինք ինք ըլլալու վերստին:

Հիմա, ընդհանրապես. ինքզինքը կորսնցուցած էր փոխանակ վերագտնելու: Ցանցանքը համազգեստին չէր ըսել է. եթէ ինք ինք չէր այլեւս: Այս անհասատալիօրէն թեթեւ լաթերուն մէջ բոլորովին օտար էր: Ինք համազգեստով ինք էր: Եւ համազգեստը օտար էր այս թաղին, ինչպէս օտար էին իր հագուստներն ու կախող կօշիկները իրեն: Ամբողջ Պոլիսը օտար էր: Օտար, անտարբեր, նոյնիսկ թշնամի» (29-30): Ալբեր Քամյուի «Օտարը» վեպի հերոսի՝ Մասրիս Մյորսոյի նմանությամբ Պարետն օտարություն և սառնություն է զգում մոր հանդեպ, երեքուկես տարվա բացակայությունից հետո անհարմար զգալով միայն իր լռությունից. «Ամչցավ լուռ մնալէն երեքուկէս տարուան բացակայութենէ ետք, բայց ըսելիք բան չէր գտներ: Ո՛չ մէկ նիւթ՝ մօրը հետ խօսելու: Ինչեր կրնար պատմել, ինչեր կրնար թափել դուրս: Բայց մէկը կը բռնէր, կը սեղմէր կոկորդէն: Իր մէջ կը խեղդուէին բոլոր նիւթերը: Լուռ կը մնար, յուսահատ, բերանը բանալու անկարող: Ոչ մէկ փափաք ունէր խօսելու մօրը յուզած նիւթերուն վրայ: Եւ իրեն անկարելի կը թուէր խօսիլ այն բաներուն մասին, որոնք ահարկու հրմշտուքի մը տեղի կու տային իր գլխուն մէջ» (34): Զամզայի ծնողները խորշում են միջատի կերպարանափոխված իրենց որդուց և միայն քույրն է, որ դրան սակից կերակուր է տալիս նրան: Պիպեռյանի հերոսն «արթնանում» է խսկական մղձավանջի մեջ՝ իր ընտանիքի օտարված մթնոլորտում: Այդ ընտանիքի բոլոր անդամներն օտար են միմյանց. «Չորս օտարներ էին կարծես» (108):

Պիպեռյանը մարդու ներաշխարհը հասցնում է օտարված հարաբերությունների այն եզրագծին, որտեղից Կաֆկայի հերոսն այլևս մարմնական կերպարանափոխության է ենթարկվել: Եվ Պարետի օտարված լինելու անառողջ հաձույքի մեջ վերջնականապես միջատի չափ աննկատ դառնալու և մոռացված լինելու ցանկությունն է սրոփում: «Վատառողջ հաձոյք մը կը զգար՝ խորհելով, որ բոլորն ալ իրեն դէմ դարձած էին: Թէ այլեւ մայրը առտուն նախաձաշը պիտի չպատրաստէր, քոյրը երեսը պիտի չնայէր, հայրը միայն լրագիր պիտի կարդար իր ներկայութեան» (111):

Արևմտաեվրոպական էքզիստենցիալիստական վեպում հա-

սարակությունից մարդու օտարման երևույթը հիմնականում գոյաբանական հիմնավորում է ստանում՝ մարդիկ օտար են, որովհետև «ամեն մի մարդ մի անապատ է» (Ժյուլիեն Գրին): Պարետը ծառայությունից վերադառնալուց հետո է միայն գիտակցում, որ հայրն ու մայրը տարբեր և անհաղորդ աշխարհներ ունեն և այդ տարբերությունը օտար է դարձնում նրանց մեկմեկու. «Չէր խորհած, որ կրնային իրարմէ անջատ աշխարհներ ունենալ» (253): Սակայն հիմնականում կենցաղն է, որ շատ կողմերով պայմանավորում է Պիպեռյանի վեպի հերոսների օտարված խառնվածքը: Օտարման պատճառը Պիպեռյանի վեպում Մարկ Նշանյանի բնորոշմամբ «տնտեսական պայմանագրությամբ» կազմավորված ընտանիքն է, թեև Պիպեռյանի վեպը չի սահմանափակվում «քաղքենիական բարքերու եւ անխուսափելիօրէն դրամի վրայ հիմնուած յարաբերութիւններու» ձաղկումով: Հերոսները թաղված են առօրյա հոգսերի ու կենցաղային ցեխի մեջ, հանգամանք, որ կենսատրոփ է դարձնում Պիպեռյանի վեպը՝ մի կողմից հեռու պահելով այն սխեմատիզմից և առանձնացնելով գրական բազմաթիվ նմանությունների շարքում, մյուս կողմից կենցաղային մանրամասնությունները Պիպեռյանի վեպը չեն թողնում, որ լրիվ մտնենա գոյապաշտական այլաբանության ժանրին, որի մասին խոսվեց Կաֆկայի «Կերպարանափոխության» օրինակով: Ինչ վերաբերում է Կաֆկային, ապա հերոսների ծայրահեղ օտարվածությունը Կաֆկայի գեղարվեստական աշխարհում խորապես պայմանավորված է Պրահայի գետտոյում ապրած գրողի հրեական ծագումով:

Չեխ վտարանդի արձակագիր Միլան Կունդերան գրողական ձիրքի բացահայտման հարցում կարևորում էր հենց տարագրությունն ու միջավայրի օտարությունը: Գրողի՝ միջավայրում օտար լինելու սուր զգացողությունն է հենց արտահայտվել Կաֆկայի հերոսների օտարված հարաբերություններում և սրանով է գուցե պայմանավորված նաև հրեական գրականության ֆենոմենը և այն, որ հրեաներն աշխարհին այդքան հանճարեղ անուններ են տվել: Առաջին հերթին օտարման պրոբլեմը Պիպեռյանի արձակում Թուրքիայում ազգությամբ հայ լինելու հանգամանքով է պայմանավորված (պոլսահայ գրականությունը, օտարված լինելով ազգային

թեմատիկայից. գեղարվեստական լավագույն որակներով է դրսևորում իրեն): Պիպեռյանը թեև թուրքերեն է թարգմանել համաշխարհային գրականության բազմաթիվ վեպեր, բայց ամբողջությամբ չի ներգրավվել թուրքական գրական ընթացքին՝ փորձելով դառնալ և լինել հայ գրող, իսկ հայերեն գրելը, այն էլ պիպեռյանական այդպիսի փայլուն հայերենով, մեծ ջանքերի՝ ստեղծագործական լեզվից՝ ֆրանսերենից հրաժարվելու գնով է արվել նրան: «Զվարթնոց» ամսագրի խմբագիր Հրանդ Բալույանին ուղղված ինքնակենսագրական նամակի տողերից մեզ է նայում մերթ օտարված, մերթ ինքնաօտարված մարդու և գրողի հայացքը: Պիպեռյանի հերոսներն օտարված են, որովհետև ապրում են օտար միջավայրում՝ Թուրքիայում: Պիպեռյանն իր վեպի հերոսներից մեկի՝ Պարետի հորեղբայր Տրդատի շուրթերով ասում է. «Ինչու նորէն ձգեցի գացի: «Թուրքիան թուրքերունն է» ըսին: Ինծի ալ՝ դուն թուրք չես, ըսին: Ի՞նչ գործ ունէի հոս» (67): Այստեղից է սկսվում վեպի հերոսների գոյության տագնապը, որ էքզիստենցիալիզմի գրականության հերոսին ամենից բնորոշ զգացողությունն է: «Մրջյուններու վերջալույսը» սկզբից մինչև վերջ համակված է կեցության տագնապով, որ Թուրքիայում ապրող հայ մարդու «աղետի» անորոշ կանխազգացումն է նաև՝ համաշխարհային պատերազմի դեռևս թարմ և Ցեղասպանության գենետիկ հիշողությունը: «Առանց աղէտի անհանգիստ էին: Տարր մը պակաս էր իրենց կեանքէն: Բանի մը կը սպասէին: Որովհետեւ չէին կրնար երեւակայել կեանք մը՝ յաւերժաբար առանց աղէտի, միօրինակ ընթացքով: Տաղը տարին շատ էր» (503): Բայց վեպն ակնարկում է նաև ազգային ինքնության օտարման մասին: Երբ ընկերներից մեկը Պարետին հայտնում է հայրենադարձության լուրը և նկատում նրա անտարբերությունը, հարցնում է. «Դուն հայ չես, ախր»: «Ես ալ չեմ գիտեր ինչ ըլլալս».-պատասխանում է Պարետը (360):

Պիպեռյանի վեպում այս մոտիվներին են ներհյուսվում նաև էքզիստենցիալիզմի գրականությանը ներհատուկ այլ մոտիվներ և աշխարհընկալման էքզիստենցիալ զգացողություններ՝ հերոսի սրտխառնուքը, որ ըստ Ժան-Պոլ Սարտրի կեցության փոխաբերությունն է, անկման մետաֆորը, որ առանցքային է Քամյուի մոտ, մե-

նության, որպես հասարակությունից կամովին օտարվելու, բայց սեփական ինքնությանը մոտենալու հակումը («Բացարձակապես միւնակ եղած ատենդ է, որ ինքզինքիդ հետ գլուխ գլխի կը մնաս, դուն քեզի ընկերակից կ՛ըլլաս ամեն տեսակէտով» (136)), փախուստը: Պարետը ժամանակ առ ժամանակ փախչում է դեպի Կղզի, ուր հոբեղբայրն ապրում է հասարակական ամեն տեսակի կապանքներից ազատ. «Պարէտին փափաքն ալ ադ էր՝ յաճախ երթալ Կղզի, այդ սեւցած, ճաթռտած տունը, ուր քարիւղի լամբարը կը շարունակէր մխալ ամէն գիշեր՝ հրաւիրելով հին աղմկոտ գիշերներուն զուարթ ուրուականները: Ձեռքերովը կրակին վրայ շարել թարմ ձուկը, ողջ հողէն ձեռքերովը խլել կանաչութիւնները: Երթալ, նոյնիսկ հոն մնալ: Մոռնալ ամէն ինչ: Ձետով մը շարունակել երեքուկէս տարուան կեանքը: Չխորհիլ տաքատը, որուն ծայրամասերը շատ լայն են 1945-ին համար, կօշիկը, որ կը մաշի, շապիկին արդուկը, գործը, դրամը... Չմտածել: Չտեսնել: Հօրը վիճակը: Տունին վիճակը: Ոչ մէկ բան» (71): Ազատ լինելու մարդկային էության խորքից բխող պահանջն է դա. «Բարդ բան մը ըլլալու չէ, հօրեղբայր: Ուզած ատենս պառկիլ, ուզած ատենս ելլել, ուզած ատենս քալել, ուզած ատենս նստիլ: Չուզած ատենս չխօսիլ, չուզած ատենս չբարեւել, չխնդալ: Ուզած ժամուս գլուխս առնել՝ ուզած տեղս երթալ: Մարդ չխորհիլ, բան չխորհիլ: Որեւէ պատասխանատուութիւն չզգալ: Բանի մը ստիպուած չըլլալ...» (122): «Ազատ ըլլալը դիւրին բան կը կարծես: Քու կեանքիդ խառնուելու իրաւունքը ուրիշին չտալու համար ստիպուած ես ազատութիւնդ զոհել: Ազատութիւնը անգամ ազատութեան գնով կը պաշտպանուի: Որ կողմ դառնաս, անել է, տղայ: Կեանքը ե՞րբ քուկդ կ՛ըլլայ, գիտե՞ս: Երբ այլեւս կեանքը քուկդ չէ» (123),- ասում է հորեղբայրը:

Ուրեմն էքզիստենցիալիստական այս մետաֆորների ու զգացողությունների մեջ ո՞րն է Պիպեռյանի բերած նորությունը, քանի որ վեպը գեղարվեստական մեծ արժեք չի կարող ունենալ, եթե որևէ մեծ մետաֆոր չի կերտում: Պիպեռյանի վեպը գրականություն է բերում մրջյունների՝ առօրյա, կենցաղային հոգսերով տարված մարդկային հասարակության փոխաբերությունը, հասարակություն, ուր մարդը, ինքն իրենից օտարված, մրջյունի պես աքնաջան աշ-

խատում է միայն: Անհատներն օտար են այդ հասարակության մեջ. «Ուշադրութիւն ըրէ, մեր ընկերութիւնը չի հանդուրժեր փիլիսոփաներուն, մրջիւնները կը սիրէ» (123),-ասում է հորեղբայրը: Վեպի այս հատվածում Պիպեռյանը բացում է մրջյունների փոխաբերության իմաստային շերտը, թեև մեծ վեպերն իրենց փոխաբերությունների մասին նախընտրում են լռել. «Միշտ մրջիւնները խորհած եմ: Դպրոցէն կը սկսին ատել տղաքը: Մրջիւնը իբրեւ տիպար օրինակ ցոյց կու տան: Մարդը մրջիւնի վերածել կը ջանան: Կը յաջողին ալ: Բոլոր հակակրելի, տգեղ բաները մարդոց պաշտել տալու, հիացումի առարկայ դարձնելու մէջ վարպետ ենք իրաւ: Ես կ'ատեմ մրջիւնը: Կեանքիս մէջ ես ո՛չ ուզեցի, ոչ ալ կրցայ մրջիւն ըլլալ: Տասէ, կրէ, ամբարէ, ձմեռը կեր, նորէն տասէ, կրէ, ամբարէ: Ամբողջ կեանք մը: Եւքը՝ մեռիր: Բուրգեր շինէ: Քաղաքներ, շէնքեր, գործարաններ, մեքենաներ, ճարտարուեստ, քաղաքակրթութիւն: Այս բոլորին ծառայէ: Ամբողջ կեանք մը: Եւքը՝ մեռիր» (125): Անընդհատ լեռը քար բարձրացնող Սիզիփոսի առասպելը Քամյուն մեկնում է կեցության աբսուրդի տեսանկյունից. մահն իմաստազրկում է, անհեթեթության է վերափոխում ցանկացած շարժում և ձգտում: «Արհամարհանքով, գրեթէ զայրոյթով դիտեց անոնց հապճեպը, բան մը ընելու, բանի մը հասնելու, շատ կարեւոր գործեր հետապնդելու երեւոյթը: Խանութները մտնել-ելլելը, սակարկելը, գնելը: Զիրար շնորհատրելը, շինծու ժպիտները: Գերագոյն բարձունքէ մը նայեցաւ պողոտային, ինչպէս պզտիկ եղած ատեն զարմանքով կը դիտէր բիփատր մրջիւններու անդու վազքը բլրակէ բլրակ, ծակէ ծակ: Մրջիւններ, մրջիւններ...» (308):

Պիպեռյանի վեպի հերոսի կերպարանափոխությունը միջատի չի կայանում: «Աշխատանք, աշխատանք, աշխատանք», կրկնում էր Սեմյուել Բեքեթի «Մերֆի» վեպի հերոսը, որ խզում է իր բոլոր կապերն ու անհետ կորչում: Բեքեթը, որ ընթերցողին փոխզիջման չի գնում, ոչնչացնում է իր հերոսին. Մերֆիի դիակի մոխիրը վեպի վերջում լցնում են զուգարանն ու քաշում ջուրը: Մի պահ արդեն ընտանեկան կապերը խզած, աշխատանքը թողած, սիրած աղջկան հղի լքած Պարետն անհետանալու համար այնպիսի թաղամաս և այնպիսի տուն է ընտրում, որի նկարագրությունը հերոսի հետ նույ-

նացած և արդեն վեպում գտնվող ընթերցողի համար անհարմարություն է ստեղծում: Ինչպես Պիպեռյանի հերոսը մոտ էր կերպարանափոխության, այնպես էլ մոտ է Մերֆիի նման իբրև մարդ այլ կերպ ոչնչանալուն, բայց Պիպեռյանն իր հերոսին փախուստի անհնարինության գիտակցման է վերադարձնում. «Ո՞ւր կը փախիս կոր: Ինքզինքէդ կրնա՞ս փախիլ» (65-66): «Նորէն պիտի վերադառնաս: Երթալիք տեղ չունիս» (366): Եվ սրանում է Պիպեռյանի մարդասիրությունը: Երբ Պարեաը վերադառնում է մրջյունների հասարակություն, իմանում է, որ Լուսան (աղջկա անվան և հորեղբոր շան անունները համահունչ են՝ հորեղբոր շան անունը Լուսն է. Լուսան «մեծ կերած շան աչքեր» ունի. հիշենք, թե որքան ապամարդկային է սիրախաղը Կաֆկայի «Դղյակում» և «Դատավարությունում»), որ իրենից զավակի է սպասում, ինքնասպան է եղել: Իրենից զավակի սպասող իր սիրած աղջկա մահով Պիպեռյանն իր հերոսին կանգնեցնում է մարդու հանդեպ պատասխանատվության առջև, որ նույնպես էքզիստենցիալիզմի առանցքային մոտիվներից է (հիշենք Կաֆկայի «Դատավարությունը»), իսկ վեպն ավարտվում է Պարեաի մոր՝ «մրջյուններու Արոսի» մահով մասնավորապես, և մահով՝ որպես վերջնական ճշմարտություն ընդհանրապես:

Յարութ ՄԱՐԱՇԼԵԱՆ

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ «ՏԵՂԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ճամբայի բնութագրումը որպէս փինիկ կ՚այլակերպէ ամբողջ ճամբորդութեան նպատակը, իմաստը: Փինիկի եւ ժողովածուի խորագրի՝ «Տեղատութիւն եւ մակընթացութիւն», ընդհանուր եզրը այն է, որ շարժումը՝ մեռնիլ-յառնիլ, քայքայիլ-շինուիլ, կը դառնայ առաջնային քան անոր հետապնդած նպատակը (եթէ ունի): Անջրպետ մը գրաւելու միտումով կատարուած ճամբորդութիւնը կը փոխէ իր բնոյթը լիակատար ազատութեան մը հասնելու ձգտումով: Գրաւելը կ՚ենթադրէ վայր մը, որ պիտի գրաւուի, դառնայ ճամբորդի սեփականը. միւս կողմէն, գրաւելը կախուածութիւն ու գերութիւն մըն է այն վայրէն որ պիտի գրաւուի (կարծես դատապարտուած ես զայն գրաւելու), ուստի վայրէն անջատումը, անոր անտեսումը ճամբորդին կազատագրէ կախուածութենէն, անոր կուտայ լիակատար ազատութիւն, արագութիւնը խոյացման կարելիութիւնը այդ ազատութեան հետեւանքն է.

Որոգայթէ որոգայթ՝
Մեր փարոսներն հրահոս: Կը փչէ շունչ մը վայրագ
Մեքենաւն վառ ու արու՝
Ինքնաշարժին խոյացող, որ իր վազքին մէջ կրակ՝
հեւք մը կ՚լլայ գամփռերու :

Իսկ «14-ը» ժամանակային կախուածութիւն մը կը նշէ, որմէ ազատագրումը անհրաժեշտ է ժամանակի մէջ շարժումը կարելի, անսպառման դարձնելու համար, ուստի կանջատուի ճամբորդը ան-

1 Նիկողոս Սարաֆեան. Տեղատութիւն եւ մակընթացութիւն. Փարիզ. 1939թ. էջ 5 (հետագային կը՚նշուի միայն էջը):

ցեալէն. յուշերէն եւ ապագայէն. «Ոչ մէկ իդեալ ու անուրջ»(13).

Սարսռալով կու տան խոյս՝
յուշերս խով. անխրախունչ. յօշոտուելով ծառէ ծառ.
Ծուքերու հետ խելասոյզ.
Որ կը փախչին՝ հըրելով փէրիներու պէս իրար: (7)

Լիակատար անջատումը տարածութենէն ու ժամանակէն կդառնայ լիակատար ազատութեան մը հիմքը: Եթէ առաջին ժողովածուին մէջ ցավ մըն է Ճամբորդութիւնը. հանդիպում կախարդներու. փիուկներու. օձերու հետ եւ վիհը. պարապը (մահուան պարապը) լեցնելու. զայն գրաւելու ցանկութիւն մը. ապա հոս կը փառաբանէ անջատումը. քայքայումը. որ կ՚ըլլայ կամաւոր. որպէս ուժի. կամքի. իսկական կեանքի արտահայտութիւն.

Գինի ու կրակ կը ժայթքին
Անիվներէն: Կը յորդի հրթիռաթիռ ձուլթերէն՝
Մեծ երգն ուժին ու կեանքին
Նուագն հովին բազմալար. ալեկոծուող. քաղցրօրէն
Թրթըռացող փիծերուն: (7)

Ինքնաշարժի խոյանքը՝ անջատում. ուստի ազատում մը կ՚ընդգծէ եւ էական է այն առումով. որ կը նշէ ես-ի գտնուելու վայրը. կ՚ընդգծէ անոր անընդհատ շարժումը. փոխակերպումը. այսինքն՝ ես-ի նոր գոյավիճակը. «Աչքին տեղը ինքնաշարժն է. ինչ որ կը նշանակէ. թէ այդ տեղը անկայուն է. շարժուն. թաւալող. փոփոխուող ու սրընթաց: Անոր արագութիւնն է որ կը կազմակերպէ տեսողութեան իրահատուկ դաշտ մը»[2]: Աչքին անընդհատ փոփոխուող դիրքը կ՚այլափոխէ ու նոր նշանակութիւն կու տայ այն ամէնուն ինչ կը տեսնէ ան: Ամբողջ իրական աշխարհը կ՚այլափոխուի անընդհատ փոփոխուող աչքի դիրքին համաձայն. վերջնական ձեւ մը տալը այդ ամբողջին թէական կը դառնայ Ճամբորդին համար: Անոր աչքը կը տեսնէ իրար յաջորդող պատկերներու շարք մը.

2 Գրիգոր Պըլտեան. Տրամ. Փարիզ. 1980թ.. էջ 448:

որոնցմէ ոչ մէկը վաւերական չէ առանձին, որովհետեւ յաջորդ վայրկեանին պիտի փոխուի, այլակերպուի, ուստի եւ անկայուն, անհիմն, քաոսային, ամբողջ իրական համարուող աշխարհը կը քայքայուի, կը փլուզուի. «արագութիւնն է որ իրական կոչուած աշխարհը կը մաշեցնէ այլակերպումի, փոխաբերականացումի ճամբուն մէջ»[3].

Կը դղրդայ հողը յորդ՝ փլուզումով մը, հեռուն:
Անաբեկուած կ՚անհետին
Հսկա շուքեր, կը կախուին, կ՚իյնան ճչան ճյուղերէն
Կ՚երթան խորերը անյայտ՝
Դամբանաբոյր անտառին: Աստղ մը: Օ՜ երէն՝
Ալեկոծման մէջէն այդ: (5)

Միակ կայունը, միակ իրականը կը դառնայ ճամբորդը, անոր աչքը, շարժումը, որ փոփոխուող, անկայուն աշխարհէն, կեղծէն կը փախի, կ՚անջատուի հողէն (թանձր, ամուր):

Ինչ որ արժանի է ստորագծումի «14-ի» եւ «Տեղատուութիւն եւ մակընթացութիւնի» տարբերութեան առումով այն իրողութիւնն է, որ «14-ին» մէջ ամբոխն է ես-ի շուրջ շարժուողը, ուրախացողը, վայելողը, ես-ը դիտողն էր այդ թափօրի եւ անմասնակիցը անոր երթին, որ կ՚ենթադրէ կրաւորական վիճակը ես-ին: «Տեղատուութիւն եւ մակընթացութիւնին» մէջ հակառակն է, ես-ը կը շարժի, կը խոյանայ նոյնիսկ՝ դիտարկելով կայուն համարուող աշխարհը, որ կայլանայ սառձնուած, ուզուած շարժման հետեւանքով, կը փլուզուի, կը քայքայուի: «14-ին» մէջ ես-ն է դատապարտուած փլուզման, «Տեղատուութիւն եւ մակընթացութիւնին» մէջ ան կը ծնի, կ՚արթննայ.

Ի՜նչ քայքայում... Բայց քարի
Ի՜նչ յարութիւն նոյն ատեն: Հոգիս քիչ քիչ կ՚ընդլայնի:(6)

Նոր է, նոր, նոր, որ անհիմ
Այս հողերէն, թօթուելով մեր կեղծիքները բոլոր,

3 Տրամ. էջ 448:

Ստանձնուած շարժումը. ճամբորդութիւնը կամքի դրսեւորում մը ըլլալով եւ-ը դուրս կը հանէ կրաւորական վիճակէն. ան կը դառնայ քայքայողը եւ շինողը. առաջին հերթին ինքզինք դրսեւորելու, զայն առարկայացնելու առումով. այսինքն՝ կը դառնայ ինքզինք ստեղծողը. իր գոյութեան տէրը. Աստուած մը՝ դառնալով իր իսկ գոյութեան սկզբնապատճառը: Արուեստագէտը կը գրէ (կը ստեղծէ) ինքզինք. «Մարդը դադրած է արուեստագէտ ըլլալէ. ինքն է արուեստի գործը»[4]:

Գոյութեան ստեղծիչ մը ըլլալը, ոչ անոր արտահայտիչը. վերարտադրողը, կրկնօրինակողը, կը փոխէ լեզուի գործառոյթը. ամբողջ պատկերային համակարգի մասին ըմբռնումը. բանաստեղծութեան դերն ու նշանակութիւնը:

Արուեստագէտը. բանաստեղծը կեանքը վերարտադրող մըն է: Վերարտադրելու համար պէտք է դիտարկել զայն, տեսնել, այսինքն՝ հեռու ըլլալ անկէ: Այդպիսով ան կը դառնայ հայեցող-դիտող մը եւ ոչ մասնակիցը, կերտողը կեանքին, որովհետեւ հայեցողութիւնը վերացականութիւն կ՚ենթադրէ: Օտարացածի էական պահանջը լիարժէք կեանքն է որ կը բացառէ հայեցողը, միթիք կեանքը. «երբ երիտասարդ էի, գացած, խրած էի միթիքութեան մէջ: Կը կարծէի, թէ այդ էր լոյսը: ... իմ նպատակս ապրիլ է. ապրիլ ազատ եւ անկաշկանդ... ըլլալ այն՝ ինչ որ եմ...»[5], ուստի արուեստը, ըստ օտարացածին, վերարտադրութիւնը չի կրնար ըլլալ կեանքին, այլ պէտք է ըլլա անոր կերտիչը, ստեղծիչը, իսկ ստեղծելու համար անհրաժեշտ է քանդել, քայքայել մոխրացնել ինչ որ արդէն ստեղծուած է, գոյութիւն ունի կը կաշկանդէ գոյաստեղծին: Եթէ ինք չէ կերտիչը որեւէ բանի, կը նշանակէ որ ինք անմասն է անկէ, ան իրմէ հեռու է եւ օտար, պէտք է ըլլալ մասնակիցը ստեղծման ընթացքին, այսինքն՝ ըլլալ անոր մէկ մասնիկը, ամբողջ ստեղծագործութեան մէկ մասնիկը, ուրկէ եւ աքսորուածի ձօնուելու, անէանալու պահանջը.

4 Ֆ. Նիցշէ. ողբերգութեան ծնունդը. Կամ. Փարիզ-Փոստըն. 1986թ. էջ264:

5 Նիկողոս Սարաֆեան. Լոյսի ցաւեր. Փարիզ-Անթիլիաս. 2000թ., ջ148:

Լուսնի լոյսով զմռսուած դիակս ծըփար ծովն ի վար։
Ջուրերուն հետ գալարուող մեռելներուն վրայէն ան.
Յաւերժութեան մէջ սոզուած՝ շնաձուկի պէս երթար։

....

Երազային լռութեան. անսայութեան մէջէն. մինչ
Հոսանքները յարափոխ. յամրաթաւալ կը սողան.
Բաժան-բաժան ժպտացող իմ մասնիկներս լինային.
Տարրալուծուած հալեին. ամպի մը պէս. քիչ առ քիչ։
Թունոտ երախը հրէշին. անդունդներու բնակիչ՝
Խըմէր սակայն վերջին մըսեղէն դառն այդ ցեխին։ (79)

Օտարացածը կը ընդվզի. կը ըմբոստանայ ամեն բանի դէմ որ իր ձեռքի եւ իր աշխատանքի արդիւնքը չէ. որովհետեւ ստեղծուածը. իրմէ անկախ եղողը կը ժխտէ իր գոյութիւնը. կ՚օտարէ. կը հեռացնէ իրմէ. ընդվզողը միշտ դուրս կը մնայ հասարակութենէն. հասարակութիւնը իր հերթին կ՚աքսորէ զայն.

Ըմբոստութիւնը բոլոր
Իմ վայրենի բնազդներուս։ Երբեմն Քաղց մը հոգիս
Կը խթանէր բրտօրէն։
Անմեկնելի չարութիւն մը կը մղէր յանկարծ զիս՝
Խորտակելու ամեն շէնք.
Կուրցնելու ամէն աչք. փրցընելու ամէն սիրտ
Ամէն լեզու. ամէն շէն
Ժպիտ ու երգ խեղդելու՝ սինիզմով մը յոխորտ.
Բիրտ...։ (16)

Արուեստագէտը պէտք է ըլլայ փիւնիկի պէս. քանզի որ հնարաւորութիւն ունենայ ստեղծելու ինքզինք. ի՛ր իրականութիւնը. ի՛ր ճշմարտութիւնը. որ պայմանաւորուած չէ որեւէ բանով. անկախ է ի սկզբանէ։ Ընդվզիլը. մեռնիլը ուսուի կը դառնայ ինքնաստեղծման հիմնաքարը. մարդը. աշխարհը այլակերպող արարք. կախարդական հայելի.

Փախիլ կեանքէն եւ գտնել կ՚ուզեմ աշխարհ մը ես՝ մերթ.
Վեր աշխարհէն մեր ճղճիմ:
Բայց սարսափով կ՚արթննամ եւ վերստին ցեխակերտ
Այս գոյութեան կը կառչիմ:

Ցուրտ գիշերին մէջ գանգն այս բերրի արեւէ, ապրիլ.
Զիս վարող ուժ մը հզօր:
Մտածելով է մահուան որ կը սորվիմ ես ապրիլ.
Կզօրանամ օրէ օր: (77)

Այդ պատճառով ժողովածուն տեղատութեամբ կը սկսի, որ քայքայում մըն է, դատարկ, պարապ տարածութիւն մը ունենալու միտումով (ինչպէս սպիտակ ու դատարկ կտաւը նկարիչի համար կամ սպիտակ թուղթը՝ գրողին):

Դատարկ, պարապ տարածութիւն մը ունենալու նպատակով կատարուած այս անհրաժեշտ բաժանումը, որ կեանքէն հեռատրութիւն մը կ՚ենթադրէ, ըստ էութեան վերադարձ մըն է դէպի նախնական, սկզբնական վիճակը, երբ. «Երկիրը անձեւ ու պարապ էր եւ անդունդին վրայ խաւար կար եւ Աստուծոյ հոգին ջուրերուն վրայ կը շարժէր»: Սարաֆեանի պարագային սապէս պէտք է ըսել. «երկիրը անձեւ ու պարապ էր եւ անդունդին վրայ խավար կար և Սարաֆեանի հոգին ջուրերու վրայ կը շարժէր»: Ասոր հետեւանքը կըլլայ այն, որ լեզուն, պատկերային համակարգը, քերթութիւնը կը դառնան գրողի մը միջոցները, վրձինները, որոնց հետ ան կը նկարէ, կը կերտէ, կ՚առարկայացնէ ինքզինք եւ աշխարհը. «Ասոր համար՝ լեզուն կը դառնայ միայն արտայայտութեան միջոցը ես-ին. Սարաֆեանի գրութեան մէջ, թէեւ լեզուով իսկ կը գրուէ ինքզինք: Արտաքին գործիք՝ զոր պէտք է կաղապարել, յղկել, յարմարեցնելու համար (յատկեցնելու նաեւ) զայն ներքին բանին: Ներքին աշխարհը՝ մտածումներ, ապրումներ, զգացումներ, կ՚արտա-յայտուի, կը դրսեւորուի լեզուի առարկայութեամբ, միջնորդութեամբ: Ներքինը, լեզուով, կը դառնայ արտաքին, երեւելի, նիւթականացած»[6]:

6 Տրամ. էջ 361:

Բացարձակ տարրութիւնը, անջատումը ամէն բանէ (վազքի մը հետեւանք) կը խախտէ սանդական մօտեցումը պատկերին: Պատկերը, ըստ սանդական հայեցողութեան, կը նկատուի զարդ մը, որ կը ծառայէ մտածում մը արտայայտելու, այսինքն կը նիւթականացնէ, տեսանելի կը դարձնէ աննիւթեղէնը, հոգին: Ինչպէս փոխաբերութիւնն ու բաղդատութիւնը, ունի ճանաչողական, ուսուցողական դեր, որ է դիւրացնել գրութեան ըմբռնումը, աւելի ճիշդ՝ մտածումին հաղորդումը: Կամ պատկերը կը նկատուի իրականութեան մը վերարտադրութիւնը, անոր վերաներկայացումը, շատ անգամ՝ համաձայն տրամաբանական սովորութիւններու, ընկալեալ ու ընդունելի, այսինքն՝ պատկերը կը փորձէ նոյնանալ իրականին, ընդօրինակուող առարկային, բնորդին (առաջին պարագային պատկերի յաջողութիւնը կախուած է անկէ թէ որքան տեսանելի, հաղորդելի կը դարձնէ միտքը, էութիւնը, երկրորդ պարագային թէ որքան մօտ է իրականին, որքան ան տեսանելի, շօշափելի կը դարձնէ իրը, առարկան): Երկու պարագային ալ պատկերին մէջ ծուարած իմաստը կամ իրականը աւելի էական է քան պատկերը ինքնին, որովհետեւ նոյն մաստը կրնանք տարբեր պատկերով մը տարազել, այսինքն՝ պատկերը, ձեւը անցողիկ է, փոփոխական, թէական է անոր իսկութիւնը, իսկ իմաստը կայուն, անփոփոխ: Սակայն ես նշեցի քայքայումը ես-ի, անոր դատարկուիլը ու պարպուիլը իր էութենէն, հոգիէն, իմաստէն եւ իրականին, իրականութեան փլուզումը, ուստի ի՞նչ իմաստ կրնայ արտայայտել պատկեր մը կամ ի՞նչ իրականութիւն վերաներկայացնել, երբ անոնք գոյութիւն չունին: Այս պարագային պատկերը կը դառնայ ինքն իր արտայայտիչը, իր գոյութիւնը կ'ըլլայ պայմանաւորուած ինքն իրմով. «Պատկերը փաստօրէն կ'արտադրէ իր իսկ իրականութիւնը, որովհետեւ կը փոխէ տեսողական



տուեալը»[7]: Կարելի չէ ակնկալել տրամաբանական (տրամաբանութիւնը իմաստ կ'ենթադրէ) յաջորդականութիւն մը պատկերներու. անոնք կը յաջորդեն իրար անկախ իրարմէ. չպայմանաւորուած. ամէն պատկեր նոր իրականութիւն մըն է. նոր գոյ որ կը ծնի լեցնելով պարապը: Միացնողը. պատկերները միահիւսողը տեսնող աչքն է. յարաշարժ աչքը. որուն հետ է պայմանաւորուած պատկերներու թափը. անոնց հոսումը. երեւումը եւ աներեւութանալը: Որեւէ պատկերի առջեւ կանգնիլը. սառիլը անկէ կը ժխտուի. որովհետեւ յաջորդ վայրկեանին կը ցատկէ նորը: Պատկերներու առատութեան մը չի յղուիր այս. այլ կ'ընդգծէ իրականութեան բազմադիմութիւնը. ուստի կը բացառէ ինքնութիւնը. կը դնէ կարելիութեան ծիրէն դուրս: Այսպէս պատկերային համակարգը կը դառնայ իրար յաջորդող. սակայն իրարու հետ կապ չունեցող պատկերներու շարք մը. անտրամաբանական ընթացք մը. «Կը խախտուի իրականին տրամաբանական ու սովորական տեսողութիւնը». «Պատկերը այստեղ կը կտրէ իրականի տարրերը. կը համադրէ իրարու հետ անկապ ու հեռու տարրեր. խախտուած է եզրերու. հեռապատկերին անհրաժեշտ մօտի ու հեռուի համեմատութիւնը. զատորոշումի կարելիութիւնը»[8]: Այսինքն՝ պատկերը ոչ թէ իրականութեան մը վերարտադրութիւնն է. այլ ինքն իսկ է իրականութիւնը. հակասական. անկապակից. անտրամաբանական. քաոսային:

Ձգողական նոր օրէնքի մը արդիւնքն է չափերի. հեռաւորութիւնների վերը նշուած խախտումը. Անյայտն է որ կը ձգէ. կը կանչէ մարդուն և ոչ թէ հողը.

Ձգողական նոր. խոտոր օրէնքն է զոր երկրաչափ
Մը մեր առջեւ կը պարզէ:
Անհունութիւնն է կարծէք. որ խոյանքով մ' համաչափ
Կը կտրէ կարգը. որուն
Շուրջ ռիթմ է. Պար. փլուզում. տարրալուծում
Ու խուճապ: (7-8):

7 Տրամ. էջ 436:

8 Տրամ. էջ 436:

«Այլ խոսքով՝ շարժումն. յարափոփոխ *երկրաչափականն* ու շարժանկարային քերթութիւն Սարաֆեանի բառով. ասանդական անշարժ քերթութեան դէմ»[9]:

Ըստ էութեան հոգիի ու մարմնի դարերով տեւած կռիւի մը կը յղուի նաեւ այս մօտեցումը. առանց սակայն կողմնորոշուելու. «Աքսորեալը Ճամբորդ մըն է աքսորուած իր աշխարհէն. ինկած վերացականի ու թանձրացեալի միջեւ. աքսորուած ինքն իրմէ»[10]. որովհետեւ ցանկութիւնը անոնց միացումն է եւ ոչ անջատումը. այդ իսկ պատճառով ինչպէս էութիւնը գոյութիւն ունի ինքնին. նոյն յատկութիւնը պէտք է ունենայ ձեւը. տարազը. ան պէտք է անկախ ըլլայ էութենէն (իրաքանչիւրին անկախութիւն տալու հետեւանքով անոնք կը մնան անջատ. անկախ իրարմէ).

Նիւթն հոգի ու հոգին նիւթ է. թեւեր
Կ'առնէ մարմինը մարդոց (11):

Ուստի ընդվզած հողին դէմ. յաղթահարած վայն եւ-ը ինքզինք կը գտնէ պարապին մէջ՝ անտարբերութեան պարապը. ընդվզումը իր երկու եզրերով կը յայտնուի մեզի. ան է որ եւ-ը կ'ազատագրէ հողէն. հողային բոլոր կապանքներէն (տեղատուութեամբ հողը կը հեռանայ ջուրէն).

Ծղօտներու կոյտ մ'արդէն կը փշրուի. երբ մոլոր
Ճամբորդին պէս կապերն իմ
Կարած կ'երթամ (7):

Սակայն իր լրումին հասած ան կը սպանէ ըլլալու. առարկայանալու ձգտումը. այսինքն՝ մարմինը կը ժխտուի. որովհետեւ մարմինը «սեւ հող»՝ իր հերթին կը ջլատէ. կը սպառէ դէպի անցյալը. անձանօթը գացող եւ-ը. կը կասեցնէ. կը դանդաղեցնէ անոր ընթացքը. խոյանքը: Ամլութեան դէմ կռիւ մը ըլլալով (աշխարհիկ. առօրեայ կեանքը իր նոյնութեամբ. սովորութիւններով ամլացնող է.

9 Տրամ. էջ 449:

10 Տրամ. էջ 373:

մեքենայական)՝ ան կը դառնայ ընդվզողին դէմ, անոր դատապարտելով նոր կարգի ամլութեան մը, որ անտարբերութիւնն է: Հոս ես-ը ջուրերուն վրայ շարժող հոգին է, որ կը տեսնէ աշխարհը, կը ճանչնայ զայն, եւ անտարբերութեամբ կը լեցուի անոր սիրտը՝ աշխարհի պարապութիւնն ու անկարգութիւնը տեսնելով, վերէն նայող մը, անմասնակից աշխարհին, կեանքին, . «Ճանաչողութիւնը կը մեռցնէ գործելը, վասնզի գործելը պատրանքներով կը շղարշէ իր հասկանիշն է»[11]:

Ամլութենէն կը ծնի մակընթացութիւնը, որ փախուստ մըն է անկէ (հոս ակնհայտ է խզումը գերիրապաշտներէն, որոնք մնացին անտառին մէջ՝ նախընտրած անգիտակցութեան խաւարը, մինչ Սարաֆեան գիշերէն, խաւարէն կ՚ուղղուի դէպի լուսաբաց, լոյս):

Հրճուանքն է մեծ փոփոխման, օտարացման, այս օտար
Քաղաքին դէմ: Ձանձրոյթին,
Տեղատուումն է ճիգին, պիտի հոգնէր, ձանձրանանար,
Լեռնայզն իսկ, սարսռագին՝
Պիտի առնկար կատարին պարտուած լերան, եթէ վար
Իջնել չըլլար... Կը բացուին
Ըզգայարանիս, ահա ներս կը խուժէ կեանքը որ զիս
Կ՚ամրապնդէ, մինչ կ՚եռան,
Կը բաբախեն յարաշարժ ըղտուտակները կառքին,
Արշաւանքով մ՚անվարան (24):

Ընդվզած, աշխարհէն, հողէն կտրուած, այսինքն՝ միայն էութիւն դարձած ես-ը (ուր գիտակցութիւնը, ձեւը կը ժխտուի) շարունակելով ճամբան դէպի ծով կը մարմնաւորուի եւ կը կանգնի ծովի ափին (ծով-կեանք-քաղաք-քաղաքակրթութիւն, «Հոս, այս օտար ափին վրայ», «այս օտար քաղաքին դէմ»): Կանգնիլը՝ շարժումի արարքի հակոտնեան, բայց միակ հնարաւորութիւնը բանականութեան զարթնումին: Մտածող մարդ կը դառնայ ճամբորդը ի համադրութիւն տեղատուութեան, ուր ան զգացող էր, «Հողերու ճամբան անքատարար է ինքնին, արագութիւնն է ան առանց մտածու-

11 Ողբերգութեան ծնունդը, էջ 289:

մին, առանց անհրաժեշտ գիտակցութեան, որ պիտի գայ ծովափին առջեւ. մենախոսութեամբ»[12]: Երկուքի անջատուածութիւնը ողբերգական է. ինքն իսկ ողբերգութիւնն է օտարացածի. այս բաժանման հետեւանքով է որ օտարացածի ապրելու մեծ ծարաւը կը մնայ անկատար. չիրագործուած (երկուքը միացնելու. միահիւսելու փորձ մըն է կարծես «Մշուշին մէջ» աշխատութիւնը. ուր պատկերներուն կիսաջորդեն մտքեր. մտքերուն՝ պատկերներ. փորձ մը ըսի. որովհետեւ անոնք նոյն աշխատութեան շրջանակներուն մէջ երեւալով հանդերձ կը մնան անջատ. կը տարբերակուին. չեն հարեր զիրար): Այսպիսով ամբողջ տեսողական դաշտը կ՛այլանայ. կը շրջուի գլխիվայր՝ ես-ը կանգնած է. ան դիտող մըն է կեանքը. գայն քննողը. վերլուծողը. անոր բոլոր հակասականութիւնը տեսնողը. որուն հետեւանքով ան կը դառնայ կրատրական («14»-ը աւելի ընդլայնուած, հարստացած. ինչպէս որ տեղատուութիւնը «Անջրպետի մը գրառումը»-ն է՝ հարստացած. լայնացած): Ժողովածուի խորագիրը կը դառնայ բացատրելի՝ «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն». ես-ը. հոս. էական դերակատարութիւն ունի. ան կ՛անջատէ. կը տարբերակէ երկու աշխարհներ՝ վերցական եւ թանձրացական. դրական եւ բացասական. երկինքը եւ երկիրը. մանկութիւնը եւ հասունութիւնը. առանց հակադրելու զանոնք. անոնք հաւասարարժէք են. երկուքի գոյութիւնն ալ անհրաժեշտութիւն մըն է: Այսպիսով ան կ՛ընդգրկէ ամբողջ գոյը: Գոյի այդ երկու եզրերը իրար միացնողը. ընդհանուրը անոնց մէջ ան է. որ ես-ը երկու պարագային ալ ապրելու սաստիկ. ուժգին ծարաւ մը ունենալով հանդերձ կը մնայ անմասն անկէ. հեռու. օտար. այսինքն՝ կեանք (ծով) չի մտնէր. այլ կդիտէ զայն. մենախոսութիւնը. առանձնութիւնը կ՛ենադրէ երկխօսութեան (անմիջականութեան. հաղազատութեան) բացակայութիւնը այդ աշխարհներէն որեւէ մեկուն մեջ: Ուստի ես-ը կը գտնուի դրականին ու բացասականին. երկնքին ու երկրին միջեւ. «Ես-ը այստեղ կը գտնուի «միջակունութեան» մը մէջ»[13]: Ոչ մէկը առանձին (առանց միւսին) իսկութիւն մը չէ. անոնք պայմանաւորուած են. սակայն կժխտեն զիրար. որը ընարել: Կեանքի ծարաւը. այդ կողմ

12 Տրամ. էջ 451:

13 Տրամ. էջ 360:

կամ այն կողմ ըլլալու պէտքը խարիսխ մը ունենալու պահանջն է որ բախում կը մտցնէ երկու անջատուած. անհարիր աշխարհներուն միջեւ. զիրար կհակադրէ երկու եզրերը գոյի (սովորական. միջակ մարդու համար անոնք հակադրուած չեն. որովհետեւ սովորական մարդը կամ այս կողմ է կամ այն կողմ. առանց պահանջը ունենալու միւսին. իրմէ անդին գտնուողին)։ Այդ բախման հետեւանքը պէտք է ըլլայ նոր. աւելի կատարեալ մարդը. որ իր մէջ ունի գիշերը եւ ցերեկը. երկինքն ու երկիրը. այսինքն՝ վայր մը ուր կը միանան. կհատուին. կը միահիւսուին հակադիր. անհարիր (ըստ օտարացածի) եզրերը գոյութեան. մարմինը կը դառնայ հոգի (ոչ հոգիի ժամանակաւոր տունը. տարազը). հոգին՝ մարմին. «Կը յուսայի հասնիլ տեղ մը ուր կը միանան հակադիր երեսները։ Ի զուր»[14]։

«Ի զուր». աշխարհները կը մնան անջատ. չեն հատուիր. որովհետեւ բախումը. ոչ թէ երկու աշխարհներուն միջեւ կը կատարուի (ես-ը կը բացառէ այդ). ինչպէս կը կարծէ օտարացածը. այլ ես-ին մէջ . ըլլալով մարմին ան կը տենչայ հոգեկանը. վերացականը. էութիւնը. դառնալով էութիւն ան կցանկայ մարմինը. հողը. առարկայացումը. այսինքն ՝ բախումը ես-ի գտնուելու վայրի եւ անոր ցանկութեան անհամապատասխանութեան հետեւանք է. միշտ ցանկութիւնն է որ կը քանդէ խարիսխը եւ ես-ը կը տանի գոյութեան միւս եզրին։ Երկու աշխարհներու նկատմամբ ունեցած հաւասար ցանկութիւնը (այդ աշխարհները հաւասարարժէք են) եւ այդ աշխարհներուն հատման վայրը չգտնելը ես-ը կը մատնէ. կը դատապարտէ շարժման. տատանման. անվերջ դեգերումի մը եւ Սարաֆեանի ամբողջ արտադրութիւնը այս անհրաժեշտ. գրեթէ սահպողական ու ողբերգական տատանման վկայութիւնն է. ան գիշերէն կ՚անցնի լուսաբացին. լուսաբացէն՝ գիշերին. հասունութենէն՝ մանկութեան. մանկութենէն՝ հասունութեան. երազէն ՝ կեանքին. կեանքէն՝ երազին. այսինքն՝ տեղատուութիւն եւ մակընթացութիւն մը՝ միշտ. անվերջ.

Կեանքս. տեղ տեղ. երազիս
Եղաւ այնքան մօտ. նման՝

14 Մշուշին մէջ. էջ 188։

Որ մերթ ընդ մերթ յուզեց զիս
Վախնն անարկու շփոթման:

Առտու մը. լիճ մը յստակ՝
՝Նոյն ցընորքին զիս յանձնեց:
Երկինքն իր մէջ լիճ մը կրակ՝
Եւ ինք երկինք մըն էր մեծ:

Երա՞զս էր որ կցոլար.
Կ'ընդարձակէր ամէն բան.
Կը կերտէր կեանքս. անոր վառ.
Փառք մը տալով անսահման.
Թէ կեանքս էր որ միշտ կուտար
Զայն՝ ծոցն ի վէր իր խորհին.
Զերդ յայտնութիւնն անկատար
Իր ապագայ պատկերին (42):

Երրորդ վայրի մը. եզրի մը գոյութիւնն է. որ շարժումը. տատանումը մէկ բեւեռէն միւսը կը դարձնէ ողբերգական: Առանց այդ եզրին շարժումը պիտի դառնար սովորական. այդ շարժումը յատուկ է բոլոր մարդոց կեանքի տարբեր իրավիճակներուն մէջ. որ մարդկային թոյլ էութեան արտահայտութիւնն է. եւ պարզ է ու հասկնալի. որ Սարաֆեանը մարդկային թոյլ էութիւնը չէ որ կգրէ: Այդ եզրը փնտրուած. ուզուած ինքնութիւնն է. որ Սարաֆեանի բոլոր գրութիւններուն վրայ կը թեւածէ. կխաղայ ամենաէական դերը. սակայն չի կայանար. չի մարմնաւորուիր մինչեւ վերջ. «Մէծ ախրութիւն մը կայ մէջս: Տարիներ շարունակ խուսած եմ այս լոյսին մասին առանց ունենալու զայն մէջս: ՝Նեւսած եմ ամեն անգամ որ գործած եմ «լոյս» բառը: Եւ այսօր. մեծ բան մը չեմ կրնար ըսել դարձեալ»[15]: «Այն մտածումը ունիմ թէ յավերժական բան մը կա ներսս. որուն հասած չեմ դեռ եւ պէտք է որ հասնիմ: Այն է զոր չեմ կրցած արտայայտել: Սանկերեւային է ինչ որ ըսած եմ մինչեւ հիմա»[16]: Ժողո-

15 Մ'շուշին մէջ. էջ 221:

16 ՝Նոյն. էջ 228:

վածուի կառուցուածքը ըստ էութեան նոյնը կը թելադրէ եւ կ՛ընդգծէ. ան բաղկացած է երեք մասերէ. 1. տեղատուութիւնը. ուր կ՛արտահայտուի. կը դրսեւորուի ընդվզող ես-ը. ուղեւորը դէպի անյայտը. անծանօթը. անմարմինը. 2.մակընթացութիւնը. ուր հայեցող . քննող ես-ն է կանգնած. ծանր. հողային որ կը ձգտի վերացականին. 3.ենթադրելի է որ երրորդ մասը այն վայրն է ուր պիտի գայ մտնելու. այնտեղ ապրելու ինքնութիւնը. սակայն խորագրի (անուն-ինքնութիւն) բացակայութի:նը ի սկզբանէ կ՛ընդգծէ անոր պակասը. սակայն ուզուած ըլլալը:

Գրութեան մէջ գործող զայն կարելի դարձնող երրորդ եզրը միակն է (ըստ էութեան անգոյ որովհետեւ չառարկայանար. բայց առկայ՝ իր դերով) որ կասկածի չենթարկուիր. անոր գոյութիւնը խնդրական չէ: Ինքնութեան բացակայութիւնն է որ խնդրական եւ կասկածելի կը դարձնէ ամէն բան:

Այս շարժումը պատկերաւոր եւ աւելի հասանելի դարձնելու համար համեմատենք նետի ու աղեղի հետ: ենթադրենք որ ուղեղի երկու ծայրերը երկու տարբեր աշխարհների արտահայտիչներն են՝ գիշեր-ցերեկ. երկինք-երկիր. հող-ջուր եւ այլն: Նետի գտնուելու վայրը այն կեդրոնն է. համման կէտը. ուր կը միանան. կը միահիւսուին հակասութիւնները. նետի - ինքնութեան բացակայութիւնը թէ՛ երկնքի. թէ՛ երկիրի գոյութիւնը կը դարձնէ անիմաստ. աննպատակ. իրենք իրենց ապրող. կղզիացած. ինքնավերարտադրմամբ գոյատեւող անջատ աշխարհներ: Տատանումը թելի վրայի շարժումն է համման վայրը գտնելու. այսինքն՝ ինքնութիւն մը գտնելու համար. որը եւ կ՛իմաստաւորէ երկու աշխարհները. կ՛արդարացնէ անոնց գոյութիւնը: Մարդոց մեծամասնութիւնը աղեղի այս կամ այն կողմը կը գտնուին. ուստի իսկական ինքնութիւն մը չունին. «Ու նոյն ատեն բացակայ էր անհատը: Եւ կը խորհէի թէ մարդկութիւնը այդպէս եղած էր նախամարդկային շրջաններէն ի վեր»[17] . որուն հետեւանքով անոնք կը կորսնցնեն կապը Աստուծոյ հետ (որովհետեւ այս կողմ կամ այն կողմ ըլլալը. կեանքի մէկ եզրը բացարձակեցնելը մեղքի հետեւանք է. ուստի եւ հեռաւորութիւն. կապի խզում Աստուծոյ հետ). անոնց կապը միջնորդաւորուած է եկեղեցիով. հոգեւորա-

17 Վ.Նեւեւնի անտառը. էջ 17:

կաններով, որոնք միջնորդի դերը կը ստանձնեն ապահովելով հոգեւոր սնունդը, այսինքն՝ վերականգնելով կապը: Ըստ ստարագածին պետք է զանել ինքնութիւնը, որ կ'ենթադրէ անմիջական կապի վերականգնումը Սրբազանին հետ, որովհետեւ նետը նպատակի մը ծառայեցնողը Աստուած է, ան է որ նետը կ'արձակէ, ուստի ստարագածի ցանկութիւնն է ծառայել վեհ, բարձր նպատակի մը, ոչ թէ օրուայ հացի համար ապրիլ, ինչպէս սովորական, միջակ մարդը: Այդ պատճառով գերիրապաշտները կ'ուզեին որ բանաստեղծը ըլլայ առաքեալ մը, կը համարէին որ իրենք պատգամաբերներ են, միսթիկներ, մարգարէներ, իսկ «Իրաքանչիւր մարգարէ բարձրագոյն կրօնական մարդ է»[18], հետեւաբար անմիջական կապ ունեցող Սրբազանին հետ:

Պատգամաբեր ըլլալը, պատգամներ ըսելը էական է, պատգամը իր բնոյթով վերջնական է, անփոփոխ, իրական, երբ Սարաֆեան կ'ըսէ «Կ'ուզեմ իրական էջերս», վերջնական, ստարտուն էջ մը, խօսք մը ըսելու ցանկութիւնն է որ կը բանի, պատգամ մը զուցէ, իմէ ելած, իր ինքնութիւնը արտայայտող խօսք մը՝ երրորդ եզրը գրութեան: Այդ եզրի առկայութիւնն է որ իր քերթութիւնը կը դարձնէ բազմերես.

Օ՜ քերթութիւնս բազմադիմակ ու հարափոխ (83):

Այսինքն՝ կը գրէ, կը վկայէ բազմերեսութիւնը, տատանումը հակառակ ինքնութիւնը գրելու զայն առարկայացնելու ձգտումին, ցանկութեանը (ըսուած խօսքին պատգամ մը ըլլալը պարտադիր չէ, պատգամը հոս պայմանական անուանում է, անոր կը վերագրուի ստարտուն ու վերջնական ըլլալու հատկութիւնը միայն, այս եզրով պատգամը կը նոյնանայ Սարաֆեանի ձգտումին, մնացած յատկութիւնները երկրորդական են):

Տատանումէն, անկայունութենէն խուսափելու նպատակով Սարաֆեան ժողովածուի երրորդ մասին մէջ կը վերադառնայ աւելի կայուն ու ատանդական բանաստեղծական ձեւերու, որ առաջին փորձն է Սարաֆեանի գրականութեան մէջ, ուր ակամայ շարժումը յաղթահարելու միտում կայ: Հաջորդ՝ «Միջնաբերդ» ժողովածուին

18 Փոլ Փուխար, Կրօններ, Երեւան, 1999թ., էջ 24:

մէջ ան կը դիմէ հեքիաթին, որ առաւել կայուն եւ անխախտ ձեւ ունի, ինչը գայթակղիչ է ինքնութիւն մը, դէմք մը որոնողին համար։ Ռաստի «Միջնաբերդ»-ով կը սկսուի նոր փուլ մը Սարաֆեանի գրականութեան մէջ, ուր ոչ թէ կը գրուի շարժումը, կը վկայուի տատանումը, այլ փորձ մը կը կատարուի շարժումը յաղթահարելու՝ զայն գիտակցելով, այդ պատճառով կը մտածուի, կը քննուի, մտածելով կարծես կը փորձէ սանձել տատանումը, կարգաւորել անկարգը։

Սոնա ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ - ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽԱՂ

Զահրատի բանաստեղծությունները ունեն իրենց որոշ վերնագրային կյանքը, որ աչքի է զարնում հենց ժողովածուների ցանկը նայելիս: Բավական շատ են այն շարքերը, որ միայն վերնագրերին նայելով ցանկում՝ ընթերցողը դրանք համատեղում, համախմբում է մի գաղափարի, մի իմաստի շուրջ: Այսինքն՝ այդ ընդհանուրը հենց բանաստեղծն ինքն է առաջարկում՝ որպես շարքի վերնագիր:

«Աղիտակ» շարքի բանաստեղծությունների վերնագրերը մեր մտապատկերում արագ փոխակերպվում են թվանշանների, կարծես բառը կորցնում է իր արժեքը, այդպիսով դառնում է ինֆորմացիա, որն ամբարած է մեր գիտակցության մեջ: Սակայն յուրաքանչյուր փաստ կարող է բացել անհաշիվ իրականություններ: Ու Զահրատին հաջողվում է այդ թվերին, որ մեր գիտակցության մեջ հանգիստ հաջորդում են միմյանց («Զերո», «Մէկ», «Երկու», «Երեք» և այլն) խոսեցնել տարբեր հարաբերություններով, իրարից անկախ: Ու կարծես մնալով հանդերձ շարքում՝ աղյուսակում, միևնույն է, նաև անկախություն է ստանում յուրաքանչյուր թիվ, դառնում յուրահատուկ: Այդպիսով սիմվոլն է ջարդվում, քանի որ հասկանում ես, որ քարացած սիմվոլներ չկան, Ամեն ինչ կարող է սիմվոլը լինել ամեն ինչի և ոչեմն՝ «՝Նոյն իմաստը ունէր ամէն բան / ամէն բան անիմաստ էր քանի որ»: Ամեն անգամ բանաստեղծը հուշում է ընթերցողին, որ ինքը տարբերակ տվեց, իր տարբերակներից մեկը, իսկ ընթերցողն էլ կարող է իրենն ունենալ:

«Հանդիպումներ» շարքում միավորված են շաբաթվա օրերը՝ «Երկուշաբթի»-ից «Կիրակի», որ այս անգամ բնավ էլ չեն տարբերվում միմյանցից, դրանք դառնում են մեկ հանդիպման հարատևման ժամանակը, որ բաժանումներ չի ճանաչում, չի նայում

ժամացույցին և օրացույցին, ու փաստորեն խիստ պայմանական են թվում շաբաթվա օրերի բաժանումն ու անունները.

Յետոյ կը խմենք իրարու կենաց
Չենք գիտեր քանի օր –
եւ թէ այդքան օր-
կը բաւէ՞ արդեօք
կեանք ըսուելու – բայց
Նորէն կը խմենք
կենաց

«Կենդանաշրջան»-ը ամիսների շարքն ու պտույտն է, որ արդեն սիմվոլացված է մեր գիտակցության մեջ, իսկ շատերի գիտակցության մեջ արմատավորված սիմվոլը այլևս փաստ է: Բանաստեղծը խաղի մեջ է մտցնում փաստն ու երևակայությունը: Եթե հորոսկոպի առանցքը մարդկային բնավորությունն ու ճակատագիրը նկարագրելն ու կանխատեսելն է՝ կենդանիների և որոշ այլ երևույթների միջոցով, ապա Զահրատի բանաստեղծական շարքում նրանցից յուրաքանչյուրը սահմանում է ինքն իրեն: Կարծես մի տեսակ վերադարձ է տեղի ունենում, երևույթը դուրս է գալիս իր փոխաբերված վիճակից ու ներկայանում է ինքն իր մաքուր էության մեջ: Բայց չի բացառվում, որ այդ մաքուր էությունների ու քո միջև ինչ-որ յուրօրինակ, բառերին չտրվող կապ հայտնաբերես, որը կրկին կդառնա սիմվոլացումի ճանապարհի սկիզբը, Հավերժական շրջապտույտ:

«Քարանոագ» շարքը նույնպես ունի իր առանցքը: Վերնագրերը թեև տարբեր են՝ «Զալցպուրկ», «Լոնտոն», «Շիրազ», «Երուսաղեմ» և այլն, բայց էության մեջ նույնն են, դրանք բոլորն էլ քաղաքներ են:

Նույնպիսի շարք կարելի է համարել «Կաղանդ»-ը, որտեղ բոլոր վերնագրերն առնչվում են այդ տոնին՝ «Կաղանդ պապային մորուքը», «Կաղանդի ծառ մը», «Կաղանդչէք» և այլն: Իհարկե, այստեղ էլ բանաստեղծը չի հրաժարվում խաղից, մեր մեջ ամրակայված պատկերով, բառով ստեղծելով հանդերձ Կաղանդի մթնո-

լորալը՝ այն զուգահեռում է մեկ այլ իրականության. մեկ այլ զգացողության:

Կաղանդ պապային մօրուքը ճերմակ է
ԱԼԻՒՐԻ նման

Ըսէ – Կաղանդ Պապա
Մօրուքէդ ՀԱՑ կը շինուի՞ (հ. Ա. 79)

Իրականում շատ պարզ զուգակցումների շղթա է. ճերմակը հեշտությամբ առնչացվում է ալյուրի հետ. որն էլ դառնալու է հաց: Հավասարության ընթացքը. թվում է. շատ բնական է՝ Ձմեռ պապի մորուք = ճերմակ = ալյուր = հաց. բայց այ հավասարության սկիզբն ու վերջն են զարմացնում...

«Երգիչը» շարքը կազմող բոլոր վերնագրերն էլ հուշում են. որ բանաստեղծը նույնքան ազատ է ճախրում. որքան այս թևավորնե-րը՝ «Արագիլները». «Թիթեռնիկը». «Ճայը» և այլն. իսկ բանաստեղծությունները շատ այլ բաներ կպատմեն. չէ՞ որ այդ թևավոր-ներն իրենց կյանքն ունեն ու չեն կարող սիմվոլանալ ու կանգնել՝ միայն բանաստեղծին նկարագրելու համար:

Հետաքրքիր է Զահրատի խորամանկ խաղն այնտեղ. ուր մեկ բառ – փաստում հանդիպադրվում ու ներդաշնակ ապրում են երկու տարբեր իրականություններ: Խաղը լեզվով է. բայց ո՞վ կասի. թե «հողն անիրական» է... մանավանդ որ շարքը՝ «Ես իմ Գնալըս». սկսվում է հենց «Շէկ հողը» վերնագրով. բայց շարունակվում է «Աքաղաղ». «Մողէզ». «Խեցգետին». «Ետեւ». «Աւելորդ»: Վեր-նագրային մակարդակում շարքը որևէ ընդհանուր առանցք չունի. բայց ընթերցելիս հասկացվում է. որ կա առանցքը. այն է՝ կյանքից հեռանալու. «գնալ»-ու զգացողությունը.

Մենք աւելորդ – միատեղ
Կ' երթանք դէպի հորիզոն (հ. Ա. 127)

Ուրեմն. դիպուկ է ընտրված շարքի վերնագիրը. բայց միայն սա չէ. խաղն ավելի կատարյալ է: Գնալը Ստամբուլին ամենամո-

տիկ Իշխանաց կղզիներից մեկն է, որտեղ ամառանոց ունի Զահրատը, իսկ ինչու «Շէկ հողը», քանի որ այդ բառի թուրքական արմատը՝ «kinali», նշանակում է շեկ, կարմիր, հինայված: Կղզու հողը կարմրահող է: Ամեն դեպքում երկու ընթերցմամբ էլ (թե կղզու անուն, թե բայիմաստ ընկալելու առումով) վերնագիրը չի տուժում, ավելին՝ հենց այդ երկու ընթերցումն է մեզ մատուցում բանաստեղծի երկլեզվյան խաղը, որ գործում է երկու տարբեր իմաստների ու մեկ, միևնույն հնչման արանքում:

Հնչողության խաղն օգտագործելով՝ Զահրատը բազմաթիվ շարքեր է կառուցում:

«Շուրջպար» շարքի վեց բանաստեղծություններից հինգի վերնագրերը նույն վերջավորությունն ունեն՝ «Շուրջ», «Անուրջ», «Քուրջ», «Լուրջ», «Կամուրջ», ու ընթերցողին հետաքրքրում է, թե թեև հնչողությամբ նույն, սակայն իմաստներով տարբեր այս բառերը ինչ ընդհանուր կապի մեջ կարող են լինել նույն շարքում: Եթե փորձենք իմաստ որոնել, պիտի ձախողենք, քանի որ իմաստը հենց այդ նույն հնչողության նույնության ու տարբեր բառերում տարբեր նրբերանգներ ունենալու մեջ է:

Թերևս մի փոքր այլ է «Զօն խափշիկ բանաստեղծի մը» շարքը՝ «Գանկ», «Ճանկ», «Վանկ», «Ցանկ» բանաստեղծություններով, որ բանաստեղծի ինքնության բազում երեսներից մի քանիսն է ներկայացնում, սակայն դա բացահայտվում է այն ժամանակ, երբ առանձին - առանձին կարդում ենք բանաստեղծությունները, իսկ ցանկում ակնհայտ է վերջնահնչյունների (-անկ) համապատասխանության խաղը և այն ակնարկը, որ մեկ հնչյունը կարող է շատ բան փոխել, չորս հնչյուններից ընդամենը մեկը փոխվում է, և այլ բառ, այլ իմաստ է առաջ գալիս:

Վերնագրերի հետաքրքիր հանգային խաղ կգտնենք «Կանանչ հող» շարքում: Բանաստեղծը թաքցրել է խաղը՝ վերնագրերը շարելով խառը դասավորությամբ: Վերնագրերը շարենք այնպես, որ հասկացվի, թե ինչու են օրինակ «Ականջ»-ը և «Ջրկանչ»-ը հայտնվել մեկ և նույն շարքում.

ԿԱՆԱՆՉ ՀՈՂ

Կանանչ Հոլ
Ալպանջ Հոգ
Մտատանջ Հոտ
Պահանջ Հոծ
Մեծաքանչ Հոս
Ցորանջ Հով
Զոքանչ Հոր
Կարմրալանջ Հոն
Նահանջ Հող
Ճաճանչ
Առանց մղձավանջի
Կանչ
Ղողանջ
Ոլական
Ծաղկամանչ

(ընդգծումը Ս.Մ.)

Շարքը բացվում է «Կանանչ» բանաստեղծությամբ ու ավարտվում «Հող»-ով. իսկ վերնագիրը կազմող այս նույն բառերի արանքը լցնում են համանման հնչողությամբ. բայց իմաստային ընդհանուր առնչություն չունեցող բառ – բանաստեղծություններ:

«Գունավոր սահմաններ» շարքը իր վերնագրային փոխաբերություններով ինչ – որ չափով նման է «Կանանչ հող»-ին. սակայն եթե վերջինում երկու հիմնական հնչողությունների կապ կար. ապա այստեղ՝ երկու հասկացությունների. գույնը բացվում է վերնագրերում իր տարբեր երեսներով՝ «Կարմիր». «Կապույտ». «Ճերմակ» և այլն. առանց որոնց գույնը անհասկանալի կլիներ մեզ. քանի որ մեր մտապատկերում գույնը գոյություն չունի վերացականորեն. իսկ սահմանը որպես արմատ է բացում իր հնարավորությունները՝ «Սահմանափակ». «Անսահման». «Սահմանագլուխ» և այլն:

«Կիկօ որ դուռը բացա» շարքը. բացի համանուն բանաստեղծությունից. ունի ևս վեց բանաստեղծություններ՝ «Հող». «Տող». «Շող». «Լող». «Գող». «Դող». որոնցից յուրաքանչյուրում էլ

հայտնվում է Կիկոն իր կյանքի զանազան դրվագներով, բայց գրավիչն այն է, որ նման հնչողությունն է դառնում շարքի կազմիչը:

Ի՞նչ կարող է հուշել «Նախաքերթուածներ» վերնագիրը որպես շարքի մուտք: Գուցե Զաիրատը ցանկանում է մեզ պատմել այն, ինչ իր զգացողությամբ կար գրավոր մշակույթից առա՞ջ, այն ստեղծագործական փորձերը, որ կատարում էին մեր՝ դեռևս գիրը չհայտնաբերած նախնինե՞րը: Բնավ, խնդիրը կրկին հնչողությունն է: «Նախաբան», «Նախակարապետ», «Նախատօնակ», «Նախազգուշութիւն», «Նախայարձակ», «Նախախնամութիւն», «Նախապաշարում», «Նախադասութիւն», «Նախազգացում» բանաստեղծություններով կազմված շարքում «նախա-»-ն կարծես դառնում է այն կենտրոնը, այն կետը, որով կարող են անցնել անսահման թվով շրջանագծեր, այն կարող է ամեն անգամ փոխել իր դեմքը՝ կախված նրանից, թե որ պտույտի մեջ կհայտնվի:

«Տարաքերթուածներ» շարքը Բ հատորում թերևս էլ չշփոթեցնի ընթերցողին, եթե նա, Ա հատորում ծանոթանալով «Նախաքերթուածներ»-ի հետ, հասկացավ, որ խնդիրը մի կետի բազմաթիվ հնարավորություններն են: Իսկ այդ կետը այս դեպքում «Տար»-ն է՝ «Տարօրինակ», «Տարաբախտ», «Տարողութիւն», «Տարբաղադրել» և այլն: Չնայած սկզբունքի նույնությանը նախորդի հետ՝ այս շարքի ներսում իմաստային ամբողջություն կազմող մեկ այլ կետ էլ կա՝ Ապպասը, որ ամբողջովին բառ – կերպար է.

Ծնար այն պահուն երբ անունդ – Ապպաս
գրչիս ծայրը եկաւ (հ. Բ. 243)

«(Ներ + Արտա)քին» շարքը երկու իրականությունների, երկու հակադարձ բևեռների պատմություն ունի ներսում, այսինքն՝ իմաստի խնդիր, այնուամենայնիվ, կա, իսկ այս դեպքում ի՞նչ է փնտրում այս շարքի մեջ «Արտ» բանաստեղծությունը.

Գուվազդը կ' սէ
-Բարեբեր արտ է
Հարիւր կու տայ մէկի դէմ –

Ա.Ն

Կինը հոն թաղեց –
Հիմա կը սպասէ (հ. Բ. 292)

Որեմն՝ համանունության, արմատի նույն հնչողության հանգամանքն է նրան տվել այս հասցեն:

Եթե «Արտ» բանաստեղծությունը որպես վերնագիր չէր առանձնանում ցանկում, և բանաստեղծի խաղը բացվում էր կարդալիս, ապա «Մէկ բառէն միայն» շարքի ցանկում Զահրատի խաղի որոշակի տրամաբանությունը սովոր ընթերցողը մի պահ կասկածում է, թե ինչու է հայտնվում «քար»-ը «բառ»-ի կողքին, երբ նրա մասին ակնարկ չկա շարքի ընդհանուր վերնագրում: Ահա շարքը կազմող բանաստեղծությունների վերնագրերից մի քանիսը՝ «Մէկ բառէն միայն», «Բառախաղ», «Քարէ մանեակ», «Քարէ կամարը», «Քարէ գնդակ», «Բառի մը որոշումը»: Գաղտնիքը բացվում է առաջին բանաստեղծությունը կարդալիս.

Մէկ բառէն միայն ճամբան մերթ կարճ է
hարթ ու հեզասահ
Մերթ ալ մէկ բառէն միւս բառին երթալ
դժուար է
-ճամբան խութերով լեցուն - (հ. Բ. 267)

Ահա այս «խութ»-ի հոմանիշ «քար» բառն է, որ խաղի մեջ է «բառ»-ի հետ: Ճիշտ է, տեքստում «խութը» (քարը) փոխաբերական իմաստով է գործածվել, իսկ շարքի բոլոր բանաստեղծություններում կա իր նյութական իմաստով, բայց բանաստեղծը ոչ մի մեղք չի գործել, նա ընդամենը հավատացել է բառի (քար- խութ) ամենանախնական, ոչ փոխաբերական իմաստին:

Նմանատիպ մի շարքի ենք հանդիպում «Դդումի համ»-ը գրքում, որ թեև ոչ ամբողջովին, բայց ինչ-որ չափով արձագանքում է զահրատյան վերնագրերի խաղին: Շարքը վերնագրված է «(Համ)Ադամ», որտեղ որոշ վերնագրեր ընդհանրապես դուրս են մնում խաղից, ինչպես՝ «Խոտերը», «Հանրաշարժեր» և այլն: Հայտնի չէ՝ եթե Զահրատն ինքը մասնակցեր իր գրքի տպագրմանը, արդ-

յոք այդ վերնագրերը տեղ կգտնեի՞ն այս շարքում, բայց նաև չենք ժխտում, որ հենց ինքն է այդպես կազմած թողել: Ինչևէ, փաստը հայտնի չէ, բայց խաղն, այնուամենայնիվ, կա: Վերնագրային կոնտեքստում՝ «Համադամ / Ա», «Դեղի համ», «Ձմերուկի համ», «Ծողգամի համ», «Տանձի համ»,.......«Համադամ / Բ» գործում է միայն «Համ» արմատը (մեր զգայարաններից մեկի իմաստով), քանի որ «Համադամ»-ի մեջ տեսնում ենք միայն «համեղ»-ը: Սակայն բանաստեղծությունը կարդալիս հայտնվում է «Ադամ»-ը.

Ըստ Ադամին
Համադամ էր Եւան
Այնքան համով կին
որ կարժէր
անոր սիրոյն
հրաժարիլ դրախտէն
Խեղճ Ադամ –
Ընտրութիւն չունէր

Ու բանաստեղծությունը կարդալով՝ ևս մեկ անգամ կանդրադառնանք բառին, ինչու՞ չէ՝ (Եւա) = համ + Ադամ =Համադամ: Լեզվաբանության մեջ սա կկոչվի բառակազմություն, բառիմաստի ժողովրդական վերլուծություն, իսկ բանաստեղծության մեջ՝ խաղ, բանաստեղծական գյուտ, բառի վերստեղծում:

Ծարքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Զաhրատը հրաշալիորեն տիրապետում է լեզվին, սիրելով լեզուն՝ կարողանում է չդառնալ նրա գերին: Գրիչ-թուղթ հարաբերությանը մենք սովոր ենք նայել օգտակարության, անհրաժեշտության տեսանկյունից, իսկ բանաստեղծը, որ այդ հարաբերության մեջտեղում է, ոչ այն է գրիչ է, ոչ այն է թուղթ կամ երկուսը միասին կամ թաքուն դիտորդ այդ երկուսի «կենակցության», ուզում է պատմել այդ ամբողջի բանաստեղծականությունը: Գիրը՝ դեռևս լուռ, դեռևս չինչվող, դեռևս հանգիստ պառկած թղթի վրա, կարող է գրավել ու մտածել տալ իր՝ հենց այդ վիճակի մասին:

Թուղթը կը պառկի կռնակի վրայ
Սրունքները բաց
Ու գրիչը կ՚ երթայ կու գայ
-Քերթուած կը գրէ (հ. Բ. 38)

Թուղթը մի տարածք է, որտեղ գրիչի ու թղթի պատողը՝ գիրը, ապրում է միշտ՝ սպասելով, որ «շունչ մը բարի», «հեւք մը մտերիմ» գա՝ իրեն արթնացնելու, անշարժության թմբիրից հանելու և ազատ թռիչք պարգևելու: Եվ հաճելի է մտածել, որ ամեն բառ մի քնած գեղեցկուհի է, որ սպասում է իրեն արթնացնող շուրթերին: Բանաստեղծը հեքիաթի արքայազն է, որ խախտում է բառի կախարդված քարացումը՝ լռությունը: Ու հեքիաթում գեղեցկուհուն արթնացնող արքայազնը կստանա նաև մի ողջ թագավորություն: Բառի լռությունը հնչեցնող բանաստեղծը կնվաճի Լեզուն....

***

Բանաստեղծությունը կանգնած է հենց փաստի տեղում՝ որպես ուրիշ, ինքնուրույն փաստ, որ իր մեջ միաժամանակ և ապրեցնում, և ջնջում է այսպես կոչված իրական հիմքը: Բանաստեղծությունը ժխտում է հաստատուն, անփոփոխ, ոչ մի գայթակղության չենթարկվող արձանագրումը փաստի: Պատմության ու գրականության տարբերությունը այն հայացքների մեջ է, որով նրանք նայում են փաստին: Պատմությունը չի սիրում փաստի այլափոխում (եթե նույնիսկ այդպես չէ, որովհետև երբեք էլ չկա իրական Պատմություն, ապա նրա տեսիլն է այդպիսին), իսկ գրականությունը այն տիրույթն է, որտեղ վերարտադրվում է փաստը՝ դառնալով մեկ այլ՝ բանաստեղծություն – փաստ, որը միշտ հնարավորություն է տալիս կամ երազը ունի նորից վերստեղծվելու. «Բանաստեղծությունը չի մեռնում ապրած լինելու պատճառով, նա հենց ստեղծված է իր մոխիրներից հառնելու և անվերջ դառնալու այն, ինչ եղել է»:

Զահրատը վարպետն է փաստի հետ խաղալու: Նա կատակային ճարպկությամբ ու մի ներքին հանդարտությամբ կարողանում է

շրջել ու հենց տվյալ փաստը փրկել պատմության սովորական հոսքի մեջ կորչելու «վտանգից»:

Նշանթաշի կողմերը Հաճի Լեւոնի տան մէջ
1924-ի Մայիսի տասնին
Շաբաթ օր մը աշխարհ եկայ
-Առաւօտ էր- (հ. Ա., 417)

Ահա արձակունակ տողերում տեղակայված փաստը, որ հավակնություն ունի բանաստեղծություն դառնալու, ինչպե՞ս.

Հասանաբար գիտցայ թէ ինչ

Կեանք կը սպասէ

Ինծի-

Մերժեցի ապրիլ – շունչ չառի-

Վերգինիա մեծ մօրաքոյրս հոն էր – գիս

Հեղ մը տաք հեղ մը պաղ ջուրի մեջ խոթեց

-(Ծնայ չծնայ

Տաքը պաղը ճանչցայ)-

Երկու երեք տարի վերջ հայրս մեռաւ

թոքախտէ (հ. Ա. 417)

Փաստը սովորական է, կրկնվող, ոչ շատ արտառոց իրողություն, բայց ինչ-որ բան «փրկում» է նրան լոկ որպես փաստ ապրելուց. գուցե ներքին հնչյունը և գուցե ասացվածքի հետ խա՞ղը, որ կարծես առաջին անգամ է ասվում, հենց բանաստեղծն է այն սահ-

մանում, քանի որ այստեղ որպես իրողություն խոսելով՝ ավելի սրում է իր՝ մեր գիտակցության մեջ նստած դարձվածքային նշանակությունը:

Զահրատի կյանքի տարբեր շրջանները բանաստեղծությամբ բացում են մեր առաջ մի սովորական ու անսովոր կյանք:

Համալսարանը
Մանրազննին մարդ նշդրակեցինք-
ջիղ առկեցինք
երակ մաքրեցինք (հ. Ա. 423)

Հասկանալի է, որ այստեղ խոսում է բժշկական ֆակուլտետի ուսանող Զահրատը. Բայց արդյոք միայն հանգ ստեղծելն ու «ճշմարտությունը» վերապատմելը փաստի շրջում է: Իհարկե, ոչ. սակայն ևս մի ճիշտ ընտրված փաստ կարող է լրացնելով պատմությունը՝ միաժամանակ շրջել ամբողջը.

Սակայն ես – մարդը
կ՝ երեփ ճանչնալ չկրցայ լրիւ
որ յետ քննութեան
-մնացիր – ըսին (հ. Ա. 423)

Ոչ ոք չի կարող ժխտել, որ նման տխաճ իրավիճակում կարող է հայտնվել յուրաքանչյուր ուսանող, ինչպես ժամանակին՝ Զահրատը, բայց բանաստեղծի՝ «մարդը ճանչնալու» քննությունը, որ բանաստեղծությամբ մարդուն բացահայտելն է, երկարաձգվեց մի ամբողջ կյանք: Իսկ ուսումնասիրվող մարդը թե ինքն է, թե մենք: Բանաստեղծության մեջ վերանում է այդ սահմանը, ու ջնջվում են բոլոր առանձին, հատուկ դեպքերն ու դեմքերը: Մեկի մեջ բացվում են բոլորը:

Այն ինչ որ այստեղ կը գրեմ հիմա
Այն ինչ որ այլուր գրեր եմ արդէն
Ու դեռ այն ինչ որ կրնամ դեռ գրել

Մէկ են իսկութեան մէջ – անբաժան մէկ-
Կեանքը որ իմս է – ու քիչ մըն ալ ձեր –
Ձեր – քանի որ մենք նոյն օրը կ՚ ապրինք
Ամէնքով – նոյնը – ոչինչով տարբեր (հ. Ա., 424)

Բանաստեղծությունը բազմաթիվ անունների ու Անանունի միջև հայտնվող շրջումն է, այն աչքը, որ անուններով նայում է Անանունին, և վերջինս էլ իր հերթին տեսնում է բոլոր անունները:

«Մեծ քաղաքը» շարքում որպես իրական փաստ գործում է Թուրքիայի մայրաքաղաք Ստամբոլը, որի անունը ոչ մի տեղ չի տալիս բանաստեղծը: Սակայն փաստն ակնհայտ է. չէ՞ որ «Մեհմետ Պեյ փողոցը» գտնելու կամ «Հաճը Պեքիր» խանութը մտնելու համար նախ պետք է հասնենք Ստամբոլ: Ու եթե բանաստեղծն էլ խնդրում է իր տուն – քաղաքին

Դուն պանդուխտ տղադ Զաhրատը մի մոռնար
Հարցնողներուն բարեւ ըրաւ ըսէ (հ. Ա., 22):

Ընթերցողը հեշտությամբ հասկանում է, որ այդ «Մեծ քաղաքը» բանաստեղծի ծննդավայրն ու ապրելավայրն է:

Բառերը նույնպես կարող են օգնել, փաստ ծառայել, ինչպես օրինակ՝ «պէյ» (թուրքերեն բառ է, նշանակում է պարոն, տիար) կամ «էֆենտի» (հին հունարենից է, բայց թուրքերենում գործածվում է անձնանուններից հետո «պարոն»-ի իմաստով), իսկ հանրակառքին վճարվող գումարն էլ «ղրուշ» է, որ թուրքական դրամական միավոր է: Այո, փաստերն ավելի քան համոզիչ են, սակայն բանաստեղծությամբ դրանց կարևորությունը սրբվում է, դրանք ընդհանրանում են: Այլևս չի կարևորվում փողոցի անունը, այն կարող է նույնիսկ մոռացվել: Ի՞նչ է արդյոք «Մեհմետ Պեյ փողոցը», արձանագրությու՞նը Ստամբոլի փողոցներից մեկի, այն սալարկելու պատմությու՞նը, և այո, և ոչ: Իրականության մեջ այդ փողոցը սալարկվել է ինչ – որ մի անգամ, երբ մեծանում, փոխվում էր քաղաքը, բայց կա նաև Կարապետը՝ մեծ քաղաքում մոլորված մարդը, մեծ քաղաքի ահեղ վազքի մեջ խեղդվող Կիկոներից մեկը: «Մեհ-

մեր Դէյ» անունը կարող է փոխվել աշխարհի միլիոնավոր փողոցներից մեկի անունով. «Կարապետը» թող դառնա «Սոֆիա» կամ «Նորիկ». միևնույն է. բանաստեղծությունը ապրում է. այն կարողանում է ձերբազատվել միակ փաստի փակ շրջանակից: Նույնկերպ «ղրուշ»-ը կարող է դառնալ «դրամ» կամ «ռուբլի». ու ոչինչ չի տուժի. հանրակառքը կսլանա նույն ուղղությամբ:

Ստամբուլը՝ տարբեր միջավայրերի սահմանակցման ու հարաբերման այդ քաղաքը. բանաստեղծության մեջ չանվանվելով. բայց հենց իր պատմությունը դնելով. պատմում է ընդհանրապես Քաղաքի մասին. որը կարող է ունենալ տարբեր անուններ: Իսկ այդ անունները նույնպես կհանդիպեն Զահրատի բանաստեղծության մեջ «Քարանուագ» շարքով: «Քարը» այստեղ այն փաստն է. որ տարբեր երեսներ է առնում. տարբեր անուններ ստանում. ինչպես՝ «Մոնրէալ». «Էջմիածին». «Երուսաղեմ». «Թօքիօ». «Աթէնք» և այլն:

Ու փաստը ջնջվում է. դառնում երաժշտություն. Քարն արդեն նոտա է. որ տարբեր հարաբերությունների մեջ տարբեր է հնչում. փաստը (քարը) բազմանշանակություն է ձեռք բերում.

Վենետիկի քարը
ջուրէ շինուած է
ձամբայ ձամբայ կը հոսի
ու երբ կարծրանայ
թափանցիկ
գունաւոր
Մուրանոյի ապակի կը դառնայ (հ. Ա. 497)

Նույն «քար» բառը ուրիշ իմաստ է ստանում «Էջմիածին»-ում.

Քարը ոչ ջուր է – ոչ օդ – ոչ արեւ
Եթէ խաչքար չէ (հ. Ա. 483)

Քարի յուրաքանչյուր նկարագրություն. յուրաքանչյուր սահմա-

նում քաղաք է դառնում՝ հատուկ անունով: Ու այստեղ էլ ընթերցողը հայտնվում է զահրատյան խաղի մեջ. արդյոք քարի քաղում անունները են կարդում. թե՞ Քաղաքի... Այս շարքը նաև հնարավորություն է ծանոթանալու բանաստեղծի կյանքին: Այս բոլոր քաղաք – պատկերները նրա ճանապարհորդությունների արդյունքն են. կարծես բանաստեղծություն – ֆոտոներ. որ ընտրել է փորձված աչք ունեցող լուսանկարիչը. քանի որ դժվար է մեկ վայրկյանում խտացնել մեծ ժամանակը. տվյալ տարածության ժամանակը. այն հոտքն ու շունչը. որով տարբերվում է տվյալ քաղաքը մյուս քաղաքներից:

Եթե մի պահ փորձենք պատկերացնել. որ Զահրատը ժամանակակից չէ մեզ. և նրա կենսագրության մասին ոչ մի տվյալ չկա. նրա բանաստեղծությունները կարող են և օգնել. և շփոթեցնել ընթերցողին. ով ուզում է հասկանալ. իմանալ բանաստեղծության մեջ պահված փաստը: Կշփոթվի. քանի որ փաստի և երազային իրականության սահմանները ջնջված են. ամեն ինչ նրա բանաստեղծության մեջ խոսում է «Իբր թէ»-ի դիրքերից.

Անդին իբր թէ պարահանդէս կար –
Վարսայարդարին խանութին առջեւ
Իբր թէ կեցած թուխ աղջիկ մը կար
Փայլուն աչքերով կու լար իբր թէ
Մինչդեռ քիչ անդին պարահանդէս կար (Ի. Ա. 230)

Պարահանդեսը չկա. այն հորինվածք է. կամ էլ պարահանդեսը կա. բայց նման չէ պարահանդեսի. մի քիչ ուրիշ է. մի քիչ տխուր է: Ահա նույնկերպ չես կարող գուշակել (եթե չես կարդացել կենսագրությունը. լրացուցիչ ծանոթագրությունները)՝ այդ բոլոր քաղաքներով անցել են Զահրատի կոշիկնե՞րը. թե՞ նրա արկածախնդիր միտքը: Ի՞նչ տարբերություն. եթե կարող է իր երազների նավով կարել – անցնել Մարմարան ու հասնել «Մինչեւ Գանատա». ապա մյուս քաղաքներ հասնելն էլ դժվար չի լինի այդպես:

Անոնք որոնք զիս կը դիտեն – ագահաբար կը կարծեն

Թէ Գնալը ծովեզերքի արեւուն տակ նստեր եմ –
Մինչդեռ ես
Մոնրէալի մայթերն ի վեր մայթերն ի վար ձեզի հետ
Կը դեգերիմ ամիսներու տարիներու կարօտով - (հ.Ա., 272)

Բանաստեղծության մեջ փաստը նորից է հորինվում, ուստի և երևակայության մաքուր հորինվածքն ու շրջուն փաստը զուգահեռների վրա են հայտնվում: Հաճախ փաստի վկայումն ինքնին ձեռք է բերում այլ ենթատեքստ` չկորցնելով փաստի արժեքը:

2.-Երբ որ անցնիք Գումգաբուի ծովեզրէն
այբ) համեղ ձուկ մը ճաշակել կ' երազէք
բեն) ծովուն վրայ քալել երթալ կ' ուզէք մինչեւ Կղզիներ
գիմ) կը խորհիք թէ կեանքը ինչ շուտ անցաւ
դա) կը հիշէք թէ հինգ ոսկի պարտական էք Յակոբին
(հ. Ա., 33)

«Աստվածաշունչ»-ից բոլորիս հայտնի տեսարան է «ծովուն վրայ քալել»-ը, սակայն տվյալ դեպքում այն նաև տեղանքի նկարագրություն է անում, քանի որ ակնարկում է Իշխանաց կղզիները, որոնք տեսանելի են Գումգաբուի ծովեզրից: Հակոբը նույնպես իրական, շատ պոլսեցիների հայտնի անձ է` Քեօր Ակոբ անվամբ ծանոթ ճաշարանատեր Գումգաբուի մեջ: Այս փաստերը խոսում են միայն Զահրատին ժամանակակից ու տվյալ միջավայրին ծանոթ ընթերցողի համար, իսկ մենք օգտվում ենք ծանոթագրություններից: Եվ արդեն յուրաքանչյուր անուն, արտահայտություն, որ առանց որևէ վերապահության հասանելի է բոլոր ընթերցողներին որպես բանաստեղծական խոսք, այնուամենայնիվ, դրդում է դիմել ծանոթագրությունների բաժնին` պարզելու փաստական կողմը: Ու ահա փնտրում ես այն «սպասեակ»-ին, ում չի մոռացել բանաստեղծը իր «սիրոյ տաղի» մեջ.

Բառերս շալկած կ' երթամ ծովափ – սրճարանը կը նստիմ-
Արթաքին – սպասեակը – կու գայ հարց կու տայ ինչ կ' ուզեմ

(հ. Բ, 29)

Ծանոթագրության մեջ կարդում ենք. «Երեւակայական հերոս մը, որ որեւէ առնչութիւն չունի իրական ապատեալի մը հետ»: Բայց այնքան իրական էր թվում: Ու սրան հակառակ՝ զարմանում ես, որ «Ծորակներ» բանաստեղծությունը կարող է թեկուզ մի փոքր փաստացի հիմք կրել իր մեջ, որ առնչվում է բանաստեղծին: Ահա մի հատված այդ ծորակների նկարագրությունից՝

Ոմանք դեղին – որ երբ բանան արեւ հոսի ծորակէն
Ոմանք ճերմակ – որ վազէ յոյս ձիւնափայլ –
Ոմանք ծորակ կ'ուզեն լոյսի – ոմանք սիրոյ – շատեր ալ
Համբերութեան կարեկցութեան ազատութեան ծորակներ -
(հ. Ա. 255)

Եվ երբ բանաստեղծի կենսագրությունից իմանում ենք, որ նա ինչ – որ ժամանակ աշխատել է մի խանութում, որտեղ ծորակներ է վաճառել, ապա բանաստեղծության հենց առաջին տողերը նաև վկայություն են ընկալվում, փաստ են արձանագրում բանաստեղծության քողի տակ.

Ես խանութպան – նստեր ծորակ կը ծախեմ –
Մարդիկ կու գան մէկ մէկ ծորակ կը զատեն - (հ. Ա. 255)

Եթե փորձենք ետ տանել բանաստեղծական շղարշը Զահրատի ողջ բանաստեղծության վրայից, մեր առջև կբացվի նրա կյանքը, սովորական, «կես լույս – կես կատակ» մի կյանք, որ բոլորս ենք ապրում, բայց չենք գուշակում, որ հենց կյանքն է յուրաքանչյուրիս ներսում ապրող Բանաստեղծությունը, որ կարող է լեզու առնել բանաստեղծականացմամբ (շրջումով):

Արդեն գրված բանաստեղծություններն էլ ինքնին փաստ է, որ կարող է նորից բանաստեղծվել: Զահրատ – ընթերցողը պասիվ չէ, նա միջամտող է, լինի դա իր տեքստը, թե ուրիշի: Եվ ահա Վիոլետա Գրիգորյանի բանաստեղծության ընթերցման արդյունք է «Վիոլէթ»-ը, որտեղ գործում են երկու հակադիր կերպարներ՝ Վիոլետը և Այլինը: Իհարկե, փաստի առկայությունը կարող է չընկալվել, եթե

ընթերցողին հայտնի չէ «Վիօլէթ»-ը՝ որպես բանաստեղծ. քանի որ Զահրատի բանաստեղծության մեջ միշտ էլ հայտնվում են թե իրական, թե մտացածին կերպարներ: Նրա տողերում հավասար իրավունքով ապրում են Անայիսն ու Ագապին, Վիկոն ու Ապպասը, Էյնշտեյնն ու Բրաքիոնը և ուրիշներ: Եվ նրանց է միանում «փողոցէ փողոց» թափառող մի խելառ Վիոլետ, ում երևակայության մեջ այլևս «գոյութիւն չունի Վարդան Մկրտիչեանը»: Իսկ այս վերջինն ո՞վ է: Չէ. ընթերցողը ստիպված է բացել Վ. Գրիգորյանի բանաստեղծությունները և նրանց մեջ՝ հատկապես «Տաղ անձնական»-ը, որտեղ էլ որ առաջին անգամ ծնվել է Վարդան Մկրտչյանի հավերժական ապատողը: Նա պարբերաբար (հինգ անգամ), փակագծերում նստած, հանգցնում ու վառում է սիգարետները.

(Արձարանում Վարդան Մկրտչյանը
Հանգցրեց չորրորդ սիգարետը և վառեց հինգերորդը):

Բայց նրա ապատումն իզուր է, քանի որ Վիոլետն այլևս չի գա ու տեսնողներին էլ կպատմիրի փոխանցել նրան հայ գրականության մեջ երևի թե ամենահայտնի հրաժեշտի խոսքերը (տես Եղիշե Չարենց. Տաղ անձնական):

երթ Վարդան Մկրտչյանին
տեսնեք «Երեբ» արձարանում.
....
ասեք նրան՝ Վիոլետն ասաց – մնաս բարո՜վ.
մնաս բարով: (ն.տ., 18)

Զահրատի տեքստում Վարդան Մկրտչյանը դուրս է եկել փակագծերից, բայց շարունակում է ծխելով ապատել. Վ. Գրիգորյանի տեքստում ավարտելով հինգերորդ սիգարետը՝ Զահրատի տեքստում վառել է վեցերորդը.

Վիօլէթի երևակայութիւնը թիզ մը վեր է
Հօն գոյութիւն չունի Վարդան Մկրտիչեանը

որ հիմա վեցերորդ սիգարետը վառած է

Զահրատը պահպանել է փակագծերը, բայց այլ բովանդակությամբ, որ միշտ վերաբերում է Այլինին: Այլ տողեր էլ կան, որ ուղղակի կամ մի փոքր ձևափոխված գալիս են Վ. Գրիգորյանի բանաստեղծությունից: Նա ասում է. «Դիտել անձրևի մանրատառ գրությունը մայթերին…», իսկ Զահրատը՝ «ու կը սպասէ / որ անձրեւը քերթուած մը գրէ մայթերուն վրայ» կամ ձևափոխված կրկնությամբ. «Այլինը / Հայերէն գիտէ / Ֆրանսերէն գիտէ / Բայց անձրեւերէն չի գիտեր»:

Զահրատն օգտագործում է տողեր ոչ միայն «Տաղ անձնական»-ից, այլ Վ. Գրիգորյանի ուրիշ բանաստեղծություններից ևս:

Այլին պիտի չգիտնայ թէ Վիօլէթ
Ճերմակ թեւեր ունի բուսած կռնակին վրայ (Դ.հ., 108)

Իսկ Վ. Գրիգորյանի տեքստում այսպես է.

Մայրիկ, այդպես չոված աչքերով մի նայիր,
Ուսերիս վրա տարուբերվող այս ճերմակ բաները
Թևեր են, այո (Ն.տ., 7)

Մեկ ուրիշ տող էլ, որ Զահրատի բանաստեղծության միջնամասում է, ավարտում է Վ. Գրիգորյանի «Ճշմարիտ ճշմարիտ եմ ասում» գիրքը:

Վիօլէթ կ'որոշէ այլեւս քերթուած չգրել (Դ.հ., 108)

Հատակ է, որ տողը կրկնությունն է Վ. Գրիգորյանի որոշման.

միայն թե բանաստեղծություն չեմ գրելու
այլևս երբեք
երբեք այլևս (Ն.տ., 62)

Եթե Վ. Գրիգորյանը կամ Զահրատը չգրեն, իրենց գրածները կսկսեն գրել, որովհետև

ՔԵՐԹՈՒԱԾ ՄԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ ՀՈՒՆՏԻ ՊԷՍ
ՈՐ ԵՐԲ ԱՒԱՐՏԻ
ՉԱՒԱՐՏԻ – ԾԻԼ ՏԱՅ – ՎԵՐԱՊՐԻ ՄԵԶԻ ՀԵՏ

(h. Բ, 262)

Եվ իսկապես, ինչպես Ե. Չարենցի «Տաղ անձնական»-ն է հայտնվում Վիոլետ Գրիգորյանի տեքստում, այնպես էլ վերջինս է հայտնվում Զահրատի տեքստում, ու սպասելի է, որ շղթան կարող է անվերջ շարունակվել:

«Վիօլէթ»-ը Զահրատի բանաստեղծության մեջ առաջին փորձը չէ սեփական ընթերցումը գրելու որպես բանաստեղծություն: Այդպիսի փորձ է նաև «Շոգենաւային սպասարկութիւն»-ը, ուր իրենց բառերով, բայց Զահրատի լեզվով խոսում են Դանիել Վարուժանը, Միսաք Մեծարենցը, Պետրոս Դուրյանը, Վահան Թեքեյանը, Ռուբեն Սևակը, Մատթեոս Զարիֆյանը և հենց ինքը՝ Զահրատը:

Դանիէլ Վարուժան շոգենաւը շքեղ
Ծխնելոյզին լայնշի բուռ մը սերմնացանի
Ծովափին կը պատմէ երգը հացին – մինչ
Ջուրի շիթեր որ կը փրթին փրփուրէն
Մէկ մէկ մարգարիտ կը դառնան հարձին
Սատափ ծոծրակին (h. Բ, 210)

Սա կարծես այն է, ինչ Զահրատն անվանում է «քիչով շատը պատմել»: Մի քանի բառով հիշվում է բանաստեղծի աշխարհի հիմնական պատկերը, այո, պատկերը, բայց ոչ ձայնը, քանի որ ձայնը Զահրատինն է:

Մի փոքր այլ է ժողովրդական տաղերգությանը դիմելու պարագան: Զահրատի «Սիրերգութիւն»-ն ու «Խաղերգութիւն»-ը նույն հանգն ու լարն են հնչեցնում, ինչ որ ժողովրդական խաղիկները, բայց տարբերվում են ժողովրդական խաղիկներից բառա-

պաշարով, քանի որ զաւիրայան բառերն են խաղում միմյանց հետ. ինչպես՝

Փոկ եմ ես
Փոկին պես անհոգ եմ ես
Ծոցս պառկիս կը տեսնես
Հինգ աստղով պանդոկ եմ ես (Դ. հ..48)

Ճիշտ է, Զաւիրայի հումորիկ, թարմ խոսքը նորություն է մացնում խաղիկների բառապաշարային շերտում, բայց խաղիկին հատուկ ձայնը չի փոխվում, ուղղակի հնչում է ևս մեկ անգամ ու այս անգամ պոլսեցի բանաստեղծի շուրթերից:

Մարգար ՇԱՐԱՊԽԱՆԵԱՆ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ. ՄԱՐԴՆ ՈՒ ԳՐՈՂԸ

(Ծննդեան 85-ամեակին առիթով)

Ամէն ինչ անկատար է: Որքան ալ որ ապրիս կեանքդ. դարձեալ անկատար կը մնայ ան: Այս մտորումներով է. որ իր կեանքը աւարտեց Յակոբ Կարապենց գրողը. Յակոբ Կարապետեան մարդը:

Արդի հայ գրականութեան անկեղծ գրողներէն էր ան. որուն պատճառաւ սիրուած ու յարգուած էր իր ընթերցողներուն կողմէ. ըլլայ Սփիւռքի մէջ եւ ըլլայ Հայաստանի. որուն մասին մեր ունեցած տասնեակ հանդիպումներուն ընթացքին կը խօսէր մեզի մեծ ակնկալութիւններով ու հաւատքով:

Հայ գրականութեան «ճենթըլմէն» գրողն էր ան. որ ոչ միայն իր համեստ բնաւորութեան. այլ նաեւ իր մշակած ներաշխարհային հոգեհարազատ գրականութեան պատճառաւ. կարողացաւ մեր սրտերուն խօսիլ. թէ Հայաստանի եւ թէ Սփիւռքի մէջ: Արդար ըլլալու համար. պէտք է ըսենք անշուշտ. թէ իր ճանաչումը եւ իր գրականութեան ճշգրիտ գնահատումը Հայաստանի մէջ եղած է նուազ չափով: Այս մէկը միշտ Սփիւռքահայ գրողին ճակատագիրն է. մանաւանդ քանի մը տասնեակ արժեքաւոր սակայն «պիտակաւորուած» գրողներու ճակատագիրը:

Անցեալ տասնամեակին սակայն. շնորհիւ Հայաստանի Գրողներու Միութեան տարած լայնածիր ջանքերուն. կարգ մը անհատ մտաւորական գրաքննադատներուն ու յատկապէս Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Երեւանի գրասենեակին տարած աշխատանքներուն. գոյութիւն ունեցող այդ անջրպետը. աւելի ճիշտ խրամատը. վերջերս սկսած է նեղնալ. եւ յոյսով ենք եւ կը հաւատանք. որ օր մը ան ամբողջութեամբ պիտի անհետանայ: Վերեւ յիշուած այս կամրջումին մէջ. Կարապենց կրնայ առաջատարներէն դառնալ. ոչ միայն իր բարձրարժէք գրականութեան պատճառաւ այլ նաեւ որովհետեւ գրեց արեւելահայերէնով.

պարզ ու խորիմաստ. զուլալ հայերէնով. առանց դարձդարձիկ. ոլորապտոյտ եւ անըմբռնելի ոճ մը գործածելու: Կարապենցի լայնատարած ծանօթութիւնը հայրենիքի մէջ. կրնայ նպաստել արեւելահայ արձակի զարգացման. որովհետեւ անոր արեւելահայ արձակը հարուստ է արեւմտահայ բառապաշարով եւս:

Ըստ իս. որեւէ գրականութեան մէջ. պարզութիւնը ամենամեծ շնորհն է գրողին. ինչ լեզուով ալ գրէ ան: Միթէ այս չէ գրականութեան. ստեղծագործական արուեստին գերագոյն իմաստը ըլլալ պարզ. խորիմաստ ու հասկնալի: Ու Կարապենց ունէր այդ ինքնուրոյն շնորհը ոճը:

Պարսկաստանէն եկած էր ան: Մի քանի լեզուներու եւ անոնց գրականութեանց քաջածանօթ գրողն էր. որ ապրած եւ իր ուսումը ստացած էր իր ծննդավայրին եւ Միացեալ Նահանգներուն մէջ. լրագրութեան եւ հոգեբանութեան համալսարանական ճիւղերէն վկայուելով: Անձնապէս. իր բարեկամութիւնն ու մտերմութիւնը վայելած եմ երկար տարիներ. մինչեւ իր մահը 1994-ի Հոկտեմբեր 20-ին. որ պատահեցաւ անբուժելի կարճատեւ հիւանդութենէ ետք. Պոսթոնի իր վերջին բնակարանին մէջ. ուր ընտանիքին հետ հաստատուած էր մահուանէն քանի մը տարի առաջ:

Կարապենց այն գրողներէն էր. երբ մարդը գրողէն չես կրնար անջատել: Անոնք կը նոյնանան հաւասարակաց գծով մը: Կարդացէք Կարապենցը եւ ամբողջութեամբ կը ծանօթանաք Կարապենց մարդուն. որ հեզահամբոյր նկարագիր մը ունէր: Պոռոտախօս ու ինքնահաւան գրող-մարդը չէր ան. եւ ոչ ալ մեծամիտ մտաւորականը. որոնց գոյութիւնը մեր առօրեայ կեանքին մէջ ու յատկապէս գրական աշխարհին մէջ. այնքան ալ բաղձալի չէ:

Կարապենց. մինչեւ իր հանգստեան կոչուիլը. աշխատած է տասնեակ մը գործերու մէջ. որոնք որեւէ կապ չէին ունեցած իր գրական ստեղծագործական աշխատանքին հետ: 25 տարի (1954-1979) ան ղեկավարած է Միացեալ Նահանգներու «Ամերիկայի ձայն» հաստատութեան. ռատիօ-հաղորդումներու հայկական բաժինը. ապահովելու համար իր ընտանիքի ապրուստը: Ան սփիւռքահայ գրողի իսկական տիպարն էր: Օրն ի բուն կ՚աշխատէր օրապահիկը ապահովելու. իսկ գիշերներն ու հանգստեան ժամերուն. կեանքի հաճոյքներէն հրաժարելու գնով. կը զբաղուէր գրա-

կան աշխատանքով: Նոյն ձեւով ապրած են Համաստեղը. Արամ Հայկազը. Բենիամին Նուրիկեանը. Վարէ Հայկը. Յակոբ Ասատուրեանը եւ ուրիշներ. իսկ Ֆրանսայի մէջ. Շահան Շահնուրը. Վազգէն Շուշանեանը. Շաւարշ Նարդունին. Նիկողոս Սարաֆեանը. Բիւզանդ Թօփալեանը. Կարապետ Փոլատեանը. Հրանտ Բալուեանը. Հրաչ Զարդարեանը. Զարեհ Որբունին եւ ուրիշներ: Սփիւռքի մէջ հայ գրող ըլլալը եւ հայ գրականութեան ծառայելը գերբնական ճիգ. կարգապահութիւն (տիսիփլին) ու անսակարկ նուիրում կը պահանջէ: Կարապետեան ունէր այս բոլորը:

Կարապետեան ազգային ըլլալով հանդերձ. համամարդկային ալ էր: Ան կարողացաւ իր մշակած գրականութեամբ մեզի ներկայացնել ոչ միայն ամերիկահայ կեանքը. իր հայածին գաղթականներով. հայրենի հողին. իրենց բնավայրը մշտնջենապէս երազողներով ու անոր խղճով. տենչով ու կարօտով ապրողներով. այլ նաեւ ամերիկեան կեանքը. իր շրջապատը. իր այլազգի տարագիրներով:

Կարապետեանը. մեր հայատառ ու հայադրոշմ Սարոյեանն էր. որուն անձին ու գրականութեան քաջածանօթ էր. ու միշտ հիացումով կը խօսէր հայկական ծագում ունեցող աշխարհահռչակ Սարոյեանի մասին: Բայց Կարապետեան. Սարոյեանի նման արկածախնդիր չէ եղած: Մեր կոճկուած գրողն էր ան առանց տէրվիշական դրսեւորումներու. ինչպէս եղած էր Սարոյեան իր բովանդակ կեանքի ընթացքին:

Սարոյեան կը թելադրէր Կարապետեանին. որ անգլերէն գրէ: Հայերէն կարդացողները քիչ են. կ'ըսէր: Կարապետեան. ամերիկեան մամուլին մէջ փորձեր կատարած էր. օրուան պատշաճ քրոնիկներ ուղարկելով անոնց: Իսկ Համաստեղ. որուն հանդէպ մեծ հիացում ունէր. անընդհատ կը քաջալերէր Կարապետեանին որ միայն հայերէն գրէ: Կարապետեան շուտով անդրադարձաւ. թէ ինք հայ գրող էր եւ թէ ամերիկեան գրականութիւնը իրեն պէտք չունէր եւ ոչ ալ ինք ամերիկեան գրականութեան: Ինք հայ էր ու հայերէն պէտք է գրէր: Ինք Հայաստան ունէր եւ զաւակն էր հայ ժողովուրդին: Անոր ծառայել կ'ուզէր ու ծառայեց: Անոր մէջ կ'ուզէր ճանչցուիլ ու ճանչցուեցաւ: Ինծի համար գրականութեան մը պատկանիլը գրած լեզուով պայմանաւորուած է: Անոնք որոնք օտարալեզու հայ գրողներու վաստակը կը ջանան հայ գրականութեան մէկ մասը համարել չեն

կրնար յաջողիլ: Մենք կը սիրենք եւ կը յարգենք հայկական ծագում ունեցող օտարագիր բոլոր գրողները, ինչ լեզուով ալ գրեն անոնք, նոյնիսկ կը հպարտանանք իրենցմով, բայց իրենց գործերը չենք կարող հայ գրականութեան սեփականութիւնը համարել: Նիւթէն կը շեղիմ, բայց կ'ուզեմ տալ մէկ օրինակ: Արմէն Լիւբէն (Շահան Շահնուր), որ առ հասարակ բանաստեղծութիւններ սկսաւ գրել ֆրանսերէն լեզուով, գրական ու ազգային անհամաձայնութեան մը, բախումի մը հետեւանքով, ֆրանսական արդի գրականութեան մէջ մնաց լուսանցքային: Բարեբախտաբար շուտով անդրադարձաւ իր ըրածին եւ «Յառաջ»ի վերջին խմբագրին Արփիկ Միսաքեանի բուռն կերպով հետապնդած արդարացի թելադրանքներուն վրայ, վերսկսաւ հայերէն գրել ու Արփիկին ջանքերով, իր մահէն առաջ, քանի մը արժեքաւոր գրքեր հրատարակեց, իր «Նահանջը Առանց Երգի» եւ «Յարալէզներուն Դաւաճանութիւնը» երկու հատորներուն թիւը բարձրացնելով հինգի կամ վեցի: Ընդունինք, որ Արմէն Լիւբէնը շատ բան չ'ըսեր ֆրանսացի ընթերցողին, բայց Շահան Շահնուրը շատ բան կ'ըսէ հայ ընթերցողին: Բայց անցնինք:

Կարապենցի գործածած լեզուն, հարուստ է, որպէս բառամթերք: Ոճը ձկուն է եւ ինքնուրոյն: Իր տեսածը, իր ապրումները, իր շրջապատի դէպքերն ու դէմքերը իրապաշտ կերպով թուղթին յանձնելու բացառիկ կարողութիւնը ունի ան: Ընթերցողը իր պատմածին հետ կապուած պահելու շնորհը ունէր ան որ բնատուր էր ու անհերքելի:

Կարապենցին մեզի կտակած գրքերուն մէջ, ըլլան անոնք վէպ, պատմուածք թէ փորձագրութիւն, առհասարակ կը հանդիպինք հայ մարդուն, որ ինքզինքին հետ կը պայքարի իր ազգային ինքնութիւնը յարատեւ դարձնելու մտասեւեռումով: Երբեմն կը յաջողի ու երբեմն չի յաջողիր ան, Ամերիկայի նման կամ Սփիւռք կոչուած քաոսին մէջ: Ինքնաճանաչումի եւ ազգային գիտակցութեան այս իրատապ հարցերը մտատանջութիւն մըն են Յակոբ Կարապենցի համար:

Կարապենցին արուեստը եղած է կատարեալին հասնելու յարատեւ ձիգ մը, հոգեկան ներքին պայքար մը: Անցեալի կարօտը, հայրենիքի կարօտը, մեծ դեր ունեցած են իր հոգեմտաւոր կազմա-

որմանի մէջ։ Սփիւռքահայ իրականութեան մէջ, պրպտող ու թափանցող միտք մը ունէր Կարապենց։ Ան կը մտածէր թէ արդեօք «Նոր Աշխարհի Հին Սերմնացանները» իրենց հայութեան ու հայրենի հողին հանդէպ ունեցած կարօտով է որ պիտի մեռնին օտարութեան մէջ, իրենց համար անհարազատ հանդիսացող միջավայրի մէջ, թէ հայութենէ պարպուելով պիտի իյնան նահանջի փշոտ ճանապարհներուն վրայ բոլորովին անհետանալու դատապարտուած։ Սփիւռքի այս կոտտացող վէրքը միայն Կարապենցինը չէ եղած անշուշտ, բայց մնաց Կարապենցի հետ մինչեւ իր վաղահաս մահը։

Կարապենցի «Անծանօթ Հոգիներ» (1970) պատմուածքներու առաջին հատորին մէջ «Մի Մարդ եւ Երկու Շիրիմ» դիպուկ եւ յաջող պատմուածք մը կայ, որուն հերոսը Կարապենցը, կը խորհրդածէ. «Ուզում եմ շօշափել Հայաստանի հողը, ուզում եմ տեսնել Հայաստանի երկինքը, ուզում եմ լսել հայ ժողովրդի ձայնը, ուզում եմ զգալ այն բոլորը, որը յուզել ու ներշնչել է Չարենցին»։

Կարապենցի գրիչէն ու հոգիէն բխող այս զգացումները, նոյն զգացումներն էին (եւ են տակաւին) հազարաւոր տարագիրներու, գաղթականներու, որոնք օտար հողերու վրայ ծնած էին (եւ են տակաւին) անկախ իրենց կամքէն ու զգացումներէն։ Այսպէս կը զգան Կարապենցի նկարագրած հերոսները։ Այսպէս կը զգար նաեւ ինքը Կարապենցը։

Որպէսզի կարենանք գրողի մը մասին կարծիք յայտնել, սիրել կամ չհաւնիլ զինք, պէտք է իր գործը կարդացած ըլլանք, ամբողջութեամբ։ Կարապենց, միշտ ներկայ եղած է իմ կեանքիս մէջ, իր «Անծանօթ Հոգիներ»էն մինչեւ իր վերջին հատորը, «Մի Մարդ ու Մի Երկիր» (1994), մինչեւ իր «Երկու Աշխարհ» փորձագրութիւններու խորիմաստ հատորը, ուր կը խօսի հայ եւ օտար հանրածանօթ գրողներու մասին։ Ան այս հատորին մէջ կ՚արծարծէ նաեւ գրական, հոգեբանական բնոյթ ունեցող հարցեր։

Զինք գնահատողներուն կը մնայ վերահրատարակել իր ամբողջական գործերը։ Տարիներ առաջ, Երեւանի մէջ որոշ փորձեր կատարուած են արդէն։ Մեզի կը մնայ ամբողջացնել սկսուած այդ աշխատանքը։ Չենք զիջար։ Հաւատացէք ինծի։ Կարապենցի գործը պէտք է փոխադրուի Հայաստան։ Համազգային Հայ Կրթական

եւ Մշակութային Միութիւնը Երեւանի եւ Թորոնթոյի մէջ. մրցանակներ հաստատած է. ու ամէն տարի զանոնք կը տրամադրէ երիտասարդ գրողներուն ու գրաքննադատներուն (Երեւան) եւ գրականութեան մէջ առաջնակարգ հանդիսացող դպրոցի այդ տարուան շրջանաւարտ աշակերտներուն (Թորոնթօ):

Մեծ ուրախութեամբ տեղեկացայ նաեւ Յակոբ Կարապենց անունը կրող երեւանեան միջնակարգ դպրոցի մասին:

Հայաստանի մէջ. կարծես թէ դրական բաներ մը կը պատահին. ինչ որ հրճուանք կը պատճառէ Կարապենցը սիրողներուն ու զինք յարգողներուն:

Ես կը խոնարհիմ Կարապենցի անունին ու իր գրական արժէքին առջեւ:

Թող իր ներկայութիւնը յաւերժ դառնայ Սփիւռքի եւ յատկապէս Հայաստանի մէջ:

Կարապենցը արժանի է այդ յաւերժութեան:

Արմեն ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՍԻՐԻԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

(«Երթ» տարեգրքի հինգերորդ տարին)



Հայ ժողովրդի պատմության ճանապարհին պարտադրված իրականության բերումով, տարիների ընթացքում ձևավորել է Սփյուռքը՝ իբրև աշխարհում ցանքուցրիվ եղած ազգային միավոր: Հայ ազգը անընդհատ մարդկային ռեսուրսով է մատակարարել աշխարհին և սա ոչ միայն պատմության ընթացքի բերումով, այլև հայ մարդու հոգեբանության մեջ առկա մի շարք առանձնահատկությունների, քանզի այսօր էլ Սփյուռքը աճում է իբրև թվաքանակ, որը տարիների ընթացքում մաղվելու է և մնալու են միայն ճշմարիտ հայորդիները՝ հայի գենի կրողները և ազգային ինքնագիտակցությունը վառ պահողները:

Եղեռնին և առաջին աշխարհամարտին հաջորդող տարիներին, երբ ձևավորվեց Սփյուռքը, օտար ափերում հայտնված հայ մտավորականին առաջին հուզող հարցերից մեկը ուծացումն էր, և անընդհատ ճանապարհներ էին փնտրվում այդ վտանգի դեմն առնելու համար: Այս ուղղությամբ մտորումները հատկապես արտահայտվեցին գեղարվեստական գրականության մեջ: Այսօր էլ այդ խնդրի հրատապությունը կա և վերջերս պետական մրցանակի արժանացած Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպում ձուլման խնդիրը դառնում է գաղափարական կարևոր հարցադ-

րումներից մեկը:

Սփյուռքում ուծացման դեմ լավագույն միջոցը գրամշակութային զինվածությունն է: Այդպես է եղել մոտ մեկ դար առաջ, այդպես է և այսօր: Ուրախալի է, որ Սիրիայում Բերիո հայոց թեմի նախաձեռնությամբ, արդեն հինգ տարի է լույս է տեսնում «Երթ» տարեգիրքը: Տարեգիրքը զուտ տեղային ուղղվածություն ունի և ներառում է սիրիահայ գրողների ստեղծագործությունները: Սա մի կողմից լավ է, քանի որ սիրիահայ տարեկան գրական հունձքը ընդգրկող նշանակություն ունի, մյուս կողմից էլ սահմանափակում է առաջանում` Սփյուռքի մյուս գաղթօջախների գրողների ստեղծագործությունները չներառելով:

«Երթ» տարեգրքի հինգերորդ համարում (խմբագիր` Վարդի Քեշիշեան) ընթերցողին են ներկայանում տարբեր սերնդի հեղինակներ: Ավագների ու հասունների կողքին իրենց ստեղծագործություններով գրական դաշտն ամբողջացնում են նոր սերնդի ներկայացուցիչները` Յարվարդ, Սեւան Հանէշեան-Պետուրեան, Մարիանա Պէրթլիզլեան-Ղազարեան, Նանոր Ինճէճիկեան, Տիգրան Գաբոյեան և այլն:

Երթը ունի արձակի, պոեզիայի, թարգմանական բաժիններ, իսկ «Սուրիահայ գրողներու համախմբում» խորագրի տակ առանձնացված է Սիրիայի հայ գաղթօջախի գրական կյանքի անցուդարձին վերաբերող հրապարակումները:

Ընդհանուր առմամբ «Երթի» արձակը մի քանի հիմնական ուղղությունների է հետևում:

Առաջինը անցյալի պատկերներն են ու հուշապատումը` Մարուշ Երամեան «Տոհմաքաղաք», Յովսեփ Ղազարեան «Թուրքին հաշիւը չմոռանաք», Յակոբ Ադամեան «Մասպուրենց «խենթ» հարսը», Էօժէնի Դանիէլեան «Անխորտակելի հրամայական», Թորոս Թորանեան «Կռնծած Կօշիկը» պատմվածքները: Այս պատմվածքներում կենսական նյութը վերցված է անցյալի արևմտահայ կյանքից, կամ էլ այդ կյանքի արձագանքներն են ընկած պատումի հիմքում:

Երկրորդը` սփյուռքահայի կյանքի պատկերներն են` Լալա Միսկարեան-Մինասեան «Ապաշաւանք», Պերճուհի Աւետեան «Յաջորդող սերունդ», Գեորգ Պետիկեան «Վերջին հիւանդը»,

Արաքսի Սարգիսեանի Վիզոյեանի «Սուղ վճարուած ժամադրութիւն» և «Բոլորին մամիկը»:

Այս տիպի պատմվածքներում հիմքում ընկած է սփյուռքահայի կենցաղը. վարքն ու բարքը. ապրուստի կերպն ու հոգեբանական արձագանքները:

Լալա Մինկարեան-Մինասեանի «Ապաշաւանք» պատմվածքը մահվան մահճում սփյուռքահայի զղջման և իր խղճի առջև մեղքերը բարձրաձայնելու մի գողարիկ պատմություն է: Հերոսը նյութական ինչքի ետևից ընկած խեղճության է մատնում կրտսեր եղբորը. իսկ «Եղբայրը կը շարունակէր լռել» (29): Պատմվածքը շարադրված է բացատապես հերոսի հուշապատումի ձևով: Եվ ահա արդեն մեծ կարողության տեր հերոսը «Շուտով ինք ալ այն աշխարհը պիտի երթայի... հոն պիտի հարցնէին իրեն՝«Կայէն. ու՞ր է եղբայրդ...»»(30): Մեղքի պատմությունը արձագանքում է աստվածաշնչյան առաջին մեղքի պատմությանը. պատմվածքի կենցաղային շերտին տալով փիլիսոփայական մանվածք:

Դերձուհի Աւետեանի «Յաջորդող սերունդ» հուշապատմվածքը հետեղեռնյան տարիներին օտար եզերքներում հայտնված հայ ընտանիքի չարքաշ կյանքի և դժվարությունների պատկերումն է: Տան աղամարդուն կորցրած ընտանիքի միակ պահապանը դառնում է մայրը. ով դրսում մաքառում է նյութական միջոցներ հայթայթելով և միևնույն ժամանակ օջախը ներսից ամրացնում ազգայինով ու բարոյականով.

«- Այո. փառք տուէք Աստուծոյ. այդ օրերուն մենք աղբերուն մէջ մնացորդներ կը փնտռէինք...բոլորդ միաբերան աղօթեցէք. ձեռքերը առաջ.- հրահանգեց մայրը եւ սկսաւ աղօթել.

- «Ճաշակեցուք խաղաղութեան զկերակուրս...Ամէն»» (38):

Գրողը դիպուկ համեմատություն է կատարում օտարության մեջ հայտնված և որբության մատնված երեխաների առջև մի բանան նետելու պատկերից հետո. «Երբ դուռս կելլէին. տան դրան ետին շփացած շնիկը կը կրծեր ոսկորները. ան որպէս պահապան թեթեւ հաչոց մը արտաբերեց ու շարունակեց իր կերուխումը: Դուրսը՝ կիսեցին պանանը. բերանին մէջ երկար պահեց պատառը...» (40):

Հյութեղ է մոր կերպարը: Նա պատկանում է մարդկանց այն տեսակին, որոնք լույս աշխարհ են գալիս միայն տառապելու, աշխատելու և ինքնազոհաբերման համար: Պատմվածքի ավարտը ընդհանրացնող բնույթ ունի: Որբերը մեծացել են ու որոշակի բարեկեցիկ կյանքով են ապրում, բայց նրանց հիշողություններում մնացել է մոր տառապանքի հոտը թեյի բույրի պես: Հաջորդող սերունդը ժառանգել է նախորդների հիշողությունը:

Երրորդը՝ համամարդկային-խոհական բնույթ ունեցող պատմվածքներն են, որոնք աչքի են ընկնում կյանքի և երևույթների մասին հեղինակների խորհրդածություններով՝ Յակոբ Միքայէլեանի «Զահրան», Ճորճ Բարսեղեանի «Տասնհինգ վայրկեան»:

Յակոբ Միքայէլեանի «Զահրան» պատմվածքը մի տեսակ դուրս է մնում «Երթ» տարեգրքի ընդհանուր համապատկերից: Արաբ մեքենա լվացող փոքրիկ աղջնակի դժվարին կյանքը, բարբի տիկնիկի մասին երազանքը և լուսեղեն տեսիլը պատմվածքին տալիս են հեքիաթին բնորոշ տարրեր: Այս ստեղծագործությունը ի վերջո անկոնֆլիկտ է և զերծ ազգային երանգավորումից:

Ճորճ Բարսեղեանի «Տասնհինգ վայրկեան» պատմվածքը հոգևարքի մեջ գտնվող մարդու ետադարձ հայացքն է իր անցած ուղուն: Մահվան անխուսափելիությունը ավելի է ընդգծում հերոսի կենսասիրությունը: Ի վերջո կյանքը հրաշալի է, ինչքան էլ դառը իրականություն պարտադրված լինի մարդուն: Մարդը չի գնահատում կյանքը այնքան ժամանակ, քանի դեռ չի բախել մահվան դարպասները:

Թերևս վերը նշված բոլոր շերտերը իր մեջ ներառում է Սարգիս Կիրակոսյանի «Ո՞վ ըսաւ, որ քարը չի դառնար Արտամէտի դրախտաբոյր խնձոր» վերնագրով արձակ ստեղծագործությունը: Այն «Պարիսպեն Անդին» քնարավեպից մեկ հատված է: Ժանրը՝ քնարավեպ, հեղինակինն է, հերոսը՝ հեղինակն է «եւ յանկարծ գիտակցեցաւ, որ ինք է անվձար, բայց երջանիկ քարտողարը իր անավարտ քնարավեպին» (24): Երկը զուրկ է պատումից և ավելի շատ զգայապատկերում է այն իրենից ներկայացնում:

Միակ հերոսը՝ հեղինակը, ինքնաորոնման ճանապարհին մենակացել է իր խոհերի ու ապրումների հետ, հողինը վերադարձնում է հողին և ձգտում է վերադառնալ իր արմատներին. «Յետոյ

բուռ մը կիսաթաց հող առաւ ափերուն մէջ, շոյեց, փայփայեց, մօտեցուց քթածակերուն, վերացաւ եւ իր հողածին մանկութիւնը վերապրեցաւ» (24), որպեսզի կարողանա պահպանել իր ժառանգականությունը, գենը, հիշողությունը՝ «բայց տակաւին չէր գիտեր, թէ արդեօք պիտի խառնուէր ապերախտ խուճապահարներու փախուստին, ուրացման հրաւէրներուն պիտի ընդառաջէ՞ր, թէ անսար իր մշտաքորբոք արեան արարիչ խրախճանքներուն» (15):

Առաջին աշխարհամարտին հաջորդող տարիներին, երբ ձևավորվեց Սփյուռքը, առաջնային խնդիրներից էր պահպանել ինքնությունը, ականջ դնել արյան կանչին և դեմ գնալ նահանջին ու ուծացմանը: Այսօրվա սփյուռքահայի համար դեռևս կա այս խնդիրը, որը ոչ միայն պապից է ժառանգել ասես, այլև մտել է գենի ու սերմի մեջ. «Հաւանաբար այդպէս եղած էր իր սաղմնային առաջին իսկ օրէն, թերեւս իր ծնունդէն ալ առաջ» (15):

Քնարավեպի բնագիրը լի է բնության երևույթների, երկնային, երևակայական, ցնորային տեսարաններով և մի տեսակ մեդիտացիա է հիշեցնում...

Ի վերջո հայ հերոսը փնտրում է իր ծիրանի եզերքը և «Արտամէտ» խնձորը, որի ճաշակումից էլ սկիզբ է առնում մարդու առասպելը, հեքիաթը, հրաշքը որին սպասում է օտար եզերքներում թուրքի հարկադրանքով լույս աշխարհ եկած հայ մարդը:

Ավելի խայտաբղետ է «Երթ» տարեգրքի պոեզիան: Ընթերցողի առջև բացվում են բանաստեղծական տարբեր աշխարհներ, զանազան բովանդակային շերտեր ու ձևա-կառուցումներ: Տարեգրքում զետեղված են հայրենասիրական, սիրային, փիլիսոփայական և զգայական-հոգեբանական բանաստեղծություններ:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին, հատկապես բանաստեղծությունը բազմաթիվ շերտավորումներ ունի: Այս առումով «Երթ»-ում ներկայացվող սփյուռքահայ պոեզիան բացառություն չէ: Վերը նշված առանձնահատկությունները հաճախ ի հայտ են գալիս միմյանց միաձույլ և սա ժամանակակից պոեզիայի առանձնահատկություններից է բխում:

Այնուհանդերձ, ժամանակակից սփյուռքահայ գրականության մեջ հատկապես տեսանելի են հայրենասիրական քնարերգության

տարրեր: Կարծում եմ, սա կապված է այն հանգամանքի հետ, որ տարագիր հայը հայրենիքի իր պատրանքն ունի, և տարիներ ի վեր փայփայել է այն իր հոգում: Հեռվից ավելի հեշտ է սիրել Հայրենիքը:

Վերջին տարիներին հայրենասիրական քնարերգության մոտիվները փոփոխվել են: Չկա փաղաքուշ զգայական զեղումները և տեքստի մեջ գերակշռում է սթափ հայացքը իրերին ու երևույթներին: Ցարվարդի «Երբ որ Հալէպի Վէրք լսեմ» բանաստեղծությունը հայրենասիրական քնարերգության և Խ. Աբովյանի «Վերք»-ի համադրման պոետական հրաշալի փորձ է

(Հալէպի Վէրք)
«Վէրք Հայաստանի»
(Հալէպի «Վէրք») Հայաստանի
անվերջ կը կրկնեմ ես ինծի (115)

Բանաստեղծն էլ ունի իր վերքը՝ «բայց հերոս Անտրէն / մեռօրեայ «Աղասին»ն հայերեն չի խոսիր» (նույնը):

Խաչիկ Արսլանեանի «Կրնաս ոչ ըսել» բանաստեղծության մեջ ամեն ինչ կարելի է մերժել և միայն թե հիշել հայրենիքը. «Երբ զանգերը «բանան» պատուհանները անանձնական. / Երբ հաստանք, որ Դուինն է ճանապարհը մրգահատքի. / Որ, եթե կրնաս գնա, Արմաւիրի եղնիկները վերածնելու: ... // Բայց դուն կրնաս ոչ ըսել. / Եւ նոյնիսկ կրնաս ըսել՝ / Բարի լոյս Հայաստան» (147):

Թորոս Թորանեանի բանաստեղծությունները նվիրված են Երկրին, հային, հողին, որոնցում արտահայտվում է տարեգիր հայի սերը իր հայրենիքի նկատմամբ և Սփյուռքի մեջ հողի կարոտը և տան կորստի ցավը ապրող մարդու դրաման: Ի վերջո մեկ հայրենիքում, մեկ նրանից հեռու՝ մարդը դառնում է կամուրջ.

Կամուրջ եղայ ես՝ իմ ու... իմ միջեւ,
Երկրիս ու սփիւռքի, սփիւռքի ու երկրիս...

Կամուրջ եղայ ես.
Չեղայ ոչ երկրիս
Եւ ոչ սփիւռքի մեջ (151):

Սիրերգությունը «Երթ» տարեգրքում այնքան էլ մեծ որակ չի կազմում: Նանոր Ինճեճիկյանի. Մարիանա Պերթիզլյանի Ղազարյանի. Մարգարիտ Շամիլիյանի բանաստեղծություններում նրբագծերով արտահայտվում է կորցրած սիրո դրաման: Նանոր Ինճեճիկյանի «Երեկ իրիկուն» բանաստեղծության մեջ սերը արտահայտվում է ժխտման ձևով. «Մեռցուցի քեզ երէկ իրիկուն // Նոյն այդ մայթին վրայ / մեռցուցի // Այս երկու աչքերուս մեռցուցի / քեզի համար աղօթող լռութիւնովս մեռցուցի (121):

Սիրո գեղեցիկ ձոն է Մարգարիտ Շամիլյանի «Սիրո ծովակ» բանաստեղծությունը.

Դու. մի ծովակ կապուտաչեայ.
Ես. կտարուած փոյտէ նաւակ:
Դու. ալեկոծ խռովքիդ հետ.
Ես. լռակեաց փրփուրիդ մէջ:

Դու աղմկոտ խաղին տարուած՝
Ես մոլորուած ծփում եմ. տես:
Լուսաբացին խաղաղում ես.
Գիշերներում խռովայոյզ...
Ես անպաշտպան երկինքն ի վար
Մի ծով ու մի լուսնի աչքում:

Տա՛ր ինձ փրփուր ալիքներով.
Տար ինձ դէպի ծովն անհատնում:
Թող փշրուի վերջին բեկորն
Ու ես մեռնեմ հենց քո գրկում (153):

Սա մարդու նվիրումն է սիրո բարձր ու վեհ զգացմանը. և տանում է դեպի ինքնազոհաբերման որտեղ բանականությունը ոչինչ չունի անելու (Ես. լռակեաց փրփուրիդ մէջ. Ես անպաշտպան երկինքն ի վար. Ու ես մեռնեմ հենց քո գրկում): Մարդն իրեն հանձնում է սիրո տարրերքին. ինչպես ծովի:

Տարեգրքում մեծ քանակ են կազմում խոհական-փիլիսոփայական բանաստեղծությունները: Այս տիպի երկերում բանաստեղծնե-

րը փորձում են քննել կյանքի այս կամ այն կողմը: Բանաստեղծության մեջ գերիշխում է խոհը և հաճախ անտեսվում է ապրումը:

Սարգիս Ք. Խաչերյանի բանաստեղծական շարքը փոքր գեղարվեստական տարածքում ներքին փիլիսոփայական ընդհանրացումների փորձ է.

ԱՐԵՒԸ

Արթուն մարդիկ կը սիրէ արեւը.
թէ ոչ կը յայտնուէր
կէս գիշերին (108):

Այսպիսի փոքր բանաստեղծությունների են վերածվում ժամանակը, գեղեցիկը, արբունքը, բարևը, ծառը, հետքը, «բան մը» և այլն: Խաչերյանը կարողանում է գեղեցիկ ու իմաստավոր պատկերներ ստեղծել. «Ամպերը տակաւին / իրենց յամար երկինք մը / կը փնտռեն» (111): Հաճախ նմանատիպ խտացումները ի հայտ են բերում բանաստեղծի աֆորիստիկ մտածողությունը. «Մարդն ալ երբ հորիզոնական է, / վայրկեան առաջ թաղել պետք է» (113): Ընդհանուր առմամբ Խաչերյանի բանաստեղծությանը բնորոշ է ասույթային ոճը, և նա իր տողակառուցումներում ավելի ձգտում է տրամաբանությանը, քան զգայական զեղմանը:

Յարվարդը անշուշտ օժտված հեղինակ է: Նրա բանաստեղծական աշխարհը մի տեսակ դուրս է մնում տրամաբանական կաղապարներից: Աբստրահված են հոգեվիճակներն ու զգայությունները: Յարվարդի բանաստեղծություններում կյանքի շուրջ բանաստեղծի խորհրդածությունները կյանքը ճանաչելուն են միտված: Կյանքը երբեմն խաղ է («Խարդախություն» էջ 114), երբեմն անիմաստ դատարկություն.

Բոլորս մէկ
դէպի վեր
«տուն» վերադարձող Պղպջակներ ենք
հսկայ Աւազանին (116):

Իրենց խոհականությամբ աչքի են ընկնում նաև Յակոբ Նալ-պանտ Տյուլեանի բանաստեղծությունները:

Բանաստեղծական իր աշխարհով առանձնանում է Սևան Հա-նեշյան-Պետորյանը: Զգայական-հոգեբանական նրբին կառու-ցումները. բնապատկերի հարստությունը. լռությունն ու այդ լռու-թյան մեջ խիտ ասելիքը Սևանի բանաստեղծությունների անուրա-նալի արժանիքներն են.

Անցեա՜լ. շատ հեռու ես...
Հողէն ծլած ծաղիկի բոյրով.
արտերուն մեջ հասունցած ցորենով.
ծառերուն անուշ պտուղով.
ինչո՞ւ հեռու ես. անցեալ... (167):

Բանաստեղծը նյարդաթելերով կապված է բնությանը (Ծովը հոգույն նման իր շառաչն ունի...). զգում է նրա ներկայությունը իր մեջ ու միասին մի ամբողջ ներդաշնակություն են կազմում: Սևան Հանեշյանի տեսադաշտը լայն է: Նա տեսնում է ջրի մեջ արտասու-քը լացող ուռենու (Երբ կ'երթայի աղբիւրէն / ջուր բերելու. / ինծի կը թուէր թէ ջուրին մեջ / կայ կաթիլ մը / ուռենիին արտասուքեն (170)). ապա հորիզոնից անդին (...Կ'անցնի արեւը հորիզոնէն անդին... (171)). որից հետո մթնշաղի հյուսկեն թովչանքն է՝ «ամպիկի մը միանալով / ու կցայտեն վառ / գոյներ արեւմուտքի / հորիզոնին վրայ» (172):

Զգայական պատկերներ են հանդիպում նաև Աշխեն Առաքել-յան Վարդանյանի պոեմանման շարքում. Խաչիկ Արսլանյանի «Անտառին դէմ լռութեան» և «Մարդն էր ինկա նորէն» բանաս-տեղծություններում:

Ընդհանուր առմամբ «Երթ» տարեգիրքը կարևոր գործառույթ ունի նախևառաջ սփյուռքահայի կյանքում. ապա հայաստանցու համար ևս. քանի որ Հայրենիք-Սփյուռք կամուրջն ավելի նպաստա-վոր. կառուցողական և կայուն կլինի. երբ ի սկզբանե գրական-մշա-կութային երկխոսությունը կայանա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 5

ՊՈԵԶԻԱ

Սագօ ԱՐԵԱՆ 8
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Վ. Օ.Ճ.Կ.Ա.Ն. 9
ՆՈՍԹԱԼՃԻԱ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՊԱՏՃԳԱՄԲԷՆ 13
Էլենա ՄԱՍԵՀԵԱՆ 18
ՏՂԱՆ 19
ԺԱՌԱՆԳ 20
ՄԻԱՎԱՆԿ ԱՆՈՒՆ 21
ՏԻԱՅՏԱՆՔ 22
Թորոս ԹՈՐԱՆԵԱՆ 23
ԵՍ 24
ԾՆԱՅ 24
ԴԱՐՁԵԱԼ ԵՍ 24
ՀՈԳԻՍ 25
ՈՉԻՆՉԷՆ 25
Սարգիս Ք. ԽԱՉԵՐԵԱՆ 26
ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ շարքէն 27
ԴԱՇԻՆՔ 27
ԲԱՌԸ 28
ՈՎ ԳԻՏԷ 28
ՄՈՒՏՔ 29
20:00 29
Լոլա ԳՈՒՆՏԱՔՃԵԱՆ 30
ԱՀԱ ՀԱՍԱՆՔ ԱՄԱՌՈՒԱՆ ՍԿԻԶԲԸ 31
ԵՐԿՈՒ ԱՆՈՒՆԵՐ 31
ՊՈՍՏՈՆ՝ ԱՊՐԻԼ 30, 2006 31
ԱՆՁՐԵՒ 32
ԳԻՇԵՐԸ՝ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ 33
ՏԱՍԸ ՕՐ Է Կ Ա ՆՁՐԵՒԷ 33
ԳԱԼՈՎ ԱՆՑԵԱԼԻՆ 33
ԱՆՈՆՔ ՄԵՌԱՆ 34
Գրիշ ԴԱՎԹՅԱՆ 36
ԳՈՒՆԱՏՈՒԹՅԱՄԲ 38

ՄԾՈՒԾՎԱԾ ... 39
ՀԱՄՈՎ-ՀՈՏՈՎ ... 40
ՍԵՐ ... 42
ՎԱՐԱԿՎԱԾ ... 43
Ավիկ ԴԵՅՐՄԵՆՋՅԱՆ ... 45
ՍԻՐՈՒՍ ԵՄ ... 46
ՀԻՆ ԱՆՈՒՐՋՆԵՐ ... 47
ԻՄ ԵՐԳԵՐՆ ՈՒ ԲԵՐՔԵՐԸ ... 48
Սոնա ՎԱՆ ... 49
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԷՏՅՈՒԴ ... 50
ԵՐԱԶՈՒՄՍ ԿՐԿԻՆ ԴԵՄ-ԴԻՄԱՑ ԷԻՆՔ ... 51
ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՏԻՍ ՄԵԾ ՊԼԱԶՄԱ TV-Ի ԷԿՐԱՆԻՑ ... 52
TV ՌԵՊՈՐՏԱԺ ... 53
ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԱԶԸ ... 55
ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՀԱՄՐ ԵՍ ... 56
ՅԱՐՎԱՐԴ ... 57
ԼՈՒՍԱՋԵՐ ... 58
ՋԵՐՄՈՒԿ ... 59
ԱՆՁՆԱՍԻՐԵՆԻ ... 60
Անա ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ... 61
ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ ՄԸ ... 62
ՏՈՒՆԸ ՊԱՐՊԵԼ ... 62
ՏՈՒՆԸ ՎԱՅՐ ՄԸՆ Է ... 63
ԾԵՐ ՁԵՌՔԻ ՄԸ ... 63
ԱՅՆ ԻՆՉ ՈՐ ԿԸ ՔԱՄՈՒԻ ԺԱՆԳՆ Է ... 64
ՍԵՒ ԾՈՎ ... 64

ԱՐՁԱԿ

Պերճուհի ԱՎԵՏԵԱՆ ... 70
ԱՆՑՆՈՂ ՕՐ ՄԸ ԵՒ ԽՈՀԵՐ ... 71
Սեդա ԳՐԻԳՕՐԵԱՆ ... 78
ԱՄԱԼԻԱ ԾՈԾԱՆ ... 79
Վրէժ-Արմեն ԱՐԹԻՆԵԱՆ ... 94
ԿՌՈՒՆԿՆԵՐԸ ... 96
Կոլիա ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ... 106
ԵՎԱ ... 107
Սարգիս ՎԱՀԱԳՆ ... 116
ՄԻՒՍԸ ... 118

Յակոբ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ 136
ԱՅՍՊԻՍԻ ՏԱՐԵԴԱ՞ՐՁ 137

ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Արա ԱՐԾՐՈՒՆԻ 148
Ո՞Վ Է ԲԱԽՈՒՄ ԴՈՒՌԸ 149
Խորեն ԱՐԱՄՈՒՆԻ 190
ՀԱՐՍՆԱՑՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ 192

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարի Ռոզ ԱԲՈՒՍԵՖՅԱՆ 224
«Հաճի Մուրատ» վեպի առանձնահատկությունից մի հատված 226
Հրաչյա ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Ջավեն Պիպեռյանի «Մրջյուններու վերջալույսը»
և էքզիստենցիալիզմը 243
Յարութ ՄԱՐԱՇԼԵԱՆ
Նիկողոս Սարաֆեանի
«Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» ժողովածուն 250
Սոնա ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Բանաստեղծական արվեստ - բանաստեղծական խաղ 266
Մարգար ՇԱՐԱՊԽԱՆԵԱՆ
Յակոբ Կարապենց. մարդն ու գրողը 286
Արմեն ԱՎԱՆԵՍՅԱՆ
Սիրիահայ գրականության դիմագիծը 292

ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ

Սփյուռքահայ գրականության տարեգիրք

Խմբագրական խորհուրդ՝

Ավիկ Իսահակյան - Խորհրդի նախագահ
Հրաչյա Սարիբեկյան - գլխավոր խմբագիր
Արքմենիկ Նիկողոսյան - պատասխանատու քարտուղար
Արմեն Ավանեսյան
Վահրամ Դանիելյան
Վարդան Դևրիկյան

Գեղարվեստական ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի

Շապիկի նկարը և ուրվանկարները՝ Գառզուի

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 19 տպ. մամուլ
Տպագրված է «Գասպրինտ» տպարանում

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ.
Գրականության ինստիտուտ

ՀՀ Սփյուռքի նախարարություն

Երևան 2010

3500 դր.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

A II
97557